ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱՌԻՍԿՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱԿՈԲ ՀԱՏԻԿՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՐԱԽՈՒՄ

1878-1923 թթ.

Մենագրություն

Երևան – 2016

ՀՏԴ 93/ 94
ԳՄԴ 63.3
Հ 383

Հրատարակվում է ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոնի
խորհրդի որոշմամբ:

Հ 383

Հատիկյան Հակոբ Հարությունի

Արևմտահայությունն Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների թիրախում 1878-1923թթ. / Հ. Հատիկյան, ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոն, 2016., -275 էջ:

Ընդհանուր խմբագիր՝ իր.գ.թ դոցենտ Ա. Լ. Քինակցյան
Խորհրդատու՝ տեխ.գ.թ. և իր.գ.թ Ա. Ս. Տեր-Հարությունյան
Սրբագրիչ՝ Ա. Ս. Գաբրիելյան

Մենագրությունն Օսմանյան կայսրության հայաջինջ քաղաքականության մեջ գաղտնի ծառայությունների տեղն ու դերն ուրվագծող առաջին փաստավավերագրական աշխատությունն է, որում իմի են բերված թեմային վերաբերող հիմնական նյութերը, սկսած 19-րդ դարի 60-70-ական թվականներին այդ ծառայությունների կազմավորումից մինչև հանրապետական Թուրքիայի հատուկ ծառայությունների ձևավորումը, հանրամատչելի ձևով նկարագրված են Հայոց ցեղասպանության առանձին դրվագներում այդ կառույցների կոնկրետ գործողություններն ու դրանց հետևանքները:

Մենագրության հրատարակման գաղափարը ծագել է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի առիթով: Այն պատրաստվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտում գործող ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն որակավորման հանձնաժողովի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում 2015թ. դեկտեմբերին հեղինակի պաշտպանած թեկնածուական ատենախոսության հիման վրա (պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Արսեն Գագիկի Ավագյանի գիտական ղեկավարությամբ):

ՀՏԴ 93/ 94
ԳՄԴ 63.3

ISBN978-9939-1-0325-9

© ՀՀ կառավարությանն առընթեր
ազգային անվտանգության
ծառայություն, 2016թ.

© Հատիկյան Հ. Հ., 2016 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության գիտառուսումնական կենտրոնի կողմից 7

ՀՀ ազգային անվտանգության մարմինների վետերանների խորհրդի նախագահ Ն. Մ. Մինասյանի խոսքը 10

Պրոֆեսոր Վանիկ Վիրաբյանի խոսքը 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 24

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ (19-րդ դարի 60-70-ական թթ.).....51

1.1. Հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի գործոնը Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների զարգացման գործում 51

1.2. Արևմտահայությունը որպես Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների գործունեության թիրախ (19-րդ դարի 60-70-ական թթ.) 76

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.
ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃՆՇՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ «ՅԸԼԴԸԶ» ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ (1877-1908 թթ.) 101

2.1. Արևմտահայ ազատագրական կազմակերպությունների պայքարը սուլթանական գաղտնի ծառայությունների գործունեության պայմաններում 101

2.2. Հայ ազգային կուսակցությունների վերաբերյալ տեղեկություններ հավաքելու և իրացնելու ուղղությամբ օսմանյան դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեությունը ….....…….....141

2.3. Զանգվածային կոտորածներն Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում «Յըլդըզ»-Համիդիե-4-րդ բանակ եռանկյունու համատեքստում (1894-1896 թթ.) 162

2.4. Սուլթանական գաղտնի ծառայությունների գործունեությունն Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի վերահսկման ուղղությամբ (1890-1908թթ.) 185

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.
«ՀԱՏՈՒԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ …….....……...201

3.1. «Հատուկ կազմակերպության» դերն ու նշանակությունը Հայոց մեծ եղեռնի իրականացման գործում…….....…….....201

3.2. Հայ հետախույզների գործունեությունն Առաջին աշխարհամարտի ռուս-թուրքական Կովկասյան ռազմաճակատում …….....…….218

3.3. Թուրքական գաղտնի ծառայությունների գործունեությունը Կովկասում (1918-1921 թթ.…….....…. 225

3.4. Թուրքական գաղտնի ծառայությունների գործունեությունը Հայաստանի Հանրապետության և հայության դեմ 1919-1923թթ. .....…… 237

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ……..….....…… 254

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ….....262

ՀՀ ազգային անվտանգության ծառայության գիտաուսումնական կենտրոնի կողմից

Հայ ժողովրդի, մասնավորապես արևմտահայության դեմ թուրքական գաղտնի ուժային կառույցների գործունեությունը հասկանալի պատճառներով դեռևս չլուսաբանված թեմաներից է: Պարզ է նաև, որ այդ հակամարդկային ու հանցավոր գործունեության բոլոր դրվագներն անհնար է բացահայտել:

Հաշվի առնելով դա՝ մեր գործընկեր Հակոբ Հատիկյանի հեղինակած սույն մենագրությունն այն եզակի աշխատություններից է, որը նվիրված է արևմտահայության հայրենազրկման թուրքական հրեշավոր ծրագրի դեռևս չպարզաբանված որոշ հանգամանքներին, որոնք մեծապես կապված են Օսմանյան կայսրության հատուկ ծառայությունների հակահայ գործունեության ընթացքում օգտագործված գաղտնի միջոցների ու մեթոդների հետ:

Սակայն, հեղինակի կողմից ցեղասպանությունից 100 տարի անց նշված հարցերին կատարված նպատակային պատմագիտական անդրադարձը հույս է ներշնչում, որ ժամանակի ընթացքում թեման կհետազոտվի առավել ծավալուն և ամբողջական՝ ընդգրկելով թուրքական գաղտնի ծառայությունների հակահայ գործունեության հնարավորինս լայն սահմաններ:

Մենագրությունն Օսմանյան կայսրության հայաջինջ քաղաքականության մեջ գաղտնի ծառայութ-

յունների տեղն ու դերն ուրվագծող առաջին փաստավավերագրական աշխատությունն է, որում իմի են բերված թեմային վերաբերող հիմնական նյութերը, սկսած 19-րդ դարի 60-70-ական թվականներին այդ ծառայությունների կազմավորումից մինչև հանրապետական Թուրքիայի հատուկ ծառայությունների ձևավորումը, հանրամատչելի ձևով նկարագրված են Հայոց ցեղասպանության առանձին դրվագներում այդ կառույցների կոնկրետ գործողություններն ու դրանց հետևանքները:

Մենագրության հրատարակման գաղափարը ծագել է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի առիթով: Սակայն, հատկանշական է, որ այն, ի տարբերություն ցեղասպանության թեմատիկային նվիրված շատ այլ աշխատությունների, չի կրում հայ ժողովրդի հանդեպ թուրքական իշխանության գործած դաժանությունների զուտ նկարագրության բնույթ, այլ ընդգրկում է, մասնավորապես, կոնկրետ կառույցների և անձանց իրականացրած գաղտնի քայքայիչ, սադրիչ, բռնի և թշնամական գործունեության այլ մեխանիզմների վերլուծությունը հատուկ ծառայությունների գործելաոճի տեսանկյունից, արևմտահայ կազմակերպչական կառույցների կողմից այդ գործունեությանը հակազդելու ուղղությամբ ձեռնարկված միջոցների ուսումնասիրությունը, ձախողումների պատճառների վերհանումը:

Վերոգրյալի հիման վրա՝ ուրվագծվում է Հակոբ Հատիկյանի հեղինակած մենագրության հրատարակման հիմնական նշանակությունը: Աշխատությունը ծանոթացնում է ընթերցողին, մասնավորապես պետականազրկման տարիներին թշնամի գաղտնի ծառայությունների կոնկրետ ոտնձգություն-

ների և քայքայիչ գործունեության առաջ հայ ժողովրդի խոցելի վիճակի մասին:

Մենագրության մեջ կարմիր թելով անցնում է օտարերկրյա հատուկ ծառայությունների հետախուզական-քայքայիչ գործունեությանը սեփական հզոր ազգային-պետական անվտանգության մարմինների ամուր և հուսալի համակարգով պայքարելու անխուսափելիության գաղափարը:

ՀՀ ազգային անվտանգության մարմինների վետերանների խորհրդի նախագահ Ն. Մ. Մինասյանի խոսքը

Հանրությանը ներկայացված սույն աշխատությունը լրջագույն և համարձակ ձեռնարկում է: Նախ այն պատճառով, որ թուրքական հատուկ ծառայությունների հակահայ համակարգված գործունեության ուսումնասիրությունը կրել է խիստ էպիզոդիկ և մակերեսային բնույթ՝ չներառելով անցյալին զուգահեռաբար հանգամանորեն անդրադարձ կատարելը և հեռանկարային վերլուծությունը: Թեման արծարծելու իմաստով, ըստ իս, որոշակի բարդություն են ներկայացնում նաև Հայաստանին վերաբերող հատկապես 1918-1923թթ. ժամանակահատվածի առանձին միջազգային դիվանագիտական փաստաթղթերի, պայմանագրերի մասին (Սևրի հաշտության պայմանագիր, 10 օգոստոսի 1920 թ., Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև Ալեքսանդրապոլում կնքված պայմանագիր, 2 դեկտեմբերի 1920 թ., Ռուսաստանի և Թուրքիայի միջև պայմանագիր, Մոսկվա, 16 մարտի 1921 թ., Հայկական ՍՍՀ-ի, Ադրբեջանական ՍՍՀ-ի ու Վրացական ՍՍՀ-ի միջև մի կողմից և Թուրքիայի միջև մյուս կողմից, ՌՍՖՍՀ-ի մասնակցությամբ Կարսում կնքված բարեկամության պայմանագիր, 13 հոկտեմբերի 1921թ. և այլն) արդի պայմաններում հանրության մեջ արտահայտված երբեմն իրարամերժ մոտեցում-

ները, էական տարակարծությունները: Անտարակույս է, որ վերոհիշյալ փաստաթղթերի նախապատրաստմանն իրենց ուղղորդող դերն են ունեցել մասնակից երկրների հատուկ ծառայությունները:

Այսուհանդերձ, մենագրության հեղինակին՝ Հակոբ Հատիկյանին հաջողվել է շրջանառության հանված, թեկուզև որոշ դեպքերում հատվածաբար ներկայացված հավաստի պատմական աղբյուրների հենքի վրա բացահայտել Օսմանյան կայսրության և Թուրքական Հանրապետության հատուկ ծառայությունների վճռորոշ դերը տարածաշրջանային բարդ աշխարհաքաղաքական պայմաններում իրականացված եղեռնագործության մեջ:

Այս առումով առանձնահատուկ գնահատականի է արժանի նաև պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Ա. Ավագյանը, որի տրամադրած՝ Ստամբուլի արխիվային չհրատարակված նյութերը թույլ են տալիս լուսաբանել Օսմանյան կայսրության հատուկ ծառայությունների գործունեության մարտավարության առանձին խնդիրներ: Ըստ որում, բերված օրինակներով որոշակիորեն փաստարկվում է պանիսլամիզմի և պանթյուրքիզմի գաղափարախոսությամբ տոգորված պետական մարմինների, ոչ կառավարական միավորումների, կուսակցությունների, առանձին բռնապետ գործիչների և թուրքական հատուկ ծառայությունների կողմից ազգային փոքրամասնությունների, բնակչության այլադավան և էթնիկական հատվածների նկատմամբ որդեգրված արմատական ծայրահեղ ազգայնական, թշնամական գործելակերպի ընդհանրությունը: Ավելին՝ նշմարվում է առանձին վճռորոշ միջադեպերում Թուրքիայի հատուկ ծառայությունների վերկուսակ-

ցական, վերպետական դիրքորոշումը (վարքագիծը)՝ ուղղորդված արևմտյան երկրների (Մեծ Բրիտանիա, Գերմանիա) համապատասխան մարմինների կողմից:

Աշխատության հեղինակի մասնագիտական պատրաստվածությունն էապես նպաստել է Թուրքիայի հատուկ ծառայությունների գործունեության առանձին շերտերի բնութագրերը վեր հանելուն, ուստի, պատահական չէ, որ հիմնահարցը բազմակողմանի քննության է առնված ամբողջ տարածաշրջանային հոլովույթում (Կովկաս, Արևմտյան Հայաստան և այլն): Ի թիվս այլ եղանակների ու ձևերի՝ համոզիչ օրինակներով հիմնավորվել է հետախուզական և հակահետախուզական ստորաբաժանումների քայքայիչ գործունեության, հայկական միջավայր հատկապես գործակալական ներթափանցման մեթոդը:

Հ. Հատիկյանը թեմայի ուսումնասիրության ընթացքում չի շրջանցել քրդական գործոնը, ինչը թելադրված է նաև մեր օրերի իրողություններով:

Հանրահայտ է, որ օտարերկրյա հատուկ ծառայությունների և կազմակերպությունների հետախուզական և այլ քայքայիչ գործունեության ռազմավարական նպատակները, խնդիրները, նկրտումները և ուղղությունները միշտ պայմանավորվում են սեփական երկրի գերակա ազգային շահերով և արտաքին քաղաքականության դոկտրինով, որոնցից էլ բխում են հետախուզական և հակահետախուզական հայեցակարգերը: Թուրքիայի, նրա հատուկ ծառայությունների գործունեության և պանթյուրքական կազմակերպությունների պարագայում այդպիսի հիմնարար քաղաքական ծրագրով հանդես է գալիս պանթուրքիզմի դոկտրինը: Այստեղից էլ անհրաժեշ-

տություն է ծագում գիտականորեն ուսումնասիրել պանթյուրքական գաղափարախոսությունը կրող հատուկ ծառայությունների ստեղծման և զարգացման մեթոդաբանական հարցերը:

Ի մի բերելով վերոգրյալը՝ Թուրքիայի հատուկ ծառայությունների ստեղծման և զարգացման պատմության մեթոդաբանական հարցերի գիտական ուսումնասիրման սկիզբ կարելի է համարել Հակոբ Հատիկյանի կողմից փաստավավերագրական հենքի վրա իրականացված հանրամատչելի համալիր աշխատանքը:

Գնդապետ Նավասարդ Մնացականի Մինասյան

04.03.2016թ.

Պրոֆեսոր Վանիկ Վիրաբյանի խոսքը

Հակոբ Հատիկյանի աշխատությունն այն ինքնատիպ և թարմ շունչ ունեցող գործերից է, որը, նվիրված լինելով հատուկ ծառայությունների պատմության ոչ վաղ անցյալի դրվագներին, լավ հնարավորություն է ընձեռում ընթերցող հասարակությանն առաջին անգամ ծանոթանալ և խորամուխ լինել արևմտահայության շրջանում 1878-1923 թվականներին թուրքական հատուկ ծառայությունների քայքայիչ-հակահայկական բնույթի գործողություններին:

Հակոբ Հատիկյանի մենագրությունը վերաբերում է Հայոց պատմության նորագույն ժամանակաշրջանի կարևորագույն և չլուսաբանված հիմնախնդիրներից մեկին, և հնարավորություն է տալիս ավելի ամբողջական և հանգամանալից լուսաբանել Արևմտահայաստանի պատմության սպիտակ էջերը, այն հնարավորինս ավելի ավարտուն և լիարժեք դարձնել:

Աշխատանքը նաև ձեռք է բերում արդիական հնչեղություն արդի փուլում Թուրքիայի հատուկ ծառայությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրականացվող քայքայիչ գործողությունների պայմաններում:

Հետխորհրդային ժամանակաշրջանում, անկախության գործընթացների պայմաններում հայկական պատմագիտության մեջ տեղի ունեցան լուրջ տեղաշարժեր և պատմաքննական էական վերանայումներ, այսպես կոչված, սպիտակ էջերի ուսումնասիրության ուղղությամբ: Այդ առումով արդիական մեծ հնչեղություն ձեռք բերեցին նաև այն հարցերը,

որոնք կապված էին գաղտնի կառույցների համակարգի և, մասնավորապես թուրքական հատուկ ծառայությունների ստեղծման ու գործունեության հետ, վերջիններիս կողմից ծավալած քայքայիչ-դավադրական գործողություններին, որոնք մինչ այդ գործնականում բոլորովին չէին ուսումնասիրվել և, ըստ այդմ, արժանվույն չէին գնահատվել: Այդ հարցում որոշակի նշանակություն ունի Հակոբ Հատիկյանի ուշագրավ և դիտարժան աշխատանքը:

Հեղինակն անդրադառնում է Թուրքիայում հետախուզական ծառայության ձևավորման խնդրին, գործակալական ցանցին և դրա մեջ ներգրավված բարձրաստիճան թուրք չինովնիկներին՝ մասնավորապես նշելով, որ այդ գործընթացների վրա ազդեցություն է թողել նաև հետախուզական գործունեություն իրականացնող, այսպես կոչված, Վենետիկի Դիվանագիտական փոստային բյուրոն: Հ. Հատիկյանը արդարացիորեն կարևորում է նաև այն հանգամանքը, որ թուրքական իշխանությունների կողմից հետախուզական գործի մեջ ակտիվորեն ներգրավվում էին դիվանագիտական ներկայացուցիչներ (ամենևին գաղտնիք չէ, որ այսօր էլ տարբեր երկրների դիվանագիտական ներկայացուցչությունները գործնականում հանդիսանում են հետախուզական գործի կազմակերպման կենտրոնատեղիներ)՝ ասվածին տեղին հավելելով այն կարևոր եզրահանգումը, որ հետախուզական և հակահետախուզական գործունեության կառավարման գործառույթներն իրականացնում էր մեծ վեզիրի վարչությունը: Ըստ հեղինակի տրամաբանված եզրահանգման՝ այդ համակարգը կոչված էր քայքայել հայ ազգային-ազատագրական շարժումները, անջատողականու-

թյուն և թշնամանք սերմանել ինչպես հայության տարբեր հատվածներում և քաղաքական-կուսակցական ուժերի շրջանում, այնպես էլ Օսմանյան կայսրությունը բնակեցնող այլ ժողովուրդների մեջ: Հ. Հատիկյանը կարևոր փաստ է արձանագրում. որպես մշտապես գործող պետական մարմին Թուրքիայի հետախուզական ծառայությունը ստեղծվեց Աբդուլ Համիդի օրոք, որի դերը կատարեց Յլդըզը:

Անդրադարձ կատարելով Արևմտահայաստանում ծավալված ազգային-ազատագրական շարժման տարեգրությանը և նշելով այդ շարժման ձախողումների, սայթաքումների, դրանում մեծ տերությունների խաղացած շահամետ դերակատարման մասին, որի վեաբերյալ կա հսկայածավալ գրականություն՝ հեղինակը միանգամայն հիմնավոր կերպով կարևորել է այդ իրադարձությունների խորքային նոր ծալքերի բացահայտումը՝ կապված հայ ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ թուրքական հատուկ ծառայությունների կողմից կիրառված գործելաոճի հետ՝ այդ թվում լուսաբանելով «Յըլդըզ» կոչված հետախուզական ծառայության, «Հատուկ կազմակերպության» և այլ կառույցների ծավալած քայքայիչ-դավադրական հակահայկական գործունեության ցայսօր չուսումնասիրված էջերը: Հեղինակը վստահորեն ձգտել և կարողացել է հնարավորիս սուղ աղբյուրների և գրականության պայմաններում պարզաբանել թուրքական հատուկ ծառայությունների կողմից արևմտահայության ազգային–ազատագրական շարժման ջլատմանը և ոչնչացմանն ուղղված թուրքական հատուկ ծառայությունների հայաջինջ քայլերը՝ աշխատելով ունենալ իրենց գործակալական ցանցը հայության շրջա-

նում, խոչընդոտել ազգային-կրոնական, հասարակական գործիչների կապերի հաստատմանը տարբեր երկրների պետական-քաղաքական գործիչների հետ, առավել ևս անհնարին դարձնել արևմտահայության համընդհանուր ապստամբության հնարավոր բռնկման հնարավորությունը, ինչին ձգտում էին առավել հեռատես և նպատակային հայդուկապետերը և կուսակցական առաջնորդները:

Ի՞նչն է աշխատությունում շատ արդիական: Այն, որ Հ. Հատիկյանը կարևորել է արևմտահայության զանգվածային կոտորածներում և հայոց Մեծ եղեռնում թուրքական հատուկ ծառայությունների խաղացած դերը, որոնք հայ ազգային-ազատագրական պայքարն արմատախիլ անելու համար զգալի ջանքեր են գործադրել՝ ձգտելով ձեռք բերել անհրաժեշտ տեղեկություններ այն գլխավորող հայ ազգային կուսակցությունների գործունեության քողարկված քայլերի մասին: Հ. Հատիկյանը կարևոր տեղ է հատկացնում նաև թուրքական հատուկ ծառայությունների խաղացած դերին քրդերին, չերքեզներին ընդդեմ հայության ջարդարարական գործողությունների դրդման և ուղղորդման հարցում, որը ցայտուն կերպով դրսևորվեց Մեծ եղեռնի տարիներին:

Անդրադառնալով արևմտահայության շրջանում թուրքական գաղտնի ծառայությունների հակահայ գործունեության բացահայտմանը՝ Հ. Հատիկյանի կողմից տեղին բերվում է Զեյթուն քաղաքի և գավառի հայության օրինակը, եզրահանգելով, որ այդ ամենի նպատակն էր պառակտել լեռնականների միասնությունը և հեշտացնել Զեյթունի հնազանդեցման և կիսանկախ վիճակի վերացման գործը:

Հ. Հատիկյանը այս կարևոր հիմնախնդրին իր սկզբունքային անդրադարձում կարևորում է հայտնի թուրք պետական գործիչ Միդհատ փաշայի կողմից Օսմանյան կայսրությունում հակահետախուզության համակարգված մարմին ստեղծելու հարցը՝ ավելացնելով, որ վերջինս էլ իր հերթին օգտակար եղավ հետախուզության համար զանազան հակահայկական օպերատիվ միջոցառումների իրականացման ընթացքում, որոնց գլխավոր նպատակը հայերի համախմբման և հնարավոր ապստամբական տրամադրությունները, ձգտումները և հակաթուրքական գործողություններ հանդարտացնելն էր, իսկ ավելի շուտ՝ պարզապես այդ ելույթներն ամեն կերպ ճնշելը, որպեսզի հայերը չհետևեն Բոսնիայի և Հերցեգովինայի օրինակին: Հ. Հատիկյանը նաև գտնում է, որ Օսմանյան հետախուզության նպատակներից մեկն էլ հայկական քաղաքացիական հասարակության կազմալուծումն ու չեզոքացումն էր, իսկ վերջին հաշվով՝ թուլացումը և ջլատումը, և այդ առումով հեղինակի կողմից բերված փաստերը միանգամայն դիտարժան են: Հակոբ Հատիկյանը նաև եզրահանգում է, որ թուրքական հատուկ ծառայությունների նպատակներից մեկն էլ հայկական ներհամայնքային հակասությունները սրելն էր՝ էլ ավելի թուլացնելով և ներսից պառակտելով այն:

Հակոբ Հատիկյանը, անդրադարձ կատարելով ազգային-ազատագրական պայքարի միջոցներին և եղանակներին, կարևոր հետևություն է անում այն մասին, որ Յըլդըզ (սուլթանական պալատի անվանումով) թուրքական հատուկ ծառայությունը աչքի էր ընկնում իր գործակալների լայն ցանցով՝ անմիջականորեն ենթարկվելով սուլթանի պալատին և

հաճախ նույնացվելով նրա հետ: Հաջորդիվ Հ. Հատիկյանը հետաքրքիր փաստեր է բերում հայ հեղափոխական և այլ կազմակերպությունների, այդ թվում «Սև Խաչի» շրջանում ոստիկանների քողածածկված գործողությունների մասին: Միանգամայն հետաքրքրքրական է Հ. Հատիկյանի կողմից բերված պատմափաստը Սոֆիայի Հ.Յ. Դաշնակցության կոմիտեի նախաձեռնությամբ և բուլղարական կառավարության համաձայնությամբ բացված զինվորական դպրոցի մասին, որը, ըստ ձեռք բերված պայմանավորվածության, պետք է գործեր խիստ գաղտնի, որի մասին թուրքական և այլ երկրների հետախուզական ծառայությունների տեղեկացվածությունը պետք է բացառվեր, և որի դասընթացներին ներգրավվեցին նաև Գարեգին Նժդեհը և ուրիշներ:

Հ. Հատիկյանն ընդգծում է թուրքական հատուկ ծառայությունների քայքայիչ-հակահայ դերակատարումը 1894-1896թթ. ջարդերում՝ անդրադառնալով սուլթանի հրահանգին՝ անհրաժեշտ տեղեկատվություն ձեռք բերելու Ս.Դ. Հնչակյան, Վերակազմյալ Հնչակյան և այլ կուսակցությունների գործունեության մասին:

Հետաքրքրքական է նաև Հ. Հատիկյանի բերած ուշագրավ փաստը՝ կապված 1896թ. օգոստոսի 26-ի «Բանկ-Օտոման» գործողության հետ, ըստ որի՝ օսմանյան գաղտնի ծառայությունները նախապես տեղեկություններ ունեին բանկի գրավման դիտավորության մասին, սակայն միտումնավոր չկանխարգելեցին այն՝ դա օգտագործելով աշխարհի աչքերում հայերի պլանավորվող սպանդն արդարացնելու համար: Թուրքական իշխանություններն, ընդհակառակը, աշխատեցին քողարկված մեթոդներով

էլ ավելի գրգռել ահաբեկչական գործողության մասնակիցներին, և ըստ հեղինակի՝ թուրքական հատուկ ծառայությունները այդ նույն սցենարը կրկնեցին 1895թ.՝ Բաբը Ալիի ցույցի ժամանակ, որի հետևանքը եղան հայերի կոտորածները, ինչը միանգամայն թարմ խոսք է հայ պատմագիտության մեջ: Կարծում ենք, որ պատմագիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև Հ. Հատիկյանի այն եզրահանգումը, որ 1894-1896թթ. կոտորածները նախապես պլանավորված էին թուրքական իշխանությունների կողմից, որոնց իրագործման համար Օսմանյան կայսրությունում կիրառվեցին հատուկ ծառայություններին բնորոշ նոր տեխնոլոգիաներ, որոնք ընդհանուր էին կայսրության բոլոր նահանգների համար: Դրանց տխրահռչակ ժառանգորդը հանդիսացավ, այսպես կոչված, «Հատուկ կազմակերպությունը», որն այդ բարբարոսական եղանակները իրագործեց Մեծ եղեռնի օրերին:

Հ. Հատիկյանը փաստում է այն լրտեսական մթնոլորտի մասին, որը ստեղծված էր հայերի շուրջ, որ այդ գործի մեջ ներգրավված թուրքական դեսպանություններն ու հյուպատոսարաններն իրենց իրազեկիչների միջոցով հետևում էին հայության անցուդարձին, զինված խմբերի հնարավոր գործողություններին, և, որոշ դեպքերում, օգտագործելով նաև անգլիական և ֆրանսիական աղբյուրներից ձեռք բերված տեղեկույթը, հայկական նախապատրաստությունների, դեպի Եվրոպա ուղղված դիմումագրերի և հայկական շարժումների ակտիվիստների մասին: Որոշ դեպքերում իրենք էին հրահրում միջադեպեր և ստեղծում իրավիճակներ, որոնց նպատակն էր կանխել և արմատախիլ անել հայկական

հնարավոր հուժկու ապստամբության սպառնալիքը: Հ. Հատիկյանը ընդգծում է Մեծ Բրիտանիայի և Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների մշտական համագործակցության փաստը (որը, կարելի է ասել, վերաբերում է նաև այլ պետություններին), ինչպես նաև այն, որ բրիտանական հետախուզությունը տեղեկատվական լուրջ աղբյուր էր թուրքական հատուկ ծառայությունների համար հայ ազատագրական շարժման վերաբերյալ, որը կարևոր դեր խաղաց հայ հեղափոխականների գործունեության մեջ տեղ գտած սայթաքումների և ձախողումների համար:

Հեղինակը փաստում է օսմանյան կառավարության հատուկ ծառայությունների և ընդհանրապես թուրքական կառավարության հետաքրքրվածության մասին երիտթուրքերի և հայերի, ՀՅԴ հետ հնարավոր կապերի, համագործակցության հարցերով, չնայած երիտթուրքերը թե՛ հնչակյաններին, և թե՛ ՀՅԴ-ին աներկմիտ հասկացրել էին, որ իրենք պետք է հայ ժողովրդի անունից հրաժարվեն Հայաստանի ինքնավարության պահանջից:

Հ. Հատիկյանը պատմաքննական վերլուծության է ենթարկում «Հատուկ կազմակերպության» դերակատարությունը ցեղասպանության մեջ: Այս առումով հետաքրքիր է հեղինակի կողմից շրջանառված փաստն այն մասին, որ հայտնի ոճրագործ և հայասպան Բեհաէդդին Շաքիրն իր գործակալն ուներ Էրզրումում 1914թ. սեպտեմբերին հրավիրված ՀՅԴ 8-րդ ժողովում և մանրամասն տեղեկություններ էր ստանում կատարվածի մասին, և ըստ այդ գործակալական տվյալների, իբր թե ժողովի մասնակիցները, անզգույշ պահելով իրենց, նիստերի ավարտից հե-

տո հավաքվում էին ռուսական հյուպատոսությունում, որտեղ տեղի ունեցած քննարկումների մասին Բ. Շաքիրը քաջատեղյակ էր, չնայած, դրա հետ մեկտեղ, հեղինակը նշում է, որ երբեմն էլ հայերն էին կարողանում հակազդել նրանց: Եվ դա այն դեպքում, երբ, ընդհանուր առմամբ գործնականում չկար թուրքերին հակազդող որևէ լուրջ կառույց, որը տիրապետեր թուրքերի գաղտնի պլանների մասին տեղեկատվությանը, և դա ազգային-ազատագրական շարժման թույլ կողմերից էր:

Հ. Հատիկյանը համառոտ անդրադարձ է կատարում հայ հետախույզների գործունեությանը Առաջին աշխարհամարտի կովկասյան ռազմաճակատում: Ըստ էության, նորովի մոտեցում է ցուցաբերվում Սեբաստացի Մուրադի կերպարին, որի շնորհիվ ջոկատի շտաբը ժամանակին տեղեկանում էր թուրքերի և քրդերի կողմից նախապատրաստվող հարձակումների, նրանց ուժերի կենտրոնացման, տեղաշարժերի և ռազմուժի մասին: Գիտական շրջանառության մեջ են դրվում հայ հետախույզներ Չախալյանի, Տեր-Վարդանյանի, ինչպես նաև Անդրանիկի, Քեռու ջոկատների հետախույզների, անշուշտ, Կովկասյան IV բանակային կորպուսի հետախուզական բաժանմունքի աշխատակից Տիգրան Դևոյանցի և այլոց անունները, որոնք մասնավորապես տեղեկացված էին Երզնկայի, Սարիղամիշ-Կարսի շրջաններում թուրքական զորքերի տեղաշարժի, Դերսիմի քրդերի տեղաշարժի, թուրքերի հետ նրանց ունեցած հարաբերությունների մասին և այլն:

Մենագրության մի շարք էջեր նվիրված են թուրքական գաղտնի ծառայությունների գործունեությանը Կովկասում 1918-1921 թվականներին: Փաստ-

վում է թուրք գործակալների, կերպարանափոխված իթթիհադականների առկայությունը Ադրբեջանում, որը հենակետ դարձավ Հայաստանի Հանրապետության՝ մահմեդականներով բնակեցված շրջաններում հակահայկական խլրտումներ առաջ բերելու համար:

Այսպիսով՝ հրապարակի վրա է մի ուշագրավ աշխատություն, որում, մեր կարծիքով, հաջող փորձ է արված վերհանել և ներկայացնել արևմտահայության նկատմամբ թուրքական գաղտնի ծառայությունների 1878-1923թթ. գործունեության մի շարք կարևոր դրվագների ամբողջական նկարագիրը, որը գործնականում հայ պատմագիտության մեջ ոչ բավարար ուսումնասիրված հիմնախնդիրներից է: Այն լույս է սփռում արևմտահայության շրջանում թուրքական հատուկ ծառայությունների կարևորագույն այս կամ այն օղակի գործունեության վրա, հնարավորություն տալիս ավելի բազմակողմանի պատկերացում կազմել տվյալ ժամանակաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակում այդ ծառայությունների սադրիչ և հակահայկական ուղղվածության այլ գործողությունների մասին:

Պատմական գիտությունների դոկտոր
պրոֆեսոր ՎԱՆԻԿ ՀՐԱՆՏԻ ՎԻՐԱԲՅԱՆ

25.01.2016թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թուրքական Հանրապետության հատուկ ծառայությունների կողմից հայ ժողովրդի (ՀՀ, ԼՂՀ, Սփյուռք) դեմ իրականացվող գործունեության պայմաններում անհրաժեշտություն է ծագում նաև այլ տեսանկյունից անդրադառնալ 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի արևմտահայության պատմությանը, փորձել հասկանալ հայ ազգային-ազատագրական պայքարի ձախողումների ու առանձին դեպքերում հաջողությունների իրական, երբեմն սովորական աչքի համար անտեսանելի պատճառները, դասեր քաղել դրանցից և մշակել համապատասխան նախադրյալներ՝ ներկայիս սպառնալիքների հակազդմանն ուղղված առավելագույնս արդյունավետ պայքար իրագործելու համար:

Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների, ինչպիսիք էին «Յըլդըզ» հետախուզական ծառայությունը (Yıldız İstihbarat Teşkilatı) և «Հատուկ կազմակերպությունը» (Teşkilat-ı Mahsusa), ժառանգորդ հանդիսացող Թուրքիայի ներկայիս Ազգային հետախուզական կազմակերպությունը (Milli İstihbarat Teşkilatı), առավել կատարելագործված միջոցներով, մեթոդներով, լայնածավալ մարդկային ու նյութական ներուժով, ինչպես նաև օգտագործելով Ադրբեջանի ողջ ռազմաքաղաքական և դիվանագիտական զինանոցը, շարունակում է հակահայկական գործունեությունը գրեթե նույն ձեռագրով և հե-

տախուզական-քայքայիչ գործողությունների այն տրամաբանությամբ, որոնք բնորոշ էին օսմանյան Թուրքիայի գաղտնի ծառայություններին:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է դեռևս չուսումնասիրված հիմնախնդրի, այն է՝ արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի կասեցմանն ուղղված Օսմանյան կայսրության, ինչպես նաև դրա ժառանգորդը հանդիսացող Թուրքական Հանրապետության գաղտնի ծառայությունների գործունեության պարզաբանման, դրան առնչվող պատմական փաստերի վերհանման կարևորությամբ:

Նշված ժամանակահատվածի պատմության էջերի առանցքներն ուսումնասիրված են հայ և օտարերկրյա պատմաբանների կողմից: Օսմանյան կայսրությունում հայ ազգային-ազատագրական պայքարի, քրիստոնյա հպատակ ժողովուրդների դեմ ուղղված ներքին և արտաքին քաղաքականությանը, ինչպես նաև մեծ տերությունների աշխարհաքաղաքական նկրտումների և դրանց կոնկրետ դրսևորումների վերաբերյալ կան բազմաթիվ ու տարաբնույթ գիտական աշխատություններ, հոդվածներ, հուշեր, փաստաթղթերի ժողովածուներ: Արևմտահայության ազատագրական պայքարին նվիրված աշխատությունները հիմնականում հետազոտվել են ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, իրավական և այլ ուղղություններով: Սակայն կարևոր ու դեռևս չուսումնասիրված ոլորտներից է հայ ազգային-ազատագրական պայքարի առանձնահատկություններին վերաբերող առանձին խնդիր-

ների ուսումնասիրումը և պարզաբանումը, որոնք շաղկապված են օսմանյան Թուրքիայի գաղտնի ծառայությունների գործունեության հետ: Ընտրված թեմայի այժմեականությունն առավել ընդգծվում է նրանով, որ թուրքական հատուկ ծառայությունների հակահայկական գործունեության մեթոդաբանությունն ու գործելաոճն ընդհանուր առմամբ շարունակվում են մինչ օրս[1]:

Մենագրության հիմնական նպատակն է գիտականորեն վերլուծել և պարզաբանել Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների գործունեության այն հատվածը, որի թիրախ էր հանդիսանում արևմտահայության ազգային-ազատագրական պայքարը, ինչպես նաև լուսաբանել արևմտահայության առանձին գործիչների շփումները թուրք պետական, քաղաքական, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, բացահայտել դրանց բնույթը, գնահատել այդ շփումների արդյունքում հայ գործիչների կողմից ընդունված որոշումներն ու իրականացված գործողությունները:

Աշխատության նպատակներից են նաև՝

- համակողմանի հետազոտել արևմտահայության առանձին, այդ թվում՝ գաղտնի կազմակերպությունների պայքարի ձևերն ու մեթոդները Օսմանյան կայսրության հետախուզական մարմինների և գաղտնի ոստիկանության գործունեության դեմ պայքարի համատեքստում, գնահատել դրանք մար-

[1] Տե՛ս Tuncay Özkan, Milli İstihbarat Teşkilatı (MİT) in Gizli Tarihi, İstanbul, ALFA, 2003, s. 162.

տական գործողությունների մարտավարության պահանջների տեսանկյունից ու վեր հանել ձախողումների իրական պատճառները.

- հետազոտել Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների, մասնավորապես, գաղտնի ոստիկանության և «Հատուկ կազմակերպության» կառուցվածքը, ուժերը, միջոցները, ավանդույթները, բացահայտել աշխատանքի ձևերը, մեթոդներն ու եղանակները, ի հայտ բերել դրանց գործակալական ապարատի կառուցվածքն ու օպերատիվ-հետախուզական միջոցառումների ռազմավարությունն ու մարտավարությունը:

Նշված նպատակներին հասնելու համար մեր կողմից առաջ են քաշվել հետևյալ հետազոտական խնդիրները.

- Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների կազմավորման, դրանց գործունեության բնույթի ուսումնասիրումը ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի համատեքստում,

- Աբդուլ Համիդ 2-րդի կառավարման տարիներին արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի ճնշման գործում «Յըլդըզ» կազմակերպության դերակատարության քննությունը,

- Արևմտյան Հայաստանում 1894-1908 թթ. զանգվածային կոտորածների վերլուծությունը «Յըլդըզ» - 4-րդ բանակ - համիդիե եռանկյուն ուժային համակարգի գործունեության համատեքստում,

- հայ ազգային կուսակցությունների վերաբերյալ Օսմանյան կայսրության դիվանագիտական

ներկայացուցչությունների կողմից հետախուզական բնույթի տեղեկությունների հայթայթման ու իրացման գործընթացի լուսաբանումը,

- «Հատուկ կազմակերպության» կազմավորման, կառուցվածքի, խնդիրների, գործառույթների, գործելակերպի ուսումնասիրումը, ինչպես նաև գործակալական ապարատի կառուցվածքի բացահայտումը,

- Հայոց ցեղասպանության կազմակերպման և իրականացման գործում «Հատուկ կազմակերպության» դերի ու նշանակության լուսաբանումը,

- Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունների հետախուզական գործունեության այն հատվածի ուսումնասիրումը, որն առնչվում է Թուրքիայում ծավալված ազգայնական շարժման հետ,

- հայ-քրդական համատեղ գործունեության վտանգի կանխմանն ուղղված Հանրապետական Թուրքիայի գաղտնի ծառայությունների (ՄԱՀ) գործունեության ուսումնասիրումը:

Մենագրական հետազոտության օբյեկտ է ընտրվել արևմտահայության պայքարն Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների ծպտյալ գործակալական ցանցի գործունեության պայմաններում:

Հետազոտության առարկան են արևմտահայության պայքարի կոնկրետ դրսևորումներն Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների հակազդման պայմաններում:

Ելնելով թեմայի առանձին հարցերի տեսական և գործնական առավել հանգամանալից լուսաբան-

ման և վերլուծության անհրաժեշտությունից՝ կիրառվել են դիալեկտիկական, պատմահամեմատական, տրամաբանական, վերլուծական և նկարագրական մեթոդները:

Առանձին ուշադրություն է դարձվել հետախուզական գործունեության հատուկ մեթոդաբանությանը:

Դրանց համալիր կիրառումը նպատակ է հետապնդել ապահովել հետազոտության անաչառությունն ու արժանահավատությունը:

Մենագրության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1878-1923 թթ., սակայն, մի շարք առանցքային հիմնահարցերի լուսաբանման անհրաժեշտությունից ելնելով, անդրադարձել ենք 19-րդ դարի 60-ական թվականներին: Ժամանակահատվածի ընտրությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- թեմայի ելակետային դրույթն է արևմտահայության պայքարը և վերջինիս բնաջնջման քաղաքականության կիրառումը Օսմանյան կայսրությունում: Հաշվի առնելով, որ Օսմանյան կայսրության պետականորեն մշակված առաջին ցեղասպանածին ծրագրերը թվագրվում են 19-րդ դարի 20-ական թվականների վերջերից[1], երբ տարածքային ամբողջականության պահպանման նպատակով արևմտամետ բարենորոգումների գործընթացի քողի ներքո քրիստոնյա հպատակ ժողովրդների դեմ առաջա-

[1] Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920թթ.), Եր., 2009, էջ 14, 118-119:

ցավ հզոր հակազդեցություն երկրի մուսուլմանական (թուրքեր, քրդեր և չերքեզներ) ազգաբնակչության շրջանում, այս ժամանակահատվածի ուսումնասիրությունը թույլ է տալիս շոշափել կայսրության գաղտնի ծառայությունների գործելաոճը, ցույց տալ դրանց տեղն ու դերը ցեղասպանական ծրագրերի իրականացման գործում:

- 1920-ական թթ. ձևավորվեց հայ-քրդական պայքարը, ինչը հանդիսացավ հանրապետական Թուրքիայի հատուկ ծառայությունների գործունեության հիմնական ուղղություններից մեկը:

Այսպիսով՝ աշխատության մեջ ժամանակագրական սահմաններից դուրս որոշակի տվյալների օգտագործումը հնարավորություն է տալիս բացահայտել արևմտահայության պայքարի և Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների գործունեության կարևոր առանձնահատկությունները և դրանց զարգացման միտումները, ինչը ատենախոսության նպատակներից և խնդիրներից ելնելով, խիստ արդիական է:

Մենագրության մեջ առաջին անգամ հետազոտվել է արևմտահայության ազգային-ազատագրական պայքարը թուրքական գաղտնի ծառայությունների գործունեության համատեքստում: Կատարված գիտական վերլուծության արդյունքներով ապացուցվել է, որ արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի ընթացքում արձանագրված մի շարք անհաջողությունների խորքային պատճառները կապված են օսմանյան կայսրության

գաղտնի ծառայությունների գործունեության հետ:

Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել մի շարք սկզբնաղբյուրներ և արխիվային նյութեր Ռուսաստանի և Թուրքիայի արխիվներից: Հարկ է նշել, որ այդ աղբյուրներից շատերը միայն վերջերս են գաղտնազերծվել և տակավին հայտնի չեն մասնագետների լայն շրջանակներին:

Մենագրությունն ունի ինչպես գիտական, այնպես էլ կիրառական նշանակություն: Այն հնարավորություն է տալիս պարզաբանել թուրքական գաղտնի ծառայությունների գործունեության բնույթը, որոշ մեթոդները, հայատյաց քաղաքականության ակունքները, ինչը կարող է օգտագործվել հետագա հատուկ մշակումների համար:

Հետազոտման արդյունքները կարող են օգտագործվել թուրքական գաղտնի ծառայությունների հակազդման պայմաններում հայ ազգային-ազատագրական պայքարի պատմական նոր օրինաչափությունների բացահայտման համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գիտական և ուսումնական հաստատություններում համապատասխան առարկաների դասավանդման և գործնական պարապմունքների անցկացման, այլ շահագրգիռ հաստատությունների, կազմակերպությունների ու անհատ հետազոտողների կողմից գիտական և գործնական մշակումների ընթացքում:

Աշխատության համար որպես սկզբնաղբյուր օգտագործվել են Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ), Ռուսաստանի պետական ռազմապատմա-

կան արխիվում (РГВИА), Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության արխիվում (АВПРИ), Թուրքիայի վարչապետին կից Օսմանյան արխիվում (TC Başbakanlık Osmanlı Arşivi - BOA), Վրաստանի պետական արխիվում պահպանվող նյութերը:

ՀԱԱ նյութերից օգտագործվել են գեներալ Ն. Մորելի գրառումները, որոնք կարևոր տեղեկություններ են պարունակում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ռուս-թուրքական ռազմաճակատում գործող հայ հետախույզների մասին[1]: Ն. Մորելի վկայությամբ՝ Սեբաստացի Մուրադը, Չախալյանը, Տեր-Վարդանյանը և հայազգի այլ հետախույզները, հակառակորդի թիկունքում ղեկավարելով իրենց իսկ կողմից ստեղծած գործակալական ցանցը, թուրքական կանոնավոր բանակի և քրդական զինված միավորումների մասին անհրաժեշտ տեղեկություններ էին հայթայթում և զեկուցում Կովկասյան IV բանակային կորպուսի հետախուզական բաժանմունքի ղեկավարությանը:

Կարևոր տեղեկություններ են պարունակում նաև Հայաստանի Առաջին Հանրապետության ռազմական նախարարության հետախուզական բաժանմունքի պետ Տիգրան Դևոյանցի զեկուցագրերը, որոնք վկայում են թշնամու թիկունքում հայ հետախույզնե-

[1] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 201, Морель Н. М., К участию армян в Мировой войне 1914-1918гг. Действие на Кавказском фронте в период декабрь 1917года – апрель 1918 г. Подлинник, рукопись, на русском языке.

րի արդյունավետ գործունեության մասին[1]:

Հարկ է նշել, որ տվյալ արխիվային նյութերը և այլ օգտագործված վավերագրերը առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել Վ. Վիրաբյանի հեղինակած մի շարք մենագրություններում, գիտական հոդվածներում և դոկտորական ատենախոսությունում:

Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների կազմավորման, կառուցվածքի, գործունեության ուղղվածության, ձևերի և մեթոդների վերաբերյալ հարուստ տեղեկություններ են հաղորդում Ռուսաստանի արխիվները[2], որոնցից մի քանի փաստաթուղթ առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ[3]: Դրա հետ մեկտեղ, նույն խնդրի լուսաբանմանը նվիրված, օգտագործվել են նաև ռուսական, ռուսերեն թարգմանված օտարալեզու[4], այդ

---

[1] ՀԱԱ, Ֆ. 200, ց.1, qq. 42, 158, 441, 427, ֆ. 204, ց. 1, q. 133:

[2] Տե՛ս Архив Внешней Политики Российской Федерации (АВПРФ), ф. 151, ф. НАИ, серияА, д. 154, л. 34-35; Политархив, оп. 482, д. 1630, л. 134-135.

[3] РГВИА, ф. 2000, ГУГШ, оп I, док. N 1935, 2003, 2085, 2220, 2464-2466, 5171, ф. 5, д. 434, ф. 6, д. 891А; История шпионажа и службы по сбору информацй. Рукописный перевод с венгерского, т. 1, СПб, 1936;

АВП РФ, Азиатский департамент, д. 6, л. 4,д. 166, л. 53 (Записка о разысканиях следов шамилева гонцах к шейху Таха. Дополнение к сведениям, изложенным Ханьковым).

[4] Տե՛ս Новичев А. Д., История Турции, т. 1, изд. Лен. университета, 1963; Турецкий шпион при дворах христианских государей, СПб, 1778, перев. с франц; В. З. Джинчарадзе, История контрразведки в России, «Пограничник», 1946, NN10, 13; Н. А. Смирнов, Турецкая агентура под флагом ислама, «Вопросы истории,

թվում՝ թուրք հեղինակների[1] աշխատությունները:

Թուրքական արխիվային նյութերից օգտագործել ենք Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարության ֆոնդի առանձին նյութերը, որոնք նույնպես առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ և նոր տեղեկություններ են հաղորդում գաղտնի ոստիկանության կողմից Հ.Յ. Դաշնակցության ու Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցությունների աշխատանքները վերահսկելու կամ խափանելու վերաբերյալ[2]: Մասնավորապես՝ «Դաշնակցություն և Սոցիալ դեմոկրատական Հնչակյան կուսակցությունների մասին» վերնագրով ՆԳ նախարարության քաղաքական բաժնի (DH SYS) ֆոնդի 65-րդ թղթապանակի նյութերը, որոնք պարզա-

---

религии и атеизма», М., изд. Академии Наук СССР, 1950; Б. Н. Венедиктов, Использование панисламизма и пантюркизма разведками империалистических государств, М.,1958; Е. Ф. Лудшувейт, Турция в годы первой мировой войны, изд. МГУ, 1966; А. Бабаходжаев, Провал панисламистской авантюры английского ставленника Энвера в Средней Азии в 1921-1922 г.г., «Звезда Востока», Ташкент, 1951, N 12; Фелицин Е. Д. Князь Сефер бей Зан, политический деятель и поборник независимости черкесского народа, Кубанский сборник, т. X, с. 81.

[1] Տե՛ս Tarık Zafer Tunaya, Türkiye' de Siyasal Partiler, cilt 3, İttihatve Terakki, Bir Çağın, Bir Kuşağın, Bir Partinin Tarihi, İstanbul, 2000; Dr. Mustafa Balcioglu, Teskilat-IMahsusa` dan Cumhuriyete, Ankara, Nobel Yayin Dagitim, 2001.

[2] Տե՛ս TC Başbakanlık Osmanlı Arşivi – BOA, DH, SYS, dosya 65, vesika 2: Օսմանյան արխիվային նյութերը մեզ է տրամադրել մեր գիտական ղեկավար պ.գ.դ., պրոֆ. Արսեն Ավագյանը, ով 2004-2005թթ. ուսումնասիրություններ է կատարել Ստամբուլի օսմանյան արխիվում:

բանում են գաղտնի ոստիկանության հետախուզական աշխատանքի յուրահատկությունը և հայ ազգային կուսակցություններին հետևելու մեթոդները:

Հրատարակված թուրքական արխիվային նյութերից օգտագործվել է Օսմանյան արխիվների գլխավոր տնօրինության կողմից 2001թ. հրատարակված «Հայկական կոմիտեները (1891-1895)» փաստաթղթերի ժողովածուն[1], որում տեղ են գտել նաև Օսմանյան կայսրության գաղտնի ոստիկանության և հետախուզական կառույցի կողմից մեծ վեզիրին ու սուլթանին ներկայացված զեկուցագրերը հայ ազգային կուսակցությունների վերաբերյալ: Նշված զեկուցագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օսմանյան գաղտնի ոստիկանությունն ու արտերկրում գործող հետախուզական ցանցն առանձնակի ուշադրության կենտրոնում էին պահում Ս.Դ. Հնչակյան և Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունների գործունեությունը, քանի որ վերջիններս կապեր էին հաստատել եվրոպական անարխիստական կազմակերպությունների հետ, որոնց ահաբեկչական գործողությունները սարսափ էին առաջացնում եվրոպական տիրակալների մոտ, իսկ Աբդուլ Համիդ 2-րդն այդ կազմակերպությունների թիրախների ցանկում էր:

Վրաստանի պետական արխիվից օգտագործվել են Օսմանյան կայսրությունում ռուս հետախույզների տեղեկությունները պարունակող նյութե-

[1] Տե՛ս Ermeni Komiteleri (1891-1895), Ankara, 2001.

ը, որոնք վերաբերում են Կովկասում բրիտանական և թուրքական հետախուզությունների փոխհամագործակցությանը[1]:

Թեմայի համակողմանի հետազոտման համար կարևոր փաստագրական նյութեր են պարունակում «Արևմտյան Հայաստանի մասին Բրիտանական փաստաթղթերը»[2], որոնց մի մասի հնարավոր սուբյեկտիվ լինելու հանգամանքով պայմանավորված, դրանք օգտագործելիս դրսևորել ենք քննադատական մոտեցում: Բացի երկրում տիրող սոցիալական և քաղաքական անարդարությունների, անօրինականությունների, կաշառակերության և բռնությունների վերաբերյալ տեղեկություններից, Տրապիզոնում Մեծ Բրիտանիայի հյուպատոսի 1894թ. մարտի 31-ին դեսպանին ուղղած հաղորդագրության մեջ փաստացի և կոնկրետ օրինակներով նշվում է Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների կողմից հայերի դեմ կազմակերպված սադրանքների մասին: Դրանք արտահայտվում էին թուրքական գործակալների կողմից թռուցիկների պատրաստման ու տարածման ձևով, որոնց տակ դրվում էր «Կենտրոնական կոմիտեի նախագահ» ստորագրությունը՝ նպատակ ունենալով օգտագործել դրանք հայերի դեմ բռնություններն արդարացնելու համար[3]:

---

[1] Տե՛ս Центральный государственный исторический архив Грузии, ф. 11, оп. 2, д. 278, лл. 2-3.

[2] Տե՛ս British documents on Ottoman Armenians, vol. 1, (1856-1880), vol. II (1880-1890), Ankara, 1982.

[3] Նույն տեղում, 1 հ., էջ 182-184:

Ուշագրավ են նաև Կ.Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան Դուֆֆերինի 1881թ. դեկտեմբերին իր ղեկավարությանն ուղղված զեկուցագրերը, որոնք բացահայտում են Օսմանյան կայսրության արտաքին գործերի քարտուղարի տեղակալ Արթին Էֆենդիին որպես բրիտանական դիվանագիտական ծառայությունների, հետևաբար, հետախուզության համար սուլթանի ծրագրերի ու մտահղացումների մասին գաղտնի տեղեկատվության աղբյուր[1]:

Թեմայի հետազոտման առանցքայի աղբյուրագիտական հենքերից է «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի» ժողովածուն[2]: Տրապիզոնում տեղահանության և կոտորածի վերաբերյալ դատավարության նյութերը թույլ են տալիս պատկերացում կազմել «Թեշքիլաթը մահսուսա»-ի գործակալական ցանցի կառուցվածքի, ինչպես նաև գաղտնի աշխատանքներում առանձին անձանց ներգրավելու առանձնահատկությունների մասին:

Պատահական չէր, որ Բ. Շաքիրը, գտնվելով պաշտոնական հարաբերությունների մեջ ՀՅԴ ղեկավարության հետ, վերջիններիս շրջանում ուներ գործակալ, որը նրան ապահովում էր անհրաժեշտ տեղեկատվությամբ[3]:

---

[1] British documents… էջ 261:

[2] Տե՛ս Փափազյան Ա. Հ., Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Եր., 1989, էջ 167,168:

[3] Տե՛ս Teskilati Harpte Teskilati Mahsusa. «Vakit», 15-17, 11, 1933.

Օսմանյան կայսրության հետախուզական գործունեության միջոցների, մեթոդների և ձևերի մասին արժանահավատ տեղեկություններ է հայտնում Օսմանյան կայսրության ոստիկանապետ Մ. Խաղժետլաշեն[1], որը մանրամասնորեն նկարագրում է «Յըլդըզ» պալատի կառուցվածքն ու գործունեությունը և ընդգծում, որ բոլոր հարցերը լուծվում էին պալատում և պալատի գործակալների օգնությամբ:

Խաղժետլաշեն արժեքավոր տեղեկություններ է հայտնում այն մասին, որ բրիտանաթուրքական քաղաքական հարաբերություններից անկախ, որը հաճախ արտահայտվում էր իրավիճակային երկդիմի մոտեցումներով, Մեծ Բրիտանիայի և Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունները մշտապես համագործակցել են, ինչը ենթադրում է նաև ծպտյալ աղբյուրներից ձեռք բերած տեղեկատվության փոխանակում[2]: Տվյալ հանգամանքը վկայում է, որ օսմանյան գաղտնի ծառայությունների համար հայ ազատագրական շարժման վերաբերյալ լուրջ տեղեկատվական աղբյուր էր հանդիսացել նաև բրիտանական հետախուզությունը:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի Օսմանյան կայսրության Ներքին գործերի նախարար Նազըմ փաշայի հուշերը[3], որոնք կոնկրետ դեպքե-

---

[1] Տե՛ս Хаджетлаше М. Б., Убийца на троне (Записки начальника тайной полиции в Турции), Петроград, 1918.

[2] Նույն տեղում, էջ 166-167:

[3] Նազըմ փաշայի հուշերը. հայոց դահիճը կըպատմէ…, «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 1931, թիվ 1648-1738:

րով, փաստերով ու անուններով բացահայտում են, թե՛ ոստիկանության հետախուզական գործունեության առանձնահատկությունները՝ ուղղված հայկական «կոմիտեճինէրի» դեմ, թե՛ հայ հեղափոխականների շրջանում տիրող իրավիճակը: Չնայած Նազըմի՝ հայ լրտեսների ու մատնիչների անունները մատնանշելուն, նրա հուշերը արժեքավոր են երկու նկատառումներով՝ անհրաժեշտ տեղեկություն ստանալու համար հայազգի գործակալներ ներդնելով «կոմիտեճինէրի» շրջանում և այլ գործակալների միջոցով ստացված տեղեկատվության հավաստիության ստուգմամբ: Նազըմ բեյն իր հուշերում սարսափով է հիշատակում լրտեսների սպանությունների շարանը. «Ահա այսպես հայ յեղափոխական Դաշնակ կոմիտէն սկսած էր ասպարեզ կարդալ կառավարության, սպաննելով ոստիկանները և այն Հայերը, որոնք հավատարիմ կր մնային կառավարութեան»[1]: Խնդիրը խորապես հասկանալու և համապատասխան միջոցներ կիրառելու նպատակով ոստիկանության նախարարը որոշում է հայ լրտեսներից մեկին. «…որ դեռ ճանաչված չէր կոմիտեճինէրուն կողմէ, յարաբերութեան մեջ դնել հայ յեղափոխական կոմիտէին հետ:… կոմիտէի ամէնէն կատղած անդամներէն մէկն էր Հակոբը…: Լրտեսը ղրկեցի Հակոբի մոտ: Բարեկամացավ նրա հետ և մտավ կոմիտէին մեջ: Եվ օրը օրին ինձի լուր կուտար կոմիտէին որոշումնե-

[1] Նազըմ փաշայի հուշերը. հայոց դահիճը կըպատմէ…, «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 1931, թիվ 1748:

ռուն և ծրագրերուն մասին: Հակոբը ձերբակալվեց»[1]:

Ընդգծելով Օսմանյան կայսրության ոստիկանության գործելակերպը, նշենք, որ Հակոբի հարցաքննության ժամանակ Նազըմ փաշան մեծ տեղ էր հատկացնում այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հավաստիությանը՝ ստուգելով նաև լրտեսների հուսալիությունը:

Խաղժետլաշեի և Նազըմ փաշայի հաղորդած տեղեկությունները ճշտելու ու իրադարձությունները համադրելու նպատակով ատենախոսության մեջ օգտագործվել են նաև սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի քարտուղար Թահսին փաշայի հուշերը, որոնք հանդիսանում են այդ շրջանի իրադարձությունների և գաղտնի ծառայությունների գործունեության լուսաբանման համար օգտագործվող հիմնական աղբյուրներից մեկը[2]:

Կայսրության գաղտնի ծառայությունների կողմից վերահսկման մեխանիզմների կիրառման պայմաններում կարևորում ենք հայ առանձին հեղափոխական գործիչների գործունեությունն իրենց քողարկումը ապահովող առասպելապատման մշակման ուղղությամբ: Այս առումով՝ նորահայտ արժեքավոր նյութերը լուսաբանում են ՀՅԴ գործիչ Միքայել Տեր-Հովհաննիսյանի դրսևորած առանձնահատուկ ունակություններն ու հմտությունները օսմանյան

---

[1] Նազըմ փաշայի հուշերը. հայոց դահիճը կըպատմէ…, «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 1931, թիվ 1629:

[2] Տե՛ս Sultan Abdül Hamid, Tahsin Paşa'nın Yıldız Hatıraları, İstanbul, Boğaziçi Yayınları, 1999.

Թուրքիա իր ներթափանցումը կազմակերպելիս[1]: Չնայած փայլուն կերպով իրականացրած քողարկմանը[2], Մ. Տեր-Հովհաննիսյանի գործունեությունը ևս դատապարտված էր ձախողման, քանի որ վերջինիս կապավոր Հատիկի անզգույշ վարքագծի պատճառով նրա Երկիր մտնելու մասին իմացել էր Հնչակյան կուսակցության անդամ ոմն Տիգրանը, որն իր իսկ նախաձեռնությամբ ՀՅԴ գործչին մատնեց իշխանություններին:

1890-ական թվականներին Արևմտյան Հայաստանում ՀՅԴ-ի կազմակերպական կառույցների ձևավորման գործընթացի մասին արժեքավոր տեղեկություններ է պարունակում Գ. Խուդինյանի աշխատությունը[3]: Այս նպատակով ՀՅԴ-ի կողմից Երկիր ուղարկած «ուսուցիչներից» միայն Հ. Յուսուֆյանին հաջողվեց հարմարվել տեղի պայմաններին[4]: Վերջինս, գործելով գրեթե միայնակ, կարճ ժամանակում (1892-1893թթ.) կարողացավ ստեղծել այն նախադրյալները, որոնք հիմք հանդիսացան հետագայում ՀՅԴ Արևմտյան բյուրո ձևավորելու համար: 1893թ. Հ. Յուսուֆյանը ևս հայտնվեց ոստիկանության տեսադաշտում: Աշխատությունը կարևոր տեղեկություններ է հաղորդում մի շարք հայ լրտեսների

---

[1] Միքայել Տեր-Հովհաննիսյանի հուշերը, Ստեփանավան-Ծաղկաձոր, 1926-1927թթ.: Նյութերը տրամադրել է պ.գ.դ. Ռ. Սահակյանը:

[2] Նույն տեղում, էջ 99:

[3] Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Եր., 2006:

[4] Նույն տեղում, էջ 322:

ու մատնիչների մասին, որոնց նկատմամբ ՀՅԴ-ի կողմից կազմակերպվեցին պատժիչ գործողություններ[1]:

Հնչակյան կուսակցության ծրագրային դրույթների և հայ ազգային կուսակցությունների գործունեության ուղղվածության մասին կարևոր տեղեկություններ են պարունակում Կ. Իզմիրլյանի աշխատությունը[2]: Ուշագրավ են նաև Մաթեոս Իզմիրլյան պատրիարքի և Ներսես Խարախանյան վարդապետի ՀՅԴ երրորդ ընդհանուր ժողովին ուղղված վերլուծական նամակները Երկրի անցյալի, ներկայի և ապագայի վերաբերյալ, որոնցում կարևորվում էր բոլոր փոքրաթիվ ազգերի՝ հայերի, քրդերի, ասորիների ընդհանուր անկախ դաշնակցությունը[3]:

Օսմանյան կայսրության և Թուրքական Հանրապետության գաղտնի ծառայությունների ծագումնաբանության, պատմության, գործելաոճի և իրականացրած գործողությունների ուսումնասիրության տեսակետից արժեքավոր է թուրք հետազոտող, թուրքական գաղտնի ծառայության պատմության մասնագետ Թունջայ Օզքանի «Թուրքիայի հետախուզական ծառայության (MIT) գաղտնի պատմությունը» մենագրությունը, որտեղ կողմնակալության հետ մեկտեղ հեղինակը կարևոր տեղեկություններ է հաղորդում տարբեր ժամանակաշրջաններում Օսմանյան կայսրությունում և Թուրքիայում գոյություն

---

[1] Նույն տեղում, էջ 320, 328:

[2] Իզմիրլեան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալին և ներկայիս, Պեյրույթ, 1964, էջ 129:

[3] «Հայրենիք», 1931, թիվ 9:

ունեցող գաղտնի ծառայությունների մասին[1]:

Թուրք հեղինակ Բորա Իյիաթը թուրքական գաղտնի ծառայությունների կազմավորումն ու գործունեությունը դիտարկում է ժամանակակից Թուրքիայում գոյություն ունեցող, այսպես կոչված, «խորքային պետության» ձևավորման համատեքստում՝ ուսումնասիրության մեջ հիմնական շեշտը դնելով «խորքային պետության» ստեղծման և գործունեության ոլորտում գաղտնի ծառայությունների ունեցած դերակատարության վրա[2]:

«Հատուկ կազմակերպությանն» առնչվող հարցերի ուսումնասիրության համար օգտագործվել են թուրք պատմաբաններ Էմին Դեմիրելի «Գաղտնի կազմակերպությունները «Հատուկ կազմակերպությունից» մինչ մեր օրերը»[3] և Էրգյուն Հիչյըլմազի ««Հատուկ կազմակերպությունը» և հետախուզական կազմակերպությունները» մենագրությունները[4]:

Հայրենի պատմագիտության կողմից հանգամանալից ուսումնասիրված է արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի պատմությու-

---

[1] Տե՛ս Tuncay Özkan, Milli İstihbarat Teşkilatı (MİT)'in Gizli Tarihi, İstanbul, ALFA, 2003.

[2] Տե՛ս Bora İyiat, Hunlardan Günümüze Türk Derin Devleti, Ankara, 2008.

[3] Տե՛ս Emin Demirel, Teşkilat-ı Mahsusa'dan Günümüze Gizli Servisler, İstanbul, 2002.

[4] Տե՛ս Ergun Hiçyılmaz, Teşkilat-ı Mahsusa ve Casusluk Örgütleri, İstanbul, 1996.

նը[1], ինչը մենագրության համար հիմք է ծառայել, սակայն այդ պայքարի առանձին դրսևորումների, ինչպես նաև Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների հակահայկական գործունեության ուղղությունների, ձևերի և մեթոդների վերաբերյալ նյութերը սակավ են: Այս առումով՝ թեմային առնչվող աղբյուրագիտական արժեքավոր փաստագրական նյութեր են պարունակում Ա. Ավագյանի աշխատությունները, որոնցում քննության են առնված թուրքական գաղտնի ծառայությունների կազմավորումը և հայաջինջ գործունեությանը վերաբերող առանձին հարցեր[2]:

ՈՒշագրավ է նաև Միքայել Վարանդյանի աշխատությունը, որում թեմային առնչվող կարևոր տե-

---

[1] Տե՛ս Գալուստյան Գ., Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նիւ-Եորք, 1934, Ներսիսյան Մ. Գ. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Եր., 1955; Համբարյան Ա. Ս., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1979; Կիրակոսյան Ջ. Կ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19 դ. 80-ական թթ.), Եր., 1980, Համբարյան Ա. Ս., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրական ուղիների մասին, Եր., «Հայաստան», 1990, Սիմոնյան Հր. Ռ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., «Հայաստան», 1991, Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում, Եր., 2004, Тунян В. Г., Младотурки и Армянский вопрос, Ереван, 2005 և այլն:

[2] Տե՛ս Ավագյան Ա., Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում (1920-1971 թթ.), Եր., 2011, նույնի՝ Геноцид армян: механизмы принятия и исполнения решений, Ереван, 2013.

ղեկություններ կան հայկական և թուրքական գաղտնի կազմակերպությունների կազմավորման ու գործունեության մասին[1]: Մասնավորապես, այդ կազմակերպությունների համար իր գաղտնի մասնական կառուցվածքի շնորհիվ օրինակ էր ծառայում Իտալիայի միավորման ընթացքում արդյունավետ դերակատարություն ունեցած «Երիտասարդ Իտալիա» կազմակերպությունը:

Ուշադրության է արժանի ռուսական հետախուզության գեներալ-մայոր Լև Սոցկովի գիրքը, որում օգտագործվել են ՌԴ-ի արտաքին հետախուզության արխիվում պահվող բազմաթիվ փաստաթղթեր, որոնք բացահայտում են կովկասյան տարածաշրջանում թուրքական հատուկ ծառայությունների ռազմավարությունը և գործելակերպը[2]:

Թեմայի ուսումնասիրման համար աղբյուրագիտական բացառիկ արժեք են ներկայացնում ազատագրական շարժման նշանավոր գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանի հուշերը[3]: Հեղինակը որպես դեպքերի անմիջական մասնակից առանձնակի կարևորությամբ է շեշտում հայ գործիչների պայքարի վտանգավորության բարձր աստիճանն Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների և դրանց գոր-

---

[1] Տե՛ս Վարանդեան Մ., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիին, Եր., 1992, էջ 52-53:

[2] Տե՛ս Соцков Лев, Неизвестный сепаратизм. На службе СД и Абвера / http: lib.tr200.net.v.php.id.4848sp.15.

[3] Տե՛ս Տէր-Մինասեան Ռուբէն, Հայ յեղափոխականի մը հիշատակները, Պեյրութ, 1983թ.:

ծակալների գործունեության հակազդման պայմաններում: Նշենք, որ Ռուբենը այն եզակի հեղինակներից է, որը թշնամու գաղտնի ծառայությունների գործունեության էությունը ձևակերպել է իր ամբողջ խորությամբ[1]: Վերջիններիս գործակալների մատնությամբ սպանվեց հայդուկապետ Աղբյուր Սերոբը, իսկ «…Գևորգը քանիմը ընկերներով կերթա ուղղակի թունավորող Գեղաշենի Ավոյի տունը…Կը բացահայտվի դավաճանների ամբողջ ցանցը: Ատկե վերջն է, որ Գևորգ անխնայորեն կը կոտորե բոլոր անոնք, որոնք որևէ ձևով մասնակցեր են դավաճանական գործի»[2]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայ ազգային-ազատագրական պայքարի ընթացքում նմանատիպ դեպքերը կրկնվում են պարբերաբար, ինչը վկայում է այդ պայքարի ոչ ճիշտ կազմակերպման օրինաչափության մասին:

Հայազգի Մելքոն խանի լրտեսական գործունեության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է հայտնում Սապահ-Գյուլյանը, նշելով, մասնավորապես, որ որոշակի հեղինակություն ունենալով դիվանագիտական ասպարեզում, Մելքոն խանը «Մին այն հայ իրական խելքերից է, որ իսպառ, վարձու է

---

[1] Տե՛ս սույն մենագրության 79 էջում: Հանրագիտարաններում կամ հատուկ գրականության մեջ տեղ գտած հատուկ ծառայությունների վերաբերյալ սահմանումները մասնագետների շրջանում մշտապես բանավեճի առարկա են:

[2] Տե՛ս Տէր-Մինասեան Ռուբէն, Հայ յեղափոխականի մը հիշատակները, Պեյրութ, 1983թ., էջ 101, 102:

տրվում օտարներին…»[1]:

Սույն աշխատության խնդիրների լուծման տեսանկյունից կարևոր նշանակություն է ունեցել Ռ. Սահակյանի հոդվածը, որտեղ լուսաբանվում է, թե ինչպես դեռևս 1914թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին «Թեշքիլաթը մահուսա»-ն համակարգել ու իրագործել է Բաթումի նահանգում և Կարսի մարզում հայերի զանգվածային կոտորածները և բնակավայրերի կողոպուտը[2]:

Օգտագործվել են նաև հայ հետախույզների գործունեությանը նվիրված Ռ. Սահակյանի և Վ. Վիրաբյանի հոդվածները, որոնցում լուսաբանվել են Առաջին աշխարհամարտի տարիներին Արևմտյան Հայաստանում գործող հետախուզական «Հայկական շտաբի» աշխատանքները, ինչպես նաև Հայկական բանակի հետախուզական բաժանմունքի գործունեությունը[3]:

---

[1] Տե՛ս Սապահ-Գյուլեան, Պատասխանատուները, Պրովիդենս, 1916, էջ 143:

[2] Տե՛ս Սահակյան Ռ., Բաթումի նահանգի հայության կողոպուտն ու սպանությունները Ա. Համաշխարհայինի սկզբում 1914-ի աշնան (փաստաթղթեր), Հայկազեան Հայագիտական Հանդէս, Պեյրութ, 2013, էջ 29-36:

[3] Տե՛ս Սահակյան Ռ., Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և ընթացքում ռուս-թուրքական ռազմաճակատում հետախուզական ծառայությունների պատմությունից, Պատմա-բանասիրական հանդես, 2011, թիվ 3, էջ 94-119, Հայկական բանակի հետախուզական բաժանմունքի պետ Տիգրան Դևոյանցի զեկուցագրերը թուրքական բանակի մարտակազմի վերաբերյալ, ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2010, թիվ 1-2, էջ 458-460, 470-483: Տես նաև՝ Վիրաբյան Վ.

Թեմայի հիմնահարցերի առավել ամբողջական և համակողմանի հետազոտման նպատակով օգտագործվել են Վ. Վիրաբյանի «Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ.»[1] աշխատությունում քննության առնված Հայաստանի Առաջին Հանրապետության նորաստեղծ հետախուզության՝ Արևմտյան Հայաստանում ծավալած գործունեությանը վերաբերող փաստագրական տվյալները, ինչպես նաև Կ.Պոլսում հայկական հետախուզական աշխատանքների կազմակերպիչ հետախույզ Տ. Դևոյանցի հուշերը[2]: Վերջինիս կողմից թշնամու թիկունք գործակալական ներթափանցման եղանակով ստեղծված ծպտյալ գործակալական ցանցի միջոցով անհրաժեշտ կանխարգելիչ տեղեկությունների հայթայթման արդյունքում կազմված զեկուցագրերի ուսումնասիրությունները թույլ են տալիս օբ-

---

Հ., Տիգրան Դևոյանցի հետախուզական գործունեության շուրջ. ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2010, թիվ 1–2, էջ 320–335: Հայկական հետախուզության փաստաթղթերը Թուրքիայում ռազմաքաղաքական իրադարձությունների մասին (1919 թ. օգոստոս - նոյեմբեր-ռուս.) / Պատմաբանասիրական հանդես, 2011, N 1, էջ 309 - 322: Տիգրան Դեվոյանցի զեկուցագրերը Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող ռազմաքաղաքական իրադարձությունների մասին / Լրաբեր Հասարակական գիտությունների, 2012, N 2-3, էջ 389 – 406:

[1] Տե՛ս Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ., Եր., 2006:

[2] Տե՛ս Դևոյանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», Բոստոն, 1945, թիվ 2, էջ 52-54:

յեկտիվ գնահատել իրավիճակն ամբողջ Արևմտյան Հայաստանում: Հարկ է նշել, որ 1920թ. թուրք-հայկական պատերազմի նախաշեմին թուրքերի կողմից իրականացվող կոնկրետ գերծողությունների վերաբերյալ հայ հետախույզները ռազմաքաղաքական բնույթի արժեքավոր տեղեկություններ էին ուղարկում Հայաստանի Հանրապետության կառավարություն, սակայն ինչ-ինչ պատճառներով դրանք կամ ուշացումով էին տեղ հասնում, կամ էլ ղեկավարության կողմից համապատասխան վերաբերմունքի չէին արժանանում[1]: Հատկանշական է, որ հայկական բանակը ներսից քայքայելու համար քեմալական գործակալները քարոզչություն էին մղում, լուրեր տարածում, թե թուրք զինվորները «նույնպես բոլշևիկներ են», իսկ «… թուրք-հայկական պատերազմի ամբողջ ընթացքում հայ բոլշևիկ գործիչներից և ոչ մեկը հանդես չեկավ թուրքերին դիմադրելու և հայրենիքը պաշտպանելու սեփական ժողովրդին ուղղած որևէ կոչով»[2]:

Թեմայի հետազոտման շրջանակներում ուսումնասիրվել են նաև քեմալական գաղտնի ծառայությունների կողմից քրդերի թվից գործակալների հավաքագրման փաստերն ու գործընթացները[3], որոնք թույլ են տվել զուգահեռներ անցկացնել Օսմանյան

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 85:

[2] Տե՛ս Սիմոնյան Հ. Ռ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991, էջ 401:

[3] Տե՛ս Гасратян М. А., Курдское движение в новое и новейшее время, М., 1987, с. 93.

կայսրության գաղտնի ծառայությունների կողմից առանձին անձանց հավաքագրման ձևերի, մեթոդների և մարտավարության հետ: Այդ նպատակով՝ մենագրությունը պատրաստելիս օգտագործվել են թուրքական և քրդական աղբյուրների հաղորդած տեղեկությունները հայ ազգային կուսակցությունների և քրդական կազմակերպությունների շփումների և հարաբերությունների լուսաբանման նպատակով:

Հետազոտական աշխատանքների ընթացքում օգտագործվել է նաև ժամանակի մամուլը՝ «Մշակ», «Մասիս», «Մեղու Հայաստանի», «Դրօշակ», «Փարիզ», «Մուրճ», «Հնչակ», «Նոր կեանք», «Նոր դար», «Հայաստան», «Անահիտ թերթ-հանդես», «Արձագանք» պարբերականները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ (19-րդ դարի 60-70-ական թթ.)

1.1. Հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի գործոնը Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների զարգացման գործում

Օսմանյան կայսրությունը, լինելով տարածաշրջանի հզոր պետություններից մեկը, ակտիվ դերակատարություն է ունեցել համաշխարհային քաղաքականության մեջ:

Կայսրությունում հետախուզական գործունեությունը սկիզբ է առել դեռևս XIV դարում, սակայն սկզբնական կազմակերպված միջոցառումները հետախուզության ոլորտում որպես պետական ապարատի հիմնական և կարևորագույն գործառույթ, վերագրվում են XV դարին[1]: Այս ժամանակահատվածում արդեն ձևավորվում էին Օսմանյան կայսրութ-

[1] Տե՛ս История дипломатии, т. 1, М., 1959,с. 120.

յան հիմնական պետական կառույցները, այդ թվում՝ հետախուզական մարմինները: Ընդ որում, այս փուլում վերջիններիս կազմավորման գործընթացի վրա ազդեցություն է գործել նաև հետախուզական գործունեություն իրականացնող Վենետիկի Դիվանագիտական փոստային բյուրոն:

Հետախուզական գործունեության Վենետիկի հարուստ փորձը, գործելաոճը և ավանդույթներն աստիճանաբար փոխանցվում էին Օսմանյան կայսրության հետախուզությանը, սկսած այն ժամանակաշրջանից, երբ թուրքերի կողմից Կոնստանդնուպոլսի գրավումից անմիջապես հետո Վենետիկը քրիստոնյա պետություններից առաջինը նրանց հետ կնքեց պայմանագիր Օսմանյան կայսրությունում առևտրի բացարձակ իրավունքի մասին՝ հիմք դնելով, այսպես կոչված, կապիտուլյացիաների համակարգին:

Հետախուզական գործունեության արդյունքում սուլթանը և վեզիրները լավ տեղեկացված էին ոչ միայն հարևան երկրների, այլև հեռավոր պետություններում տիրող իրավիճակի մասին: Այդ երկրների հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներից, հատկապես բարձրաստիճան պաշտոնյաների թվից ունեին իրազեկիչներ, որոնց տրամադրած տեղեկատվությունը թույլ էր տալիս թուրք իշխանավորներին ճիշտ կողմնորոշվել բարդ իրավիճակներում և կայացնել համապատասխան քաղաքական որոշում[1]:

---

[1] Новичев А. Д., История Турции, т. 1, ЛГУ, 1963, с. 78-80.

Պահպանվել են Օսմանյան կայսրության պաշտոնյաներին ուղղված թուրքական հետախուզության՝ Ֆրանսիայում գործող ռեզիդենտի 123 նամակները[1]: Նամակների բովանդակությունից երևում է, որ թուրք հետախույզը գործել է Փարիզում 1837-1842 թթ. գաղտնակյաց (անլեգալ) ձևով, եղել է փորձառու, նախաձեռնող և հմուտ անձնավորություն, կատարել է ժամանակի հետախուզության վարպետներից մեկը համարվող կարդինալ Ռիշելյեի թարգմանչի պարտականությունները[2]:

Թուրք լրտեսը ձեռք բերված տեղեկատվությունն անմիջապես փոխանցում էր Վիեննայում բնակվող Թուրքիայի գաղտնի գործակալ Ռակոայի միջոցով, նամակագրական կապի մեջ էր գտնվում Ջենովայում գործող թուրք գործակալ Դոնայայի հետ[3]:

Հետախուզական գործունեությամբ ակտիվորեն զբաղվում էին նաև զավթած տարածքներում թուրքական զինված ուժերի ղեկավարները[4]:

Հետախուզական տեղեկատվության հայթայթման նպատակով թուրք ռազմական ղեկավարները լայնորեն օգտագործել են առևտրականներին, հոգե-

---

[1] Ռեզիդենտն այն անձն է, որը գաղտնի ծառայությունների առաջադրանքով իրականացնում է հետախուզական գործունեություն՝ ղեկավարելով իր հետ կապի մեջ գտնվող գործակալների աշխատանքը:

[2] Турецкий шпион при дворах христианских государей, СПб, 1778, перев. с франц., с. 486.

[3] История шпионажа и службы по сбору информаций. т. 1, СПб, 1936, рукописный перевод с венгерского,с. 316.

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 322, 329:

վորականներին, ուսանողներին, թափառականներին, ինչպես նաև իրենց ենթակայության տակ գտնվող քաղաքացիական հագուստ կրող զինվորներին: Կային նաև գործակալներ, որոնք ունեին ազնվական ծագում[1]:

Հետախուզական աշխատանքներում սուլթանն ակտիվորեն ներգրավում էր դիվանագիտական ներկայացուցիչներին: Որպես Օսմանյան կայսրության հետախուզության գործակալներ օգտագործվում էին այլազգի քրիստոնյա ներկայացուցիչներ, որոնք տարբեր դրդումներով և պատճառներով ընդունում էին մահմեդականություն: Ընդ որում, այդ հետախույզներն ու գործակալներն անհրաժեշտ տեղեկություն էին ձեռք բերում ոչ միայն անձնական շփումների և դիտարկումների շնորհիվ, այլ տեղեկատվության աղբյուր հանդիսացող այլազգիների կաշառման միջոցով, որոնք կամա թե ակամա կանգնում էին հայրենիքի դավաճանության ճանապարհին[2]:

Օսմանյան կայսրության հետախուզության գործունեության առանձնահատկություններից էր այն, որ իրենց կողմից կազմակերպված շարժումների, դավադրությունների կամ հեղաշրջումների ընթացքում պլանավորվում և, որպես կանոն, իրագործվում էին դիվերսիոն ու ահաբեկչական գործողություններ: Հաջողությամբ անցկացրած միջոցառումների արդյունքում կայսրության համար ռազմաքաղաքական

---

[1] Նույն տեղում, էջ 338:

[2] Տե՛ս Джинчарадзе В. З., История контрразведки в России, 1946, с. 75-80.

հետաքրքրություն ներկայացնող վարչական տարածքներում ղեկավար անձինք էին նշանակվում սուլթանի դրածոները[1]:

Պետք է նշել, որ Օսմանյան կայսրության և նրա ժառանգորդ՝ Թուրքիայի Հանրապետության այս ծառայությունների գործունեության հիմնական, ավանդաբար շարունակվող ուղղվածությունն է եղել անջատողականության և թշնամության սերմանումը, որի հետևանքով պառակտվել և քայքայվել են ազատագրական շարժումները, կազմակերպությունները, համայնքային կառույցների միասնությունը և այլն[2]:

Օսմանյան կայսրությունում բավականին լուրջ դերակատարություն ունեին հակահետախուզական մարմինները, որոնք կոչված էին ապահովելու պետական գաղտնիքների պահպանությունը, ինչպես նաև բացահայտելու, կանխարգելելու, խափանելու հակակառավարական դրսևորումները (դավադրություններ, խռովություններ, շարժումներ և այլն), հակազդելու արտաքին սպառնալիքներին: Այս գործառույթներից բացի, հակահետախուզությամբ զբաղվում էին մեծ վեզիրի վարչությունը, ինչպես նաև սուլթանի արքունիքի արտաքին և ներքին կառավարիչները: Սակայն այստեղ գլխավոր դերը պատկանում էր մեծ վեզիրի վարչությանը, որն իր ձեռքում էր կենտրոնացել պետական կառավարման գործառույթները, այդ թվում, ինչպես նշվեց, հետախուզա-

---

[1] Տե՛ս մասնավորապես, История СССР, М., 1964, с. 217-220.

[2] Տե՛ս մասնավորապես, Соцков Л., На службе СД и Абвера, с. 6-10.

կան և հակահետախուզական գործունեությունը:

Հետախուզական գործունեության գլխավոր պահանջներից էր գաղտնակյացությունը: Մասնավորապես, սուլթանի ծրագրերի, մտահղացուների, խորհրդակցությունների մասին տեղեկույթի արտահոսքի բացառման նկատառումներով, այդ կարգի զրույցներն ու քննարկումներն անց էին կացվում բաց տարածքում հատուկ կառուցված սենյակում: Խորհրդակցությունների ժամանակ սենյակի շուրջը փորած ջրանցքներով ջուր էր բաց թողնվում՝ խլացնելու համար ներսում զրուցող մարդկանց ձայնը: Առավել մեծ ուշադրություն էր դարձվում սուլթանի և օտարերկրյա պետությունների դեսպանների հանդիպումներին, որոնց բնույթն ու բովանդակությունը գաղտնի էին պահվում անգամ վեզիրներից[1]:

Սուլթանի կառավարությունը հետախուզական ծառայությունների միջոցով հարակից պետությունների դեմ իրականացնում էր գաղտնի պատերազմ, այն է՝

- հետախուզական և հակահետախուզական բնույթի տեղեկատվության ձեռքբերում.
- վնասարարություն.
- դիվերսիոն և ահաբեկչական գործողություն.
- անցանկալի անձանց մեկուսացում կամ ֆիզիկական վերացում.
- այլ երկրների ներքին գործերին գաղտնի միջամտում.

---

[1] Новичев А. Д., История Турции, т. 1, ЛГУ, 1963, с. 70-100.

- ապատեղեկատվություն:

Թուրք հետախույզները և գործակալները հետախուզական տեղեկատվությունը ստանում էին նախ և առաջ պաշտոնապես գործող դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատողներից: Արձանագրվել են դեպքեր, երբ թուրք դիվանագետները որպես գործակալներ հավաքագրել են ռուսական հասարակության բարձր խավի ներկայացուցիչներին: Այսպես, Միխայիլ Ռոմանովի թագավորության օրոք ձերբակալվել էր Մոսկվայի և Կոլոմենսկայայի միտրոպոլիտ, ազգությամբ հույն Նիկոդիմը, որը մեղադրվում էր թուրք դեսպանի հետ գաղտնի համագործակցության մեջ: Ռուսաստան ժամանած թուրք դիվանագետների համար, ռուսական դեսպանական հրամանով մշակվել էին հատուկ միջոցառումներ, որոնք նախատեսում էին թուրք դիվանագետների մեկուսացումը տեղի բնակչությունից[1]: Մասնավորապես, նրանց խստագույնս արգելվում էր քայլել քաղաքով առանց հատուկ ուղեկցողների, որոնց պարտականությունը ռուս հպատակների հետ թուրքերի շփումները խոչընդոտելն էր:

Օսմանյան կայսրության հզորացման հետ մեկտեղ, այլ ազգերի թալանի հաշվին նյութական միջոցների ավելացմամբ, ինչպես նաև հետախուզական աշխատանքի փորձի և հմտությունների ձեռքբերմամբ, սուլթանական հետախուզությունը դար-

[1] Դեսպանական հրամանը զբաղվում էր արտաքին հարաբերությունների հարցերով, ինչպես նաև հետախուզությունով:

ձավ առավել բազմաբնույթ և ակտիվ:

Կայսրության հետախուզության կողմից իրականացված ահաբեկչական գործողությունների մասին վկայում են Պրեոբրաժենսկի հրամանում կատարված հետաքննչական գործի նյութերը, ինչպես նաև Օսմանյան կայսրությունում ռուս դեսպանի նամակը՝ հասցեագրված Ռուսաստանի կանցլեր կոմս Գոլովինին: Նշված գործից և նամակից պարզվում է, որ սուլթանի հրամանով մոլդովացի պարոնը առևտրականի կերպարանքով Ռուսաստան է ուղարկել ազգությամբ հույն երկու ահաբեկիչների՝ Պետրոս I-ին թունավորելու նպատակով: Շուտով ռուսները Մոսկվայում ձերբակալեցին այդ երկու «առևտրականներին», որոնց մոտ հայտնաբերվեց շշալցված թույն, մի քանի հազար չերվոն ոսկի և մի քանի հազար ռուբլի արժողությամբ ադամանդ[1]:

Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների գործունեության համար առավել կարևոր տարածաշրջան էր հանդիսանում Կովկասը, որտեղ և բախվում էին Ռուսաստանի շահերը Մեծ Բրիտանիայի և Օսմանյան կայսրության հետ:

XVII-XIX դդ. Օսմանյան կայսրության և անգլիական հետախուզությունները, համատեղ ուժերով շրջանառության մեջ դնելով մյուրիդիստական քա-

[1] Տե՛ս История шпионажа и службы по сбору информаций. Рукописный перевод с венгерского, т. 1, СПб, 1936, с. 216.

դաքականությունը[1], գրգռում էին Կովկասի մահմեդական տարրերին քրիստոնյաների դեմ՝ վերջիններիս մոտ առաջացնելով խուճապ[2]: Այս գաղափարախոսության տարածումը զուգորդվում էր մուսուլմանական ռազմականացված հատուկ ջոկատների կազմավորմամբ: 1840-ական թվականներից մյուրիդիզմի տարածման նպատակով Արևմտյան Կովկասում հաճախ էին հայտնվում Շամիլի գործակալները:

1848թ. Կովկասյան պատերազմի ժամանակ, տեղի ցեղերի և Օսմանյան կայսրության իշխանությունների միջև կապի պահպանման գործում աչքի է ընկնում Մուհամեդ–Էմինը: Անգլիական գործակալ Սեֆերբեյ Զանի հետ զրույցում Մուհամեդ–Էմինը նշում էր, որ առաջներում չերքեզները և ռուսները ապրում էին համերաշխ, շատ տեղերում միասին հող էին մշակում, սակայն ինքն «իր հոգևորական քարոզներով կարողացավ պառակտել այդ երկու ժողովրդների միասնությունը»[3]:

Մուհամեդ – Էմինի նամակներում հիշատակվում են Օսմանյան կայսրության կառավարության հետ կապերի հարցերով գործակալներ Ահմեդ-Ալին,

---

[1] Մյուրիդիզմը մուսուլմանական ծայրահեղական ուսմունք է, որի հետևորդներն առաջ են քաշում ոչ մահմեդականներին անողոքաբար կոտորելու տեսությունը:

[2] Տե՛ս Смирнов Н. А., Турецкая агентура под флагом ислама, «Вопросы истории религии и атеизма», М., 1950, с. 11-63.

[3] Տե՛ս Фелицин Е. Д., Князь Сефер бей Зан, политический деятель и поборник независимости черкесского народа, Кубанский сборник, т. X, с. 81.

Հաջի Նուրեդինի որդին, Թամանից ադըղը,[1] ինչպես նաև Իբրահիմ-Խան Օղլին, որը Մուհամեդ–Էմինի գրությունները հասցնում էր Կոստանդնուպոլսում գործող «Չերքեզական մեջլիս»[2]: Սա Օսմանյան կայսրության հետախուզության մասնաճյուղն էր, որի հետաքրքրության ուղղությունն էր տեղեկատվության հայթայթումը ռուսական զորքերի վերաբերյալ և իր գործակալական ցանցի ամրապնդումը տարածաշրջանում:

Այս և հետագայում ձեռք բերված փաստագրական տվյալներից ելնելով՝ ռուսական կառավարությունը համոզվեց, որ Կովկասում բրիտանական և օսմանյան կայսրությունների կողմից Ռուսաստանի դեմ իրականացվող քայքայիչ գործունեության կազմակերպման գլխավոր դերակատարը անգլիական հետախույզ ՈՒրքարթՆ էր, 1847 թվականից Մեծ Բրիտանիայի խորհրդարանի անդամը, որը փորձում էր սրել ռուս-թուրքական հարաբերությունները[3]:

Օսմանյան կայսրության հետախուզության գործակալական ցանցի գործունեության վտանգավորության աստիճանը գնահատելով՝ Կովկասի փոխարքան հրահանգել էր. «…մուսուլման հոգևորականներին, ով էլ որ լինեին, արգելել մուտքը մեր տարածք, եթե անգամ դրանք կլինեն արտասահմա-

---

[1] Տե՛ս АВП РФ – МИД, Азиатский департамент, д.6, л.4.

[2] Տե՛ս Зисерман А. Л., Князь Барятинский. Из письма Барятинского, СПб, 1881, с.188.

[3] Տե՛ս Центральный государственный исторический архив Грузии, ф. 11, оп. 2, д. 278, лл. 2-3.

նում հոգևոր կոչում ստացած ռուսներ»[1]: Այս միջոցառումներով փորձ էր արվում ձախողել Կովկասի մյուրիդների և Օսմանյան կայսրության գործակալների միջև կապը:

Հետախուզական աշխատանքներում, հատկապես պատերազմական գործողությունների ժամանակ, ակտիվ ներգրավվում էին դերվիշները: Վերջիններս, ունենալով հոգևորականի քողի ներքո ազատ տեղաշարժման հնարավորություն, այցելում էին հետախուզությանը հետաքրքրող վայրեր, դիտարկման և կորզման միջոցով ձեռք բերում անհրաժեշտ տեղեկատվություն:

Օսմանյան կայսրության հետախուզության կողմից ահաբեկչական և դիվերսիոն գործողություններ իրականացնելու նպատակով շատ հաճախ օգտագործվել են քրիստոնյաներ, որոնք համապատասխան առասպելապատմամբ, յուրայինների շրջանում իրականացնում էին հրկիզումներ, առանձին մարդկանց թունավորումներ և այլն:

XIX-րդ դարակեսից սկսած՝ կայսրության հետախուզությունը բազմակողմանի քայքայիչ գործունեություն է ծավալել իր հյուպատոսների, սահմանապահ վարչակազմի, բանակի սպաների և հատուկ էմիսարների միջոցով: Հետախուզական աշխատանքների կազմակերպման և իրագործման հարցում ղեկավար դերակատարությունն այդ ժամանակահատվածում պատկանում էր թուրք հյուպատոսնե-

[1] Նույն տեղում, էջ 3:

րին: Վերջիններս բազմաշերտ գործակալական ցանցի միջոցով ձեռք էին բերում հետախուզությանը հետաքրքրող տեղեկատվություն, որը երկրի ղեկավարությանը զեկուցելու նպատակով սուլթանի պալատում գործող կառույցի կողմից մանրակրկիտ ստուգվում և մշակվում էր: Սա այն գլխավոր հանգամանքներից էր, որը հնարավորություն էր տալիս թուրք գործիչներին հետևողական և հարձակողական քաղաքականություն վարել թե՛ ներքին, թե՛ միջազգային ասպարեզում: Այս ժամանակահատվածում Օսմանյան կայսրության հյուպատոսություններն ակտիվ գործունեություն են ծավալել Կարս, Թիֆլիս, Ալեքսանդրապոլ և Ռուսական կայսրության 19 այլ քաղաքներում:

Այսպիսով, տիրապետելով լայնածավալ և բազմաբնույթ, այդ թվում՝ կանխարգելիչ տեղեկատվությանը, Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունները հատուկ միջոցների, մեթոդների և ձևերի կիրառմամբ կարողանում էին ներազդել հակառակորդի վրա՝ պառակտելով կամ չեզոքացնելով վերջինիս:

Սուլթանական հետախուզությունն իր գործունեությունն էլ ավելի ակտիվացրեց, երբ տեղի ունեցավ Օսմանյան կայսրության հետախուզական մարմինների կազմակերպչական ձևավորումը:

Եվրոպական պետությունների օրինակով՝ որպես մշտապես գործող պետական մարմին կայսրության հետախուզությունը ստեղծվեց Աբդուլ Համիդ II-ի կառավարման օրոք (1876-1909 թթ.):

Մշտապես գործող հետախուզական մարմնի

առկայության անհրաժեշտությունը ծագեց նախ և առաջ երկրում վարչական-ոստիկանական ռեժիմի պահպանման ու կայսրությունում ազգային-ազատագրական շարժումների ճնշման նկատառումներով: Այս ժամանակաշրջանից սկսած՝ հետախուզության դերը և նրա ազդեցությունը պետական քաղաքականության ձևավորման ու մշակման, ինչպես նաև ռազմական միջոցառումների պլանավորման գործընթացներում զգալիորեն աճեցին:

Մինչև 1880-ական թթ. երկրորդ կեսին Աբդուլ Համիդ 2-րդի օրոք ստեղծված թուրքական առաջին հետախուզական կազմակերպությանն անդրադառնալը, որը իր պալատի անունով կոչվեց «Յըլդըզ» հետախուզական կազմակերպություն, հարկ է նշել, որ Եվրոպայում գործող հետախուզական օպերատիվ աշխատանքի մեթոդներին ծանոթանալու և հետախուզական մարմինների ամրապնդման գործում ակտիվ ու անմիջական դեր է խաղացել 1882-1895թթ. Օսմանյան կայսրությունում գտնվող գեներալ ֆոն դեր Գոլցի ղեկավարած գերմանական ռազմական պատվիրակությունը[1]:

Հետախուզությանը բնորոշ գործելաոճի համաձայն՝ այս պատվիրակությունը Օսմանյան կայսրությունում պետք է գործեր ոչ պաշտոնապես: Դրա քողարկման համար «Թուրքիա ժամանած գերմանացի սպաները Թուրքիայի բանակում պետք է անցնեին ծառայության որպես մասնավոր անձինք՝ ազատ

[1] Տե՛ս РГВИА, ф. 2000, ГУГШ, оп. 1, док. ном.1835, 2003, 2085.

արձակվելով Գերմանիայի զինված ուժերից»[1]:

Սակայն շուտով ռուսական հետախուզության կողմից բացահայտվեց թուրք-գերմանական այդ համագործակցությունը: Դրա մասին նշվեց 1882թ. փետրվարին Փարիզում տեղի ունեցած գեներալ Սկոբելևի ելույթում, որտեղ նա խոսեց սլավոնական ժողովուրդներին սպասվող վտանգի մասին գերմանական «Drang nach osten»-ի կողմից:

1882թ. մայիսին Կ.Պոլիս ժամանեցին գերմանացի չորս սպաներ՝ գնդապետ Քյոլլերը, կապիտաններ Հոբենը, Ռիստովը և Քամփհովենները: Մեկ տարի անց Օսմանյան կայսրություն ժամանեց Կոլմար ֆոն դեր Գոլցը: XIX դարի 90-ական թվականներին գերմանացի սպաների թիվը Թուրքիայում կազմում էր 11 հոգի:

Թուրք-գերմանական համագործակցությունն այս ասպարեզում խորացավ 1885 թվականից, երբ թուրք սպաները ուղարկվեցին Գերմանիա վերապատրաստման: Այս սպաները հետագայում կազմեցին Թուրքիայի բարձրագույն ռազմական շրջանակների ազդեցիկ գերմանամետ խավը:

Ստանձնելով Կ.Պոլսի ռազմական դպրոցի ղեկավարումը, որի ունկնդիրների թիվը կազմում էր 450 հոգի՝ Գոլցը 12 տարվա ընթացքում նրանց քանակը հասցրեց 1700-ի, իսկ թուրքական ռազմական դպրոցներում ուսանողների ընդհանուր թիվը կազմում էր 14 հազար հոգի: 1886թ. Գոլցը, որպես թուր-

[1] Տե՛ս նույն տեղում:

քական գլխավոր շտաբի պետի օգնական, Մուզաբեֆ փաշայի հետ մշակեց զորակոչի մասին օրենք, որը լուծեց օսմանյան բանակի համալրման խնդիրը, ինչպես նաև հրատարակեց դաշտային և ներքին ծառայությունների կանոնադրությունները, պատերազմ վարելու մասին հրահանգը: Նշենք, որ Գոլցի կողմից վերակազմավորված թուրքական բանակը 1897թ. հաղթեց Հունաստանի դեմ պատերազմում:

Օսմանյան կայսրության հետախուզության գործունեության վառ օրինակ կարելի է համարել «Քուլելիի իրադարձություն»-ը, որով մեկնարկեց քրիստոնեության դեմ արշավը:

Կայսրության պատմությունը լի է դավադրություններով, հաջողված և չհաջողված հեղաշրջումների փորձերով: Սակայն դրանցից և ոչ մեկը չի առաջացրել գիտական ու քաղաքական այնքան հետաքրքրություն և միաժամանակ իրարամերժ մեկնաբանությունների տարափ, որքան 1859թ. սեպտեմբերին Կ.Պոլսում բացահայտված սուլթան Աբդուլ Մեջիդի դեմ ուղղված դավադրությունը[1]: Այդ ժամանակ մայրաքաղաքում ձերբակալվեց դավադիրների մի խումբ: Նրա անդամները բանտարկվեցին «Քուլելի» անվանումը կրող զորանոցում, երեք-չորս շաբաթվա ընթացքում հարցաքննվեցին ու շատ արագ դատվեցին պետական բարձրաստիճան այրերից կազմված հատուկ դատական ատյանի կողմից: Նրանցից չորսը դատապարտվեցին մահվան, իսկ մնացածնե-

[1] Տե՛ս Սաֆրաստյան Ռ., նշված աշխ., էջ 120:

ը՝ տարբեր ժամկետների ազատազրկման կամ աքսորի: Սուլթան Աբդուլ Մեջիդի կարգադրությամբ՝ մահապատիժները փոխարինվեցին աքսորով:

Դավադիրները եղել են լավ կազմակերպված և ունեցել են բազմաթիվ համախոհներ, իսկ դավադրությունը բացահայտվեց մատնության հետևանքով, որից հետո տեղի ունեցան ձերբակալություններ[1]:

«Քուլելիի իրադարձության» վերաբերյալ կան բազմաթիվ գիտական աշխատություններ, սակայն դավադրության բնույթի և նպատակի մասին հետազոտողների կարծիքներն ու հետազոտությունները տարբեր են և հաճախ իրարամերժ[2]:

«Քուլելիի իրադարձության» վերաբերյալ գիտնականների տեսակետների բազմազանությունը պայմանավորված է հիմնականում փաստագրական տվյալների բացակայությամբ, որոնց կարևորագույն մասը հավանաբար ոչնչացվել է թուրք իշխանավորների կողմից:

Սակայն այս խնդրում կարելի է պարզություն մտցնել՝ դիտարկելով այն Թուրքիայի հետախուզության գործունեության համատեքստում:

Ոչ մի պետություն, այդ թվում՝ զարգացած եվրոպական երկրները, երաշխավորված չեն դավա-

---

[1] Սաֆրաստյան Ռ., նշված աշխ., էջ 126:

[2] Տե՛ս մանրամասն՝ Սաֆրաստյան Ռ., նշված աշխ., էջ 118-121, Шпилькова В. И., Антимонархический заговор 1859 г. в Турции, Проблемы востоковедения, 1959, N 1, с. 57-68, Фадеева И. Л., Официальные доктрины в идеологии и политике Османской Империи, М., 1985, R. Davison, Reform in the Ottoman Empire, 1856-1976, 1963.

դրություններից, հեղաշրջումներից կամ հեղափոխություններից: Դավադրության բացահայտումը, կանխարգելումը և չեզոքացումը ցանկացած պետության կայունության գրավականն է և նրա հատուկ ծառայությունների աշխատանքի գնահատականը: Նամանավանդ, այս պարագայում այն ուղղված էր սուլթանական կառավարության դեմ, որը ձեռնամուխ էր եղել իրագործելու մեծ տերությունների կողմից առաջարկված կամ թելադրված Թանզիմաթի պահանջները: Դավադրության բացահայտումը պետք է որ խրախուսվեր եվրոպական երկրների կողմից, և տարբեր տեսակի աջակցություն պետք է ցուցաբերվեր Օսմանյան կառավարությանն առ այն, որ, չեզոքացնելով դավադիրներին, ապահովվեր Թանզիմաթի շարունակականությունը: Սակայն իրականում Աբդուլ Մեջիդը և այլ իշխանավորներ դավադրության կանխման համար փորձում էին արդարանալ օտարերկրյա պետությունների առջև՝ թաքցնելով թե՛ ձերբակալվածների իրական թիվը, թե՛ դավադրության մասնակիցներից շատերին, որոնք խուսափեցին պատասխանատվությունից, թե՛ ընդհանրապես դավադրության բնույթը: Օրինակ, Թիֆլիսում հրատարակվող «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթը գրում էր երկու հարյուր բանտարկվածների մասին[1]: Սակայն Թուրքիայի կառավարությունը փորձեց կոծկել դավադրության իրական չափերը՝ այդ նպատակով պաշտոնական հաղորդագրութ-

[1] Տե՛ս Մեղու Հայաստանի, 1859, 10 հոկտեմբերի:

յուններում զետեղելով ձերբակալվածների ակնհայտորեն նվազեցված թվեր: «Մասիս» շաբաթաթերթը նշում էր, թե համաձայն պաշտոնական տվյալների, նրանց թիվը կազմում էր ընդամենը 34 մարդ[1]: Փարիզի թուրքական դեսպանատունը, դավադրության բացահայտումից երկու օր չանցած, Կ.Պոլսից ստացավ հեռագիր, որտեղ ընդգծված էր, թե դավադրությունը ուղղված է եղել սուլթանի դեմ և նրանում «երևելի բան չկար», թե դավադիրների թիվը քառասունից չէր անցնում և նրանց մեծամասնությունը չերքեզներ ու քրդեր էին[2]:

Սադրազամ (մեծ վեզիր) Ալի փաշայի ղեկավարած կառավարությունը շտապում էր հանգստացնել դեսպաններին և երկրի քրիստոնյա հպատակներին, պնդելով, թե դավադիրները թեպետ հանդես էին գալիս արևմտամետ բարենորոգումների դեմ, սակայն չէին ծրագրել վնաս հասցնել քրիստոնյաներին[3]:

Վերը նշվածը, մասնավորապես, սուլթանական կառավարության արդարանալու փորձը թույլ է տալիս եզրակացնել, որ դավադրության, դրա իրական բնույթի և նպատակների, այն է՝ քրիստոնյաների դեմ լայնածավալ գործողությունների մասին տեղեկացված էին օտարերկրյա պետությունների հետախուզական մարմինները:

Հաջորդ կարևոր հանգամանքը, որը կարող է մատնանշել Օսմանյան կայսրության գաղտնի ծա-

---

[1] Տե՛ս Մասիս, 1859, 10 սեպտեմբերի:

[2] Տե՛ս Մեղու Հայաստանի, 1859, 17 նոյեմբերի:

[3] Տե՛ս Մասիս, 1859, 19 սեպտեմբերի::

ռայությունների անմիջական կապը դավադրության հետ, հոգևոր, ուսումնական հաստատությունների ուսանողների՝ սոֆթաների քաղաքական ակտիվության խրախուսումն էր իշխանությունների կողմից: Մասնավորապես, մայրաքաղաքում կազմակերպվում էին սոֆթաների զանգվածային ցույցեր, որոնք ունեին բացահայտ հակաքրիստոնեական ուղղվածություն: Ցույցերի ընթացքում սոֆթաները սպառնում էին երկրի երեսից բնաջնջել «գյավուրներին»: Տեղի էին ունենում բազմաթիվ վայրագություններ քրիստոնյաների նկատմամբ և մշտապես վտանգ կար, որ դրանք կվերածվեն քրիստոնյաների լայնածավալ ջարդերի, քանի որ սոֆթաները զինված էին[1]:

Նշենք մեկ այլ ուշագրավ հանգամանք, որը նույնպես վկայում է ձևավորվող սուլթանական հետախուզական կառույցի կողմից «Քուլելիի իրադարձության» կազմակերպման և իրագործման մասին. դավադիրների ձերբակալությունից հետո ազատության մեջ էին մնացել նրանց համախոհները, որոնք փորձում էին գործել: Ձերբակալություններից և պատասխանատվությունից խուսափածների թիվը այդպես էլ մնաց անհայտ[2]: Ակնհայտ է, որ վերջիններս այն ներդրված անձինք էին, որոնց միջոցով գաղտնի ծառայությունները հմտորեն ուղղորդել էին նշված «դավադրությունը»:

---

[1] Տե՛ս Рогозина Е. А., Из дневника русской в Турции перед войной в 1877-1878гг., Русская Старина, 1915, т. 162, кн. 4, с. 94, 291.

[2] Տե՛ս Սաֆրաստյան Ռ., նշված աշխ., էջ 128:

Համաձայն օսմանյան գաղտնի ծառայությունների գործելաոճի, երբ կարևոր միջոցառումների (օպերացիաների) անցկացումը զուգորդվում էր բնակչության մեջ ահ ու սարսափի, վախի տարածմամբ, այս դավադրության ընթացքում նրանք ևս պլանավորել էին իրականացնել ահաբեկչական գործողություններ: Այսպես, ժամանակի մամուլի տվյալներով՝ մայրաքաղաքի եվրոպական թաղամասում հայտնաբերվել էր «այրող մեքենա», որի նպատակն էր «կրակ տալ ֆրանկների թաղը»[1]: Անկախ այն հանգամանքից, թե «դժոխային մեքենան» օգտագործվել է թե ոչ, միայն դրա «առկայությունը» և կիրառման նպատակի մասին տեղեկատվության տարածումը բավական էր, որպեսզի ֆրանկների շրջանում առաջանար սարսափի զգացում և ստեղծվեր խուճապային իրավիճակ:

Այսպիսով, ունենալով որոշակի պատկերացումներ կայսրության գաղտնի ծառայությունների գործունեության մասին և համադրելով պատմական փաստերը «Քուլելիի իրադարձության» վերաբերյալ, կարող ենք եզրակացնել, որ դավադրությունն այդ ծառայությունների կողմից մշակված և իրագործված սադրանք էր, ինչը նպաստավոր պայմաններ ստեղծեց հակաքրիստոնեական արշավների համար:

Սակայն թուրքական հատուկ ծառայությունների պատմության մասնագետների կարծիքով առաջին ժամանակակից հատուկ ծառայությունը Օսմանյան

[1] Տե՛ս Մեղու Հայաստանի, 1859, 17 նոյեմբերի:

կայսրությունում ստեղծվել է Թանզիմաթի բարեփոխումների շրջանում, զարգացում ապրել Աբդուլ Համիդ 2-րդի կառավարման տարիներին և, քանի որ այն գործում էր իր պալատում, ստացել է ««Յըլդըզ» հետախուզական կազմակերպություն» անվանումը:

«Յըլդըզի» մասին հիմնական աղբյուրը 1891թ. Աբդուլ Համիդ 2-րդի կարգադրությամբ գրված 51 էջանոց գրքույկն է, որը պահվում է Ֆրանսիայի ազգային գրադարանի անձեռնմխելի ֆոնդում[1]: Ենթադրվում է, որ գրքույկի հեղինակն է սուլթանի անձնական բժիշկ Մավրոյանին, որը նույնպես լրտես է եղել[2]: Հարկ է նշել, որ օսմանյան արքունիքում մշտապես եղել են բժիշկ-լրտեսներ, որոնց սուլթաններն օգտագործում էին հարուստների կամ բարձրաստիճան պաշտոնյաների անաղմուկ վերացման համար: Ուշագրավ է, որ Աբդուլ Համիդի կարգադրությամբ գրված գրքույկը նրա մեկ այլ որոշմամբ ոչնչացվել է, և պահպանվել է միայն Ֆրանսիայի ազգային գրադարանում գտնվող օրինակը[3]: Ըստ գրքույկի՝ օսմանյան գաղտնի հետախուզական կառույցը ստեղծվել է Մեծ Բրիտանիայի դեսպան Ստաֆորդ Քանինգի խորհուրդներով, մեծ վեզիր Մուստաֆա Ռեշիդ

---

[1] Տե՛ս Tuncay Özkan, MİT' in Gizli Tarihi, İstanbul, ALFA, 2003, s. 35.

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Ըստ ամենայնի՝ դա պայմանավորված է «Յըլդըզի» մեթոդները գաղտնի պահելու ցանկությամբ կամ Աբդուլ Համիդին բնորոշ կասկածամտության արդյունք է, թե իր ստեղծած կառույցի մասին տեղեկությունները կարող են օգտագործվել ի վնաս իրեն:

փաշայի կողմից[1]: «Յըլդըզի» ստեղծումից առաջ ուսումնասիրվել են եվրոպական պետությունների հետախուզական կառույցները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով և որպես օրինակ վերցնելով Նապոլեոն 1-ի օրոք ստեղծված ֆրանսիական հետախուզական կառույցը: Այդ կապակցությամբ սուլթանի կարգադրությամբ Փարիզում թուրք դեսպանը հանգամանալից ուսումնասիրություն է ներկայացրել:

Սկզբնական շրջանում նախատեսվում էր, որ հետախուզական այս գաղտնի կառույցի հիմնական ուշադրության կենտրոնում պետք է լինի արտաքին հետախուզությունը: Այդ իսկ պատճառով դրա ղեկավար նշանակվեց հայտնի միջազգային արկածախնդիր հույն Ջիվինիսը, «որին գնդապետի աստիճան շնորհվեց և նա նշանակվեց օսմանյան գաղտնի ոստիկանական կազմակերպության ղեկավար»[2]: Հետագայում այն ընդլայնեց իր գործունեությունը, լրտեսների լայն ցանց ստեղծեց, կաշառքի շնորհիվ գործակալներ ունեցավ ազգային փոքրամասնությունների ղեկավար շրջաններում[3]: Այս կառույցի միջոցով էլ սուլթանը առաջին տեղեկությունները ստացավ երիտթուրքական կազմակերպության մասին[4]:

Բնութագրելով այս կառույցը՝ թուրք պատմա-

---

[1] Տե՛ս Tuncay Özkan, MİT' in Gizli Tarihi, İstanbul, ALFA, 2003, s. 35.

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս Bora İyiat, Hunlardan Günümüze Türk Derin Devleti, Ankara, 2008, s. 37

[4]Տե՛ս նույն տեղում:

բան Թունջայ Օզքանը նշում է. «Օսմանյան պալատում Անգլիայի դեսպանի ցանկությամբ ստեղծված և մեծ հավանականությամբ կրկնակի գործակալ հանդիսացող մի հույնի նշանակումով առաջին գաղտնի ոստիկանական կազմակերպությունն իր աշխատանքներում նախևառաջ հետևում էր բարձրաստիճան պաշտոնյաների հարաբերություններին և անձնական կյանքին: Հարեմից մինչև փողոց, ամեն տեղ անձնական կյանքի վերաբերյալ տեղեկություններ հավաքեց և դրանք օգտագործեց քաղաքական նպատակով մարդուն ոչնչացնելու համար»[1]:

Առաջ անցնելով՝ նշենք, որ կազմակերպության փակման պատճառ հանդիսացավ այն, որ օսմանցի բարձրաստիճան պաշտոնայնների մասին հավաքած տեղեկությունները կազմակերպության որոշ անդամներ սկսեցին օգտագործել իրենց շահերի համար՝ չտեղեկացնելով սուլթանին[2]:

Ամփոփելով վերոգրյալը, ինչպես նաև հիմնվելով Օսմանյան կայսրության հետախուզության զարգացման պատմության վերաբերյալ մի շարք արխիվային նյութերի և աշխատությունների[3], նրա

---

[1] Տե՛ս Tuncay Özkan, MİT'in Gizli Tarihi, İstanbul, ALFA, 2003, s. 35-36.

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 36.

[3] Տե՛ս մասնավորապես, РГВИА, ф.2000, ГУГШ,оп I, дд.N 1935, 2003, 2085, 2220, 2464-2466, 5171, ф. 5, д. 434, ф. 6, д. 891,Новичев А. Д., История Турции, т. 1, 1963; Турецкий шпион при дворах христианских государе, СПб, 1778, перев. сфранц.; Джинчарадзе В. З., История контрразведки в России, «Пограничник», 1946, N10, 13, Н. А. Смирнов. Турецкая агентура под

գործունեության առանձնահատկությունների, ուղղվածության, ձևերի, մեթոդների, ձեռագրերի ուսումնասիրության վրա՝ կարելի է եզրակացնել, որ.

- Օսմանյան կայսրության հետախուզությունը, ձևավորման փուլից սկսած (XVII դ.), պետության համակարգում ունեցել է իր ուրույն տեղը.

- կայսրությունում տեղի ունեցած մի շարք իրադարձություններ իրականացվել են նրա անմիջական մասնակցությամբ, առնչությամբ կամ հակազդմամբ.

- այդ մարմինների գործունեության ուղղվածությունն ի սկզբանե եղել է պառակտումներ մտցնելը տարբեր քաղաքական ուժերի միջև.

- նրա գործառույթներում, կախված տիրող իրավիճակից, ներառվել է ներքին ընդվզումների, խռովությունների հրահրումը և այլ պառակտիչ-քայքայիչ գործողությունները՝ օգտվելով ազգամիջյան և սոցիալական հակասություններից.

- ստեղծել կամ ուղղորդել են քաղաքական, կրոնական շարժումները՝ հօգուտ կայսրության. մուսուլմանական հոգևոր դասը եղել է վերահսկող, իսկ իսլամական գաղափարախոսությունը՝ խնդիր-

---

флагом ислама. Сб. «Вопросы истории, религии и атеизма», М., изд. Академии Наук СССР, 1950; Б. Н. Венедиктов. Использование панисламизма и пантюркизма разведками империалистических государств, М.,1958; Лудшувейт Е. Ф., Турция в годы первой мировой войны, изд. МГУ, 1966; Бабаходжаев А., Провал панисламистской авантюры английского ставленника Энвера в Средней Азии в 1921-1922 гг., «Звезда Востока», Ташкент, 1951, N 12.

ների լուծման միջոց.

- իրականացվող կարևոր միջոցառումները կամ օպերացիաները, ինչպիսիք են դավադրությունները, տեղահանումները, կոտորածները, զուգորդվել են ահաբեկչական գործողություններով, անցանկալի անձանց վերացումով.

- ինչպես ցանկացած պետության գաղտնի ծառայություն, այս մարմինները ևս գործել են գաղտնիության սկզբունքով, որի բաղկացուցիչ մասն է կազմել միջոցառումների և գաղտնի գործավարության պահանջներին համապատասխան ստացված նյութերի փաստաթղթավորումը:

1.2. Արևմտահայությունը որպես Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների գործունեության թիրախ (19-րդ դարի 60- 70-ական թթ.)

Օսմանյան կայսրության սոցիալ-քաղաքական և տնտեսական զարգացումներով պայմանավորված՝ XIX-րդ դարի սկզբից արևմտահայությունը բաժանվեց սոցիալական երկու հիմնական շերտի՝ աշխատավորական և ամիրայական (արդյունաբերողներ, բանկիրներ, խոշոր առևտրականներ, պաշտոնյաներ): Այնուհետև ծնունդ առան առևտրա-արհեստագործական միությունները՝ էսնաֆները, որոնք պայքար էին մղում ամիրաների դեմ: Զարգացումները Արևմտյան Հայաստանում տարան նրան, որ խարխլվեցին հայ հոգևորականության դիրքերը: Սոցիալական խավերից յուրաքանչյուրը փորձում էր պաշտպանել իր շահերը՝ ելնելով մեկը մյուսի դեմ: Ամիրաները ձգտել են հայ կյանքում ղեկավար դերի. և սկզբնական շրջանում նրանք էին հանդես գալիս հայ ժողովրդի անունից և հայ ազգաբնակչությանը տնտեսական կախյալ վիճակում պահում ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև Կոստանդնուպոլսում: Հոգևորական պաշտոնատերերը, ազգային համայնքի ղեկավարները, որպես կանոն

ամիրաների դրածոներն էին[1]: Այս խավը օսմանյան բուրժուազիայի մի հատվածն էր, որի վարքագիծը, դիրքորոշումները բխում էին իրենց նեղ շահերից[2]:

Մինչև 1878թ. պոլսահայ կոմպրադորական բուրժուազիան իր շահերը պաշտպանում էր օսմանյան պետության միջոցով և նման պայմաններում ոչ միայն հայ ազատագրական պայքարի խնդիր չէր դնում, այլ գործում էր դրա դեմ՝ հանդիսանալով օսմանյան կառավարության հենարաններից մեկը:

Օսմանյան կայսրությունում ձևավորվել էր կառավարման ինքնատիպ միլիեթների համակարգ, որը նպաստում էր պառակտիչ-անջատողական քաղաքականության իրականացմանը հպատակ ժողովուրդների շրջանում:

Կայսրության այլակրոն բնակչությանը միավորելով կրոնական առանձին համայնքներում՝ միլիեթներում, սուլթանական իշխանությունները հմտորեն օգտագործում էին ժողովուրդների միջև եղած հակասությունները, դավանանքների տարբերությունը, որպեսզի թույլ չտան նրանց համախմբումը թուրքական վարչակարգի դեմ:

Համակարգը ընդգծված կրոնական բնույթ ուներ, ինչը թույլ էր տալիս տարանջատում մտցնել հպատակ ազգությունների ներսում: Իշխանությունների համար այս համակարգը լուծում էր մեկ այլ

---

[1] Ռաֆֆի, Եժ, հ, X, էջ 311:

[2] Օսմանյան կայսրության բուրժուազիայի մասին ավելի հանգամանալից տե՛ս Ինճիկյան Հ. Գ., Օսմանյան կայսրության անկումը, Եր.,1984:

կարևորագույն խնդիր. համայնքներին տալով կրոնական և մշակութային որոշակի ինքնավարություն, նրանց կտրում էր իրենց ընդհանուր կենտրոններից (Հռոմ, Էջմիածին)՝ խոչընդոտելով վերջինների ազդեցությունը:

Արևմտահայության դեմ սուլթանական իշխանությունների կողմից իրականացված պառակտիչ քաղաքականության դրսևորումներից էին նաև Օսմանյան կայսրությունում վարչատարածքային վերաբաժանումները: Դրանք հետապնդում էին մեկ խնդիր. ձևավորել այնպիսի վարչական միավորներ, որոնք խոչընդոտում էին քրիստոնյա ժողովուրդների հավաքական բնակեցումը մեկ վարչական միավորում, իսկ այդ շրջանների ազգային կազմը պետք է նպաստեր հայ ազատագրական պայքարի ձախողմանը:

1866թ. Օսմանյան կայսրությունում վարչատարածքային նոր բաժանում տեղի ունեցավ: Արևմտյան Հայաստանը բաժանվեց վեց վիլայեթների: Դրան զուգահեռ իշխանություններն այդ վիլայեթները բնակեցնում էին մահմեդական տարրերով՝ նախ վիլայեթների ազգային կազմը փոխելու և ապա այդ տարրերի միջոցով հայերին ճնշելու համար: Վալիներն ու մութեսարիֆները, որպես կանոն, նշանակվում էին բալկանյան կամ կովկասյան մահմեդականներից, որոնք առանձնակի ատելութ-

յամբ էին լցված քրիստոնյաների հանդեպ[1]:

Տեղական կառավարման մեկ այլ առանձնահատկությունն էր այն, որ, կառավարությունը, վալիների ձեռքից վերցնելով զինվորական ուժերը, ստեղծեց ռազմական օկրուգների համակարգ: Հայաստանը 4-րդ ռազմական օկրուգի կամ բանակի տեղակայման շրջանն էր: «Ռազմավարական շահեկան կացությունը և զորքերի մոբիլիզացման ու կենտրոնացման առավել բարենպաստ պայմանները Թուրքիային հնարավորություն էին տալիս անատոլիական բանակի զորքերի տեղաբաշխումը ենթարկել նաև ներքին քաղաքականության պահանջներին… Չորրորդ բանակը, զբաղեցնելով Ռուսաստանին սահմանակից շրջանները, միաժամանակ սպառնալիք էր Էրզրումի, Վանի, Խարբերդի և մյուս շրջանների հայերի և հյուսիսային Քրդստանի, Դերսիմի ու Հաքիարի քրդերի համար»[2]: Պատահական չէ, որ Փոքր Ասիայի ներքին (կենտրոնական) վիլայեթներում, որտեղ ազգաբնակչության հիմնական մասը թուրքեր էին, զորամասեր ընդհանրապես չէին տեղակայված: Այսպիսով, Արևմտյան Հայաստանում հնարավորություն էր ստեղծված համեմատաբար ոչ մեծ ռազմական ուժով լուծելու թե՛ արտաքին, և թե՛ ներքին խնդիրներ:

Հայերի դեմ իշխանությունների պայքարում օգ-

---

[1] Տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում, Եր., 2004, էջ 226:

[2] Տե՛ս Колюбакин А. М., Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, Тифлис, 1888, с. 69.

տագործվում էր գործողությունների այնպիսի համակարգ, որն ապագայում հանգեցրեց մեծ բարդությունների ոչ միայն հայրենասերների և առաջադեմ մարդկանց, այլև ամբողջ հայ ազգաբնակչության համար[1]:

Արևմտահայության վիճակի է՛լ ավելի բարդացման օբյեկտիվ գործոններից էր կովկասյան լեռնականների ներհոսքը Օսմանյան կայսրություն: Այն սկիզբ առավ 19-րդ դարի առաջին կեսին և հետապնդում էր մեկ գլխավոր նպատակ. մեծացնել կայսրության մահմեդականների տեսակարար կշիռը: Եթե ցարական վարչակարգի համար կովկասյան լեռնականները մշտական զինված ընդդիմություն էին, ապա օսմանյան բռնատիրության համար՝ հպատակ ժողովուրդներին հնազանդության մեջ պահելու ու նաև բնաջնջելու միջոց[2]:

Թուրքերը ձգտում էին չերքեզներին առաջին հերթին տեղավորել Արևմտյան Հայաստանի լեռնային շրջաններում, որտեղ հայերը բնակվում էին հոծ զանգվածներով: Զեյթունի դեմ օգտագործելու նպատակով 1858-60 թթ. լեռնականների մի մեծ բազմություն բնակեցվեց նաև Մարաշի շրջանում: Նույն քաղաքականությունն էր տարվում Սասունում, Մուշում, Վանում, որտեղ հայերը կազմում էին ազգաբնակչության մեծամասնությունը:

XIX դարի 60-ական թվականների վերջից և 70-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 57:

[2] Այդ մասին ավելի հանգամանալից տե՛ս Авакян А., Черкесский фактор в Османской империи и Турции, Ереван, 2001.

ական թվականների սկզբից հակահայկական գործողություններն ավելի ու ավելի որոշակիորեն դառնում էին սուլթանական կառավարության կողմից իրականացվող պետական քաղաքականություն:

Այսպիսով, Օսմանյան կայսրությունում ընդհանրապես և Արևմտյան Հայաստանում մասնավորապես ձևավորվել էին հետևյալ գործոնները.

մի կողմից՝

- միլիեթների համակարգը.

- վարչատարածքային վերաբաժանումը.

- ռազմական օկրուգների ձևավորումը /4-րդ բանակի տեղակայման շրջան/.

- կովկասյան լեռնականների ներհոսքն Օսմանյան կայսրություն,

մյուս կողմից՝

- թեժ պայքարը Հայ Առաքելական եկեղեցու կողմնակիցների, կաթոլիկների և 1850թ. ձևավորված բողոքականների միջև: Կ.Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանի (1874-1884) և լիբանանահայ կաթոլիկների առաջնորդ Անտոն արքեպիսկոպոս Հասունյանի թեմերը բաժանող պատնեշները հաղթահարելու փորձերը առերևույթ էին[1].

- հոգևորականության վերնախավի և աշխարհականների միջև հակասությունները.

- հայկական գավառների աշխատավորության ներկայացուցիչների (էսնաֆներ) և արևմտահայութ-

---

[1] Տե՛ս Գևորգ-Մեսրոպ, Պատմութիւն Հայ եկեղեցու, Կ.Պոլիս, 1913, էջ 508-513:

յան հարուստ խավի (ամիրաներ) միջև հակասությունները.

- արևմտահայության մեջ նշանակալի խավ կազմող առևտրականների ու արդյունաբերողների, ինչպես նաև խոշոր հողատերեր դարձած հայերի թրքամետ քաղաքականությունը.

- հայ սակավահող գյուղացիությունը, գտնվելով ընչազուրկ, բազմաթիվ հարկերի տակ ճկած և ճնշված վիճակում, համախմբող քաղաքական ուժի բացակայության պայմաններում ևս անմասն էր մնում ազգային հարցերի լուծման խնդրից.

- հայ հասարակության նշված խավերի ամբողջականության պառակտվածությունը՝ թրքամետ, ռուսամետ և արևմտամետ կողմնորոշում ունեցող ներկայացուցիչներով:

Արևմտահայության շրջանում տիրող իրավիճակը նպաստավոր պայմաններ էր ստեղծում կայսրության գաղտնի ծառայություններին քայքայիչ գործունեություն ծավալելու համար:

Թուրքական գաղտնի ծառայությունների էությունը խորությամբ բնութագրել է Ռուբենը. «Ամենադժվարին գործն էր գաղտնի ոստիկանները ճշդորոշելը: Անոնք էին ամենավտանգավորը, որովհետև անոնք գործի մեջ չկային, որ տեսնեիր. Անոնք անուն չունեին, որ գտնեիր. չէին խոսեր, որ լսեիր: Անոնք անանձ էություններ էին, որ գոյություն ունեին և գուցե քու մոտդ էին, և դու չէիր ճանչնա: Անոնք քեզ կըտեսնեին, և դու իրենց չէիր տեսներ: Եվ անոնց տեսածը այնպես գաղտնի կը զեկուցվեր

իշխանությանը, որ բացառիկները միայն կրնային հասկնալ էությունը: Գաղտնի ոստիկանը կարող էր լինել չսիրածդ կամ շատ սիրածդ մեկը, քու հարազատը, քու ընկերը, քու զինվորը և ո՛վ գիտե և քու մեծավորը, բայց չէիր համարձակի բարձր մտածելու:

Եթե ազգության մեջ չլինեին դավաճաններ և մատնիչներ, իշխանությունը իր բոլոր միջոցներով անզոր կըդառնա, նույնիսկ իր գաղտնի ոստիկանությունը անպտուղ կդառնա»[1]:

Այսպիսով՝ Հայկական շարժման առաջ ծառացած խնդիրներից էր լրտեսների դեմ պայքարը. մի կողմից շարժմանը հակադրվող հայերի, ովքեր փորձում էին ապացուցել այդ շարժման ավելորդությունը և վնասակարությունն ու «ի պաշտոնե» հանդիսանում էին կայսրության հետախուզության ձեռքում «արդյունավետ» գործիք, մյուս կողմից՝ արտաքին շփումների ոլորտում, որտեղ անհրաժեշտություն կար կազմակերպել մեծ տերությունների հետախուզությունների կողմից հայ գործիչներին «մատուցված» տեղեկությունների հավաստիության ստուգումը: Այս խնդրի լուծումից էր կախված հայ ազատագրական շարժման առաջընթացը: Համապատասխան կառույցների բացակայության պայմաններում արևմտահայությունն ի զորու չէր լուծել այդ խնդիրը:

Հայ հեղափոխական կազմակերպությունների

---

[1] Տե՛ս Ռուբէն, Հայ յեղափոխականի մը հիշատակները, հ., թիւ 3, Պեյրութ, 1983, էջ 101, 102:

համար մեկ այլ կարևոր խնդիր էր՝ հետախուզական բնույթի տեղեկատվության ձեռքբերումը[1]:

Սուլթանական կառավարության՝ արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի ճնշման գործում հետախուզական միջոցառումների կիրառման առաջին օրինակներից էին Զեյթունի ապստամբության ժամանակ իրականացված միջացառումները: Այս դեպքում օգտագործվեցին թուրք հոգևորականի՝ որպես ազդեցության գաղտնի գործակալի հնարավորությունները: Մասնավորապես նոր զոհեր տալուց խուսափելու նպատակով Զեյթունի չորս հայ իշխանները որոշում են պարտավորված հարկագումարը առաքել մայրաքաղաք: Մահտեսի Մանուկ Պերսյանը 1830թ. 15 հազար ղուրուշ հարկագումարը, առանց միջնորդի, հանձնում է Այա-Սոֆիայի մյութեվելլուն: Թուրք հոգևորականը, արտաքնապես շնորհակալ եղողի կերպարանքով, զեյթունցուն միտք է հաղորդում այն մասին, թե քաղաքում եղած 24 տուն մահմեդականներին պետք է որևէ պատրվակով արտաքսել, քանի որ «օձի ձագերու նման, երբ մեծանան ձեր սիրտեն կխայթեն»[2]: Թուրք հոգևորականը, կատարելով գաղտնի ծառայության կոնկրետ հանձնարարությունը, իրականում նպատակ էր հետապնդում

---

[1] Հետախուզական տեղեկատվությունը՝ անձանց, փաստերի, առարկաների, երևույթների և գործընթացների մասին տվյալներ են (անկախ դրանց հաղորդման ձևից) տես՝ Краткая сыскная энциклопедия, М., 2000, с. 56.

[2] Տե՛ս Գալուստյան Գր., Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն,1934, էջ 127:

խաթարել լեռնականների խաղաղ գոյակցությունը, «հնարավոր պատանդառությունից փրկել» քաղաքի մահմեդականներին և հեշտացնել ապագա արշավողների գործը:

Իսլամական կրոնավորի խորհրդից դրդված՝ Սուրենյան ավագ իշխանին հանձնարարում են համապատասխան պատրվակով արտաքսել մահմեդական հողատեր գերդաստանները: Պայմանաժամանակ նշանակելով՝ Սուրենյանը 1831թ. պահանջում է մահմեդականների հեռացումը: Յաղուպյանները հակառակվելով նրանց վերցնում են իրենց պաշտպանության տակ, ինչի հետևանքով, փաստորեն, սկսվում է եղբայրասպան կռիվ, որը տևում է 7 ամիս և խլում 400-ից ավելի կյանք[1]: Յաղուպյանների ձեռքով ոչնչացվեց Սուրենյան իշխանական գերդաստանի մի մասը, իսկ Մարաշի Սուլեյման փաշան կարողացավ պահն օգտագործել և զորք հաստատել Ս. Աստվածածնի վանքում: Սակայն վճռական պահին զեյթունցիները մոռացան բոլոր տեսակի հակասությունները, իրար նկատմամբ ունեցած թշնամանքը և գիշերային հանկարծակի հարձակման միջոցով ջարդեցին Սուլեյմանի զորամիավորումը:

Ներկայացված փաստը կարող է վկայել այն մասին, որ Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունը նախապես տեղեկացված էր Սուրենյանների և Յաղուպյանների միջև տեղ գտած հակա-

[1] Գալուստյան Գր., նշված աշխ., էջ 129:

սությունների ու մահմեդական հողատերերի վերաբերյալ վերջիններիս իրարամերժ դիրքորոշման մասին:

Միայն տիրապետելով նման տեղեկատվությանը՝ կարելի էր կազմակերպել տվյալ միջոցառումը. հավատացնել Սուրենյան իշխաններին, որ թուրք հոգևորականի առաջարկը «հիմնավոր» է, դրդել նրանց համապատասխան գործողություններին: Հայկական կողմը, զուրկ լինելով պաշտպանական՝ հակառակորդին հակազդելու միջոցներից, պետության գաղտնի ծառայության կողմից հրահրվեց եղբայրասպան պատերազմի[1]:

1862թ. Վանում տեղի է ունենում հայերի զինված ելույթը, իսկ 1860-ական թվականներին Մուշում, Քղիում և Չարսանջակում տեղի էին ունենում հայերի զինված ելույթները քուրդ ցեղապետերի դեմ[2]:

Սուլթանական կառավարությունը, կերտում էր հայաջինջ քաղաքականության նախագիծը՝ հենվելով նաև հետախուզական տվյալների վրա: Օգտագործելով «devide et impera» սկզբունքը, որն Օսմանյան կայսրությունում ստացել էր հպատակ ժողովուրդների միջև պառակտում մտցնելու և «շանը շան միջոցով խեղդելու» քաղաքականության որա-

---

[1] Այս պարագայում՝ պաշտպանական, հակառակորդին հակազդման միջոցների տակ մենք հասկանում ենք թուրք հոգևորականի կողմից մատուցված տեղեկատվության հավաստիության աստիճանի ստուգման հնարավորությունները:

[2] Տե՛ս «Փարիզ», 1862, 28 փետրվարի:

կավորումը, կառավարությունը, փոխելով իր դիրքորոշումները հայ-քրդական հարաբերություններում, մեկ հովանավորել է հայերին, մեկ՝ քուրդ ցեղապետերին՝ մտադրություն ունենալով իրար դեմ կռվեցնելու, թուլացնելու իր երկու թշնամիներին:

1860-ական թվականներին այս քաղաքականությունը իրագործում էր գաղտնի ոստիկանությունը՝ հավաքագրելով և նպատակային օգտագործելով նաև հայ ազգի ներկայացուցիչներին: Դրանցից մեկն էր Վանի հոգևոր առաջնորդ Պողոս վարդապետ Մելիքյանը, որը, գաղտնի համագործակցելով Վասպուրականի շրջանի քուրդ ցեղապետերի ու ավատապետերի հետ, կողոպտեց ու թալանեց ոչ միայն ռայա քրդերին ու քրիստոնյա ասորիներին, այլև հարազատ ժողովրդին:

Ինչպես նշում էր հայ մեծանուն գրող Ռաֆֆին. «Յուզբաշի Ալի աղան, Զազա Էոմերը, Շեմսկի Տրոպոն, Պաշկալայի Քոռ Էոմերը, բոլորը հպատակում էին նրան:

… տեղային եկեղեցիները կողոպտեց և յուր անասունների գոմերը դարձուց, Մոկաց երկրի Ավդալ բեկը՝ այն հազարավոր հայերի արյունը թափող խան Մահմուդի եղբայրը և Մաքուրցվոց Մեհմետ Ալի աղան, որ Սաթմանից եկեղեցին պղծեց՝ բոլորը Պողոս վարդապետի ամենահավատարիմ բարեկամներն են…

Այդ բոլոր չարագործները գաղտնի կապեր են կցում Պողոս հայր սուրբի հետ և նրանից կախումն

ունեն»[1]:

Պողոս վարդապետը կապ ուներ նաև Վանի փաշայի հետ և այդ եռյակը թալանի ու հարստահարությունների էր ենթարկում թե հայ, թե քուրդ գյուղացիությանը: «Մի հայոց եկեղեցի պղծել տվող Մեհմեդ Ալիին ազատելու համար Պողոսը կառավարության ատյանի մեջ վկայում է, թե չարագործն անչափահաս մանուկ լինելով, ազատ է պատժվելուց, մինչ դեռ նա ահագին մորուք ուներ»[2]:

Արևմտահայության պայքարի այս փուլում ակնհայտորեն ուրվագծվում էր այն քաղաքական մոտեցումը, որ քանի դեռ քրդերի մոտ տիրում էին աշիրեթական-ցեղապետական կարգերը, քանի դեռ այդ ժողովուրդը գտնվում էր հետամնացության և խավարի մեջ, առանց գիր ու գրականության, մտավոր ու մշակութային կյանքի, նրանք միշտ էլ արևմտահայության համար սպառնալիք պետք է հանդիսանան և հարմար պահին կարող են օգտագործվել թուրքական հետախուզության կողմից իր հայադավ նպատակներն իրականացնելիս:

Հայ մտավորականներից Մկրտիչ Տիգրանյանը առաջիններից էր, ով 1850թ. Արևմտյան Հայաստանի քրդաբնակ շրջաններում փորձեց քուրդ երեխաների համար դպրոցներ բացել: Վերջինիս ջանքերով Կոստանդնուպոլսում կազմակերպվեց «Բարեգործություն արևելյան» ընկերությունը, որի գործուն ան-

---

[1] Տե՛ս Ռաֆֆի, Ամբաստանություն Վանա Պողոս վարդապետի վրա, հոդված, Երկերի ժողովածու, հ. 9, Եր., 1964, էջ 71:
[2] Նույն տեղում, էջ 72:

դամներից էր արևմտահայ մտավորական, «Մեղու»-ի խմբագիր Հարություն Սվաճյանը: Հիշյալ ընկերությունը կազմեց և հրատարակեց «Լապտեր լուսատու» անվանմամբ հայատառ քրդերեն դասագիրք և տարածեց քրդական շրջաններում: Ընկերության առաջնահերթ նպատակներից էր նաև բարեկամական հարաբերությունների հաստատումը քրդական շրջանների հետ[1]:

Մ. Տիգրանյանի գաղափարներն ու մտահղացումները հետագայում զարգացվեցին մի խումբ հայ մտավորականների կողմից, սակայն նրանց ջանքերը մշտապես հանդիպում էին օսմանյան հետախուզության հակազդմանն ու խափանիչ գործողություններին:

Վանում եղած ժամանակ Մ. Խրիմյանը ևս կապեր էր հաստատում քուրդ բեկերի և աղաների հետ, աշխատում էր նրանց համոզել, որ թողնեն վաչկատան կենցաղը, հրաժարվեն սրից ու հրացանից և կապվեն հողին: Նա խոստանում էր քրդական գյուղերում դպրոցներ բացել, նրանց հայ ուսուցիչներ ուղարկել, ստեղծել քրդական այբուբեն: Քուրդ ազդեցիկ ցեղապետերին նա բացատրում էր, որ հայ և քուրդ ժողովուրդներն ունեն միևնույն շահը և միևնույն թշնամին՝ սուլթանական կառավարությունը, որ հայ-քրդական գործակցությունը երկուսի

---

[1] Տե՛ս Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Եր., 1955, էջ 290:

համար էլ կլինի ազատագրության երաշխիք[1]:

Նշենք, որ Մ. Խրիմյանի և այլ առաջադեմ հայ մտավորականների այս մղումներն իրական հող չունեին ու թուրքական իրականության մեջ անիրագործելի երազանքներ էին, քանի որ քրդերի մոտ ավելի ուժեղ էր կրոնական ինքնությունը, հայրենիքի և հողային խնդրի առկայության հստակ գիտակցումը:

Արևմտահայ գործիչներ Մ. Մամուրյանը, Հ. Սվաճյանը, Գ. Չիլինկիրյանը և այլոք գտնում էին, որ անհրաժեշտ է քուրդ ժողովրդին պարզաբանել նրա նկատմամբ թուրքական կառավարության կեղծ սիրաշահումների իսկական պատճառները և նախապատրաստել նրան հայ ժողովրդի հետ համատեղ թուրքական լծի դեմ հանդես գալու համար:

Միևնույն ժամանակ, գաղտնի խորհրդակցություններում հատուկենտ մարդիկ էին խոսում զենք ունենալու և անձամբ ինքնապաշտպանությունը կազմակերպելու մասին: Զենքի պահանջին արձագանքեցին նաև արևմտահայ ազատական հայացքների տեր մի շարք գործիչներ, որոնք սովորաբար զգույշ էին իրենց արտահայտություններում: Այսպես, 1863թ. Հռոմից Մ. Խրիմյանին ուղարկված նամակում հայ հասարակական-քաղաքական գործիչ Գաբրիել Նորատունկյանը գրում էր. «Հայաստանի սոսկալի ողբերգության տեսարանների առաջն առնելու համար պետք է մի մասնաժողով կազմել ազգի արտաքին գործերը վարելու համար և տևական գործունեությամբ աշխատել Հայաս-

[1] Տե՛ս Գյուզալյան Գ., Խրիմյան Հայրիկ, Պեյրութ, 1954, էջ 43-44:

տանի շղթաները խորտակել»[1]: Հատկանշական է, որ Նորատունկյանի հայացքները շուտով ենթարկվեցին փոփոխության, երբ վերջինս, օսմանյան կառավարության մեջ զբաղեցնելով բարձր պետական պաշտոններ (1908թ. առևտրի նախարար, 1912թ. արտաքին գործերի նախարար), հրաժարվեց իր մի շարք տեսակետներից և 1912-13թթ. Բալկանյան պատերազմների ժամանակ դեմ արտահայտվեց Հայկական հարցի արծարծմանը:

Նշենք, որ անձանց հավաքագրման գործընթացում Օսմանյան կայսրության հետախուզության կողմից կիրառվող մեթոդներից էին դրամական պարգևատրությունները և պաշտոնների շնորհումը:

Օսմանյան կայսրության պատմության հետագա զարգացման ելևեջներում կարևոր դերակատարություն ունեցավ Միդհատ փաշան՝ թե° իր քաղաքական բարեփոխումներով և 1876թ. սահմանադրությամբ, թե° նրանով, որ նրա կառավարման ժամանակ Օսմանյան կայսրությունում հակահետախուզությունը ձևավորվեց որպես համակարգված, իր ուրույն գործառույթներով օժտված պետական մարմին[2]:

Միդհատի նման «վառ անհատականությունը», որից սուլթանն անհանգստանալու պատճառներ ուներ, չէր կարող չհայտնվել Օսմանյան կայսրության հետախուզության տեսադաշտում, և չէր կարող,

---

[1] Դիվան Հայոց պատմութեան: Հարստահարութիւններ Տաճկահայաստանում, Թիֆլիս, 1912, էջ 55-58:

[2] Տե՛ս Джинчарадзе В., նշված աշխ., էջ 10-14:

իր հերթին, չօգտագործվել վերջինիս կողմից հակահայկական զանազան օպերատիվ միջոցառումների իրականացման ընթացքում: Այսպես, հակահետախուզության հակահայկական գործունեության դասական օրինակներից կարող ենք նշել հետևյալը. 1876թ. դեկտեմբերի 6-ին Կ.Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան Էլիոտի հետ հանդիպման ժամանակ Կ.Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը, դեսպանին հայտնելով իր ժողովրդի վրդովմունքի դրդապատճառները, ակնարկել էր, որ, եթե արևմտահայերի վիճակի նկատմամբ անհրաժեշտ է եվրոպական երկրների ուշադրությունը հրավիրել ապստամբության միջոցով, ամենևին էլ դժվար չէր լինի արևմտահայերին ոտքի հանել: Ներսես պատրիարքը նկատի ուներ, որ Բոսնիայի և Հերցեգովինայի վրա եվրոպական երկրների կառավարություններն ուշադրություն դարձրեցին այն ժամանակ, երբ նրանք ապստամբեցին: Նա կարծում էր, որ նման դեպքերում հայերին ևս մյուսներին հավասար բարենորոգումներ կշնորհվեն: Պատրիարքը, ունենալով «բարեհաճ» վերաբերմունք սուլթանի նկատմամբ, կարծես թե հասկացել էր իր՝ սուլթանին պաշտպանելու հորդորանքների սխալ լինելը: Այս իրողությունը հաստատվում է նաև ռուսական դիվանագիտական աղբյուրներով: Կանցլեր Ա. Գորչակովին հղած իր զեկուցագրերից մեկում Ռուսաստանի դեսպան Իգնատևը, հենվելով Ներսես պատրիարքի կողմից իրեն հայտնած տեղեկատվության վրա, գրում է, որ Միդհատը մեղադրել է հայերին, թե

նրանք մեծ քանակությամբ զենք են գնել արտասահմանում և նախապատրաստում են ապստամբություն Ռուսաստանի հետ սահմանամերձ շրջաններում, որպեսզի ապահովեն Ռուսաստանի միջամտությունը[1]:

Սակայն ժամանակից շուտ պատրիարքին հայտնվել էր մի «գաղտնի» լուր այն մասին, որ Բ. Դուռը շուտով ընդունելու էր Սահմանադրություն, որով կայսրության բոլոր ժողովուրդներին շնորհելու էր «հավասար իրավունք»: Այս «գաղտնի» միջոցներով պատրիարքին տրամադրած լուրը հետապնդում էր այն նպատակը, որ վերջինս կարողանար հետ պահել հայերին ապստամբությունից: Երբ Սերբիան և Չերնոգորիան պատերազմ էին մղում Օսմանյան կայսրության դեմ, Ներսես պատրիարքը կոչ արեց հայերին պաշտպան կանգնել կայսրությանը. «Վասնզի, - ասված էր նրա կոնդակում, - Օսմանյան երկիրը պաշտպանելը Հայաստանը պաշտպանել ըսել է, նույնիսկ հայուն կրոնը, դպրոցը, ինքը, տունը, ընտանիքն ու կյանքը պաշտպանել ըսել է»[2]:

Այսպիսով, իրականացված հատուկ միջոցառման արդյունքում Օսմանյան կայսրության իշխանությունները, իբր «հետախուզական բնույթի տեղե-

---

[1] Տե՛ս АВПРИ, Ф. Канцелярия, 1876 г., д. 32, л. 137, Н. П. Игнатьев - А. М. Горчакову, Константинополь, 18/30 октября 1876 г..

[2] Տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրները և Ազգային սահմանադրութիւնը Թուրքիայում (1860-1910), Ահատոր, Թիֆլիս, 1912, էջ 116,136:

կույթի արտահոսքի» եղանակով հանգստացնելով հնարավոր ապստամբությանը դիմելու պատրաստ հայերին, լուծեցին երկու խնդիր. նախ՝ զերծ մնացին իրենց ուժերի և միջոցների ավելորդ վատնումից, երկրորդ՝ այդ ուժերն ու միջոցները կենտրոնացրեցին Բոսնիայի և Հերցեգովինայի ապստամբությունների ճնշման ուղղությամբ:

Օսմանյան կայսրության հետախուզության գործելաոճի համաձայն՝ վերջինիս կողմից հմտորեն կիրառվել է մեկ կառույցի (այս դեպքում՝ հայկական համայնքի, հասարակության) կազմալուծման, չեզոքացման կամ թուլացման մեթոդը: Այն է՝ ներդրված գաղտնի գործակալի միջոցով տվյալ կառույցի ներկայացուցիչների առջև վարկաբեկել իրենց առաջնորդին:

Անշուշտ, Ներսես պատրիարքին «գաղտնի» լուրի տրամադրումն իրականացվել էր ներդրված գործակալի միջոցով, որը վստահություն և հավատ էր ներշնչել պատրիարքին: Մի կողմ դնելով նման ապստամբության հնարավորության և դրա բնույթի հարցը՝ այնուամենայնիվ, վերջինիս վարքագծի նման դրսևորման պարագայում հարց է ծագում. հայերին ապստամբությունից հետ պահելով, արդյոք հայ համայնքի առջև նա վարկաբեկվեց, և երկրորդ՝ արդյոք Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունները միտում ունեին վերջնականապես նրան վարկաբեկելու:

Առաջին հարցի պատասխանը մեկ տարի անց՝ 1878թ. տվել է հենց ինքը՝ Ներսես Վարժապետյանը,

որի բռնած ուղին բերեց պարտության: Պատրիարքը բրիտանացի դիվանագետ Լեյարդին ասել է, թե Բեռլինի դաշնագրում նույնիսկ չի հիշատակվում Հայաստան անունը, հայերն իրեն ազգային դավաճան են համարում և պատրաստ են իրեն քարկոծել[1]: Իսկ երկրորդ հարցի պատասխանն ակնհայտ է. քանի դեռ տվյալ գործչի դիրքորոշումը նպաստում է օսմանյան կառավարության շահերին, նպատակահարմար է, շքանշաններ շնորհելով, պահել նրան կախվածության մեջ թե՛ օսմանյան իշխանությունից, թե՛ հայ համայնքից:

Սակայն այս խնդրին չի կարելի մոտենալ միանշանակ, քանի որ արևմտահայությունը, պառակտված լինելով հանդերձ, չուներ գործողությունների հստակ ծրագիր՝ ի տարբերություն բալկանյան ժողովուրդների:

Ուշագրավ է, որ Օսմանյան կայսրությունում Բրիտանական կայսրության դեսպանի զեկուցագրերից մեկում արևմտահայերի ռուսամետության դրսևորումը համարվում էր ռուսական գործակալների քայքայիչ աշխատանքի արդյունք: «Հայոց ուսյալ դասակարգի մեծամասնությունը, - գրում է նա, - խիստ կերպով հակառակ է Ռուսաստանին, բայց ժողովուրդը, բազմությունը, որոնք տանջվում են թուրքերի հարստահարություններից, այդպես չեն և հավատացած են, որ եթե փոփոխություն լինի (եթե

[1] Տե՛ս British documents on Ottoman Armenians, vol. 1, (1856-1880), Ankara, 1982, p. 182-184.

ռուսական տիրապետությունը գա) ավելի լավ կլինի»[1]:

Իրականությունն այն էր, որ արևմտահայերի կողմնորոշումային տրամադրությունները բորբոքվում կամ սառեցվում էին Ռուսաստանի և եվրոպական երկրների կառավարությունների իրարամերժ խոստումներին համապատասխան: Այս կապակցությամբ՝ կարող ենք նշել, որ Ներսես պատրիարքը, վերը նշված իր կոնդակով, արտահայտել է հայ հասարակության մի ստվար զանգվածի դիրքորոշումը:

Կայսրության գաղտնի ծառայությունների համակարգված գործունեությունը կարելի է գնահատել՝ ելնելով գործակալական ապարատի կառուցվածքից և «արդյունավետ» աշխատանքից: Այս մասին կարող ենք եզրակացություններ անել հետևյալ փաստերի հիման վրա. 1880թ. պոլսեցի մեծահարուստ Արթին Դադյանը մի նամակ էր գրել Ներսես պատրիարքին, որում պատմել էր թուրքական նախարարների նիստում հայկական հարցի մասին ընդունված գաղտնի որոշման մասին: Պատրիարքն այդ նամակը հանձնել էր մի հայ վաճառականի, որ նա փոխանցի Սարգիս Համամջյանին (վերջինս բարձր պաշտոններ էր վարել օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարությունում, Հռոմում երկու տարի եղել էր դեսպան): Այս հա-

[1] Տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրները և Ազգային սահմանադրութիունը Թուրքիայում (1860-1910), Ա հատոր, Թիֆլիս, 1912, էջ 108:

վատարիմ պաշտոնյան գաղտնի թուղթն ուղղակի դնում է սուլթանի սեղանին: Շուտով Դադյանը «սուլթանին ոտքերը իյնալով ներողություն կը խնդրե»[1]:

Այս դրվագում ակնառու է Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների կողմից իրենց հետ համագործակցող անձանց միջև գործառույթների բաժանումը՝ ի դեմս կոնկրետ գործող անձանց հստակ բաժանված ռեզիդենտի, գործակալի և գործակալ-կապավորի աշխատանքների և դերերի, որի արդյունքում սուլթանն իրազեկված էր և տիրապետում էր իրավիճակին հայ համայնքում:

Այսպիսով, ուսումնասիրվող ժամանակահատվածում, Օսմանյան կայսրության հետախուզության կողմից կատարված գործողությունների արդյունքում լուծվեց ևս մեկ խնդիր. սրվեցին հայկական ներհամայնքային հակասությունները՝ էլ ավելի թուլացնելով այն, և ստեղծվեցին նպաստավոր պայմաններ իրենց հետագա քայքայիչ գործունեության համար:

Հատկանշական է, որ այս պարագայում ևս Օսմանյան կայսրության հակահետախուզությունը գործեց իրեն բնորոշ ձեռագրով՝ նմանատիպ հատուկ միջոցառումների իրականացումը զուգորդելով ահաբեկչական գործողություններով: Մասնավորապես, Մեծ Բրիտանիայի դեսպան Էլիոտի և

---

[1] Տե՛ս Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ,Եր., 1982թ., հ. 2-րդ, էջ 26:

Ներսես պատրիարքի վերը նշված հանդիպումից 5 օր առաջ՝ 1876թ. դեկտեմբերի 1-ին, թուրք գործակալները, հայերին սարսափի տակ պահելու միտումով, Վանի շուկան հրդեհի էին մատնել, որի հետևանքով հայերին պատկանող 500 խանութ էր ոչնչացվել:

Այս իրադարձությանը հայրենական պատմագրությունը բազմիցս անդրադարձել է, սակայն այն դիտարկելով որպես որպես մեկուսի երևույթ: Մինչդեռ, ինչպես վկայում է ռուս դեսպան Իգնատևին գրած իր գաղտնի զեկուցագրում վերջինիս գաղտնի գործակալ Պ. Անինոն, որը Միդհատի օգնականն ու անձնական թարգմանիչն էր, ով քաջատեղյակ էր երկրի անցուդարձին, այդ թվում՝ այնպիսի իրադարձություններին, որոնք իշխանությունները պահում էին գաղտնի, համարյա միաժամանակ թուրքական իշխանությունները իրականացրեցին «գազանություններ Յոզղատի հայկական գյուղերում»[1]:

Շարունակելով հայերի դեմ ահաբեկչական գործողությունների թեման՝ նշենք, որ կան բազմաթիվ վկայություններ այն մասին, թե ինչպիսի զանգվածային չափերի էին դրանք հասել նույնիսկ մինչև Մեծ եղեռնը: Դեռևս 1892թ. նոյեմբերի 28-ին Կ.Պոլսում Անգլիայի դեսպան Ք. Ֆորդի հաղորդագրությունից հայտնի է դառնում, որ թուրք բժիշկները հայ երեխաներին պատվաստում են թունավոր վակցինայով, որի հետևանքով 500 արական սեռի երե-

[1] Տե՛ս Սաֆրաստյան Ռ., նշված աշխ., էջ 165:

խաներ են մահանում[1]:

Նման փաստերի, ինչպես նաև տարածաշրջանում պատմական, սոցիալ-քաղաքական զարգացումների գործընթացների վերլուծությունը ցույց է տալիս, որ հայ ժողովրդի պառակտվածության հանգամանքն իր տարբեր դրսևորումներով ճակատագրական նշանակություն է ունեցել, և այդ գործում իր դերն է խաղացել սուլթանական իշխանությունների կողմից միտումնավոր աղավաղված տեղեկատվության տարածումը համայնքային կառույցներում: Այս համատեքստում՝ հետախուզությանն էր վերապահված տեղեկատվության հայթայթման, ստուգման, մատուցման և իրացման գործը: Զուր չէ, որ Օսմանյան կայսրությունն ամբողջ պետական ինստիտուցիոնալ համակարգում այս ծառայություններին հատկացրել է առանձնահատուկ և կարևոր տեղ:

Եթե Օսմանյան կայսրությունում այս խնդրով զբաղվել են մասնագիտացված մարմիններ, որոնց առաջարկը դեր է խաղացել սուլթանի կողմից այս կամ այն քաղաքական որոշման կայացման գործում, ապա 1375 թվականից պետականությունից զրկված հայ հասարակության մեջ քաղաքական բնույթի տեղեկատվության ընկալումն իրականացվում էր հուզական մա-

---

[1] Տե՛ս Գալոյան Գ., նշված աշխ., էջ 412, 421: Երկրորդ համաշխարհային պատերազմից դեռ կես դար առաջ թուրքական իշխանությունները կիրառել են մարդկանց վերացնելու վերոհիշյալ ճիվաղային միջոցը, որը հետագայում ընդօրինակել են գերմանացի նացիոնալ-սոցիալիստները՝ մահվան համակենտրոնացման ճամբարներ նետված երեխաների վրա:

կարդակի վրա: Պատահական չէ, որ հայ գործիչների կամ բարձրաստիճան հոգևորականների կայացրած որոշումները կրում էին ոչ այնքան ռացիոնալ, քաղաքական իրադարձությունների զարգացմամբ պայմանավորված, որքան զգայական բնույթ: Նման կարգի որոշումներից շատերը հիմնվում էին ոչ թե տեղեկատվության հավաստիության վրա, այլ այն տվյալների, որոնք մատուցվում էին հակառակորդի կողմից: Ամենևին էլ պատահական չէ, որ, կարծես թե համախմբվելով մեկ գաղափարի շուրջ, հայ գործիչները խնդրի լուծման եղանակները պայմանավորել են օտարերկրյա պետության ներկայացուցչի խոստումներով: Կախված նրանից, թե որ պետությունն է առավել դոմինանտ դիրքեր ունեցել տարածաշրջանում, ինչ հմտությամբ է մատուցել տեղեկատվությունը՝ պայմանավորված են եղել հայ հասարակության կողմնորոշումները կամ ապակողմնորոշումը:

Այսպիսով՝ հավաստի տեղեկատվության բացակայության պայմաններում հայ քաղաքական գործիչները չէին կարող փոփոխվող իրավիճակին տալ օբյեկտիվ գնահատական և, հետևաբար, կայացնել ճիշտ որոշում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃՆՇՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ «ՅԸԼԴԸԶ» ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ (1877-1908թթ.)

2.1. Արևմտահայության ազատագրական կազմակերպությունների պայքարը սուլթանական գաղտնի ծառայությունների գործունեության ոլորտում

Ազգային-ազատագրական շարժման միջոցներն ու եղանակները տարբեր են եղել, և դրանցից յուրաքանչյուրը առաջատար դեր է խաղացել պայքարի այս կամ այն շրջանում: Դրանցից էին ցույցերը, հանրահավաքները, ապստամբությունները, զենքի ձեռքբերումը և տեղափոխումը, զինված պայքարը, մասնավորապես պարտիզանական կռիվները, ինչպես նաև Եվրոպայում ծավալված հայամետ քարոզչությունը, օսմանյան հպատակ ժողովուրդների հետ դաշինքի և համագործակցության ձևավորման փորձերը:

1877-1878 թթ. ռուս-թուրքական, կամ, ինչպես թուրքական պատմագրության մեջ նշվում է, «93 թվականի պատերազմից»[1] հետո պայքարի ձախողումների դառը փորձից արևմտահայությունը քաղեց երկու կարևոր դաս. պետք է կիրառվի «երկաթյա շերեփի» գաղափարախոսություն, իսկ մարտական տեսակետից՝ ծավալվող ազգային-ազատագրական պայքարի արդյունավետությունը պետք է ապահովվի նախ և առաջ գաղտնիքների պահպանման միջոցով: Այդ շրջանում բալկանյան, հայկական և թուրքական հեղափոխական կազմակերպությունների համար իր գաղտնի մասոնական կառուցվածքի շնորհիվ օրինակ էր ծառայում Իտալիայի միավորման համար արդյունավետ դերակատարություն ունեցած «Երիտասարդ Իտալիա» կազմակերպությունը[2]:

Այս առումով՝ 1878թ. Վանում ստեղծված «Սև խաչ» կազմակերպության գործունեությունն արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի նոր պատմության առաջին փորձերից էր: Այն փակ կազմակերպություն էր, որի գործունեության հիմնարար սկզբունքներից էր կազմակերպության դավաճան ու ան-գաղտնապահ ընկերոջ անվան վրա սև խաչ քաշելով մահվան դատապարտելը:

---

[1] Հիջրայի տոմարով 1877-1878 թվականները համապատասխանում են 1293 թվականին, այդ իսկ պատճառով այն անվանվում է «93 թվականի պատերազմ»:

[2] Տե՛ս Վարանդեան Մ., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիին, Եր., 1992, էջ 52-53:

Նման սկզբունքով գործող հայ գործիչները կարող էին հակազդել իրենց գործողություններին անլուր ձևով հետևող թուրքական գաղտնի ոստիկանությանը:

Այստեղ հարկ է հակիրճ ներկայացնել Օսմանյան կայսրության այդ ժամանակվա գաղտնի ծառայությունները: Դրանք զարգացման երկու փուլ են անցել: Հիմնադրման պահին ստեղծվել են Նապոլեոնի օրոք գործող ֆրանսիական գաղտնի կազմակերպության օրինակով, հետագայում՝ Աբդուլ Համիդ 2-րդի և հատկապես երիտթուրքերի կառավարման օրոք (1908-1918թթ.) Գերմանիայի ազդեցության տակ տեղի է ունեցել թուրքական հետախուզության «գերմանացումը»: Հարկ է նշել, որ ժամանակակից Թուրքիայի գաղտնի ծառայությունը՝ Ազգային հետախուզության կազմակերպությունը նույնպես ստեղծվել է գերմանացիների կողմից[1]: Ինչպես նշեցինք սույն աշխատության առաջին գլխում, Օսմանյան կայսրությունում եվրոպական կարգի առաջին գաղտնի ծառայությունը ստեղծվել է Թանզիմաթի բարեփոխումների շրջանում Մուստաֆա Ռեշիդ փաշայի կողմից: Որպես խորհրդատու հանդես էր գալիս Մեծ Բրիտանիայի դեսպան Ստարդֆորդ Քաննինգը[2]: Ուշագրավ է, որ, թուրքական աղբյուրների համաձայն, 1863թ. «ազդեցիկ հայ

---

[1] Տե՛ս Ավագյան Ա., Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում (1920-1971թթ.), էջ 136:

[2] Տե՛ս Tuncay Özkan, MİT' in Gizli Tarihi, İstanbul, 2003, s. 35.

կաթոլիկ խմբի շնորհիվ կազմակերպության ղեկավար նշանակվեց բարոն Ս.-ն, որի իսկական անունը մինչ օրս հայտնի չէ»[1]: Կազմակերպությունը մինչև Աբդուլ Համիդ 2-րդի գահակալությունը հատուկ անվանում չուներ, հետագայում Յըլդըզ պալատի անվանումով այն պատմության մեջ հայտնի դարձավ որպես «Յըլդըզ» կազմակերպություն:

«Յըլդըզ» կառույցն աչքի էր ընկնում իր գործակալների ցանցով, որոնք հաղորդակցվում էին անմիջականորեն սուլթանի պալատի հետ: Առավել հմուտ գործակալները, որոնց հաջողվում էր արժեքավոր տեղեկություններ ձեռք բերել, առաջխաղացում էին ապրում: Այսպես, Էրզրումում ռուսական հյուպատոսության աշխատակից Ցիմերմանը 1891թ. մարտի 22-ի իր զեկուցագրում նշում է. «Մուշի հայերից Մուշեղ Մարկարյան-Մինդոյանը Բիթլիսի վալիին մատնել է, որ Մուշի հայերը հանրագիր են պատրաստում՝ խնդրելով նրանց ռուսական հպատակություն ընդունել: Ձերբակալեցին 70 մշեցի հայերի: Մատնիչը կանչվել է Յըլդըզ, որտեղ նրան ինչ-որ պաշտոն են տվել»[2]:

Այստեղ հարկ է նշել մեկ կարևոր հանգամանք ևս. կառույցը հաճախ նույնացվում էր սուլթանի պալատի հետ, քանի որ Աբդուլ Համիդի օրոք ամբողջ կառավարումը կենտրոնացել էր սուլթանի պալատում և ինչպես նշում էր Ռուսաստանի

---

[1] Նույն տեղում, էջ 36:

[2] Տե՛ս АВПРИ РФ, ф. 151, Политархив, оп. 482, д. 1630, л. 134-135.

դեսպան Գիրսը. «…չնայած պաշտոնապես Թուրքիայում գոյություն ուներ և՛ Պետական խորհուրդ, և՛ նախարարների խորհուրդ, և՛ յուրաքանչյուր գերատեսչություն, եվրոպական օրինակով ղեկավարում էին նախարարները, իրականում բոլոր հարցերը լուծվում էին պալատում, պալատի գործակալների օգնությամբ»[1]:

Նախարարների նկատմամբ սուլթանն իր անտարբերությունն արտահայտում էր կամ ընդհանրապես նրանց չընդունելով, կամ ընդունելությունները անցկացնելով ծառաների ներկայությամբ: Զինվորական և քաղաքացիական պաշտոնյաների նշանակումները, առաջխաղացումները և պարգևատրումները իրականացվում էին պալատում՝ առանց շահագրգիռ նախարարությունների իրազեկման:

Պալատում գործում էր բարձրաստիճան պաշտոնյաների խմբակ, որի ձեռքում էր գտնվում կայսրության իրական իշխանությունը: Այդ խմբակի անդամներից միայն երկու Թահսիմ և Իզեթ փաշաներն էին կարողանում որոշակիորեն ազդել սուլթանի կողմից որոշումների կայացմանը:

«Յըլդըզ»-ի մասին տեղեկությունների սակավությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ երիտթուրքերի օրոք շատ փաստաթղթեր ոչնչացվեցին: 1908թ. հուլիսյան հեղաշրջումից հետո երիտթուրքերի ձեռքն անցավ 2000 գործակալների

[1] Տե՛ս АВПРИ РФ, ф. 151, Политархив, оп. 482, д. 3145, л. 3.

կողմից գրված 22482 մատնություն[1]: 1909թ. Աբդուլ Համիդ 2-րդի գահընկեցությունից հետո Ռազմական նախարարությունը հատուկ հանձնաժողով կազմեց, որը հավաքեց բոլոր «ժուրնալները», որոնց ընդհանուր թիվը կազմեց 735 արկղ[2]: Երիտթուրքերի կառավարման օրոք «Յըլդըզ»-ի փաստաթղթերի հրապարակման հարցը մշտապես եղել է իշխանությունը ընդդիմություն վեճի առարկա: 1913թ. Էնվեր փաշան կարգադրեց «Յըլդըզ»-ի բոլոր փաստաթղթերը վառել Ռազմական նախարարության այգում:

Չնայած «Յըլդըզ» կառույցի մասին տեղեկությունների սակավությանը, եղածների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ համակարգում գործում էր գաղտնի ծառայությունների երեք միատեսակ ստորաբաժանում՝

1. գաղտնի ոստիկանությունն իր հարյուրավոր անլուր գործակալներով.

2. ոստիկանության արտաքին դիտարկման ստորաբաժանումն իր բացահայտ ու գաղտնի գործակալներով.

3. գաղտնի գործակալներով համալրված սուլթանական գրասենյակը, որի հրամանների կատարումը պարտադիր էր մյուս երկու ստորաբաժա-

---

[1] Տե՛ս Tarık Zafer Tunaya, Türkiye' de Siyasal Partiler, cilt 3, İttihatve Terakki, Bir Çağın, Bir Kuşağın, Bir Partinin Tarihi, İstanbul, 2000, s. 472.

[2] Տե՛ս Tarık Zafer Tunaya, Türkiye' de Siyasal Partiler, cilt 3, İttihatve Terakki, Bir Çağın, Bir Kuşağın, Bir Partinin Tarihi, İstanbul, 2000, s. 472.

նումների համար: Այս գրասենյակը ղեկավարում էր իր դաժանություններով հայտնի Ֆեհիմ փաշան[1]:

«Յըլդըզի» համակարգում, մասնավորապես, գաղտնի ստորաբաժանումներում տիրում էր կոռուպցիան, կաշառակերությունը և անօրինականությունը: Ֆեհիմ փաշայի գործունեության մաս էր կազմում մատնությունների հիման վրա առանձին ունևոր անձանցից գումարների շորթումը կամ նրանց մեկուսացումը: Ընդդիմադիր ուժերի հետ հնարավոր կապի մեջ գտնվող անձի վերաբերյալ ստացած դեռևս չճշտված տեղեկատվությունը համարվում էր բավարար վեջինիս տանը խուզարկություններ կամ այլ հետապնդում կիրառելու համար, և ոչ-ոք չէր հարցնում, թե խուզարկության արդյունքում կասկածյալի վերաբերյալ որևէ ապացուցողական փաստ հայտնաբերվեց, թե՝ ոչ: Ընդ որում, նշված չհիմնավորված հետապնդումները կարող էին կիրառվել անկախ անձի դիրքից, պաշտոնից կամ ազգությունից[2]:

Առևտրական գրեթե բոլոր կազմակերպությունները «Յըլդըզին» տուրք էին վճարում:

Չնայած հայերի նկատմամբ ունեցած սուլթանական գաղտնի ծառայության գրասենյակի ղեկավարի ատելությանը, վերջինս նրանց հետ ինչ-ինչ գործարքների մեջ էր մտնում: Հայ գործիչները նրա նկատմամբ մահափորձ իրականացրեցին: Երբ Ֆե-

---

[1] Տե՛ս Хаджетлаше М. Б., Убийца на троне (Записки начальника тайной полиции в Турции), Петроград, 1918, с. 31-53.

[2] Նույն տեղում, էջ 57:

հիմ փաշան անցնում էր հայերին պատկանող դեղատան մոտով, նրա ուղղությամբ նետված ռումբի պայթյունից վիրավորվում են անցորդները, սպանվում է մահափորձ կատարողը, վնասվում է դեղատան դիմային մասը: Մահափորձի կատարման առնչությամբ պալատականները խիստ մտահոգվում են, սակայն նրանց մոտ վրդովմունք էր առաջացրել այն, որ, սուլթանի համոզմամբ, իր նկատմամբ ունեցած ատելության պատճառով է, որ հայերը փորձեցին սպանել նրա հավատարիմ ծառային[1]:

Նույն աղբյուրը նաև հայտնում է հայ հեղափոխական մի կազմակերպության կոնկրետ գործողությունների մասին, որոնք սարսափի էին մատնել օսմանյան գաղտնի ոստիկանությանը: Մասնավորապես, ոստիկանության գործակալները ոստիկանապետին տվյալներ էին հաղորդել այն մասին, որ Ոսկե եղջյուր վայրում գտնվող թաղամասում հայ հեղափոխական ինչ-որ կազմակերպություն խորհրդակցություն է անցկացնում: Որոշում կայացնելով հավաքի մասնակիցներին ձերբակալելու մասին՝ զինված ոստիկանները գիշերը ժամը 3-ին մեկնում են նշված վայր: Հեղափոխականների հավաքատեղին հին փոքրիկ ու պատսպարված տուն էր, ուր պետք է աննկատ ներխուժեին ոստիկանները: Գործակալներից մեկը իր գործընկերների օգնությամբ պարանի միջոցով հայտնվեց պատի մյուս

[1] Хаджетлаше М. Б., նշված աշխ., էջ 72:

կողմում: Քսան րոպե սպասելուց հետո, անհանգստանալով անորոշ իրավիճակից, ևս երեք զինված ոստիկաններ հրաման են ստանում անցնել պատից այն կողմ: Սակայն հենց այդ պահին սպանված գործակալը պատից վայր է ընկնում իր գործընկերների ոտքերի տակ: Երբ սարսափահար ոստիկանները փորձում են փախչել, ինչ-որ ձայն է հնչում պատի մյուս կողմից. «Սիրելի բարեկամներ, զուր են ձեր փորձերը ներխուժել մեզ մոտ… Բացի այդ, ցանկացած խիզախ ոստիկան կավարտի այնպես, ինչպես իր ընկերը: Ձեր պարոնին փոխանցեք, որ իր համար ևս մենք նախապատրաստել ենք լավ անակնկալ» :

Առավոտյան արդեն օգնության հասած ոստիկանական ջոկատը շրջափակեց տունը: Փոխհրաձգություններից ոստիկաններից հինգ հոգի վիրավորվեցին, իսկ ոստիկանապետը փորձում էր թաքնվել, քանի որ փամփուշտներն ուղղված էին բացառապես նրա ուղղությամբ: Մեծ ջանքերի արդյունքում ոստիկաններին հաջողվեց կոտրել տան դուռը: Տան խուզարկության ժամանակ ոստիկանները հայտնաբերեցին փաստաթղթեր, որոնք մատնանշեցին հայ հեղափոխական կազմակերպության այլ անդամների գտնվելու վայրը: Ոստիկանապետի տվյալներով, շուտով ձերբակալվեց 160 մարդ, որոնցից 24-ը մուսուլմաններ էին[1]:

Աղբյուրը տեղեկություններ չի տալիս, թե

[1] Տես՝ Хаджетлаше М. Б., նշված աշխ., էջ 72-75:

կոնկրետ որ հայ հեղափոխական կազմակերպության մասին է շարադրանքը: Սակայն վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ այդ կազմակերպությունը կամ դրա մասնաճյուղի 8 անդամները, դրսևորելով խիզախություն և մարտական հմտություն, այնուամենայնիվ սուլթանական ոստիկանության հետ առճակատմանը պատրաստ չէին, որի հետևանքով բացահայտվեց և ձերբակալվեց կազմակերպության անդամներից 160 մարդ:

«Յըլդըզ»-ի գործունեության համատեքստում հարկ է դիտարկել հայկական հեղափոխական կազմակերպությունների վարած պայքարը և սուլթանական գաղտնի ծառայությունների ուշադրությունը շեղելու մարտավարությունը: Օրինակ, «Սև խաչ» կազմակերպությունն ուներ երեք մասնաճյուղ: Վանում գործող «Զինակիր» առաջին մասնաճյուղի խնդիրներից էր կազմակերպության գրանցված անդամներին և ընդհանրապես համակիր երիտասարդությանը զենք գործածել սովորեցնելը: Շաբաթ, կիրակի և տոն օրերին նրանք խմբովի բարձրանում էին Վարագա լեռան փեշերը և մարտական զենքով զինավարժություններ կատարում:

«Քաղաքական ակումբ» անվանվող երկրորդ մասնաճյուղը միավորում էր կազմակերպության գաղափարական առաջնորդներին և բանախոսներին, որոնք իրենց կարդացած դասախոսություններով երիտասարդության մեջ հայրենասիրական ու ազատագրական գաղափարներ էին սերմանում: «Քաղաքական ակումբը» ընդհանուր կազմակեր-

պության գործունեությանն ու նպատակներին վերաբերող սկզբունքների մշակման գաղափարական գլխամասն էր:

«Հայրենասերների միություն» անվանվող երրորդ մասնաճյուղը գործում էր հրապարակայնորեն, զբաղվում էր երիտասարդության կրթության և դաստիարակության հարցերով, դպրոցների համար կազմում էր նոր դասագրքեր և ծրագրեր:

«Զինակիր» մասնաճյուղի խնդիրներից էր նաև զենք-զինամթերքի հայթայթումը, երիտասարդության զինումը ինքնապաշտպանական կռիվների համար: Նկատի ունենալով, որ եղած զենքը բավարար չէ ինքնապաշտպանական գործողությունների համար՝ Մ. Խրիմյանի և Մ. Փորթուգալյանի գաղտնի հանձնարարությամբ, սկսում են զբաղվել սեփական զենքի արտադրությամբ[1]: Սակայն դա ևս բավարար քանակություն չապահովեց, որի պատճառով «Զինակիրը» որոշեց դիմել զենքի առք ու վաճառքով զբաղվող «հայ մաքսանենգներին» և նրանց պարտադրեց թուրքական զորանոցներից գողացած զենքը վաճառել միայն հայերին: Դրա համար մեծ քանակությամբ դրամի կարիք էր զգացվում, որի հայթայթման համար «Զինակիրը» դիմեց հետևյալ գործողություններին: Աղթամարում աթոռակալած Խաչատուր կաթողիկոսը կապված էր թուրքամետ վարդապետ Պողոս Մելիքյանի հետ և, քաղաքում

[1] Տե՛ս Ղազարյան Հ., Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Եր., 2001, էջ 557:

կատարված անցուդարձի մասին նրանից տեղեկություններ ստանալով, անմիջապես հաղորդում էր կուսակալին, փոխարենը գրպանելով առատ նվերներ, դրանցից բաժին հանելով նաև սնահոգի թուրք գործակալին: Նրան մատնության ճանապարհից հետ պահելու՝ կազմակերպության նախազգուշացումները մնացին ապարդյուն: «Սև խաչը» որոշեց պատժել այդ դավաճան հոգևորականին: 1885թ. կազմակերպության մի խումբ անդամներ, Մ. Սեֆիլյանի գլխավորությամբ, հետները վերցնելով գինի, մտնում են Աղթամար կղզին, կիրակնօրյա պատարագի արարողության ավարտից հետո վանքի միաբաններից Պողոս Խիզանցուն և Խորեն Կեցյանցուն հրավիրում են խնջույքի: Միաբաններին հարբեցնելով՝ նրանք կարողանում են ձեռք բերել վանքի գաղտնարանի բանալիները, մտնում են գանձարան, առգրավում են չորս հազար ոսկին և գիշերով հեռանում կղզուց[1]:

Այսպիսով, «Սև խաչն» արդեն ուներ բավարար քանակությամբ դրամական միջոցներ և կարող էր զենք գնել ու այդ զենքով զինել ոչ միայն քաղաքի, այլև ողջ նահանգի հեղափոխականացող երիտասարդությանը: Զենք-զինամթերքը պահվեց գաղտնարաններում և այն օգտագործվեց 1896թ. Վանի ինքնապաշտպանության օրերին:

Ձեռք բերելով նյութական, ֆինանսական ու ռազմական ռեսուրսներ, ինչպես նաև արևմտահա-

[1] Նույն տեղում, էջ 558:

յության լայն շրջանակների բարոյական աջակցությունը՝ այնուամենայնիվ «Սև խաչ» կազմակերպությունը դատապարտված էր կազմալուծման, որն իրականացրեց սուլթանական ոստիկանությունը: Դրանում իր դերը խաղացին Մ. Փորթուգալյանի անզգույշ գործողությունները. խախտելով գաղտնապահության տարրական կանոնները, նա սուլթանական գաղտնի ոստիկանության ուշադրությունը սևեռեց կազմակերպության վրա՝ վտանգելով թե՛ իր, թե՛ այլ ղեկավարների հետագա գործունեության հնարավորությունը, նաև հայ ինքնապաշտպանական պայքարի հեռանկարը: Մասնավորապես, «Սև խաչի» կողմից 1885թ. մայիսի 24-ին կազմակերպվեց քաղաքական ցույց: Վասպուրականցիների բազմամարդ թափորը, քաղաքից դուրս գալով, շարժվեց դեպի Վարագա պարտեզները, որտեղ ճաշկերույթ էր կազմակերպվել, հրավիրվել էին նաև հարուստ վաճառականները: Խնջույքի ժամանակ արտասանվեցին հայրենասիրական ճառեր, տեղի ունեցավ զորահանդես, որին հաջորդեցին զինավարժություններ: Այնուհետև «Սև խաչի» զինական երիտասարդները Վարագից իջան քաղաք: Երեք հազարանոց ցուցարարների մարտական երթը Վանի փողոցներով շարժվեց դեպի հոգևոր առաջնորդի բնակարանը՝ ձայնարկելով «Կեցցե Խրիմյանը»: Նշենք, որ Խրիմյան հայրիկը դեմ էր նման միջոցառումների անցկացմանը և մերժել էր «Սև խաչի» հրավերքը՝ օրհնելու տոնախմբության սեղանը:

Վարանած թուրքերը, լուսամուտներից տեսնե-

լով զինվորական հագուստներով շարժվող զինված երիտասարդությանը, կարծելով, թե ռուսական նոր բանակ է մտել քաղաք, շտապեցին կուսակալին հայտնել կատարված իրադարձության մասին:

Ոստիկանության իրականացրած խուզարկությունների արդյունքում «Սև խաչ» կազմակերպության անդամներից շատերի բնակարաններից (Կարապետ Կյուլումյան և այլոք), հայտնաբերվեց և առգրավվեց զենք-զինամթերք, զինվորական հագուստ: Ավելին, ստվեր գցվեց Վանում ռուսական փոխհյուպատոս Կամսարականի հայանպաստ գործունեության վրա, ինչը նրա վտարման պատճառ դարձավ:

Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի և Ռուսաստանի հետախուզություններն ակտիվ էին գործում Արևմտյան Հայաստանում: Այստեղ ծավալվող իրադարձությունների մասին տեղեկությունները հաղորդվում էին իրենց ղեկավարությանը՝ անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու համար:

Անգլիացիները, հենվելով իրենց ստացած հետախուզական տեղեկությունների վրա, չէին հավատում Կամսարականի լոյալությանը և նրան համարում էին հայկական շարժումների կողմնակից և Ռուսաստանի գլխավոր գործակալ[1]: Հայ ֆիդայական ջոկատների ստեղծման գործում Կամսարականի ունեցած իրական դերակատարությունը հաս-

[1] Տե՛ս British documents on Ottoman Armenians, vol. II (1880-1890), Ankara, 1982, էջ 443:

տատվում է նույն ռուսական սկզբնաղբյուրներով: Այսպես, գեներալ Մ. Ի. Լորիս-Մելիքովին 1880թ. սեպտեմբերի 30-ին գրված նամակում նշվում է, որ «Մեր դեսպանը Կոստանդնուպոլսում տեղեկացնում է, որ Վանում մեր փոխհյուպատոսության կառավարիչ Կամսարականը թվում է՝ իր առաջ նպատակ է դրել հայերի մոտ անիրականանալի երազանքներ հարուցել և ընդհանրապես բնակչությունը լարվածության մեջ պահել: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է հրահանգել Կամսարականին զերծ մնալ նման գործունեությունից կամ ընդհանրապես կասեցնել այն»[1]:

Էրզրումում ռուսական հյուպատոս Մ. Օբերմյուլերը անգլիացիների հետ ունեցած շփումների ժամանակ հայտնել է նրանց, որ ինքը ևս այն կարծիքին է, որ Կամսարականն իրոք հայկական շարժումների կողմնակից է, և որ ինքն այդ մասին տեղեկացրել է Ս.- Պետերբուրգ[2]:

Փորթուգալյանի անզգույշ քայլերից էր նաև 1882թ. դեկտեմբերին հայկական վարժարանի դահլիճում «քաղաքական ակումբի» անդամների և քաղաքի հայ երիտասարդության համար ծրագրված դասախոսությունների անցկացումը: Դասախոսության ընթացքում Փորթուգալյանը պետք է ներկայացներ Օսմանյան կայսրության վարած ազգային քաղաքականության նոր համակարգը, բացահայտեր

---

[1] Տե՛ս АВПРИ РФ, ф. 151, Политархив, оп. 461, д. 115, л. 47.

[2] Տե՛ս British documents…էջ 443:

դրա ձևավորման պատճառները, ցույց տար վերջինիս ողբերգական հետևանքները հայ ժողովրդի համար: Նա զեկուցելու էր «Սև խաչի» կազմակերպած դիմադրական գործընթացի նախապատրաստության, փաստորեն՝ ինքնապաշտպանական պայքարը սկսելու մասին[1]:

Դասախոսության հայտարարությունն ու վերտառությունը նախապես փակցված էր քաղաքի դպրոցների, հասարակական հիմնարկությունների և հատկապես շուկայի մի քանի դարպասների վրա: Քաղաքում շրջագայության դուրս եկած Վանի դատախազ Ռայիֆ բեյի ուշադրությունն այդ հայտարարության վրա հրավիրեց գրագրի պաշտոնն ստանձնած Նշան Քանթարճյանը: Վերջինս թուրքերեն թարգմանեց դասախոսության վերնագիրը՝ «Ժամանակը հասել է, հայեր, ինչ ընենք», որն անհանգստություն առաջ բերեց նահանգի ղեկավարության շրջանում[2]:

Դասախոսությունից մեկ ժամ առաջ թուրքական ոստիկանությունը շրջապատեց Հայկազյան վարժարանի շենքը, արգելեց դասախոսությունը, որին հետևեց դատախազի հրամանը՝ «Քաղաքական ակումբի» գործունեությունը մեկընդմիշտ դադարեցնելու մասին:

Իշխանությունների աչքում «անբարեհույս ու կասկածելի մարդ» նկատված Մ. Փորթուգալյանին

---

[1] Տե՛ս Ղազարյան Հ., նշված աշխ., էջ 569:

[2] Նույն տեղում:

կալանքի վերցրեցին՝ մեղադրելով «ժողովրդին գրգռելու», հակապետական գործունեություն ծավալելու մեջ:

«Սև խաչի» գերագույն խորհուրդը, արտահայտելով կազմակերպության անդամների մեծամասնության կամքը, Նշան Քանթարճյանին ահաբեկելու որոշում կայացրեց. նույնիսկ վիճակահանություն արվեց և մատնանշվեց, թե ով պիտի սպանի նրան:

Մենք չենք տիրապետում այս իրողությունների մասին հավաստի տեղեկության, սակայն Քանթարճյանին համարել ազգի դավաճան միայն այն բանի համար, որ նա իբր դատախազի ուշադրությունն է հրավիրել արդեն իսկ ամենուրեք փակցված հավաքի մասին հայտարարության վրա և թուրքերեն է թարգմանել դասախոսության վերնագիրը, կարելի է համարել առնվազն մանկամտություն: Տվյալ պարագայում դավաճանության մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքում, երբ փաստերը վկայեն, որ գրագրի պաշտոնում աշխատող հայը անմիջական (կամ միջնորդավորված) կապ է ունեցել «Քաղաքական ակումբի» հետ, տեղեկություններ է ձեռք բերել նրանց մտադրությունների, ծրագրերի և կոնկրետ դասախոսության բովանդակության մասին և դրանք փոխանցել է սուլթանական գաղտնի ծառայություններին: Երևույթների զարգացման տրամաբանությունը վկայում է այն մասին, որ 1882թ. դեկտեմբերի վերջին շաբաթվա կիրակի օրը Փորթուգալյանի կողմից կազմակերպվող դասախոսությունը հերթականներից էր: Սակայն հենց այդ

միջոցառման անցկացումը խափանեց ոստիկանությունը, քանի որ այդ օրը Փորթուգալյանը հակակառավարական բնույթի կոչեր էր անելու դիմադրական գործընթացը նախապատրաստելու մասին: Դա կարող է վկայել այն մասին, որ թուրքական գաղտնի ծառայությունները նախապես տեղյակ են եղել դասախոսության բովանդակության և ուղղվածության մասին, ինչը և կանխվել է ոստիկանության կողմից ձերբակալությունների միջոցով:

Ուսումնասիրելով տվյալ շրջանի աղբյուրները՝ կարելի է պնդել, որ թուրքական գաղտնի ծառայությունները հետախուզական ոլորտում հիմնականում գրագետ են գործել: Համաձայն իրենց գործելաոճի[1]՝ այս դեպքում նրանք ևս գործեցին հմտորեն՝ նպատակ ունենալով ապահովել իրենց իրական գործակալի գաղտնիությունը, հետևաբար՝ նրա անվտանգությունը և գործելու հետագա հնարավորությունը: Նրանք «Սև խաչի» անդամների կողմից դավաճանին հայտնաբերելու և պատժելու ձգտումներն անմիջապես ուղղորդեցին հայ գրագրի դեմ՝ հասանելի դարձնելով հանրությանը վերջինիս՝ դատախազին մատուցած ծառայության մասին տեղեկությունը: Սուլթանական գաղտնի ծառայությունների կողմից հաճախ կիրառվող մեթոդներից է եղել ապատեղեկատվությունը, որով շեղել են օբյեկտի (տվյալ դեպքում «Սև խաչի») ուշադրությունը ի-

[1] Տե՛ս Хаджетлаше М. Б., նշված աշխ., էջ 19-23, 26, ինչպես նաև՝ Նազըմ փաշայի հուշերը. Հայոց դահիճը կըպատմէ…, «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 1931, թիվ 1631-1648:

րենց ձեռնտու ուղղությամբ՝ նրանց դրդելով ոստիկանության կողմից վերահսկվող համապատասխան գործողությունների:

Նշենք, որ Օսմանյան կայսրության գաղտնի ոստիկանությունը իրենց ծպտյալ գործակալների համար թե՛ ջանք և թե՛ գումար չի խնայել՝ ապահովելով նրանց անվտանգությունը և արդյունավետ գործունեությունը: Նույն ծառայության համար ոչ մի բարդություն չէր ներկայացնի ապահովել Ն. Քանթարճյանի անձի գաղտնիությունը, եթե վերջինս իսկապես գործեր գործակալի կամ իրազեկչի կարգավիճակում:

1878թ. Բեռլինի վեհաժողովից հետո Կարինի երիտասարդության ջանքերով ստեղծվեց «Բարձր հայոց ընկերությունը», որի նախաձեռնությամբ սուլթանական իշխանություններին ներկայացվեց բարենորոգումների ծրագիրը: Վերջիններս մերժեցին այն և փակեցին՝ պատրվակ դարձնելով ընկերության անվանման «Բարձր» բառը: III-րդ զորաբանակի հրամանատար Ֆազոլը փակեց նաև հայկական ակումբներն ու արգելեց հավաքների անցկացումը:

Դրա ուղղակի հակազդեցությունը հանդիսացավ 1881թ. Խաչատուր Կերեկցյանի կողմից ստեղծված «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությունը, որն իր առաջնահերթ խնդիրը համարում էր հայ բնակչության ինքնապաշտպանության կազմակերպումը: Այստեղ նկատվում է նաև բալկանյան օրինակը. Մակեդոնիայում հունական և

բուլղարական կազմակերպությունները նույն նպատակներով էին առաջնորդվում: Հաշվի առնելով սուլթանական գաղտնի ծառայությունների աշխատառճը, մասնավորապես, գաղտնիության սկզբունքը և անլուր ներթափանցումը հայ հեղափոխականների շարքերը՝ «Պաշտպան հայրենյաց»-ը փորձեց ստեղծել գաղտնակյացության պահանջներին համապատասխան կառուցվածք: Այն իր գործունեության ծավալման նպատակով կապեր ստեղծեց Արևմտյան Հայաստանի մի քանի շրջանների և Անդրկովկասի հայ գործիչների հետ: Քայլեր կատարվեցին զենք հայթայթելու և պատրաստելու ուղղությամբ: Տարածվում էին համապատասխան բովանդակությամբ թռուցիկներ: Սակայն մեկ տարի անց, 1882թ. կազմակերպությունը բացահայտվեց սուլթանական ոստիկանության կողմից: 72 մարդ ձերբակալվեց: Բ. Դուռը, ստահոդ լուրեր տարածեց, թե հայերը Ռուսաստանի դրդմամբ նախապատրաստում էին լայնածավալ ապստամբություն, IV բանակի զորքերի օգնությամբ ոստիկանությունը սկսեց հայերի ձերբակալություններն ու խուզարկությունները, որի պատճառն «ինչ-որ թղթերի տարածումն է, որոնք կոչ են անում աշխատել ազգի օգտին»[1]: Կուսակալը հրամայել էր «զինվորները շատացնել... բոլոր տեղերը, նույնիսկ առաջնորդարանի շուրջը լրտեսներ լցնել, կեսգիշերին մարդ ձերբակալել, իբր զենք, զինանոց ու վառոդ են պատ-

[1] ԳԱԹ, ֆ. Ազատյան Թ., բ. 7, գ. 11507:

բաստել և ստեղծել են օսմանյան գահին սպառնացող մի ահեղ բանակ: Թղթի երկու կտոր ցուցադրեցին: Սակայն զենք ու դրամ չհայտնաբերելը ցույց է տալիս, որ ընկերությունը գրեթե անգույն բան է և լուրջ ու ծանրակշիռ լինել չի կարող»[1]:

«Ապրիլի 6-ին հրապարակվեց մեղադրական եզրակացությունը, որն անլուր և անասելի պատժի է դատապարտում մեծ մասին, տերության մի գավառ ապստամբեցնել ու դիտավորությամբ գաղտնի ընկերություն ստեղծելու մեղադրանքով[2]: Հեղափոխական կազմակերպությանն անդամակցելու մեղադրանքով դատապարտվեց 51 մարդ, սակայն Կարինի թեմի առաջնորդ Մ. Օրմանյանի միջամտության արդյունքում նրանցից միայն չորսը մնացին բանտում, մյուսներին ներում շնորհվեց:

Սուլթանական գաղտնի ծառայությունների հետախուզական գործունեության միջոցների, մեթոդների և ձևերի մասին որոշ տեղեկություններ է տալիս Մ. Խաղժետլաշեն: Մասնավորապես, դավադրություն կազմակերպելու մեջ կասկածվող մի բանտարկյալի օրինակով հեղինակը նշում է, որ նման դեպքերում ստիպում են մարդուն ոստիկանության հետ գաղտնի համագործակցելու մասին տալ իր համաձայնությունը, այնուհետև բանտից ազատ են արձակում և նրա նկատմամբ իրականացվում է անլուր արտաքին դիտարկում[3]:

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

[3] Хаджетлаше М. Б., նշված աշխ., էջ 78-79:

Այսպիսով, օգտագործելով տվյալ հետախուզական մեթոդը, սուլթանական գաղտնի ծառայությունները, իրենց աշխատանքներին ներգրավելով առանձին բանտարկյալների, վերջիններիս միջոցով բացահայտել և չեզոքացրել են Օսմանյան կայսրության համար սպառնալիք հանդիսացող բազմաթիվ խմբավորումներ, շարժումներ, հեղափոխական ոչ այնքան կայուն և ուժեղ կազմակերպություններ:

Ընդ որում, բանտից ազատ արձակումը կարող էր տեղի ունենալ նաև առանց գաղտնի ծառայությունների հետ համագործակցելու մասին բանտարկյալի համաձայնության: Այս դեպքում նա ազատվում էր բարեհունչ պատրվակով, որից հետո նրա նկատմամբ կիրառված գաղտնի արտաքին դիտարկման արդյունքում պարզաբանվում և բացահայտվում էին նրա՝ ոստիկանությանը հետաքրքրող կապերը: Եթե նախորդ դեպքում ազատ արձակվածը գործում էր գիտակցաբար, ապա այս պարագայում նա գաղտնի ծառայության կողմից օգտագործվում էր անկախ իր կամքից:

Օսմանյան կայսրության բանտերից ձերբակալվածների ազատ արձակման հանգամանքներին են վերաբերում նաև խոշոր չափերի հասնող կաշառակերության փաստերը: Մասնավորապես, վերոնշյալ հեղինակը հիշատակում է մահվան դատապարտված հայ հարուստ բանկիր ոմն Ապիկ ՈՒՆՃյանին և Դիարբեքիրի արքեպիսկոպոս Եզնիկ Աբաղյանցին, որոնց հարազատները դիմել են Կոստանդնուպոլսի գլխավոր դատախազին, որը

բանտարկյալներին փրկելու համար պահանջել և ստացել էր 60.000 լիր (կես միլիոն ռուբլի) գումար, որից մասնավորապես երեսուն հազարը հատկացվել էր սուլթանի գաղտնի ոստիկանության գրասենյակի պետ Ֆեհիմ փաշային, դրա քառորդ մասը՝ գլխավոր դատախազին և մոտ քառասուն հազար ռուբլի՝ ոստիկանապետ Զիա բեյին, որից վերջինս որոշակի գումարներ է հատկացրել նաև իր գործակալներին:

Մահապատժի դատապարտված բանկիրի դատավճիռը փոխարինվել էր աքսորով, որից հետո նա անհետացել էր՝ հավանաբար մեկնելով Եվրոպա, իսկ արքեպիսկոպոսի մահվան դատավճիռը՝ ցմահ բանտարկությամբ, և երբ նրան պետք է տեղափոխեին Փոքր Ասիա, մեկնումից առաջ նա նույնպես անհետացավ[1]:

Այսպիսով, օսմանյան բանտերից կալանավորների ազատ արձակման պայմաններից էին վերջիններիս համագործակցությունը գաղտնի ծառայությունների հետ կամ կաշառակերությունը, որի մեծ բաժինը հատկացվում էր պալատական «Յըլդրզ» կազմակերպությանը:

«Պաշտպան հայրենյացի» կազմալուծումից հետո վերջինիս անդամները, Խաչատուր Կերեկցյանի գլխավորությամբ, շարունակում էին ազգանվեր պայքարը: 1890թ. սեպտեմբերին ՀՅԴ Կենտրոնական վարչությունը Էրզրումում ներկայացուցիչ

[1] Хаджетлаше М. Б., նշված աշխ., էջ 80, 81:

նշանակեց «Պաշտպան հայրենյացի» նախկին ղեկավարներից Հովհաննես Ասատուրյանին[1]: Դրանով պետք է պայմաններ ստեղծվեին ՀՅԴ-ի շուրջ «Պաշտպան հայրենյացի» հին գործիչների համախմբման համար: Սակայն, հակառակ Կենտրոնի որդեգրած՝ Էրզրումի գործիչների վրա հենվելու մարտավարությանը, Կովկասից ժամանած և տեղական պայմաններին անծանոթ ՀՅԴ «առաջին առաքյալների» ներկայացուցիչ Տիգրան Օքոնյանի հախուռն ու անհաշվենկատ ձեռնարկները լուրջ հակասությունների պատճառ դարձան նրա և «Պաշտպան հայրենացի» նախկին առաջնորդ Խ. Կերեկցյանի միջև: Տարաձայնությունների իրական պատճառը Տ. Օքոնյանի և նրա շուրջ համախմբված երիտասարդների անհամբեր, տեղական պայմանները հաշվի չառնող, հաճախ ուղղակի արկածախնդրական գործելակերպն էր[2]: Բողոքելով այս գործելակերպի դեմ՝ Խ. Կերեկցյանը նամակներ էր ուղարկում Կենտրոնին. «Ռուսահայ եղբայրներ, - գրում էր Խ. Կերեկցյանը,- այսպիսի թեթևսոլիկ անձնավորություններ մի ուղարկեք… յետ կանչեցեք ձեր մարդիկը, մեզ թողեցեք մենք մեր ուժերով և մեր գիտցած կերպով գործենք»[3]: Տ. Օքոնյանը Թիֆլիսում

---

[1] Խուդինյան Գ., Հ.Յ. Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Եր., 2006, էջ 313:

[2] Նույն տեղում, էջ 315:

[3] Կարեկցյան Տ., Խաչատուր Գևորգ Կարեկցյանի կենսագրությունը, ԳԱԹ., Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-3, թ. 55:

փորձեց ստանալ Կենտրոնի համաձայնությունը՝ ահաբեկելու համար Խ. Կերեկցյանին, սակայն վրդովված Կենտրոնը արգելում է նրան շարունակել իր «ազգափրկման» փորձերը, շեշտելով, որ մահվան վճիռ կայացնելու իրավունքը պատկանում է միայն Կենտրոնին[1]: Սակայն, անտեսելով այս ամենը, Տ. Օքոնյանի նախաձեռնությամբ իրականացվում է Կերեկցյանի սպանությունը: Դրա իրագործումը վիճակահանությամբ ընկնում է Կերեկցյանի պահած-փայփայած որբ հոգեզավակին՝ Արշավիր Հովասափյանին (նույն ինքը՝ Արամ Արամյան, Թաթուլ)[2]: Վերջինս ձերբակալվեց 1896թ. հունիսի 2-ին: «Կախաղանից առաջ» վերնագրով բանտում գրած նամակում Արամյանը նշում է, որ իրեն առաջինը ներկայացրեցին նահանգապետին, «որի մօտ իմիջի այլոց նկատեցի և մեր տխրայիշատակ Ազրայէլին՝ դավաճան Տիգրան Գէորգեան, խնուսցի, այժմ ոստիկան: …Եթե Ազրայէլը չլիներ, նրանք ինձ չէին ճանաչի. երևակայեցեք ամենից շատ ինձ տեսնող ոստիկան Ալին ինձ ընդունեց Ղարա-Մելիքի հետ եկած ջահել ռուսաստանցիներից մեկի տեղ»[3]: Հարցաքննության ժամանակ Արամյանը խոստովանում է, որ ինքը Արամն է՝ Կերեկցյանին սպանողը, որ այդ ահաբեկումը կազմակերպել էր ռուսաստանցի Տիգրան Օքոնյանը[4]:

---

[1] Խուդինյան Գ., նշված աշխ., էջ 316:
[2] Նույն տեղում:
[3] «Դրոշակ», 1898-1901, թիվ 9, էջ 132:
[4] Նույն տեղում:

Կերեկցյանի սպանությունը մեծ հարված հասցրեց հայ ազատամարտին: Այս երևույթի կապակցությամբ Կենտրոնը ստիպված էր «Դրոշակի» առաջին համարում «Դաշնակցութեան կանոնադրութիւնից» վերնագրով հատուկ բացատրություն տպագրել, որում նշվում էր. «Մահու պատիժը հայերի վերաբերմամբ ընդունվում է միմեայն անպայման ապացուցված դաւաճանութեան դեպքերում: Վարչական Կենտրոն»[1]:

Հայ ազատամարտին հարվածներ էին հասցնում ոչ միայն (ոչ այնքան) օքոյանների արարքներն, այլև հայազգի մատնիչներն ու լրտեսները: Վերջիններիս դեմ ուղղված գործողություններ իրականացրեց Կ.Պոլսի ՀՅԴ Կենտրոնական կոմիտեն. 1895թ. հուլիսին սպանվեց եկեղեցու նախկին սպասավոր, ապա ոստիկան Հաջի Տիգրանը: «Հեղափոխականներ որսալու կամ պատահմամբ գտնված հետքեր բանալու և գաղտնի հետապնդելու գործերը… կը յանձնվէր Տիգրանին: … Նա կը ծպտվէր, ինչպես ոչ ոք փորձած էր իրմէ առաջ: Կեղծ ծամերով, կեղծ մօրուքով, մուրածկանի հագուստով, կառապանի տարազով, այն ամէն կերպով, որով կրնար մուտք ունենալ ժողովրդի այլ և այլ խավերուն մեջ: Թուրք ոստիկանությունը մինչև հիմա ունեցած չէր հաճի Տիգրանին նման հետախույզ մը»[2]: 1895թ. հունիսին սպանվեց «մատնիչ վիրաբույժ Թիւթիւնճիևը, որը

---

[1] «Դրոշակ», 1892, թիվ 3:

[2] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան, Ա. հատոր, Պէյրութ, 1984, էջ 152:

թուրք ոստիկանութեան ձեռքը հզօր ու անարգ գործիք մը եղած է»[1], նույն թվականի օգոստոսին «դաշնակցական երկու ահաբեկիչներ զարկեցին թատրոնից դուրս եկած ժամանակ նախկին յեղափոխական, նախկին վարդապետ, դավաճան և հանրածանօթ Մամբրէին»[2]: Ոստիկանությանը «Մամբրէ շատ բան բացատրեց, շատ անուններ տուաւ, բայց ըրաւ ավելի մեծ բան մը. Խոստացաւ ցանկ մը պատրաստել իր կասկածելի համարած անձերուն… Մամբրէ այնուհետև գործեր է իբր գաղտնի ոստիկանութեան անկախ պաշտօնեայ, անմիջաբար Նազըմ պեյի հետ հարաբերություն հաստատելով: Մամբրէ Մուրատին անունով ֆրանսիական փոստան ստացված նամակները տարաւ յանձնեց ոստիկանութեան[3]»:

Օսմանյան Կայսրության ներքին գործերի նախարար Նազըմ բեյը իր հուշերում սարսափով է հիշատակում սպանությունների շարանը. «Այդ օրերուն էր դարձեալ, որ Կալաթայի մեջ զարնվեցաւ ուրիշ Հայ մը, որուն անունն էր Սեդրաք: Այս մարդը կը պաշտօնավարեր ոստիկանական նախարարութեան տեղեկատվութեան դիվանին մեջ, ուր մեծ ծառայություններ մատուցած էր…: Դարձեալ այդ օրերուն էր, որ Պոլսոյ ոստիկանական շարքերէն Խալիլ էֆենտի սպանվեցաւ հայ ֆետայի մը գնդակով: Ահա այսպես հայ յեղափոխական Դաշնակ կո-

[1] Նույն տեղում, էջ 154:
[2] Նույն տեղում, էջ 155:
[3] Նույն տեղում, էջ 156:

միտէն սկսած էր ասպարեզ կարդալ կառավարության, սպաննելով ոստիկանները և այն Հայերը, որոնք հավատարիմ կը մնային կառավարութեան»[1]: Խնդիրը խորապես հասկանալու և համապատասխան միջոցներ կիրառելու նպատակով ոստիկանության նախարարը որոշում է հայ լրտեսներից մեկին, «որ դեռ ճանաչված չէր կոմիտեճինէրուն կողմէ, յարաբերութեան մեջ դնել հայ յեղափոխական կոմիտէին հետ:… կոմիտէի ամէնէն կատղած անդամներէն մէկն էր Հակոբը, որ իր գործունեութեամբ և եռանդով առաջին կարգի վրա կը երեվէր: Էրտեսը ղրկեցի Հակոբի մոտ: Բարեկամացավ նրա հետ և մտավ կոմիտէին մեջ: Եվ օրը օրին ինձի լուր կուտար կոմիտէին որոշումներուն և ծրագրերուն մասին: Տեղեկության մը համաձայն… Հակոբի ղեկավարութեամբ խումբ մը, մոտավորապես հազար հոգի, պիտի հարձակէր իսլամ թաղերուն վրա: Հակոբը ձերբակալվեց»[2]: Ընդգծելով Օսմանյան կայսրության ոստիկանության գործելակերպը՝ նշենք, որ Հակոբի հարցաքննության ժամանակ Նազըմ փաշան մեծ տեղ էր հատկացնում այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հավաստիությանը՝ ստուգելով նաև լրտեսների հուսալիությունը: Նման գործելակերպի կիրառմամբ էին նաև պայմանավորված հայ հեղափոխականների ձախողումները:

---

[1] Նազըմ փաշայի հուշերը…, «Յառաջ», Փարիզ, 1931, թիվ 1748:
[2] Նազըմ փաշայի հուշերը…, «Յառաջ», Փարիզ, 1931, թիվ 1629:

Արևմտյան Հայաստանում ստեղծված այլ ազատագրական կազմակերպություններից առավել զորեղներից էր Թոփրագկալեի կենտրոնը: Կազմակերպության հիմնադիրն էր մեծ լուսավորիչ Մկրտիչ Սարյանը, որը 1880 թվականից սկսած Արևմտյան Հայաստանի խոշոր գյուղերում ու քաղաքներում հիմնեց հայկական 24 կանոնավոր դպրոց: Մ. Սարյանը նրանց ոչ միայն ապահովեց Կոստանդնուպոլսից, Զմյուռնիայից, Թիֆլիսից, Գերմանիայից հրավիրված ուսուցիչներով, այլև ֆինանսավորեց հայաշխարհից հանգանակած գումարներով:

1884-1890թթ. Հակոբ Սարկավագը (Ղևոնդյան), ծպտված շեյխի տարազով, բնակավայրից բնակավայր էր անցնում և քարոզում հայ-քրդական դաշինք, զենքի ներմուծման կազմակերպում: Նա հայերի և քրդերի անունից հանրագիր կազմեց հասցեագրված սուլթանին՝ գավառներում պետական պաշտոնների նշանակել նաև հայերի, տասանորդը գանձել միայն դրամով և թույլ տալ, որ յուրաքանչյուր գյուղական համայնք ինքը զբաղվի հարկերի հավաքմամբ՝ առանց հարկահավաքների միջամտության, գյուղերում ստեղծել իջևանատներ, արգելել պաշտոնյաներին օթևանել գյուղացիների տներում և սնվել նրանց հաշվին:

Հակոբ Սարկավագը և այլ նվիրյալներ իրականացնում էին կենտրոնի որոշումը առ այն, որ իր մասնճյուղերի գործունեությունը քողարկվի, աննկատ մնա կառավարության և սուլթանական գաղտնի

ծառայությունների աչքից, հեղափոխականների ակտիվ ներկայացուցիչներից պաշտոնների նշանակել տալ թուրքերի մոտ: Դրանով իսկ գործող անձինք հեղինակություն, դիրք ձեռք կբերեին՝ զերծ մնալով կասկածանքներից [1]:

Արևմտահայության պայքարի ձևավորման և զարգացման գործընթացում Թոփրագկալեի հեղափոխական կազմակերպության դերն ու նշանակությունն այն էր, որ վերջինս, ի տարբերություն այլ նմանատիպ կազմակերպությունների, առաջիններից էր, որ, իր առանձնահատուկ գործելաոճի համաձայն, ընտրել էր նման քողարկման ձև: Այն հնարավորություն էր ընձեռում հայ հեղափոխականներին ոչ միայն խուսափել Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների տեսադաշտում հայտնվելու վտանգից, այլև թշնամու թիկունքում ծավալել հետախուզական գործունեություն:

Մենք չունենք տվյալներ, թե կազմակերպության առանձին ներկայացուցիչներից ովքեր էին նշանակվել պաշտոնի, այդ պաշտոններն ինչ մակարդակի են եղել, շրջանի (մութասարրիֆլիղի), թե վիլայեթի իշխանությունների մակարդակի, և արդյո՞ք փորձել են նրանք օգտվել հետախուզական աշխատանքների համար ստեղծված նպաստավոր պայմաններից և տեղեկություններ հայթայթել արևմտահայության դեմ ուղղված սուլթանական

[1] Տե՛ս Ղազարյան Հ., նշված աշխ., էջ 562:

իշխանությունների նկրտումների և ծրագրերի վերաբերյալ: Սակայն նրանց կողմից նախընտրած պայքարի այս ձևը՝ հակառակորդի շարքերը ներթափանցելու մարտավարությունը, կարող էր վկայել լուրջ առաջադիմության մասին, որը համարժեք էր հատուկ ծառայությունների գործելակերպին:

Միևնույն ժամանակ, չի կարելի բացառել այն հանգամանքը, որ պայքարի նման մարտավարության կիրառումը, ըստ էության, նաև սպառնալիք էր հենց այդ պայքարի համար, քանի որ պաշտոնի նշանակված անձը՝ նամանավանդ «զուլումի» համակարգի պայմաններում, հաճախ հեշտությամբ էր հայտնվում վերջինիս ազդեցության ներքո: Սուլթանական գաղտնի ոստիկանության պետը, որը անձանց հավաքագրման, ստուգման կամ նրանց չեզոքացման գործում մեծ փորձ ուներ, իր հուշերում համոզմունք է արտահայտել, որ «…սովորական ժամանակ և սովորական գործերում մարդը կարողանում է թաքցնել իր թերություններն ու արատները, բայց քաղաքական բնույթի գործերում, երբ դրանք վերաբերվում են անարգ մետաղին, անգամ ամենախելացի դիվանագետների կամային հատկանիշները հօդս են ցնդում: Դրա գլխավոր պատճառը ոսկին էր: Այդ մետաղը գրեթե անում է ամեն ինչ»[1]:

Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունները հայ քաղաքական գործիչների ծրագրերի և

[1] Хаджетлаше М. Б., նշված աշխ., էջ 210:

գործողությունների վերաբերյալ ճշգրիտ ու կանխարգելիչ տեղեկություններ էին ձեռք բերում ոչ միայն վերջիններիս շրջանում ներդրված գաղտնի գործակալների օգնությամբ: Նրանց ղեկավարների տներում խուզարկությունների ժամանակ առգրավված փաստաթղթերն ու նամակները նույնպես հանդիսանում էին տեղեկույթի աղբյուր[1]:

Ինչպես շատ այլ կազմակերպություններ, այնպես ել Թոփրագկալեի ազատագրական կազմակերպությունը ևս կազմալուծվեց մատնության պատճառով, ինչը վկայում է այն մասին, որ պայքարի ճիշտ մարտավարություն իրականացնելուց զատ անհրաժեշտ էր ձևավորել և կիրառել դրա վերահսկման մեխանիզմներ (հակահետախուզություն):

Կայսրության գաղտնի ծառայությունների կողմից տոտալ վերահսկման մեխանիզմների կիրառման պայմաններում կարևոր էր հայ առանձին գործիչների գործունեությունն իրենց քողարկումն ապահովող առասպելապատման մշակման ուղղությամբ: Նշենք, որ հետախուզության ոլորտում անձի (հետախույզի) լեգալացման գործընթացը բարդագույններից է համարվում: Այս առումով՝ նորահայտ նյութերըվկայում են հայ հեղափոխական գործիչ Միքայել Տեր-Հովհաննիսյանի առանձնահատուկ ունակությունների ու հմտությունների մասին[2]: Մասնավորապես, Օսմանյան Թուրքիա ներ-

---

[1] Տե՛ս Նազըմ փաշայի հուշերը…, «Յառաջ», Փարիզ, 1931, թիվ 1638:

[2] Միքայել Տեր-Հովհաննիսյանի հուշերը, էջ 103-128:

թափանցելու նպատակով վերջինս գնում է էմիֆոնոգրաֆ և մի քանի անգամ այն օգտագործելուց հետո «պարզվում է», որ գործիչը «փորձված ֆոնոգրաֆչի» է: Այնուհետև Միքայել Տեր-Հովհաննիսյանը պատմում է, որ «մեքենան» ունենալուց հետո պետք էր ծպտվել: Երկրում մարդիկ կային, որոնք իրեն տեսել էին Կիպրոսում, Եգիպտոսում և այլն. պետք էր այնպես փոխվել, որ ամենամոտ մարդն անգամ նրան չճանաչի: Վերջինս հագնվեց շատ հասարակ ձևով՝ երկար մազերը կտրել տվեց, մորուքը սափրեց և այնպես փոխվեց, որ նրան ճանաչելն անկարելի էր: Գործիքը հիանալի միջոց էր Օսմանյան Թյուրքիա մուտք գործելու համար, ուր նման մի գործիք դեռ մտած չէր: Այնուհետև Մ. Տեր-Հովհաննիսյանը նշում է, որ նա արդեն Կիլիկիայի առաջին նավահանգստում լեգալ անձնավորություն է, որոշ զբաղմունքի տեր, ճանաչված ոստիկանության և ամենքի կողմից որպես բուլղարահպատակ Դմիտրի Մարտինով-Պոպով անունով մի ֆոնոգրաֆչի: Սակայն նրա բուլղարերեն չիմանալը զարմանալի չպիտի լիներ, քանի որ, ըստ անձնագրի, իր ծննդավայրը Բալչիկ գավառաքաղաքն էր, որի շրջանի բուլղարները մինչև հիմա էլ թուրքերեն են խոսում և կոչվում են գագաուզներ: Բացի այդ, նա դեռ պատանի հասակում 1877 թվականի ռուս-թուրքական պատերազմի ժամանակ տարագրված է եղել Օդեսայի շրջանը, ինչի պատճառով խոսել է ռուսերեն ու

ոչ բուլղարերեն: Սա էր նրա բացատրությունը ամեն մի հետաքրքրվողին, ինչպես նաև ոստիկանությանը, երբ նաձերբակալվեց[1]:

Մ. Տեր-Հովհաննիսյանը ծպտված էր այնպես, որ ծանոթ շատ դեմքեր էին պատահում, որոնց հանդիպել էր թե՛ Կիպրոսում և թե՛ Եգիպտոսում, բայց ոչ ոք չէր կարող նրան ճանաչել»[2]: Սակայն շուտով լուր է ստացվում, որ տեղի է ունենալու մատնություն. Հալեպի ՀՅԴ կազմակերպության ձեռքն է ընկնում Հնչակյան կուսակցության անդամ ոմն Տիգրանի մի նամակ՝ գրված իր համախոհին, որի մեջ նշվում է, որ «…շուտով զինքը կհամբուրեն Հուդայի համբյուրով»: Հեղինակը նշում է. «Ինձ հայտնի էր Հնչակյան կենտրոնի վերաբերմունքը դեպի Դաշնակցական գործունեությանը հատկապես Կիլիկիայի նկատմամբ: Նրանք, եթե իմանան մեր Երկիր մտնելը, ամեն գնով պիտի խանգարեն: …դուռը բաց արի, տեսնեմ մի ոստիկան, որ հայտնեց, թե գայմագամն այս րոպեին ինձ է պահանջում: Ինձ համար արդեն պարզ էր, որ մատնություն է տեղի ունեցել ու մատնողը, կասկածից դուրս, Տիգրանն էր»[3]: Հեղինակը իր հուշերում կարևոր տեղեկություններ է հայտնում նաև ՀՅԴ կուսակցության գործիչների միջև իրականացվող գաղտնի անդեմ կապի մասին. Ձերբակալումից հետո «մտահոգությանս առարկան էին երկու փոքրիկ սրվակներ, որոնք

---

[1] Միքայել Տեր-Հովհաննիսյանի հուշերը, էջ 104:
[2] Նույն տեղում, էջ 99:
[3] Նույն տեղում, էջ 126, 127:

դրված էին սեղանիս վրա մեքենայիս յուղի սրվակի հետ: Դրանք ծածկագիր գրելու ու բաց անելու հեղուկներ էին, միակ ապացույցները իմ գաղտնի գործունեության, եթե միայն կարողանան կռահել այդ:

Ես գիտեի, որ այդ հեղուկներն անծանոթ էին թյուրք պաշտոնյաներին, որովհետև մինչև այդ դեռ ոչ մի ծածկագիր նամակ չէր կարդացվել նրանց կողմից: Բայց սրվակները տվյալ դեպքում երկար քննության նյութ կդառնային և ժամանակի ընթացքում կարող էին վերլուծման միջոցով բացատրվել»[1]:

1890-ականների առաջին կեսին ՀՅԴ-ն իր կազմակերպական կառույցների ձևավորման նպատակով ներթափանցում էր Օսմանյան կայսրություն, որտեղ և հայտնվում էր ոստիկանության տեսադաշտում: Մասնավորապես, նորեկ ուսուցիչների Տրապիզոն ժամանելուց անմիջապես հետո, նրանց վրա խիստ հսկողություն սահմանվեց[2]: Առանձնապես ուժեղ էին կասկածները Հովսեփ Արղությանի նկատմամբ, քանի որ վերջինս չուներ համապատասխան առասպելապատում և քողարկված չէր: Իշխանական ծագում ունեցող երիտասարդը պետք է ուսուցչություն աներ ամսեկան 70 ֆրանկի համար: «Նրա անունը, երիտասարդ լինելը, չնչին աշխատավարձը և հանելուկային վարքը առաջին օրերից իր վրա հրավիրեցին տեղական ոստիկանության ուշադրությունը, որը սկսել էր հե-

---

[1] Միքայել Տեր-Հովհաննիսյանի հուշերը, էջ 129:

[2] Խուդինյան Գ., նշված աշխ., էջ 321:

տնել նրա յուրաքանչյուր քայլին»[1]: Այս նախանշանները բավարար էին, որպեսզի ոստիկանությունը նրան ձերբակալեր: Ի տարբերություն այլ «ուսուցիչների», Տրապիզոնի պայմաններին կարողացել էր հաջող կերպով հարմարվել միայն Հովհաննես Յուսուֆյանը. «…եկած օրէն իսկ, խոշորկէկ ֆես մը անցուց գլխուն եւ գիտցաւ յարմարուիլ տեղացիներու նիստ ու կացին ու հնարաւոր չափով աննկատելի մնալ»[2]: Վերջիս, գործելով գրեթե միայնակ, կարճ ժամանակում կարողացավ ստեղծել կազմակերպական այն կառույցները, որոնք հիմք հանդիսացան հետագայում ՀՅԴ Արևմտյան բյուրոն ձևավորելու համար: 1893թ. Հ. Յուսուֆյանը ևս հայտնվեց ոստիկանության տեսադաշտում: Սկիզբ առան լրտեսների շարունակական հետապնդումները. «…արդոսի աչքերով մէկը չէ, երկու չէ, այլ 4 հոգի շարունակաբար կը հսկեն վրաս և իւրաքանչիւր քայլս լրտեսել կուզեն, տեսակցած մարդերս ճանչնալ, նամակ և ուրիշ բաներ բռնել…»[3]:

Հայ ազատագրական շարժման բազմաթիվ ձախողումների արդյունքում, հատկապես Սասունի ապստամբության պարտությունից հետո, Դաշնակցության ղեկավարության համար զինվորական հրամանատարական ազգային կադրերի պատրաս-

---

[1] Նույն տեղում, էջ 322:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 326:

տումը դարձավ օրախնդիր[1]: Բուլղարիան միակ վայրն էր, որտեղ հնարավոր էր աշխատանքներ տանել այս ուղղությամբ: Զինվորական դպրոց բացելու նպատակով Հ.Յ. դաշնակցության Սոֆիայի կոմիտեն դիմում է կառավարական մարմիններին՝ թույլտվություն ստանալու խնդրանքով: 1905թ. Ժնևից Բուլղարիա ժամանած Անդրանիկը անմիջապես ձեռնամուխ է լինում տեղի բարձրաստիճան պաշտոնյաների հետ համաձայնության գալ խնդրի լուծման կապակցությամբ: Մակեդոնական ազատագրական շարժման առաջնորդների հետ, նույն հարցի շուրջ, ակտիվ բանակցություններ է վարում նաև Ռոստոմը: Վերջապես հնարավոր եղավ ձեռք բերել բուլղարական կառավարության բանավոր արտոնությունը՝ դպրոցը բացել զինվորական նախարարության տնօրինության ներքո: Դպրոցը նախատեսվում էր 50 ուսանողի համար, որոնց ուսուցումը կազմակերպվելու էր Բուլղարիայի Սպայից վարժարանի հատուկ ծրագրով: Դասընթացները տևելու էին 10 ամիս: Մինչև 1907թ. հունիս ամիսը անցկացվելու էին տեսական պարապմունքներ, այնուհետև լեռներում սկսվելու էին գործնական պարապմունքներ:

Բուլղարական կառավարությունն իր երկրում օտար հաստատության ստեղծման համաձայնություն տվեց այն պայմանով, որ ձեռնարկը խիստ

[1] Սիմոնյան Հր., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք երկրորդ, Եր., 2003, էջ 493:

գաղտնի պահվի թուրքական և այլ երկրների հետախուզական ծառայություններից: Ավելին, այն գաղտնի պիտի մնար նաև բուլղար հասարակությունից և մամուլից: Հայ ուսանողների քողարկումը պետք է ապահովվեր վերջիններիս բուլղարական բանակի համազգեստ կրելով: Այսպես Դուբնիցայի շրջանում, Ռելա լեռան վրա, համանուն պատմական վանքի կալվածքներից մեկում 1906թ. նոյեմբերին բացվեց Հայ զինվորական դպրոցը: Դպրոցի տնօրենի և գլխավոր մարզչի պաշտոնը ստանձնեց սպա Ռաշիդը, իսկ միակ դասախոսն էր բուլղարական բանակի կապիտան Պողոս Պողոսյանը: Դասընթացների անցկացմանը ներգրավվեց նաև Սոֆիայի Կնյաժևոյի զինվորական դպրոցն ավարտած ենթասպա Գարեգին Նժդեհը: Դասավանդվող առարկաներից էին՝

- հետախուզությունը.
- ռազմական հետախուզությունը.
- մարտավարությունը.
- գրիմը և այլ հատուկ առարկաներ:

Դպրոցի գործունեությունը մտել էր արդյունավետ հուն. ունկնդիրների թիվը 24-ից շուտով հասավ 80-ի: Սակայն 1906թ. վերջերին ՀՅԴ Բալկանյան Կեդրոնյան կոմիտեն համոզվեց, որ դպրոցի տեղը սխալ է ընտրված, ինչի մասին նախապես զգուշացրել էին մակեդոնացի հեղափոխական գործիչները[1]: Նախ, Դուբնիցայի շրջանը գտնվում էր հայերի մեծ

[1] Սիմոնյան Հր., նշված աշխ., էջ 500:

բարեկամ Բորիս Սարաֆովի հակառակորդ Սանդանսկու գլխավորած կազմակերպության ազդեցության տակ: Երկրորդ, որ առավել վտանգավոր էր, Ռելա վանքը գտնվում էր թուրքական սահմանից ոչ հեռու: Չնայած դպրոցի և ունկնդիրների քողարկման համար կիրառված միջոցներին՝ թուրքական հետախուզությունը պարզեց նրա գոյությունը: Դրա մասին է վկայում բուլղարական կառավարությանը ներկայացրած Սոֆիայի թուրք դիվանագիտական ներկայացուցչի ծանուցագիրը դպրոցը փակելու պահանջով[1]:

Դպրոցի գոյությունը դուրս չէր մնացել նաև ռուսական հետախուզության տեսադաշտից: Թեոդոպոլսում ռուսական փոխհյուպատոս Պետրովը, 1907թ. հունվարի 29-ին իր վերադասին՝ Սոֆիայում ռուսական դեսպանորդին հաղորդելով մանրամասներ դպրոցի գործունեության մասին, շեշտում էր, որ Բուլղարիայում Թուրքիայի դեմ հայերի ծավալած աշխատանքն ըստ էության ուղղված է նաև ռուսական շահերի դեմ[2]: Ի վերջո բուլղար կառավարությունը տեղի տվեց թուրքական և ռուսական քաղաքական ճնշումներին: 1907թ. մարտի 24-ի բուլղարական հրամանատարության հեռագրով պահանջվում էր փակել դպրոցը և հեռանալ: Սակայն կառավարությունը ոչ թե փակեց դպրոցը, այլ կարգադրեց այն տեղափոխել թուրքական սահմանից հեռու

---

[1] Սիմոնյան Հր., նշված աշխ., էջ 500:

[2] Նույն տեղում, էջ 501:

գտնվող Ռոդոմետի շրջանի Փելովա վանքը, որտեղ, մոտ երկու ամիս մի կերպ շարունակելով իր գործունեությունը, դպրոցը փակվեց քաղաքական աննպաստ պայմանների հարկադրանքի տակ:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրահանգել, որ հայ հեղափոխական կազմակերպությունների գործունեության ձախողումները պայմանավորված էին.

- ներկուսակցական և միջկուսակցական սուր հակասություններով, որոնք, առանձին դեպքերում վերաճելով թշնամանքի, պարարտ հող էին ստեղծում լրտեսների ու մատնիչների համար.

- հայ գործիչների, որպես կանոն, ոչ բավարար քողարկմամբ.

- թուրքական հետախուզության և ոստիկանության նշված հանգամանքներն ակտիվորեն օգտագործելու և նախաձեռնող գործունեությամբ:

2.2. Հայ ազգային կուսակցությունների վերաբերյալ տեղեկություններ հավաքելու և իրացնելու ուղղությամբ օսմանյան դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեությունը

19-րդ դարի երկրորդ կեսն արևմտահայերի հուզումների ու զինված ելույթների ժամանակաշրջան էր, որոնց արդյունքում հայ իրականության մեջ կազմավորվեցին առաջին ազգային կուսակցությունները: Արմենական, Հնչակյան, Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունների հանդես գալը նոր որակ ու թափ պետք է հաղորդեր հայ ազգային-ազատագրական շարժմանը:

Ազգային այդ կուսակցությունները, թեև տարբեր գաղափարախոսություններ էին որդեգրել և պայքարի տարբեր ձևեր ու մեթոդներ էին կիրառում, սակայն նրանց միավորում էր ազգային գերագույն նպատակը՝ տեսնել Հայաստանը միավորված և ինքնավար: Որքան հստակեցվում էր այդ գաղափարը, նույնքան սառնությամբ ու հակակրանքով էին այն ընդունում եվրոպական երկրների կառավարող շրջանակներում, քանի որ «նոր Մակեդոնիա» ձեռնտու չէր որևէ պետությանը: Այդ խնդրում Օսմանյան կայսրության և միմյանց հետ հակասությունների մեջ գտնվող եվրոպական երկրների շա-

հերը գնալով մերձենում էին՝ ստեղծելով առավել բարենպաստ պայմաններ օսմանյան դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեության համար՝ ուղղված հայ ազգային կուսակցությունների և այլ ընդդիմադիր ուժերի դեմ:

1885թ. դեկտեմբերին բրիտանահայերի կողմից ստեղծվեց Եվրոպայի հայերի հայրենասիրական ընկերություն, որը գլխավորում էր Գ. Հակոբյանը[1]: 1891թ. բրիտանա-հայկական կոմիտեն գլխավորեց Մինաս Չերազը: Կոմիտեի «Հայաստան» պաշտոնաթերթը տպագրվում էր ֆրանսերենով և անգլերենով:

Եվրոպայում հայերի գործունեությունը սուլթանին անհանգստացնում էր: Նա օսմանյան կառավարության դեսպաններին մղում էր ամեն տեղ որոնելու հեղափոխականներին: Վաշինգտոնի դեսպանությունից տեղեկություն էր պահանջում հայկական հեղափոխական կազմակերպությունների մասին և միջոցներ էր ձեռք առնում արգելելու համար Լոնդոնում կայանալիք ցույցերը[2]:

Սուլթանի պահանջով 1888թ. դեկտեմբերին Խորեն պատրիարքը շրջաբերականով դիմեց Լոնդոնի, Մարսելի հայ համայնքների հոգևոր առաջնորդներին՝ պահանջելով հեռու մնալ «գայթակղիչ» հրապարակումներից, դադարեցնել նման հրատարակությունները, հաջողության չհասնելու դեպքում դրանք փակել տվյալ երկրի իշխանությունների մի-

---

[1] Սերոբեան Մ., Ամերիկահայ տարեցույց, Բոստոն, 1915, էջ 125:

[2] Ahmed Bedevi Kuran, Inkilap Tarjhimiz ve Jon Turker, Istanbul, 1945. s. 235.

ջոցով: Նույն նպատակով Եվրոպա ուղարկվեց Եղիշե վարդապետ Դուրյանը: Բայց բոլոր այդ ձեռնարկումները հաջողություն չունեցան[1]:

1896թ., երբ հայ ազգային-ազատագրական պայքարը գտնվում էր իր զարգացման փուլում, Արևմտյան Հայաստանում զինված պայքարը դադարեցնելու նպատակով Աբդուլ Համիդը քայլեր էր ձեռնարկել սուլթանական դիվանագիտական ներկայացուցիչների միջոցով բանակցություններ վարելու հայ ազգային կուսակցությունների հետ[2]:

1896թ. հոկտեմբերի 28-ին ՀՅԴ կուսակցության հետ բանակցություններ վարելու համար Ժնև էր ժամանել Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարի խորհրդական Արթին փաշա Դադյանի որդին՝ Տիրան բեյ Դադյանը, որը սուլթանական դիվանագիտական կորպուսում զբաղեցնում էր Բրյուսելում դեսպանատան երկրորդ քարտուղարի պաշտոնը:

«Դրոշակ»-ի խմբագրությունը միջնորդների միջոցով նրան պատասխանել էր, որ հայ հեղա-

---

[1] Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, Եր., 2008, էջ 383:

[2] Հատկանշական է, որ այս գործընթացին զուգահեռ սուլթանը գաղտնի ծառայությունների գործակալների օգնությամբ փորձեր էր կատարում ներազդել երիտթուրքերի ղեկավարների վրա, որպեսզի նրանք հրաժարվեն ընդդիմադիր քաղաքական գործունեությունից: Մասնավորապես, 1897թ. սուլթանի էմիսար Ահմեդ Ջելալեդինին հաջողվեց համոզել երիտթուրքերի մի շարք հայտնի գործիչներին վերադառնալ հայրենիք, որտեղ և նրանք ստանձնեցին տարբեր պաշտոններ: (Տես՝ Kuran A.B., Inkilap Tarihimiz ve Ittihad ve Terakki, Istanbul, 1948, էջ 94-103):

փոխական շարժումը հայ ժողովրդի պայքարն է սուլթանական բռնությունների դեմ և այն դադարեցնելու միակ ճանապարհն է բավարարել հայ ժողովրդի պահանջները: Դրա համար դատարկ խոստումներով Ժնև ժամանելու անհրաժեշտություն չկա[1]:

Տիրան բեյի մեկնումից երեք ամիս անց՝ 1897թ. փետրվարի 4-ին, Ժնև էր ժամանել սուլթանի մյուս ներկայացուցիչ Վաղինակ Աջեմյանը, որը դաշնակցականների կողմից նույնպես ստացավ բացասական պատասխան: Վերջինիս հաջորդեց Տրդատ բեյի, այնուհետև Գևորգ Բլբուլյանի այցը Ժնև:

«Դրոշակ»-ի խմբագրությունը, տեղեկացված լինելով Գ. Բլբուլյան անձի մասին, բնութագրել էր նրան որպես Կոստանդնուպոլսի ջարդերի կազմակերպիչ՝ Էնվեր բեյի մտերիմ ընկերոջը, որը 1896թ. «հայ ժողովրդի վերքերը բուժելու համար դեղ հայթայթելու» պատրվակով լրտեսում էր հայ հեղափոխականներին՝ իր չար գործերի համար ստանալով Էնվեր բեյից պարգևատրումներ[2]:

Դաշնակցությունը կտրականապես հրաժարվել էր որևէ հարաբերությունների մեջ մտնել Բլբուլյանի հետ, իսկ Արթին փաշայի ուղարկած պատվիրակությունների հետ խզեց կապերը երեք տարվա անարդյունավետ բանակցություններից հետո:

Իրենց հերթին արմենականները և հնչակյան-

---

[1] Դրոշակ, 1899, թիվ 4:

[2] Դրոշակ,1898, թիվ 6:

ները մերժել էին կապեր հաստատել սուլթանական պատվիրակությունների հետ[1]:

Սակայն, Փարիզում Վերակազմյալ հնչակյան-ների հետ ակտիվ բանակցությունների մեջ էր Փա-րիզում Օսմանյան կայսրության դեսպան Մյունիր բեյը, որը Աբդուլ Համիդի լրտեսներից էր[2]:

Երկարատև բանակցությունները որևէ արդ-յունք չարձանագրեցին. դրանք Օսմանյան կայսրութ-յան կողմից ժամանակ շահելու նպատակ էին հե-տապնդում, սակայն հատկանշականն այն էր, որ սուլթանի վերը նշված ներկայացուցիչները հետա-խուզական ոլորտում մասնագիտացած անձինք էին:

1890-ական թվականների կեսերին Ֆրանսիայի կառավարությունը, պաշտպանելով սուլթանին, թույլ էր տվել Օսմանյան կայսրության հետախու-զությանը Փարիզում կազմավորել գործակալական ցանց և լեգալ դիրքերից գործունեություն ծավալել հայ հեղափոխականների և երիտթուրքերի դեմ[3]: Կայսրության հայտնի լրտես Փարիզում դեսպան Մյունիր բեյին հաջողվել էր վերահսկողության տակ առնել երիտասարդ թուրքերի հավաքույթները, ժո-ղովները և որոշակի ուղղություն տալ նրանց գործողություններին[4]: Նույն հաջողությանը նա

---

[1] Տե՛ս Кочар М., Армяно-турецкие общественно-политические отношения и Армянский вопрос, Ереван, 1988, с. 62-63.

[2] Նույն տեղում, էջ 54:

[3] Նոր կեանք, 1901, թիվ 16:

[4] Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Եր., 1982, էջ 125:

չհասավ հայ հեղափոխականների դեմ իրականացված գործունեության ընթացքում: Դրա պատճառներից էր այն, որ այդ շրջանում, ի տարբերություն երիտթուրքական շարժմանը, որը բուն իր հայրենիքում՝ Օսմանյան կայսրությունում ջախջախված էր, հայ ազատագրական պայքարը, գտնվելով որոշակի մակարդակի վրա, թույլ էր տվել հայ հեղափոխականներին սուլթանական պատվիրակությունների հետ խոսել վերջնագրերի լեզվով և անզիջում պայքար մղել օսմանյան բռնապետության դեմ: Ի տարբերություն հայերի՝ երիտթուրքերի համար «Փարիզը դարձել էր ուխտատեղի: Մի տեսակ թուրքական Արշակավան: Ով պաշտոն էր ուզում կամ պաշտոնի բարձրացում, և չէր կարողանում իր առաջադրած նպատակին հասնել, վազում, գալիս էր Փարիզ և իրեն «երիտասարդ» հայտարարում: …«Երիտասարդ թրքությունը» մի տեսակ միջոց էր դարձել սուլթան Համիդի կառավարությունից պաշտոններ, դրամ, առավելություններ կորզելու և անձնական վրեժխնդրություններ առաջ մղելու: Սրանց մեջ կային և՛ լրտեսներ, և՛ գաղափարազուրկ ոչնչություններ»[1]:

Մյունիր բեյի գործառույթներից էր նաև ի նպաստ Օսմանյան կայսրության Եվրոպայում հասարակական կարծիքի ձևավորումը, ինչն իրականացվում էր առանձին լրագրողների, թերթերի

[1] Սապահ-Գուլեան, Հայկական խռովություններ: Թուրքի զարթումն, «Նորդար» թիվ 164, 1895,էջ 137:

խմբագրությունների կաշառելու միջոցով: Այս հարցում սուլթանը ևս միջոցներ չէր խնայում: 1895թ. պետական խորհրդի նիստերից մեկում, երբ նա պահանջում էր սկսել հայերի կոտորածները, նիստի մասնակիցներից մեկի ակնարկին, թէ ինչպիսի՞ հնարավոր բացասական արձագանք կարող է ունենալ տերությունների մամուլում, Աբդուլ Համիդը պատասխանել էր. «Եվրոպան …ամբողջ 19-րդ դարում ատամները թափած պառավի նման անընդհատ փնթփնթում է ու հետ քաշվում: Ինչ վերաբերում է եվրոպական մամուլին, ապա անհանգստանալու առիթ չկա, մի բուռ ոսկով կարելի է ամենամեծ բերանը փակել»[1]:

Հարկ է նշել, որ տարբեր ժամանակներում Բրյուսելում, Բեռնում և Փարիզում դեսպանի պաշտոն վարած Սալիհ Մյունիրը «Յըլդըզ» հետախուզական կազմակերպության անդամ էր[2]: Փարիզում աշխատելու տարիներին նա, Լոնդոնում ստեղծած լրտեսական ցանցի միջոցով, շատ կարևոր տեղեկություններ էր ձեռք բերել Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականության, մասնավորապես հայկական վիլայեթներում բարեփոխումների պահանջների մասին[3]:

Ֆրանսիական և այլ եվրոպական ծախու թերթերը, ինչպես նաև երիտթուրքերի նորաթուխ լրագրերն արդարացնում էին հայոց ջարդերը, սպառ-

---

[1] «Երկրի ձայն», 1907, հ. 2-րդ, էջ 11:
[2] Տե՛ս Bora İyiat, նշված աշխ., էջ 39:
[3] Bora İyiat, նշվ. աշխ., էջ 39-40:

նալիքներ հնչեցնում հայերի հասցեին[1]: Նշենք, որ ծախու լրագրողների համար հատկացվում էր տարեկան 250 հազար թուրքական լիրա կաշառք: Նույն միջոցով՝ բողոքականների մի ընկերություն սուլթանին պարգևատրել էր Մարդասերի վկայականով[2]:

Լրատվական այս պայքարում հայ գործիչներն աշխատանքներ իրականացրեցին Եվրոպայի հեղինակություն վայելող հայտնի քաղաքական գործիչներին հայանպաստ գործունեությանը ներգրավելու ուղղությամբ: Մասնավորապես, հնչակյանների բացատրական աշխատանքի արդյունքում Ժան Ժորեսը 1896թ. նոյեմբերի 3-ին Ֆրանսիայի Ազգային ժողովում արտասանեց իր հռչակավոր ճառը հայ ժողովրդի տառապանքների, տերությունների քաղաքականության մասին[3]: Սակայն նրա առաջարկած բանաձևը մերժվել էր 451 ձայնով, ընդդեմ 54-ի[4]:

Հայ գործիչների բացատրական աշխատանքների արդյունքում հայանպաստ քարոզչությամբ հանդես եկան ֆրանսիացի քաղաքական գործիչներ Վիկտոր Բերարը, Ալբերտ Վանդալը, Սորբոնի համալսարանի նորագույն պատմության հեղինակավոր պրոֆեսոր Էռնեստ Լավիսը և այլոք: Դենիս

---

[1] Եզճեան Գուրգեն, Աբդուլ Համիդ Բ, Կարմիր սուլթանը, Բեյրութ, 1980, էջ 415:

[2] Սպիրով Դ. Ա., Հայերի սարսափելի կոտորածները (1894-1896), Երևան, 1997, էջ 48:

[3] «Նոր դար», 1896, թիվ 189:

[4] Տե՛ս նույն տեղում:

Կոշենը Ս.Դ. Հնչակյան կուսակցության առաջնորդ Սապահ Գուլյանի հետ ունեցած հանդիպումից հետո պատրաստել էր մի գրություն, որով Ֆրանսիայի թուրքամետ ԱԳ նախարար Հանուտոյին ապացուցում էր, որ Արևմտյան Հայաստանի վիճակի բարելավման մասին նրա տեղեկություններն ու տվյալները սխալ են[1]:

ԱՄՆ-ի հասարակական հայանպաստ կարծիքի ձևավորման խնդրում ակնհայտ էր Ամերիկայի հայկական համայնքի դերը:

Աբդուլ Համիդը հետախուզական մարմիններից պարբերաբար տեղեկատվություն էր պահանջում ընդդիմադիր ուժերի գործունեության վերաբերյալ: Նա Օսմանյան կառավարության դիվանագիտական ներկայացուցիչներին մղում էր ամեն տեղ որոնելու թե՛ հայ, և թե՛ թուրք հեղափոխականներին: Նա հարցնում էր Եգիպտոսի արտակարգ կոմիսար Ահմեդ Մուխթար փաշային, թե ո՞վքեր էին Իրանում սահմանադրություն հռչակելու առիթով շնորհավորական հեռագրեր ուղարկողները: Վաշինգտոնի դեսպանությունից տեղեկություն էր պահանջում հայկական հեղափոխական կազմակերպությունների մասին և միջոցներ ձեռնարկում արգելք հանդիսանալու Լոնդոնում կայանալիք ցույցերին[2]:

Օսմանյան հետախուզության կողմից արտասահմանում ներդրված ազդեցության գործակալնե-

---

[1] «Նոր դար», 1897, թիվ 7:

[2] Տե՛ս Kuran, Ahmed Bedevi, Jnkiläp Tarihimizve Jön Türkler, Istanbul, 1945, s. 165.

րից աչքի էր ընկնում Լոնդոնում պարսից դեսպան, հայազգի Մելքոն խանը, որը հայկական հարցի դիվանագիտական արծածումների մեջ փորձում էր ունենալ իր թրքանպաստ դերակատարությունը: Մասնավորապես, սուլթանական հետախուզության հանձնարարությամբ նա գնացել էր ֆրանսիական հայտնի հրապարակախոս, քաղաքական գործիչ Անրի Ռոշֆորի մոտ, խնդրելով ընդունել սուլթանի բանագնաց Ջեմալեդդին փաշային, որի նպատակն էր կաշառել հայ հեղափոխականներին, ապակողմնորոշել եվրոպական հասարակական կարծիքը: Մելքոն խանին այդ խնդրանքով դիմել էր հայտնի մեծահարուստ Արթին Դադյանը: Ջեմալեդդինը Ռոշվորին ցույց էր տվել արդեն կաշառված եվրոպական գործիչների ցուցակը: Այստեղ էր նաև Գերմանիայի Վիլհելմ կայսրի անունը, որն ստացել էր 6 միլիոն ֆրանկ[1]: Մելքոն խանը որոշակի հեղինակություն ուներ դիվանագիտական ասպարեզում, համարվում էր Պարսկաստանի «Միդիատը», մշտապես շփումների մեջ էր պարսիկ և թուրք ուսանողների հետ[2]:

Օսմանյան հետախուզության ուշադրության կենտրոնում գտնվող եվրոպական պետություններում ապաստանած երիտթուրքերը նույնպես օգտվեցին Մելքոն խանի ծառայություններից: Նա «Ռևյու դե Պարի» թերթում հանդես եկավ մի հոդվա-

---

[1] Կիրակոսյան Ջ., նշված աշխ., էջ 146:

[2] Սապահ-Գյուլեան, Պատասխանատուները, Պրովիդենս, 1916, էջ 143:

ծով, որտեղ նշում էր, որ եվրոպացիները չգիտեին Արևելքը և չպետք է միջամտեին Օսմանյան կայսրության և Պարսկաստանի ներքին գործերին՝ նրանց երիտասարդներին թողնելով իրենց տան կառավարումը: Նա գրում էր օսմանյան Թուրքիան ամբողջապես բարենորոգելու անհրաժեշտության մասին՝ դեմ խոսելով Հայաստանի բարենորոգումներին ու ինքնավարությանը: Նա ընդդիմանում էր առանձին ազգերի ազատագրական շարժումներին և խոսում էր Օսմանյան կայսրության համապետական հոգսերի մասին: Մելքոն խանը Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու կողմնակից էր: Ըստ Ս. Գյուլյանի՝ նրա հոդվածը ազդեցություն թողեց՝ նոր համակիրներ նվիրելով երիտթուրքերին: Նրա օրինակին հետևելով՝ հայ դրամատերերը նյութապես օգնեցին «Միություն և առաջադիմություն» կազմակերպությանը: Զմյուռնացի հայտնի վաճառական Ս. Սպարթլյանը 2000 ոսկի էր տվել երիտթուրքական կազմակերպության Փարիզի կենտրոնի ղեկավար Ահմեդ Ռիզային, որի շնորհիվ «Մեշվերեթ» թերթի ծավալը մեծացավ և նրա ֆրանսերեն և թուրքերեն հրատարակությունները բոլորովին նոր, ճոխ տեսք ստացան[1]:

«Նորաստեղծ Իթթիհադը բոլոր միջոցներով ձգտում էր խափանել արևմտահայության պայքարը, քանի որ այս հարցում հին ու նոր թուրքերի շահերը

[1] Սապահ-Գյուլեան, նշված աշխ., էջ 112-113:

նույնն էին»[1]:

Քիչ չէին նաև այն հայ հեղինակները, որոնք թուրքական թերթերի էջերում շարադրում էին իրենց տեսակետը հայոց հարցի շուրջ, նշելով, որ սիրում են թուրքերին և շնորհակալ են իրենց դրության համար, որ գանգատ չունեն և միայն ցանկանում են վերահաստատված տեսնել սահմանադրությունը Թուրքիայում: Այս հայ հեղինակները գրում էին, որ կողմնակից են երկրի ամբողջականության պահպանմանը, դատապարտում էին ամեն տեսակի անջատողական դրսևորում և մասնավոր բարեկարգություն: Դրանցից հատկապես աչքի էր ընկել պոլսեցի կաթոլիկ Ալանյանը, որը հանդես էր գալիս երիտթուրքերի ջերմեռանդ պաշտպանությամբ:

«Մեշվերեթն» ուներ նաև հայազգի թղթակիցներ: Նրանցից մեկը «Օսման» ծածկանունով հոդվածներ էր գրում միայն հայերի համար բարենորոգումներ անցկացնելու եվրոպական դիվանագիտության հարցադրման դեմ: Երիտթուրքերը 1895թ. մայիսի 11-ի ծրագիրը համարում էին անջատողականության սաղմ: Իսկ հայերն այդ ծրագիրը ընկալում էին որպես «հայ պատմական գոյության մի փոքրիկ նախապայման, տարրական երաշխիք»: Ըստ էության, արևմտահայության ազատագրման պայքարի հարցում «Մեշվերեթի» և սուլթան Համիդի տիտղոսավոր ներկայացուցիչների դիրքորոշումը

[1] Կիրակոսյան Ջ., նշված աշխ., էջ 146:

նույնն էր[1]:

Սուլթանական հետախուզական մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների հետևանքով 19-րդ դարավերջին «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գործունեությունն արտասահմանում նույնպես նշանակալի չափով սահմանափակվել էր[2]: Փարիզում, որը երիտթուրքերի կենտրոնավայրն էր, երիտթուրքական վտարանդիությունը համախմբված էր Ահմեդ Ռիզայի ու դոկտոր Նազըմի շուրջ: Երիտթուրքերի շարքերը պառակտված էին, ինչի պատճառով վերջիններս համախոհներ էին փնտրում ոչ թուրքական կազմակերպությունների անդամներից: Երիտթուրքերի կազմակերպությունները 20-րդ դարասկզբին բավական տարածում գտան եվրոպական երկրներում: Նրանք լույս էին ընծայում բազմաթիվ թերթեր. «Հյուրիեթ»-ը՝ Լոնդոնում, «Ինջիլի Չավուշը» և «Մեշվերեթը»՝ Փարիզում, «Օսմանլըն», «Հակիկաթը», «Միզանը», «Ինթիբահը», «Ինթիկամը»՝ Ժնևում, ինչպես նաև «Սանջակը», «Ֆերատը»՝ Եգիպտոսում և այլն:

Փորձելով սուլթանական կառավարության դեմ պայքարի ընդհանուր եզրեր գտնել՝ երիտթուրքերը ակտիվ շփումների մեջ էին բալկանյան և հայկական հեղափոխական կազմակերպությունների հետ:

Այս իրավիճակը սուլթանական հետախուզության համար բարենպաստ պայմաններ էր ստեղծել

---

[1] Սապահ-Գյուլեան, նշված աշխ., էջ 142-143:

[2] Миллер А. Ф., Оттоманская империя (Султанская Турция), ВПК при ЦК ВКП, М., 1946, с. 27.

երիտթուրքերի միջոցով գործակալական ներթափանցում իրականացնելու հայ հեղափոխականների շարքերը՝ անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման և դրա իրացման նպատակով:

Հայ գործիչների, ինչպես նաև երիտթուրքերի դեմ հետախուզական աշխատանքների գործառույթներ իրականացնող գլխավոր անձանցից էր երիտթուրքական շարժման աջ թևի ղեկավար, «Միզան» թերթի խմբագիր Մուրադ բեյը: Այսպես, Փարիզի «Ֆիգարո» թերթի խմբագրի հետ նախկինում ունեցած իր հանդիպումների ժամանակ Մուրադ բեյը հայ ազգի վերաբերյալ նշել էր, որ «հայը պարզապես թուրքին ծառայել է զատ ուրիշ առավելություն մը չէր կրնար ունենալ»[1]:

Իսկ 1886թ. ապրիլին այս գործիչը ոչ միայն համատեղ պայքարի կոչ էր անում, այլև «նիզակակցության մեջ հրամանատարությունը մեզի հանձնելու առաջարկություն կներկայացներ», - գրում էր Ա. Արփիարյանը: «Կռվին մեջ հրամայողը դուք եղեք, և մենք հնազանդինք ձեզի», - հայտարարում էր Մուրադ բեյը Ա. Արփիարյանին ու մյուսներին: Սա առաջին դեպքն էր, որ հակասուլթանական պայքարում երիտասարդ թուրքը «հայոց ուղղակի դիմում կըներ»[2]:

Թե՛ Լոնդոնում, թե՛ Փարիզում 1886թ. օգոստոսին նոր հանդիպումներ են տեղի ունենում հայ

---

[1] «Նոր կեանք», 1900, թիվ 21, էջ 324:

[2] Նույն տեղում:

հեղափոխականների և երիտթուրքերի միջև: Ա. Արփիարյանը հիշատակում է, թե այս հանդիպումների ժամանակ «Միզան» թերթի խմբագիր Մուրադը ինչպիսի արհամարհանքով է արտահայտվել իր համակուսակիցների հասցեին. «Անոնք թուրք են, ինչ՞ կհասկնան քաղաքական խնդիրներէ և վարչական գործերէ: Ես անոնց պես չեմ, վասնզի դաղստանցի եմ»: «Թուրք» անունը նա արտասանել էր «արհամարական ուժգին շեշտով»[1]: Ա. Արփիարյանի հիշատակումները վկայում են, որ Մուրադ բեյի ակնհայտ «կերպարանափոխումն» այն նախանշաններից էր, որը պետք է ստիպեր հայ գործիչներին նրան վերաբերել առավել զգուշավորությամբ:

Օսմանյան կայսրության գաղտնի ոստիկանության պետն իր գրառումներում հանգամանորեն նկարագրում է իր կողմից իրականացված առանձին հատուկ գործողությունները՝ բացահայտելով հետախուզական գործունեության մեթոդներն ու հնարքները, ինչը հնարավորություն է տալիս մեզ, որոշ պատմական փաստեր համադրելով, գալ կոնկրետ եզրահանգումների: Այսպես՝ Օսմանյան կայսրության դեմ ուղղված օտարերկրյա պետությունների հետախուզական աշխատանքները խափանելու առաջադրանքով իր գաղտնի գործակալներով Վիեննա էր ժամանել կայսրության ոստիկանության պետը: Վերջինս ազգությամբ հրեա գործակալ Իոսիֆից տեղեկություններ է ստանում գործիչների կազ-

[1] Նույն տեղում:

մի, ծրագրերի, ինչպես նաև նրանց կողմից Օսմանյան կայսրություն զենք-զինամթերք տեղափոխելու մտադրությունների մասին: Խնդիր էր դրված, որպեսզի զենք-զինամթերք տեղափոխող անձինք ձերբակալվեն անմիջապես սահմանը հատելիս: Նրանց կողմից գործողություններն իրականացնելու ժամկետը և կոնկրետ երթուղին պարզաբանելու նպատակով ոստիկանապետը Սոֆիայում իր թուրք գաղտնի գործակալ Մուստաֆային հանձնարարել էր մտերմանալ մի ազգությամբ հույնի հետ, որը հեղափոխականների խմբերի կողմից սահմանը հատելիս հանդես էր գալիս որպես ուղեկցող-բեռնափոխադրող: Վերջինս մշտապես բնակվում էր բուլղարական սահմանամերձ գյուղերից մեկում և հեղափոխականների բեռները պարբերաբար տեղափոխում էր սահմանից այնկողմ: Քանի որ Մուստաֆան գերազանց տիրապետում էր հունարենին, նրա մերձեցումը ուղեկցողի հետ ավելի հեշտացավ: Թուրք գաղտնի գործակալն ամեն օր հյուրասիրություն էր կազմակերպում նրա համար, իսկ իր ժամանումը Վիեննա բացատրում էր առևտրական նպատակներով: Ուղևորի հետ շփումների ընթացքում հմուտ գործակալը փնովում էր թուրքերին և հայհոյում նրանց: Հույնին դա դուր էր գալիս, քանի որ իր ազգը ատում էր այդ երկիրը և օսմաններին հատկապես:

«Բանիմաց գործակալը գիտեր, թե ինչպես սիրաշահել և համակրանք առաջացնել հույնի մոտ: Վերջինս, Մուստաֆային ընկալելով որպես կոմե-

րսանտի և համարելով նրան առաջադեմ հայացքների տեր անձնավորություն, պատմեց նրան հեղափոխականների գաղտնի մտահղացումների մասին»[1]: Այսպիսով պարզ դարձավ, որ հեղափոխականներից 23 հոգի մտադիր էին Բուլղարիայից ներթափանցել Մակեդոնիա և հետո տեղաբաշխվել կայսրության այլ վայրերում[2]: Ձեռք բերված այս արժեքավոր տեղեկատվությունը սուլթանական գաղտնի ծառայություններին թույլ տվեց վնասազերծել 23 հեղափոխականների, առգրավել նրանց կողմից ներմուծվող զենք-զինամթերքը և հեղափոխական բնույթի գրականությունը:

Այս դրվագում ուշագրավ է Մուստաֆայի մերձեցման գործընթացը հույն ուղեկցողի հետ՝ անհրաժեշտ տեղեկույթ կորզելու նպատակով:

Հետախուզական աշխատանքի նույն մեթոդաբանությունն ու մարտավարությունը ակնառու կերպով դրսևորվել էր վերը նշված Մուրադ բեյի վարքագծում հայ հեղափոխականների հետ իր շփումների ընթացքում:

Չնայած երիտթուրքական մամուլի պնդումներին և 1908թ. հեղաշրջումից հետո եղած բացահայտմանը՝ մենք չունենք կոնկրետ փաստագրական տվյալներ Օսմանյան հետախուզության կողմից Մուրադ բեյի՝ որպես գործակալի հավաքագրման գործընթացի վերաբերյալ: Սակայն, հաշվի առնելով

---

[1] Хаджетлаше М., նշված աշխ., էջ 165:

[2] Նույն տեղում, էջ 172:

նշված ծառայությունների գործելակերպի առանձնահատկությունները, կարող ենք պնդել, որ Միզանջի Մուրադի հավաքագրմամբ Օսմանյան հետախուզության կողմից իրականացված այս օպերացիան ուղղված էր մի քանի խնդիրների լուծմանը.

- ապահովում էր Մուրադ բեյի իրական պատկանելության համոզիչ առասպելապատումը.

- վերջինիս համար ստեղծում էր լայն հնարավորություններ ընդդիմադիր ուժերի շրջանակներում լրտեսական գործունեություն ծավալելու համար:

Մուրադ բեյի քննադատությունը գլխավորապես ուղղված էր սուլթանի անձի դեմ: 1894-1895թթ. հայերի կոտորածի ժամանակ նա հավանություն էր տալիս Աբդուլ Համիդ 2-ի քաղաքականությանը[1]:

«Միզան» թերթը հարկ էր համարել բողոքել այն պնդումների դեմ, թե երիտթուրքերի կուսակցությունը թշնամի էր Օսմանյան սուլթանական տոհմին: «Դա բոլորովին ճիշտ չէ, - գրում էր «Միզան» թերթը, - երիտասարդ թուրքերի կուսակցությունը ցանկանում է միայն, որ Թուրքիայում օրինավոր վարչություն լինի և կռիվ է մղում նրանց դեմ, ովքեր չեն հետևում օրենքներին»[2]: Մուրադ բեյը ոչ թուրք ժողովուրդների ազատագրական շարժումները համարում էր դիվանագիտական բանսարկություններ արգասիք, դեմ էր արտահայտվում կայսրությունից հայերի անջատման ձգտմանը, այն

---

[1] Шпилькова В. И., Младотурецкая революция, 1908-1909, М., 1917, с.37.

[2] «Նոր դար», 1897, թիվ 111:

համարում էր «վիրավորական» մահմեդականների հպարտության համար[1]:

Պատասխանելով «Իքդամ» թերթի խմբագրի հարցերին՝ Մուրադն իր Եվրոպա մեկնելը պատճառաբանել էր հայրենասիրությամբ, այն իմաստով, որ հայկական հարցի առնչությամբ օսմանցիների և իսլամության հասցեին Եվրոպայում տարածում գտած ոտնձգություններին հակահարված տար:

Եվրոպայում իր առաքելությունը կատարելուց հետո Կ.Պոլիս վերադառնալով՝ Մուրադ բեյը «Յըլդըզին» հանձնեց այն անձանց ցուցակը, որոնք նրա հետ քաղաքական նամակագրություն էին ունեցել ու տեղեկություններ հաղորդել: Եգիպտոսում, Ֆրանսիայում և Շվեյցարիայում եղած ժամանակ իր ստացած բոլոր նամակները և երիտասարդ թուրքերի կառույցներից մեկի ղեկավար եղած ժամանակ դրան վերաբերող փաստաթղթերն ու գրականությունը Մուրադ բեյն իր հետ համագործակցող սիրիացի Ալեքսանդր էֆենդու միջոցով Փարիզից Կ.Պոլիս բերել տվեց և հանձնեց սուլթանին[2]:

Մուրադ բեյի օրինակով գործող անձանցից էին Փարիզում 1891թ. հրատարակվող «Լյա թուրքիե» թերթի երիտթուրք հրատարակիչները, Լոնդոնում 1892թ. հրատարակված «Լյա թուրքիե» լրագրի ղեկավարները և այլոք[3], ինչը վկայում է Օսմանյան կայսրության հետախուզության գործակալական

---

[1] Петросян Ю., Младотурецкое движение, М., 1971, с. 181-182.

[2] «Նոր դար», 1897, թիվ 149:

[3] «Նոր դար», 1897, թիվ 149:

ազդեցիկ ցանցի մասին: Դրա վտանգավորության աստիճանը բարձր էր հատկապես հայ գործիչների համար: Օսմանյան հետախուզությունը, իթթիհադականների միջոցով չարաշահելով մասնավորապես ՀՅԴ գործիչների վստահությունը, լավատեղյակ էր այդ կուսակցության ծրագրերի, նպատակների, մասնաճյուղերի գործունեության մասին, ինչպես նաև զենքի պահեստների վայրերին: Նման ընթացքը կաշկանդեց հայ ինքնապաշտպանության թևերը[1]: Այն կործանարար էր արևմտահայության համար, և խոսուն փաստ է, որ երիտթուրքերի իշխանության գալուց հետո նրանք հրաժարվեցին բացահայտել Աբդուլ Համիդ 2-րդի գործակալական ցանցը, հրապարակել գործակալների անունները և գրված մատնությունները: 1913թ. Էնվեր փաշան հրամայեց Ռազմական նախարարության բակում այրել «Յըլդրզ հետախուզական կառույցի» լրտեսների զեկույցները՝ պատճառաբանելով, որ դրանց հրատարակումը հասարակությունում քաոսի մթնոլորտ կստեղծի, քանի որ շատ նախկին իշխանավորների և գործող անձանց անուններ ի հայտ կգան:

Այսպիսով՝ հարկ է արձանագրել, որ՝

- հայ ազատագրական պայքարը, գտնվելով որոշակի մակարդակի վրա, թույլ էր տվել հայ հեղափոխականներին սուլթանական պատվիրակությունների հետ խոսել վերջնագրերի լեզվով և անզի-

[1] Զարևանդ, Ինչ կըծրագրեին թուրքերը, Միացյալ անկախ Թուրքիա, Բոստոն, 1926, էջ 140:

ջում պայքար մղել օսմանյան բռնապետության դեմ, ինչը եզակի դեպքերից էր.

- հայ գործիչների պայքարն անլուր՝ երիտթուրքերի միջոցով և գործակալական ներթափանցմամբ վերահսկվում էր օսմանյան հետախուզության կողմից: Այն կործանարար էր արևմտահայության համար, քանի որ այս հանգամանքից օգտվում էր ոչ միայն Աբդուլ Համիդի հետախուզությունը. հետագայում «Առաջադիմություն և միություն» կուսակցության ձեռքում այն հանդիսացավ որոշիչ գործիք Մեծ եղեռնը կազմակերպելու համար:

2.3. Ջանգվածային կոտորածները Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում «Յըլդըզ»-Համիդիե-4-րդ բանակ եռանկյունու համատեքստում (1894-1896թթ).

1890-ական թթ. սկզբին սուլթանական կառավարությունը ոչ միայն դեմ էր բարենորոգումներ իրականացնելու ծրագրերին, այլև գործնական քայլեր էր ձեռնարկում արևմտահայությանը բնաջնջելու կամ ուժաթափ անելու ուղղությամբ: Ինչպես նշված էր Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպանության զեկույցներից մեկում, «Թուրքական իշխանությունները խելահեղ կասկածամտությամբ և խիստ միջոցների անթաքույց գործադրմամբ հայ բնակչության հանդեպ հարուցում են ատելություն և թշնամություն… Դրանից կարող են հեշտությամբ ծագել շատ վտանգավոր բարդություններ»[1]: Նույն տեղեկությունները հաստատվում են «Հնչակ» թերթի հրապարակումներից մեկում, ուր նախազգուշացվում էր. «Պահեստի զորքերը զենքի տակ են կանչված հայերին կոտորելու համար: Կառավարության հրամանով տաճիկ մոլլաները մուսուլմաններին մոլեռանդության են մղում քրիստոնյաների դեմ և նրանց վրեժխնդրության կոչում միանալու բարբարոս կա-

[1] АВПР, Политархив, д. 3431, с. 30-31:

ռավարությանը հայերի արյան վերջին կաթիլը խմելու համար»[1]:

Հայ ազգային կուսակցությունների կազմավորմամբ սուլթանական կառավարության համար մղձավանջ դարձավ երկրի արևելքում հայերի, քրդերի, ասորիների հնարավոր միավորման և սուլթանի դեմ համատեղ ապստամբություն բարձրացնելու գաղափարը:

Գաղտնի ոստիկանության և հետախուզական կառույցի կողմից մեծ վեզիրին և սուլթանին ներկայացված զեկույցներից պարզվում է, որ հայ ազգային կուսակցություններից օսմանյան գաղտնի ոստիկանությունն ու արտերկրում գործող հետախուզական ցանցն առաջնային ուշադրություն էր դարձնում Ս.Դ Հնչակյան և Վերակազմյալ Հնչակյան կուսակցություններին[2]: Պատճառը ոչ միայն նրանում էր, որ Հնչակյանն առաջին հայ ազգային կուսակցությունն էր, որ որդեգրել էր պայքարի զինված մեթոդը, ավելի վաղ էր ստեղծվել, քան ՀՅԴ-ն և կազմակերպել ցույցեր և ապստամբություններ Արևմտյան Հայաստանում, այլ այն, որ այդ կուսակցությունը կապեր ուներ նաև եվրոպական անարխիստական կազմակերպությունների հետ[3]:

Այդ շրջանում եվրոպական տիրակալների համար սարսափի հիմնական աղբյուր էին անարխիստական կազմակերպությունների ահաբեկչա-

---

[1] «Հնչակ», 1890, թիվ 4:

[2] Ermeni Komiteleri (1891-1895), Ankara, 2001, s. VII-IX:

[3] Ermeni Komiteleri (1891-1895), էջ 10-11:

կան ակտերը, որոնք ուղղված էին առաջին հերթին պետական գործիչների դեմ: Աբդուլ Համիդ 2-րդը, որի անձը նույնպես այդ անարխիստական կազմակերպությունների թիրախների ցանկում էր, առանձնահատուկ անհանգստացած էր նրանց գործունեությամբ և հրահանգել էր հետևել բոլոր այն կազմակերպություններին, որոնք կապեր ունեն անարխիստների հետ: Այսպես, 1894թ. Աբդուլ Համիդի համար հատուկ պատրաստված «անարխիստական գաղափարախոսությամբ գործող կուսակցությունները» տեղեկանքում նշվում էր, որ Անատոլիայի բնակչության, այդ թվում նաև հայության շրջանում անարխիստական գաղափարները քիչ են տարածված և միակ կուսակցությունը, որը «իր ծրագրում որդեգրել է անարխիստական գաղափարախոսության տարրեր, հանդիսանում է Հնչակյան կուսակցությունը»[1]: «Մյուս կուսակցությունում[2], - նշված է տեղեկանքում, - որը հետապնդում է Արևմտյան Հայաստանի վիլայեթների ապստամբության ճանապարհով անկախացման նպատակը ոչ գործելաոճում, ոչ էլ գաղափախական ծրագրում անարխիստական գաղափարախոսություն չի գրանցվել»[3]:

Գաղտնի ոստիկանության կողմից հետաքննվող մեկ այլ ուշագրավ դրվագ կապված է «Հայկական Պատրիարքարանի եկեղեցու եպիսկոպոս Սուքիաս

---

[1] Ermeni Komiteleri (1891-1895), էջ 11:

[2] Խոսքը ՀՅԴ-ի մասին է (Հ.Հ.)

[3] Նույն տեղում:

էֆենդիի սպանության հետ», որտեղ հայ ահաբեկիչները անվանվում էին «անարխիստներ»[1]: Զեկույցում նշվում է նաև «Հնչակյան կոմիտեի հայ անարխստներ Հակոբ Տեր-Հակոբյանի, նրա ընկերներ փոստատան Արմենակի, Ստեփանի և Պանզիկյան Խաչիկի կողմից տերտեր Մամփրե էֆենդիի սպանության մասին»[2]:

Ըստ օսմանյան հետախուզության տվյալների՝ անարխիստական շարժման հետ կապ ունենալու հանգամանքը հիմք հանդիսացավ, որ գաղտնի ոստիկանությունն ու «Յըլդրզը» հայ ազգային-ազատագրական շարժման առաջին շրջանում (մինչև 1896թ.) հայ ազգային կուսակցություններից առավել վտանգավոր համարեն Հնչակյան կուսակցության գործունեությունը և փորձեն բոլոր միջոցներով վերացնել այդ կուսակցության գործիչներին:

1890-1894թթ ինքնապաշտպանական կռիվների կազմակերպիչը ոչ այնքան ազգային կուսակցություններն էին, որքան ժողովուրդը, որին ոտքի էր հանել գոյատևման հրամայականը: Ժողովրդի այդ ինքնահամախմբման գործընթացում էին ձևավորվում շարժման ղեկավարներն ու առաջնորդները: Իսկ առճակատման նախաձեռնողը ոչ թե հայերն էին, այլ կառավարությունը, որը կրքերի բորբոքմամբ իսլամի դրոշի տակ փորձում էր միավորել թուրքահպատակ բոլոր մահմեդականներին:

---

[1] Նույն տեղում, էջ 26-27:

[2] Նույն տեղում, էջ 27-28:

Մահմեդական ամբոխի տարբեր խավերի դերի մասին Ռոստոմը նշում է, որ կոտորածներին «…ամենաքիչ մասնակցություն ունեցավ տաճիկ գյուղացի երկրագործ դասը: Հարձակումները գլխավորապես լեռնաբնակ անասնապահ կամ կիսաերկրագործ ազգաբնակչությունն էր՝ քրդերը, լազերը և Ռուսաստանից գաղթած չերքեզները, իսկ երկրագործ դասը շատ-շատ հետևել է նրանց՝ միայն թալանից բաժին ձեռք գցելու համար…»[1]:

1890թ. նոյեմբերին թուրքական թերթերում կառավարական հաղորդում հրապարակվեց հատուկ թեթև հեծելազորային գնդեր ստեղծելու մասին, որոնք ի պատիվ սուլթան Աբդուլ Համիդի կոչվեցին «Համիդիե»: Դրա կազմակերպման գործը հանձնվել էր Արևմտյան Հայաստանում տեղակայված 4-րդ բանակի մարշալ Զեքի փաշային[2]:

Ռուսական դիտորդներից գեներալ Պ. Ի. Ավերյանովը գտնում էր, որ «վերջին ժամանակներս գործ ունենալով հայկական հարցի հետ, նրան հակազդելու նպատակով թուրքական կառավարությունը որոշել է օգտագործել իրենց հետ դավանակից սուննի քրդերին, որոնք քաղաքական առումով հանդիսանում են իրենց համար առավել բարեհույս բնակչություն: Միայն քրդերի շրջանում է, որ Փոքր Ասիայի արևելքում թուրքերը կարող են իրենց հա-

---

[1] Ռոստոմ, Մահմեդական ամբոխի դերը, Ժողովածուների հավաքածու, Եր., 1989, էջ 53:

[2] Минорский В. Ф., Курды. Заметки и впечатления, Петроград, 1915, с. 11.

մար գտնել հենարան»[1]:

Արևմտահայության դեմ օսմանյան կառավարության ռազմավարական ուղեգծի վերաբերյալ ևս մեկ նկատառում է հանդիսանում այն, որ 1892թ. Կոստանդնուպոլսում և վեցերորդ բանակային կորպուսի կենտրոն Բաղդադում կազմավորվեցին «ցեղերի համար դպրոցներ», որոնք թեև կառավարության կողմից հասարակությանը մատուցվում էին իբրև քրդերի շրջանում լուսավորություն տարածելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառում, սակայն իրականում այդ դպրոցների նպատակն էր համիդիե ռազմական կառույցը ապահովել պատրաստված սպաներով: Այդ դպրոցները կոչված էին նաև քրդերին և արաբներին Օսմանյան կայսրության նկատմամբ հավատարիմ հպատակության զգացումներ ներարկել: Քրդաբնակ շրջաններում զինվորական դպրոցներ բացելու նպատակով Աբդուլ Համիդը միայն իր անձնական միջոցներից հատկացրել էր 8 միլլիոն լիրա[2]:

Պաշտոնական մամուլը հայտնում էր, թե իբր կառավարության նպատակն է «քոչվոր քրդերին մտցնել քաղաքակրթության ընդերքի մեջ և կար-

---

[1] Аверьянов П. И., Курды в войнах России с Персией и Турцией в течение 19-го столетия. Современное политическое положение турецких, персидских и русских курдов. Исторический очерк, Тифлис, 1900, с. 250.

[2] Минорский В. Ф., նշված աշխ. էջ 11:

գապահ դարձնել նրանց հորդաները»[1], սակայն իրականում ռազմական այդ կազմակերպության օգնությամբ սուլթանը մտադիր էր ջախջախել հայ ժողովրդի ազգային–ազատագրական շարժումը և վերջ դնել Հայկական հարցին: Ըստ ֆրանսիացի գիտնական Ֆ.Մակլերի՝ համիդիե գնդերի ստեղծման նպատակներից էր նաև կողք կողքի ապրող երկու ժողովրդների՝ հայերի և քրդերի մերձեցման բնականոն գործընթացի խափանումը: Դա մեկ ազգին մյուսի դեմ հանելու օսմանյան ավանդական քաղաքականության շարունակությունն էր կամ նրա բաղկացուցիչ մասը: «Այդ ճանապարհով սուլթանը ձգտում էր մի կողմից փոխադարձ պայքարի մեջ հյուծել իր հպատակների հեղափոխական եռանդը, իսկ մյուս կողմից՝ կանխել ազգությունների միավորման հնարավորությունը համատեղ ելույթի համար ընդդեմ բոլորին ճնշող բռնատիրական վարչակարգի: Այլ կերպ ասած՝ քրդերը կարող էին ոչ միայն հայկական վտանգը խեղդել, այլև խեղդվել՝ բոլորովին անվնաս դառնալու աստիճան»[2]:

Համիդիե գնդերի ստեղծումով քրդական ավատական վերնախավը և աշիրեթային ցեղերի զգալի մասը, իրեն կապելով համիդյան վարչակարգի հետ, պատրաստի գործիք դարձավ սուլթանական իշխա-

---

[1] Макколь М., Ответственность Англии перед Арменией. В книге: Положение армян в Турции до вмешательства держав в 1895г., М., 1896, с. 163, Բայբուրդյան Վ, նշված աշխ., էջ 151:

[2] Բայբուրդյան Վ., նշված աշխ., էջ 153:

նության ձեռքում կոտորածների միջոցով լուծելու Հայկական հարցը:

1893թ. գարնանը քրդերն ու թուրքերը հարձակում գործեցին Սասունի վրա: Օսմանյան ոստիկանության հայազգի գործակալ Դավոյի միջոցով Սեմալում ձերբակալվեց քաղաքական գործիչ Մ. Տամատյանը: Դավոն թուրքերին հայտնել էր Տամատյանի գտնվելու տեղը[1], որի ձերբակալությանը հետևեց թուրքական ռազմական ուժերի գործողությունների աշխուժացումը:

1892-1893թթ. կռիվներում սասունցիները կարողացան պաշտպանվել: Այսպես էր նաև 1894թ., քանի դեռ կռվի մեջ չէր մտել թուրքական բանակը: Զեքի փաշան, դիմելով մարտավարական հնարքի, սպիտակ դրոշ էր բարձրացրել, պատվիրակներ ուղարկել Անդոկ և սուլթանի անունից ներողություն խնդրել՝ խոստանալով հատուցել հայերին հասցված վնասը: Նկատի ունենալով, որ այլևս ոչ՛ սննդամթերք էր մնացել և ոչ՛ էլ ռազմամթերք, եղան բանակցությունների գնալու առաջարկություններ: 1894թ. օգոստոսի 15-ին փաշան հինգ հարյուր հեծյալներով անձամբ է գնում Անդոկի ստորոտը և պահանջում, որ սասունցիները մարդիկ ուղարկեն բանակցությունների: Հայերի մի մասն ընդունեց այդ առաջարկությունը: 148 հրացանակիրներից կազմված մի խումբ Սեմալի Տեր-Հովհաննեսի գլխավորութ-

[1] Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, Երևան, 2008, էջ 468:

յամբ իջնում է բանակցությունների: «Հազիվ սասունցիների պատգամավորությունը հասել էր շտաբին մոտիկ, Զեքի փաշան իր զորքերով պաշարման մեջ է առնում նրանց: Կարգադրում է պատգամավորության ղեկավարներին կանչել իր մոտ: Սեմալցի Տեր–Հովհաննեսը և Կաժոյան Շառոն, Տեր-Պետրոս Ղազարյանը… ներկայանում են Զեքի փաշային, որը անմիջապես ձերբակալում է նրանց, իսկ պատգամավորության զինված մասը գնդակոծման է ենթարկվում:

Կալանքի առնվածներին գազանային դաժանությամբ չարչարում են, սրերով վիրավորում, ստիպում տեղեկություններ տալ սասունցիների ուժերի և դասավորության մասին, սակայն, ոչինչ չիմանալով, սպանում են»[1]: Այս խմբից Զեքին իմանում է, որ լեռներում սասունցիներից բացի ուրիշ կռվողներ չկան, իսկ հայերի պաշարները սպառված են:

Հայկական վիլայեթներում իրականացվող գործողությունները քննարկվում էին նաև «Յըլդրզ»-ում տեղի ունեցած նիստերի ժամանակ: Դրա ազդեցիկ դեմքերից էին սուլթանի առաջին և երկրորդ քարտուղարներ Թահսին և Իզզեթ փաշաները, մեծ վեզիրներ Քյամիլը և Սայիդը, մարշալ Շաքիրը, որոնք էլ մշակել էին 1894-96թթ. հակահայկական գործողությունների ռազմավարությունն ու մարտավարությունը: Ինչպես նշում էր սուլթանի անձնական

[1] Պետոյան Վ., Սասունն անցյալում և Սասունի ազատագրական շարժումները, Երևան, 2005, էջ 125:

քարտուղար Թահսին փաշան. «Սամսունում հայկական դեպքի բռնկվելու ժամանակ սուլթան Համիդը խուճապի էր մատնվել»[1]: Ըստ Թահսին փաշայի՝ սուլթանը կասկած չուներ, որ «զինվորական և ժանդարմական ուժերով» կարող է ճնշել հայերին, սակայն նրան անհանգստացնում էր եվրոպական տիրությունների արձագանքը[2]: Սուլթանի հրամանով հարցաքննման հանձնաժողով ուղարկվեց Սասուն, որը կազմված էր իր մտերիմ մարդկանցից՝ Շևֆիկ և Ջելալ փաշաններից, Մեհիդ էֆենդիից ու Օմեր բեյից[3]:

Կոտորածներն ուղղորդում էին Կ.Պոլսից գործուղված պաշտոնյաները և «Յըլդըզից» ստացված հրահանգները: Վանի վալի Նազըմին «Յըլդըզից» ուղղված հեռագրում ասվում էր. «Կոտորել հայերին, չխնայել տղամարդկանց, հրկիզել նրանց ունեցվածքը, հնարավորին չափ խնայել միայն կանանց»[4]: Ինչպես նշում էր պատրիարք Մ. Օրմանյանը, «Ջարդերը խաժամուժ ամբոխի կատաղության կամ վրեժխնդրության հետևանք չէին երբեք, այլ պարզապես բարձրեն արձակված հրամանների գործադրություն էին»[5]:

Դեռ 1890թ. հուլիսին «նախարարական արտա-

---

[1] Tahsin Paşa'nın Yıldız Hatıraları. Sultan Abdül hamid, İstanbul, 1999, s. 44.

[2] Նույն տեղում, էջ 45.

[3] Նույն տեղում:

[4] Արաքս, 1897, գ. Բ, էջ 103:

[5] Օրմանեան Մ., Խոհ և խոսք, Երուսաղեմ, 1929, էջ 176:

սովոր խորհուրդներ կատարվեցան «Յըլդրզ»-ում ընդ նախագահութեամբ Վեհ. Սուլթանին: Սայիտ փաշա նախկին Մեծ Վեզիրն, Հայոց ոխերիմ թշնամին, ինչպէս նաև բազումք յաւագանւոյն, բաց ի՝ Հակոբ փաշայ է և Արթին փաշայ է, ընդ ներկայ էին: Երկար խորհրդակցութեանց առարկայ եղան Հայկական խնդիրք: Վերջապես նախարարք յայս միաբանեցան որ զինուորական օրէնք հաստատուի ի Հայաստան, և անողոքաբար հրացանի բռնուին... ամեն կասկածելի կամ վրան զենք կրող Հայ: Սուլթանը զիւր հաւանութիւնը տուաւ այս օրոշման: Ղազի Օսման փաշայ, իբր կայսերական քոմիսէր, ի Հայաստան պիտի ղրկուի, երկիրը խաղաղեցնելու պաշտօնով»[1]:

Կոտորածների կազմակերպիչ ուժը առավելապես բանակն էր և ոստիկանությունը: Սովորաբար խուժանն առանց զորքի մասնակցության խուսափում էր հայերի վրա հարձակվելուց: Բաբերդի հայաբնակ շրջաններ դրսից բերվել էին մեծ թվով լազեր, բայց մինչև Երզնկայից զորքի ժամանումը կոտորածը չսկսվեց: Տրապիզոնում, քանի դեռ հարձակվում էր միայն ամբոխը, հայ չզոհվեց: Կոտորածը սկսվեց, երբ խուժանին զինեցին և հարձակմանը մասնակից դարձրեցին բանակին: «...առանց կառավարության դրդման, առանց նրա քաջալերության, առանց նրա վարժված զորքերի ջերմ աջակցության, մահմեդական ամբոխը չէր հա-

[1] «Հայաստան», 1890, թիվ 22:

մարձակվի շարժվել իր տեղից, և եթե շարժվեր էլ, շատ տեղ անհամեմատ մեծ կորուստ կունենար և դա լավ դաս կլիներ ապագայի համար»[1]:

Թուրքական գաղտնի ծառայությունների գործելակերպի բաղադրիչներից էր հետախուզական միջոցառման անցկացման համար ճիշտ պատրվակի ընտրությունը, միջադեպերի հրահրումը և սադրանքը:

Կոնկրետ դեպքում և կոնկրետ իրավիճակով պայմանավորված՝ կոտորածների իրականացման համար ընտրվում էր «համոզիչ» պատրվակ: Մասնավորապես, Կ.Պոլսում կոտորածների համար պատրվակ ծառայեց մի խումբ դաշնակցականների կողմից 1896թ. օգոստոսի 26-ին Օսմանյան բանկի գրավումը: Օսմանյան գաղտնի ծառայությունները նախապես տեղեկություններ ունեին բանկի գրավման դիտավորության մասին, սակայն միտումնավոր չկանխարգելեցին դրա իրականացումը: Կ.Պոլսում ԱՄՆ-ի դեսպանատան աշխատակից Ռոբերտսոնը կարծիք էր արտահայտել, որ օսմանյան իշխանությունները բանկի գրավումը չկանխեցին, որպեսզի աշխարհի աչքում արդարացնեն հայերի գալիք սպանդը: «Թուրքական իշխանությունները, նախապես իմանալով Օսմանյան բանկի վրա հայերի կողմից հարձակման նախապատրաստության մասին, ոչ միայն ոչինչ չարեցին դրա իրականացումը կանխելու, այլև ոստիկանության ճարպիկ գործո-

[1] Ռոստոմ, նշված աշխ., էջ 52:

ղությունների միջոցով բորբոքեցին հայերի հայրենասիրական խանդավառությունը և ապա օգտվեցին առիթից զանգվածային կոտորած կազմակերպելու համար»[1]: Ռուսական սպա Պեշկովի դիտարկմամբ՝ օսմանյան ոստիկանությունը ոչ միայն կազմակերպեց ջարդերը, այլև մասնակցեց դրանց: Կ.Պոլսի Ռուսաստանի դեսպանության հաղորդագրությունում նույնպես նշվում է, որ «Կոտորածներն իրականացրել են կառավարության կողմից նախապես կազմավորած հրոսակախմբերը՝ ոստիկանական պաշտոնյաների գլխավորությամբ»[2]:

Տրապիզոնում կոտորածներն իրականացնելու համար ընտրվել էր 1896թ. հոկտեմբերի 2-ին Բահրիի վրա ու Համդիի նկատմամբ կատարված ահաբեկչական անհաջող փորձը՝ տարածելով լուրեր, թե կրակողները հայեր էին: Բահրիի սպանությունից անմիջապես հետո Տրապիզոնի իշխանությունները սկսեցին վիլայեթի հայության զանգվածային ջարդերի նախապատրաստությունը և այդ նպատակով ձևավորվեց լրտեսական ցանց[3]:

Կարինում կոտորածը սկսելու համար որպես պատրվակ ծառայեց շեյխ Հայդարի մահը, որի մեղքը նույնպես բարդեցին հայերի վրա: Պաշտոնական վարկածն արտահայտված է Շաքիրի՝ 1895թ. հոկտեմբերի 18-ի հեռագրում. «Մի քանի երիտասարդ

---

[1] Ղազարյան Հ., Հայ ժողովրդի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Եր., 2004, հ, 2-րդ, էջ 73:

[2] АВПР, Политархив, д. 3449, л. 6.

[3] Պողոսյան Ս., նշված աշխ., էջ 591:

հայեր ներխուժեցին նահանգապետի տուն և կրակեցին ժանդարմների պետի վրա, բայց վրիպեցին: Սպանվեց մի ենթասպա: Խուզարկությունը սկսված է»[1]:

Սուլթանական գաղտնի ծառայությունների գործելակերպի բաղադրիչներից էր միջադեպերի հրահրումը, «անգործության» միջոցով իրավիճակի սրումը, այսինքն՝ սադրանքը, ինչը բարենպաստ պայմաններ էր ստեղծում բիրտ ուժի կիրառման և ցանկալի միջազգային կարծիքի ձևավորման համար՝ այն ծառայեցնելով հայաջինջ քաղաքականությանը:

Որպես այս գործելակերպը հաստատող պատմական փաստ կարող ենք նշել 1895թ. Բաբը Ալիի ցույցը: Ինչպես Օսմանյան բանկի գրավման, այնպես էլ այս ցույցի դեպքում իշխանությունները, նախապես տեղեկացված լինելով դրա կազմակերպման մասին[2], ոչ թե կանխեցին այն, այլ վարվեցին իրենց ձեռնտու մարտավարությամբ. «Սուլթանը զորք չէր կանչել հայերի ցույցը ցրելու համար. նա կարող էր ցույցն ընդհանրապես թույլ չտալ, սակայն գիտակցաբար այդ չարեց, որպեսզի թուրք զինված ամբոխը հաշվեհարդարի ենթարկեր հայերին: Զինեցին սոֆթաներին, զինվորներին հագցրեցին ուսա-

---

[1] Նույն տեղում, էջ 595:

[2] Նազըմ փաշայի հուշերը. Հայոց դահիճը կըպատմէ, «Յառաջ», Փարիզ, 1931, թիվ 1628:

նողական արտահագուստ և տարան հայերի դեմ»[1]:

Սպանությունները հիմնականում տեղի ունեցան ոչ թե ցույցի օրը, այլ դրանից հետո: Եթե առաջին օրը սպանվեց 700, ապա հաջորդ օրերին՝ մոտ 2000 հայ[2]:

Ցեղասպան քաղաքականության իրագործման համար կարևոր հանգամանք էր ի նպաստ Օսմանյան կայսրության միջազգային կարծիքի ձևավորումը: Հայաջինջ գործողությունների «լեգալացման» ուղղությամբ աշխատանքների իրականացման գործում, ի թիվս այլ ուժերի, առաջին հերթին օսմանյան դիվանագիտական ներկայացուցչությունների, ներգրավված էին նաև սուլթանական գաղտնի ծառայությունները: Դրանք անցկացվում էին թե՛ արտասահմանում, մասնավորապես՝ եվրոպական երկրներում և Ռուսաստանում, թե՛ կայսրության ներսում:

Ոստիկանությունը ձգտում էր որպես գործակալ հավաքագրել մամուլի ղեկավարներին, խմբագիրներին, որպեսզի նրանց միջոցով թերթերն ու ամսագրերը վերածվեն սուլթանական վարչակարգի հենարանի: Ինչպես նշում է հայ պարբերականը. «Համիդի իշխանության տարիներին անթիվ և անհամար խմբագիրներ սիրաշահվում էին տաճկական մեդալներով ու շքանշաններով»[3]:

---

[1] Тунян В., Младотурки и Армянский вопрос, 1908-1912, Ер., 2004, с.91.

[2] Պողոսյան Ս.,նշված աշխ., էջ 588:

[3] «Մուրճ», 1907, թիվ 1:

Օսմանյան հետախուզության և ոստիկանության գործակալները ջանքեր էին գործադրում եվրոպական մամուլում կոտորածների մասին օբյեկտիվ հրապարակումները հերքելու կամ դրանց հանդեպ կասկածներ հարուցելու համար: Օրինակ, հարձակում էին գործում Լոնդոնի «The Daily Telegraph» թերթի թղթակից Դիլոնի դեմ[1]:

Սուլթանը Բ. Դռանը հանձնարարել էր դրամ և ոսկի չխնայել եվրոպացի դեսպաններին և լրագրողներին կաշառելու համար: Նշենք որ, Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների գործունեության ոլորտը համակարգում և ղեկավարում էր սուլթանի երկրորդ քարտուղար Իզզեթ փաշան, որն էլ կազմել էր այն թերթերի ու հանդեսների ցանկը, որոնց խմբագիրներն ու լրագրողները որպես գործակալ հավաքագրվել էին օսմանյան հետախուզական մարմինների կողմից: Այդ ցանկը 1908թ. հայտնաբերել էր երիտթուրքական կոմիտեն: Ցանկում կաշառված թերթերից նշվում էին «Prechlater Lloyd»-ը, «Neue freie Presse»-ն, «Vossische Leitung»- ը և այլ պարբերականներ[2]:

Ռուսական թուրքամետ թերթերից էին «Московские ведомости»-ն և «Новое время»-ն, որոնք հայերի կոտորածների մասին գրում էին, որ «Հայերի հանդեպ թուրքական հետապնդումների մասին

---

[1] Էմիլ Դիլոն, Իրավիճակը Թուրքահայաստանում, Եր., 1987, էջ11:
[2] Տե՛ս «Զանգակ», 10.08.1908:

բոլոր ճիչերը հորինվածք են»[1]:

Օսմանյան գաղտնի ծառայությունների կողմից մշտապես աշխատանքներ էին տարվում դեսպանների շրջանում: Մասնավորապես, հայ կաթոլիկների պատրիարք Ազատյանի միջոցով հաջողվել էր կաշառել ԱՄՆ-ի դեսպանին: Պատահական չէր ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի 1895թ. հունվարի 3-ին հրապարակած հայերի կոտորածի մասին զգուշավոր հայտարարությունը: Սասունում տասնյակ հազարավոր հայերի կոտորածը ներկայացվում էր, թե սպանվածների թիվը չի անցնում 5 հազար հոգուց: Հայտարարությունն ուղղված էր ոչ թե այդ կոտորածների դատապարտմանը, այլ Օսմանյան կայսրությունում այդ ժամանակ գտնվող ամերիկյան 250 քաղաքացիների պաշտպանությանը: «Թուրքիայում վերջապես հինգ հազար հայերի կոտորածի կապակցությամբ ըստ երևույթին Ամերիկայի Միացյալ Նահանգներին հարկ չկա միջամտելու Արևելյան հարցին: Բայց նույնչափ պարզ է, որ այդ երկրում ամերիկյան բավական շատ քաղաքացիների, որոնք մշտապես ենթարկվում են վտանգի, վիրավորանքների ու կրում են վնասներ, պետք է պաշտպանել»[2]:

Միջազգային հանրության աչքերում Օսմանյան կայսրությունում հայաջինջ գործողությունների

---

[1] Տե՛ս Положение армян в Турции, նշված աշխ., էջ 430-434:

[2] Տես՝ Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում, Երևան, 2004, էջ 468, ինչպես նաև՝ Պողոսյան Ս., նշված աշխ., էջ 583:

«լեգալացման» ուղղությամբ տարվող աշխատանքում ոստիկանությունը հանրագրեր էր պատրաստում ու հայերին հարկադրում ստորագրել դրանք: Հայ տղամարդիկ գերադասում էին ոստիկաններին չհանդիպել. երբ նրանք գյուղ էին գալիս, տղամարդիկ հեռանում էին: Սասունում հանրագրերը հարկադրված ստորագրում էին միայն ծերերն ու հիվանդները: Ոստիկանությանը ոչ մի կերպ չէր հաջողվել որևէ տալվորիկցու Մուշ տանել ցուցմունք տալու համար: «Մի քանի խաշնարած մարդկանց ոչխարների գոմերում բռնելով՝ այս կամ այն գյուղապետի անվան տակ, ոստիկանների ուղեկցությամբ Մուշ են ուղարկում՝ հարկադրելով ասել այն, ինչ հեռու էր ճշմարտությունից և շահեկան օսմանյան կառավարությանը»: Մշո մութեսարիֆը սասունցիներին սպառնում էր. «Եթե այս անգամ էլ մերժեք, գիտցած եղեք, որ կյանքներդ ձերը չէ, և հավերժ կորած եք: Նշան և պատիվներ կստանաք, եթե մեր խոսքերին ունկնդրեք»[1]:

Բիթլիսում ևս պահանջվել էր շնորհակալական հանրագիր ստորագրել, սպառնալով, թե այլապես «քաղաքում կենդանի հայ չի մնա»: Հայերը ստորագրեցին: «600 տարի երջանիկ ապրում ենք մեր իսլամ հայրենակիցների հետ: Ուրիշները շահադիտական նպատակով մեզ դրդեցին հարձակվել թուրքերի վրա: Ողջ հանցանքը մերն է: Ամոթահար

[1] «Հնչակ», 1895, թիվ 4:

ենք: Ինչ պատիժ տրվի, արժանի ենք»[1]:

Բալուի կոտորածից մեկ օր առաջ հայերը հարկադրաբար ստորագրեցին հանրագիր-շնորհակալագիր, որ զորքի օգնությամբ վերականգնվել է կարգուկանոնը: Մարաշի հայերի կողմից ստորագրված հանրագրով՝ իրենք էին ուզում կոտորել մուսուլմաններին, իսկ անկարգությունների համար պատասխանատվությունը ընկնում է իրենց վրա:

«Օրիենթ միսիոնի» հիմնադիր, գերմանացի հասարակական գործիչ Յ. Լեփսիուսն առանձնակի է անդրադառնում «հայկական սադրանքների» վերաբերյալ թուրքական կեղծիքներին: Նա բերում է փաստեր, թե ինչպիսի բռնի միջոցներով էին իշխանությունները հայերից կորզում իրենց համար շահեկան ցուցմունքներ, ստորագրություններ հավաքում շնորհակալական նամակների համար: Նա անդրադառնում է հետևյալ օրինակին: Երբ թուրք պաշտոնատարը հայ երևելիներից մեկին ստիպում է ստորագրել շնորհակալական հանրագիր, վերջինս հարցնում է. «Բայց ինչի՞ համար մենք պետք է շնորհակալություն հայտնենք», պատասխանը հետևյալն է լինում. «Դա ձեզ չի վերաբերում, վարվեք մյուսների պես»: «Դիվանագիտական փաստաթղթերից երևում է, - գրում է Լեփսիուսը, - որ ամեն անգամ, երբ լուրեր էին ստացվում ջարդերի մասին, թուրքական կառավարությունն անմիջապես հայերին

[1] «Հնչակ», 1895, թիվ 24:

մեղադրում էր դրանք հրահրելու մեջ»[1]: Զարդարարները քաջատեղյակ էին, որ կոտորածները տեղի էին ունենում ոչ թե տեղական պաշտոնատարների, այլ «Յըլդըզի» հրահանգով և հայերին ոչնչացնելու համար իրենք պատասխանատվություն չեն կրելու:

ՈՒշագրավ է սուլթանի առաջին քարտուղար Թահսինի կողմից վալիներին ուղղված շրջաբերականը. «Իմացել ենք, որ հյուպատոսներին հրամայված է ճշտել Անատոլիայում եղած հայերի թիվը, ուսումնասիրել մուսուլման դարձածների, մուսուլմանների տներում պահվող կանանց, հայերի ընտանիքների և դատապարտվածների վիճակը: Այժմ բոլորին է հայտնի, որ հայերն իրենք են եղել խռովությունների կազմակերպիչներն ու հրահրողները: …Առանց այս ամենը հաշվի առնելու անընդհատ քննություններ են կատարում՝ հայերին իբրև զոհ ցույց տալու համար: Դա արվում է հատուկ՝ կայսերական կառավարությունը թուլացնելու դիտավորությամբ: Հյուպատոսներն այս ուղղությամբ են գործում: Այդ թշնամական փորձերը խանգարելու համար ձեզնից պահանջվում է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հայերին նշված ոգով նախապատրաստելու և կայսրությանը ձեր նվիրվածությունը փաստելու ուղղությամբ…»[2]:

Վերոշադրյալի լույսի ներքո ուշագրավ է, որ Պաղեստինում գտնվելու ժամանակ Գերմանիայի

---

[1] Lepsius J., Die Grose Politik der Europäischen Kabinette 1871-1914., Berlin, 1922, s. 57.

[2] «Դրոշակ», 1897, թիվ 16:

կայզեր Վիլհելմ 2-րդը օսմանյան ոստիկանապետ Նազըմին հարցրել է. «Ո՞վ է վերջին ջարդերի պատասխանատուն»: Նազըմը պատասխանել է. «Նորին վեհափառությունը»[1]:

1894թ. Վանի նորանշանակ վալին գնում է «Յըլդըզ»՝ սուլթանից ցուցումներ ստանալու: Եպարքոս Ջնադը նրան ասում է. «Փաշա, նորին վեհափառությունը ձեզ հանձնարարում է ծայրաստիճան խստությամբ վերաբերվել հայերին»: «Բայց դա հայերին ապստամբության կմղի», - պատասխանում է փաշան: «Եթե կապստամբեն՝ լավ: Դուք էլ կջարդեք»[2]:

Այսպիսով՝ 1894-1896թթ. կոտորածները նախապես պլանավորած էին իշխանությունների կողմից, դրանց իրագործման համար Օսմանյան կայսրությունում կիրառվեցին հատուկ ծառայություններին բնորոշ նոր տեխնոլոգիաներ, որոնք ընդհանուր էին կայսրության բոլոր նահանգների համար: Ավելին՝ նոր գործելաոճը ժառանգեց, զարգացրեց և գործադրեց «Հատուկ կազմակերպություն»-ը Մեծ Եղեռնի իրականացման ժամանակ:

Նոր գործելաոճն էր.

- կայսրության գաղտնի ծառայությունների սադրիչ գործողություններով պայմանավորված՝ հրահրվում էին իրենց ձեռնտու միջադեպեր, որոնք մի կողմից արդարացնում էին բիրտ ուժի կիրառու-

---

[1] Պողոսյան Ս., նշված աշխ., հատոր 1, էջ 673:

[2] Նույն տեղում:

մը, մյուս կողմից՝ օգտագործվում էին քարոզչական նպատակներով: Այս համատեքստում գաղտնի ծառայությունները գործում էին հետևյալ կարգախոսով. «Ճնշեք հայերին, թող ըմբոստանան, որ ջարդենք».

- կոտորածները զուգորդվում էին հայերի ահաբեկված հոգեվիճակով: Այն իրագործվում էր առանձին վայրերում հրկիզումների, պայթյունների, ձերբակալությունների միջոցով, որոնց մասին լուրերը տարածվում էին ողջ արևմտահայության շրջանում՝ վախի մթնոլորտ ստեղծելու և դիմադրությունից զերծ պահելու համար.

- հայերի հանդեպ գրգռվում և սաստկանում էին մահմեդականության ատելությունն ու բռնությունները.

- հայերի նկատմամբ կոնկրետ պաշտոնատար անձանց կողմից իրականացվող երկդիմի քաղաքականությունը՝ հայերին «միամտացնելու» մարտավարությունը (Բալուի կազայում զորքերի հրամանատար Հուսեին բեյը մի կողմից հայերին վստահեցնում էր, որ վտանգ չի սպառնում, մյուս կողմից քրդերին հրահանգում կոտորել նրանց: Այս վարքագիծը ևս ընդհանուր էր բոլոր նահանգների համար).

- հայերի կոտորածները սկսում էր իշխանությունների կողմից զինված խուժանը և ոչ թե բանակը կամ ոստիկանությունը (Երզնկայի, Ուրֆայի, Սեբաստիայի, Խարբերդի, Արաբկիրի կառավարիչները հայերի անվտանգության հավաստիացումներ էին տալիս, երբ նույն պահին սկսվում էին խուժանի

հարձակումները).

- հաճախ ջարդարար գործողությունները սկսվում էին ոչ թե տեղացիների, այլ ուրիշ վայրերից բերված մարդկանց միջոցով, որպեսզի նրանց չճանաչեին, հետագա բարդություններից խուսափելու համար: Նույն տրամաբանությունն էր ընկած կոտորածներում բանակի և ոստիկանության օգտագործման հիմքում:

2.4. Սուլթանական գաղտնի ծառայությունների գործունեությունը Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի վերահսկման ուղղությամբ (1890-1908թթ.)

1890-ական թթ. սկզբներից արևմտահայության ազգային-ազատագրական շարժումը թևակոխում է զինված պայքարի փուլ: Եթե 1878թ. Բեռլինի կոգրեսից հետո զինված պայքարի անհրաժեշտության հարցը քննարկվում էր գաղափարական և տեսական հարթության մեջ, ապա պատմական այս փուլից հետո այն սկսում է կազմել հնչակյանների և դաշնակցականների անմիջական գործունեության բաղադրիչը:

1891թ. փետրվարի 21-ի Էրզրումի անգլիական հյուպատոս Համփսոնի հաղորդագրության համաձայն՝ ձերբակալությունները շարունակվում են, և առանց մեղադրանքներ ներկայացնելու հայերը նետվում են բանտերը[1]: Անգլիական գործակալների վկայությամբ՝ Էրզրումում, Բայազետում, Երզնկայում, Ալաշկերտում և այլուր ձերբակալվել են բազմաթիվ հայեր, որոնց բանտարկության պատճառները հայտնի չեն[2]: Օսմանյան իշխանությունները անկարգությունների նախաձեռնող էին համարում

---

[1] British documents on Ottoman Armenians, (1891-1895), Ankara, 1989, vol.3, p. 5-9.

[2] British documents..., էջ 76-84:

հայերին, որի պատճառով էլ ոստիկանությունը ձերբակալում էր բոլոր նրանց, ովքեր փոքր իսկ կասկած էին հարուցում և ազգային մտածելակերպ դրսևորում: Օրինակ՝ Բաբերդում բանտարկել էին մի հայի, որի մոտ գտել էին 1874թ. վանքերից մեկում տպագրված հայկական երգեր ու 1884թ. Թիֆլիսում տպագրված «Արձագանք»-ի մեկ համար[1]:

«Հին թերթերը», երգարանները կամ արժեք չունեցող այլ փաստաթղթերը դիտվում էին որպես խռովության ակնհայտ ապացույցներ[2]:

Հայ ազատագրական շարժման գործիչները ձգտում էին թուրք աշխատավոր խավին համոզել, որ հայկական շարժումներն ուղղված չեն նրանց դեմ, որ մահմեդականները ևս, ինչպես և քրիստոնյաները, ենթարկվում են սուլթանի վարչակարգի ճնշմանը. «Մենք կարող ենք հասնել մեր նպատակին, եթե բոլորս միավորվենք ընդդեմ ընդհանուր ոսոխի՝ ունենալով «Արդարություն, օրենք և իրավուք» նշանաբանը: Այս է մեր հեղափոխական նպատակը և դուք՝ օսմաններդ, հոգ եք տանում ձեր ապագայի մասին, դուք պետք է կանգնեք նույն ճանապարհին»[3]:

Իհարկե, խավարի, օսմանյան իշխանությունների կողմից ստեղծված ահաբեկման և պանիսլամական մոլեռանդության մթնոլորտում մահմեդական զանգվածի վրա նման կոչերն ընդհանուր առ-

---

[1] Նույն տեղում, էջ 292:
[2] Նույն տեղում, էջ 297:
[3] Նույն տեղում, էջ 299-301:

մամբ արձագանք չէին գտնում: Իռլանդացի աշխարհագրագետ և ճանապարհորդող Հենրի Լինչը գրում է. «Բոլորի դեմքին կկարդանք սարսափ ու կասկածամտություն, և թուրքերի այդ զգացողությունը փոխանցվում է նրանց կրոնակից հպատակներին: Մթնոլորտը հագեցած է հայկական դավադրության մասին լուրերով: …Առանց չափազանցման կարելի է ասել, որ Վանա դրախտի բնակիչների համար կյանքը կատարելապես անտանելի է դարձել: Լրտեսները վխտում են, ամենուրեք դավադրության հոտ են առնում և հաղորդում նահանգապետերին, իսկ քանի որ հայկական դավադրությունների բացահայտողն արժանանում էր պարգևների, Բիթլիսի վալին ինքն իր դեմ դավադրություն կազմակերպեց, ապա այդ «ապստամբությունը» ճնշեց և պարգևատրվեց շքանշանով»[1]:

Հայերին լրտեսելուն ու նրանց դավադրությունների բացահայտելուն այնքան կարևոր նշանակություն էր տրվում, որ շատ մահմեդականների համար դրանով զբաղվելը դարձավ եկամտի առատ աղբյուր: Երբ մահմեդականը ատելություն էր տածում որևէ հայի նկատմամբ, օգտագործում էր լրտեսներին ու խուզարկել տալիս նրա տունը: Եթե գտնեին հայրենասիրական բնույթի որևէ տող, տանտիրոջն անմիջապես պատժում էին: Իսկ եթե զենք պահելու կասկած կար, նրան ուղիղ բանտ էին նետում: Մուշ այցելելուց հետո Լինչը գրել էր, որ այդ

[1] Линч Г., Армения: Путевые очерки и этюды, Тифлис, 1910, с. 551.

քաղաքում իրենք ոչ միայն լրտեսվում էին, այլև զրկված էին զբոսնելու հնարավորությունից. «Ինչ ապօրինություններ էին գործել, որ ուզում էին թաքցնել: Մթնոլորտում տիրապետողը սարսափներից ամենասարսափելին էր»[1]:

Սուլթանական ռեժիմին ծառայեցնելու նպատակով հայերի դեմ գործում էր ամբողջական «իրավապահ» համակարգ, որը արևմտահայությանն ընդդիմանալու որևէ լծակ չէր թողել: Մասնավորապես, եթե դատարանում քրիստոնյայի ու մահմեդականի հարց էր լսվում, օբյեկտիվ դատավարություն լինել չէր կարող. Մահմեդականը մեղք էր համարում ի վնաս իսլամի վկայություն տալ քրիստոնյայի օգտին, իսկ հայը մահմեդականի դեմ ցուցմունք տալ չէր կարող, քանի որ դրան կհետևեին հալածանքներ, նրա դեմ կօգտագործվեին մահմեդականների կեղծ վկայությունները: «Դատական գործերի բոլոր քննությունները, բոլոր վկաների ցուցմունքները կեղծ էին: Ստում էին թե՛ ոստիկանները, թե՛ կոմիսարները, թե՛ ժանդարմները, թե՛ քննիչները, ստում էին մութեսարիֆներն ու վալիները, ստում էին նույնիսկ նախարարները»[2]:

Իշխանությունների նման վերաբերմունքը հայերին մղում էր դեպի հյուպատոսարաններ և դեսպանատներ, ինչն իր հերթին նրանց մի մասին նետում էր լրտեսական ծառայությունների ճանկը[3]:

---

[1] Նույն տեղում, էջ 518:
[2] Термен Р., Отчет, ч. 2, с. 61-62.
[3] Веселовский Ю., Трагедия Турецкой Армении, М., 1911, с. 25-26.

Այսպես՝ Մեծ Բրիտանիայի հետախուզությունն իր գործունեությունն իրականացնում էր Օսմանյան կայսրությունում դիվանագիտական ներկայացուցչությունների ծածկի ներքո՝ հյուպատոսությունների և դեսպանատան միջոցով: Բազմաթիվ փաստաթղթեր վկայում են այն մասին, որ այդ հյուպատոսներն ունեին մեծ թվով հայ իրազեկիչներ, որոնք տեղյակ էին պահում նրանց հայերի շրջանում կատարվող անցուդարձին: Նրանց ձեռքի տակ էին գտնվում շարժման ակտիվիստների անունները: Ավելին՝ Արևմտյան Հայաստանում գործող ամերիկյան միսիոներներից շատերը ևս անգլիական հետախուզության գործակալներն էին: Հայերը, վստահելով իրենց մտադրություններն ու ծրագրերը, հայտնում էին նրանց, իսկ վերջիններս այդ տեղեկատվությունը անմիջապես փոխանցում էին անգլիացիներին: Օրինակ՝ դեսպան Քլեյթոնը Թրոթթեինին գրել է. «Անցած շաբաթ օրը, 1880թ. նոյեմբերի 9-ին, ամերիկյան միսիոներ պարոն Բարնումն ինձ ասաց, որ Վանի հայկական միություններից մեկի անդամն իր օգնական քարոզիչներից մեկին գաղտնաբար ասել է, որ շարժում է ծավալվում զենք ձեռք բերելու և թուրքերի դեմ ապստամբելու համար, որ ռուսական կայսրը դա խրախուսում է և խոստացել է օգնություն ու ցանկություն է հայտնել, որպեսզի շարժումն սկսվի մինչև ձմռան վրա հասնելը: Ամերիկյան միսիոների մոտ աշխատող այդ հայը ասել է, որ հայերը կորցրել են իրենց հույսը, թե Եվրոպայից ու Անգլիայից որևէ բան չեն կարող

ստանալ, թե նրանց բոլորի հույսերը կենտրոնացած են Ռուսաստանի ուղղությամբ»[1]:

Մեծ Բրիտանիայի հետախուզությունը գաղտնի գործակալներ ուներ Օսմանյան կայսրության հայ-ազգի բարձրաստիճան պաշտոնյաներից: Մասնավորապես, 1881թ. դեկտեմբերի 6-ին Կ.Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան Դուֆֆերինը հայտնել է իր ղեկավարությանը, որ ինքը «խիստ գաղտնի ուղերձ է ստացել Օսմանյան կայսրության արտաքին գործերի քարտուղարի տեղակալ Արթին Էֆենդիից նրա իմացած տեղեկատվության մասին, որ սուլթանը որոշել է ոչինչ չանել հայկական բարենորոգումների ուղղությամբ»[2]:

Անկախ անգլո-թուրքական քաղաքական հարաբերություններից, որոնք հաճախ արտահայտվում էին իրավիճակային երկդիմի դրսևորումներով, Մեծ Բրիտանիայի և Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունները մշտապես համագործակցել են միմյանց հետ, ինչը նախատեսում է նաև ծպտյալ աղբյուրներից ձեռք բերած տեղեկատվության փոխանակում[3]:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ օսմանյան գաղտնի ծառայությունների համար հայ ազատագրական շարժման վերաբերյալ տեղեկատվական լուրջ աղբյուր էր հանդիսացել նաև բրիտանական հետախուզությունը: Այս հանգամանքը ևս իր դերը

---

[1] British documents…, էջ 150-154:

[2] Նույն տեղում:

[3] Хаджетлаше М., նշված աշխ., էջ 119-128:

խաղաց հայ հեղափոխականների գործունեության ձախողման ուղղությամբ սուլթանական գաղտնի ծառայությունների կողմից տարվող աշխատանքներում:

Հայ քաղաքական գործիչներն ակտիվ շփումների մեջ էին գտնվում երիտթուրքերի հետ: Ընդ որում, վերջիններիս նախաձեռնությամբ փորձեր էին արվում համատեղ ուժերով պայքար մղել սուլթանական վարչակարգի դեմ:

1902թ. Փարիզում կայացած երիտթուրքերի համագումարը որոշել էր ստեղծել խառը հանձնաժողով, որը պետք է մշակեր երիտթուրքերի և հայկական կազմակերպությունների համագործակցության եղանակները: Կայսրության ապակենտրոնացման, հայերի ինքնավարության մասին երիտթուրքական շարժման մի այլ թևի ղեկավար արքայազն Սապահեդդինի խոստումները հուսադրիչ էին, և հայոց կուսակցությունների ղեկավարները թուրքական ընդդիմադիր ուժերի հետ մերձենալու, համագործակցելու հնարավորություններից չէին խորշում: Ընդունված որոշումն առայժմ գործնական դեր չխաղաց: Սակայն հետագայում «Դրոշակ»-ը սկսեց գրել հայ և թուրք «երկու ազգությունների» հաշտության և անդորրության անհրաժեշտության մասին, որ նրանք ընդհանուր ջանքերով կընթանան դեպի բարձրագույն քաղաքակրթություն[1]: Այնուամենայնիվ, այդ շփումներում բացի դեկլարատիվ

[1] «Դրոշակ», 1898, թիվ 5:

հայտարարություններից երիտթուրքերը Հ.Յ. Դաշնակցությանը, մանավանդ ինքնավարության հարցում, զիջումների չէին գնում:

Հնչակյանները երիտթուրքերի պահանջները նույնացնում էին սուլթանական վարչակարգի քաղաքականության հետ: Արփիարյանի խոսքերով, երիտթուրքերը հնչակյաններին առաջարկել էին իրենց հետ միանալ և պահանջել էին ընդունել Միդհատի սահմանադրությունը, «…ընդ որում, մենք պետք է հայ ժողովրդի անունից հրաժարվեինք Հայաստանի ինքնավարությունից»[1]:

1893թ. սուլթանը լրջորեն մտահոգված էր երիտթուրքերի և հայերի միջև հնարավոր կապերի, համագործակցության խնդրով: Սակայն, երբ այս բանը հաստատող փաստեր չստացավ, առժամանակ իրեն ապահով զգաց, սահմանադրությունը վերահաստատելու գործում հայոց անտարբերության մեջ համոզվեց[2]:

Մինչդեռ երիտթուրքերը պատրաստում և տարածում էին բնակչության շրջանում հեղափոխական բնույթի թռուցիկներ և գրականություն՝ օգտագործելով նաև կայսրության իշխանությունների կողմից արևմտահայության հալածանքների գործոնը: 1900 թվականի ապրիլին Կ.Պոլսի զինվորական բժշկական ուսումնարանում 90 երիտասարդ ձերբակալվեց, որոնք բոլորն էլ դատապարտվեցին բանտարկության

---

[1] «Նոր կեանք», 1901, թիվ 9:

[2] «Նոր կեանք», 1898, թիվ 13:

ու աքսորի: «Ամենքն ալ առաջակարգ ընտանիքներու պատկանող, բարեկիրթ ու ուսյալ երիտասարդներ էին, զորս լրտեսները մատնած էին»[1]: «Երիտթուրքերը Յըլդրզ ոտք դրած են ու առաջին փորձ մը ըրեր են սուլթանը մեռցնելու համար»[2]:

Նույն ժամանակահատվածում սուլթանական գաղտնի ոստիկանությունը հրաման էր ստացել խուզարկություններ իրականացնել «Յըլդրզ»-ի բարձրաստիճան պաշտոնյա «Խ» փաշայի տանը և ձերբակալել նրա որդուն: Ոստիկանապետն իր 4 գործակալների ուղեկցությամբ, երբ մուտք գործեց «Խ» փաշայի բնակարան, նկատեց, որ երկու երիտասարդ զբաղված են Եգիպտոսում հրատարակված գրքույկների դասավորմամբ: Դրանցից մեկը տան տիրոջ որդին էր: «Նրանք, հանկարծակիի գալով, դեռ չէին հասցրել կողմնորոշվել, թե ինչումն է բանը, երբ ձեռքերն ու ոտքերը կապված հայտնվեցին գետնին»: Հատկանշական է, որ «Խ»-ի որդու վերաբերյալ տեղեկատվության արտահոսքի հիմք էր հանդիսացել հենց «Խ»-ի մտերմիկ զրույցը որոշ պալատականների հետ, երբ նա կատակով նշել էր, թե իր որդին առաջադեմ հայացքների տեր անձնավորություն է և հնարավոր է՝ երիտթուրքերի գաղտնի գործակալ[3]:

Գաղտնի ոստիկանության կողմից առգրավված գրքույկը կրում էր «Խորհուրդներ բժշկական դպրոց

---

[1] «Նոր կեանք», 1900, թիվ 9:

[2] «Նոր կեանք», 1900, թիվ 10:

[3] Хаджетлаше М., նշված աշխ., էջ 28-29:

ընդունվողների համար» վերնագիրը: Ոստիկանությունը զարմացած էր, որ նման վերնագրի բովանդակությունը կարող էր պարունակել ահաբեկչական բնույթի ոտնձգությունների կոչեր: «…և այս ամենը այն մռայլ ժամանակներում, երբ օսմանյան Թուրքիայում առանց թույլտվության շնչելն անգամ արգելված էր»[1]:

Գրքույկում նկարագրված էին կուսակալ Բահրի փաշայի կողմից Վանում կազմակերպված հայերի ջարդերը և ոստիկանապետի համար հետաքրքիրն այն էր, որ այս գրքույկում ամեն ինչ ճիշտ էր գրված: Միայն, թե Բահրին սուլթանից ստացել էր ոչ թե 5 հազար լիրա, այլ անհամեմատ ավելի շատ:

Վանի հայերի նկատմամբ Բահրիի կողմից կատարված դաժանությունների մասին նշվում էր ոստիկանության գործակալական հաղորդագրության մեջ. այդ դաժանությունները սարսափ էին առաջացրել անգամ նշված գործակալի մոտ: Վանում տեղի ունեցած իրադարձություններին չանդրադառնալու համար ոստիկանապետն իր վերադասի կարգադրությամբ Կ.Պոլիս ժամանած գերմանական հայտնի թերթի լրագրողին փոխանցել էր 3 հազար լիրա գումար, նույնքան գումար էլ փոխանցել էր այդ թերթի խմբագրին: «Մամուլը լռել էր, և հյուպատոսները մեկ ամսից ավելի իրենց դեսպաններին չէին

[1] Хаджетлаше М., նշված աշխ., էջ 28-29:

անհանգստացնում»[1]:

Սուլթանական իշխանությունները միջոցներ էին ձեռնարկել հայաջինջ գործողությունները համակարգելու և շարունակական դարձնելու համար: Մասնավորապես, ստեղծվել էր մի հանձնաժողով, որը պետք է զբաղվեր «հայերին ամենատարբեր միջոցներով քայքայելու և փոքրամասնություն դարձնելու խնդրով»[2]: Դրա գործունեության արդյունքում Վանի բանտերը լեփ-լեցուն էին հայերով: Ամեն օր գիշերը բանտախուց էին մտնում դատավորը, մյուլազըմը և երեք զափթիե՝ հայ հեղափոխականներից «խոստովանություններ» կորզելու համար: Բանտարկյալի ձեռքերն ու ոտքերը դնում էին փայտյա կաղապարի մեջ և աստիճանաբար կքում, որից «դժբախտը ծկլտում էր», ապա ուշաթափ էր լինում ու սկսում զառանցել: Ուշքի գալուց հետո շարունակում էին խոշտանգել, հալածում էին փայտով, օգտագործում շիկացած երկաթ, գլխիվայր կախում էին ու այդպես թողնում գնում[3]:

«Մենք պաշարման մեջ ենք …նույնիսկ թաղից թաղ ոչ ոք նամակ գրել չի կարող, որովհետև գաղտնի ոստիկանության անխիղճ պաշտոնատար անձինք, ժանդարմներն ու ոստիկանները աչքերը չորս արած հետևում են մեր ամեն քայլին, շարժմանը, խոսակցությանը և զենք փնտրելու պատրվակով

---

[1] Նույն տեղում, էջ 36:
[2] «Դրոշակ», 1893, թիվ 5:
[3] «Դրոշակ», 1893, թիվ 5:

հայերին խուզարկում են…»[1]:

Հայերի վրա կառավարության հսկողությունն ու խստությունները կրկնապատկվել էին: Բոլոր գյուղերում լրտեսներ ու ոստիկաններ էին պահում: Պաշարման վիճակն ավելի իրական ու խիստ էր դարձել, արգելված էր քաղաք ելք ու մուտք ունենալ, արգելված էր նաև արտագնա աշխատանքը: Պոլսից տեղական իշխանություններին հրահանգ էր ուղարկվել «լրտեսների աշխատավարձի գումարներն ավելացնել գանձվող հարկերի վրա …քանի որ լրտեսները հայերի համար են և հարկ է, որ նրանց աշխատավարձը հայերը վճարեն»[2]:

Սասունում ձևավորված հայդուկային շարժումը Օսմանյան կայսրության համար լուրջ սպառնալիք էր: Կայսրության գաղտնի ծառայությունների գործակալների և իրազեկիչների բացահայտման ու պատժելու նպատակով հայ ֆիդայիներն հաճախ էին դիմում ահաբեկչական բնույթի գործողությունների: Հայտնի է, որ Դուրան-Բարձրավանդակի տարածքում գործում էին բազմաթիվ գործակալներ, որոնք, հետևելով ֆիդայիների տեղաշարժերին, գաղտնի ծառայություններին անմիջապես հայտնում էին նրանց գտնվելու վայրի մասին: Գործակալների ու մատնիչների առկայությունը մեծ լարվածություն էր ստեղծում նաև հայ բնակչության շրջանում: Վախենալով մատնություններից և, հետևաբար, իշխանությունների կողմից կիրառվող պատ-

[1] Термен Р., Отчет, ч.2, с. 85-89.
[2] «Հնչակ», 1891, թիվ 2:

ժիչ գործողություններից՝ ժողովուրդը խուսափում էր ֆիդայիների հետ հարաբերվելուց: Գևորգ Չավուշը գրում էր. «Թե՛ Դաշտի և թե՛ Սասնոյ ժողովուրդը վերին աստիճան հուսահատ էր, հանգստություն չունեինք երբեք, մատնիչները շատացել էին, անկարելի բան՝ երկու օր շարունակ մի տան մեջ մնալ: Ժողովուրդն ալ չէր ընդունում մեզ»[1]:

Գործակալների մատնությամբ սպանվել էր հայդուկապետ Աղբյուր Սերոբը: «Ապրիլ ամսուն Գևորգը քանի մը ընկերներով կերթա ուղղակի թունավորող Գեղաշենի Ավոյի տունը և սպառնալիքով խոստովանություն կը կորզե անկե: Կը բացահայտվի դավաճանների ամբողջ ցանցը: Ատկե վերջն է, որ Գևորգ անխնայորեն կը կոտորե բոլոր անոնք, որոնք որևէ ձևով մասնակցել են դավաճանական գործի: Կը քանդե ամբողջությամբ Ավոյի տունը և բնաջինջ կընէ իր ընտանիքի հետ միասին»[2]:

1894թ. ապրիլին Մեծ Բրիտանիայի դեսպանի Լոնդոն հղած հեռագրից տեղեկանում ենք, որ Յուզդաթում 50 հայ է ձերբակալվել, որոնք դատապարտվել են մահվան՝ հեղափոխական բնույթի թռուցիկներ տարածելու համար: Թռուցիկներում կոչ էր արվում ընդհանուր պայքար կազմակերպել երկրում տիրող սոցիալական և քաղաքական անարդարությունների, անօրինականությունների, կաշառակերության և բռնությունների դեմ: Տրապիզոնում Մեծ

---

[1] «Դրոշակ», 1914, թիվ 9-12, էջ 15:

[2] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 3, էջ 215:

Բրիտանիայի հյուպատոսն այս ամենի մասին 1894թ. մարտի 31-ին հաղորդել է դեսպանին, որ իր ունեցած տեղեկությունների համաձայն՝ այդ թռուցիկները, որոնց տակ դրվում էր «Կենտրոնական կոմիտեի պրեզիդենտ» ստորագրությունը, գրում էին թուրքական գործակալները՝ նպատակ ունենալով օգտագործել դրանք հայերի դեմ բռնություններն արդարացնելու համար: Որպես օրինակ հիշատակվում էր հետևյալ փաստը. «Երկու հայ, համաձայն պայմանավորվածության, գնացել են մի թուրքի տուն: Այնտեղ նրանք հանդիպել են մի այլ թուրքի: Վերջինս թռուցիկներ է գրել և հանձնել ներկա գտնվող հայերին, որոնք դրանք փակցրել են պատերին»: Մեկ այլ հաղորդագրության մեջ նույն դեսպանը նշում է, որ «Ամասիայի թուրքական տներում թռուցիկներ են բաշխվել, որ դրանք արել են թուրքերը: Թռուցիկը նման չէ մյուս թռուցիկներին, բայց ավելի վիրավորական է սուլթանի համար»[1]:

Այստեղ հարցը նրանում չէ, որ թռուցիկները տարածել են երկու հայ. վերջիններս միանշանակ համագործակցել են սուլթանական գաղտնի ծառայությունների հետ: Գլխավորն այն էր, որ, օգտագործելով նշված դրվագը որպես պատրվակ, է՛լ ավելի սաստկացան հայերի նկատմամբ ճնշումները:

Դրանք արտահայտվեցին գաղտնի ծառայությունների կողմից թուրք-հայկական ընդհարումների հրահրման ձևով, և, որպես կանոն, մեղքը բարդելով

[1] Տես՝ British documents…, vol. 3, էջ 346:

հայերի վրա: Մասնավորապես, այդ ընդհարումների ժամանակ սպանվում և վիրավորվում էին մեծ մասամբ հայեր, ողջ մնացածները նետվում էին բանտ:

Բրիտանական գործակալների հաղորդագրություններում նշվում էր, որ տեղի ունեցած թուրք-հայկական ընդհարումների ժամանակ սպանվել են 12 և վիրավորվել 250 հայ: Կառավարության կարգադրությամբ ձերբակալվել էին մի շարք հայեր, մինչդեռ ոչ մի քայլ չէր ձեռնարկվել ընդդեմ մահմեդական խաժամուժի, որոնք մտել էին կռվի մեջ[1]:

Այս համալիր միջոցառման պլանավորման և իրացման ժամանակ թուրքական հետախուզությունը, ապահովելով միջոցառման ամբողջականությունը, ձեռնարկել էր քայլեր հասարակական կարծիքի ձևավորման ուղղությամբ: Թուրքական մամուլը սկսեց հոդվածներ տպագրել հայկական «գաղտնի կոմիտեների» գործունեության վերաբերյալ, որոնք «գրգռում էին հայերին ապստամբելու կառավարության դեմ՝ անկախ հայկական պետություն ստեղծելու համար», - գրում էր «Levant Herald» թերթը հոկտեմբերի 21-ի համարում՝ հենվելով թուրքական մամուլի վրա[2]:

Այսպիսով՝ հակահայկական գործողություններ իրականացնելիս չափազանց մեծ էր օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների հենքը հանդիսացող ծպտյալ գործակալների դերն ու նշանակությունը: Նրանց միջոցով էր իրակա-

---

[1] Նույն տեղում, էջ 693, 694:

[2] Նույն տեղում, էջ 718:

նացվում թե՛ անհրաժեշտ տեղեկատվության ձեռք բերումը, թե՛ սադրիչ գործողությունների կազմակերպումն ու իրացումը և թե՛ հասարակական կարծիքի ձևավորումը՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ արևմտահայության նկատմամբ պատժիչ գործողություններ իրականացնելու համար:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

«ՀԱՏՈՒԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

3.1. «Հատուկ կազմակերպության» դերն ու նշանակությունը Հայոց մեծ եղեռնի իրականացման գործում

Առաջին հակահայկական ցեղասպանական բնույթի ծրագիրը մշակվեց 19-րդ դարի 90-ականների կեսերին՝ Աբդուլ Համիդի կառավարման օրոք: Դրա իրականացումը հանգեցրեց Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչության զանգվածային կոտորածների, որոնց զոհ գնացին շուրջ 300 հազար մարդ:

1908թ. երիտթուրքերը, գալով իշխանության և շարունակելով Աբդուլ Համիդի ցեղասպան քաղաքականությունը, ընտրեցին արևմտահայությանն իսպառ բնաջնջելու ճանապարհը: Նրանց հանցավոր մտահղացման առաջին դրսևորումը դեռևս 1909թ. ապրիլին, մասնավորապես, Կիլիկիայում և Ադանայում իրագործված հայերի կոտորածն էր: Երիտթուրքական կառավարման օրոք հայերի

բնաջնջման հարցը ծրագրի վերածվեց Բալկանյան պատերազմից անմիջապես հետո: Ծրագիրը քննարկվել էր երիտթուրքերի գաղտնի ժողովների ընթացքում, որոնք կայացել էին 1914թ. մայիսին, հունիսին և օգոստոսին[1], և որպես փաստաթուղթ այն հետազոտողների կարծիքով թվագրվում է մոտավորապես 1914թ. դեկտեմբեր - 1915թ. հունվար ամիսներով (փաստաթղթի վրա ամիս, ամսաթիվ, տարեթիվ չկա): Բնաջնջման ծրագիրը ստորագրել էին Իթթիհատի հինգ գործիչներ՝ Թալեաթ, Բ. Շաքիր, Նազըմ, Ջանփոլադ, գնդապետ Սեյֆի[2]:

Առաջին համաշխարհային պատերազմը պատեհ առիթ դարձավ, որպեսզի արևմտահայությունը ենթարկվի ամենադաժան հալածանքների և ֆիզիկական ոչնչացման: Մեծ եղեռնին անցնելու առաջին ազդանշանը 1914թ. հունվարին սկսված հայ պաշտոնյաների պաշտոնանկությունն էր, որին հաջորդեց հայերի զինաթափումը: Հայոց ցեղասպանության երիտթուրքական ծրագրի իրականացման կարևոր մեխանիզմներից էր «Թեշքիլաթ-ը մահուսա»-ն (Հատուկ կազմակերպությունը), որը պաշտոնապես գործում էր Ռազմական նախարարության կազմում, բայց այդ կազմակերպության Արևելյան վիլայեթների բաժանմունքը, որն անմիջականորեն

---

[1] Գուստ Վ., Հայերի ցեղասպանությունը աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը, Եր., 2002, էջ 235:

[2] Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի. ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Եր., 2009թ. էջ 171:

իրականացնում էր հայ բնակչության տեղահանությունն ու ոչնչացումը, ենթարկվում էր Իթթիհատի Կենտրոնական կոմիտեին և ղեկավարվում այդ կոմիտեի անդամ դոկտոր Բեհաեդդին Շաքիրի կողմից:

Պատմագրության մեջ «Թեշքիլաթ-ը մահուսա»-ի ստեղծման ժամանակի վերաբերյալ չկա միանշանակ կարծիք: Թուրք և արտասահմանցի տարբեր հետազոտողներ տարաբնույթ կարծիքներ են հայտնում այս հարցի կապակցությամբ[1]:

«Միություն և առաջադիմություն» Կենտրոնական կոմիտեի «ֆիդայիների կազմակերպությունը» այն հենքն էր, որի վրա կազմավորվեց «Թեշքիլաթ-ը մահուսան»: «Ֆիդայիների կազմակերպությունը» կազմավորվեց անմիջապես Իթթիհատի կենտրոնի ստեղծմանը զուգահեռ՝ 1906թ. Սալոնիկում և գործում էր բացառապես Իթթիհատի Կենտկոմի հրամաններով: Այն սկզբում ձևավորվեց որպես բանակային դիվերսիոն կառույց և գործեց Բալկանյան պատերազմներում: Այդ կազմակերպությունը համալրվեց մարդկանցով, ովքեր «պատրաստ էին իրենց կյանքը զոհաբերել հանուն Հասարակության սուրբ նպատակների»: Այնտեղ գործում էին խստագույն կարգապահական կանոններ: Կազմակերպության անդամները պարտավոր էին անհապաղ կատարել տրված հանձնարարությունները, հակա-

[1] Տե՛ս Авакян А., Геноцид армян: механизмы принятия и исполнения решений, Ереван,2013, с. 93-96.

ռակ դեպքում՝ 24 ժամվա ընթացքում նրանք կենթարկվեին պատժի: Իր գոյության ընթացքում թուրք ֆիդայիները իրականացրել են մի շարք հանցագործություններ և քաղաքական բնույթի սպանություններ: Օրինակ՝ 1909թ. ապրիլից մինչև 1911թ. հուլիսը Կենտկոմի որոշումով թուրք ֆիդայիներն իրագործել են երեք ընդդիմադիր խմբագիրների սպանություններ՝ Հասան Ֆեհմի, Ահմեդ Սամիմի և Զեքիի[1]: Հիմնվելով որոշ փաստերի վրա՝ կարելի է նշել, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, 1909թ. Ադանայի դեպքերի հետաքննության հանձնաժողովի նախագահ, Հակոբ Պապիկյանի վաղաժամ մահը ևս անմիջականորեն կապված է թուրք ֆիդայիների հետ[2]:

Կայսրությունում Իթթիհատի բռնապետության հաստատմամբ Կենտկոմի առջև ծառացած խնդիրների լուծման համար ծագել էր ֆիդայիների քանակի ու լիազորությունների ընդլայնման անհրաժեշտություն: Կարիք կար նաև, որ այդ կառույցը գործեր կայսրության սահմաններից դուրս կամ այն հատվածներում (Լիբիա, Բալկանյան թերակղզու որոշ շրջաններ), որոնք անջատվել էին կայսրությունից: Հաշվի առնելով, որ 1913թ. երիտթուրքական կուսակցության կողմից մշակվել էր քրիստոնյա տարրի ոչնչացման մանրակրկիտ ծրագիր՝ հարկավոր էր այնպիսի կազմակերպություն, որն ի վիճակի

[1] Նույն տեղում, էջ 97:

[2] Авакян А., նշված աշխ., էջ 97:

կլիներ ստանձնել դրա իրագործումը:

Այսպիսով, «ֆիդայիների կազմակերպությունը», վերափոխվելով կամ վերանվանվելով «Հատուկ կազմակերպություն», ունեցավ երկու թև՝ ռազմական և քաղաքացիական: Ռազմական թևը գտնվում էր Էնվերի ենթակայության ներքո և ներքաշված էր Եգիպտոսում, Կովկասում և արաբական անապատներում տարատեսակ արկածախնդիր գործերում, իսկ քաղացիական թևը ղեկավարում էր հայերի, հույների և ասորիների տեղահանումը և բնաջնջումը[1]:

Ռազմական թևը ստեղծվել է Թուրքիայի ռազմական նախարարության հրամանով, որի ղեկավարն է եղել Սուլեյման Ասքերի բեյը: Հետագայում երիտթուրքերի դատավարության ժամանակ մեղադրյալ Արիֆ բեյի (Անկարայի նախկին պատգամավոր, «Հատուկ կազմակերպության» անդամ) հարցաքննությամբ պարզվել է, որ Բալկանյան պատերազմի վերջերին Սուլեյման Ասքերի բեյը ծառայում էր Արևմտյան Թուրքիայում և երբ ընդհանուր զորահավաք հայտարարվեց, ռազմական նախարարության միջոցով վերը նշված Արիֆը, Ազիզ բեյը (Թուրքիայի հասարակական անվտագության տնօրեն), «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամներ դոկտոր Նազիմ բեյը և Սուլեյման Ասքերը կազմավորեցին «Թեշքիլաթ-ը մահուսա»-ն[2]:

---

[1] Նույն տեղում, էջ 100:

[2] Փափազյան Ա. Հ., Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Եր., 1989, էջ 63-65:

Կազմակերպության խնդիրներից էր նաև կովկասյան մահմեդական ժողովուրդների մեջ Ռուսաստանի դեմ խռովություն սերմանելու նպատակով հավաքագրել Կովկասի տարածքին ծանոթ, տեղի ժողովուրդների լեզուներին տիրապետող մարդկանց և խմբերով գաղտնի ուղարկել սահմանից այն կողմ: Հատկանշական է, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, Թեշքիլաթի Տրապիզոնի մասնաճյուղի ներկայացուցիչ Ռիզա բեյի ցուցմունքով, երբ Առաջին համաշխարհային պատերազմը սկսվեց, հետախուզական բնույթի խնդիրները լուծելու համար վերջինիս տրամադրության տակ կար 3000 վրացի[1] :

«Թեշքիլաթ-ը մահուսան» դարձավ հայաջինջ քաղաքականության ծնած ամենահզոր գործիքը:

1914թ. հուլիսի 21-ին զորակոչից անմիջապես հետո երիտթուրքերի կենտրոնական կոմիտեն ձեռնամուխ եղավ «Թեշքիլաթ-ը մահուսա»-ի հրոսակախմբերի ձևավորմանը, որոնց կազմում ընդգրկվեցին ներքին գործերի և արդարադատության նախարարությունների հրահանգով ազատ արձակված դատապարտյալ ոճրագործները, որոնք չէին ընդունվել ռազմական նախարարությունից կախում ունեցող Թեշքիլաթի մեջ: Բանտերից ոճրագործներին ազատ արձակելու ժամանակ կուսակցությունը հանրային կարծիքը մոլորեցնելու համար լուրեր տարածեց, թե բանտերից արձակված ոճրագործ-

[1] Փափազյան Ա. Հ., նշված աշխ., էջ 64:

ները պիտի օգտագործվեն պատերազմի ճակատում, մինչդեռ իրականությունն այն էր, որ նրանք ուղարկվեցին նախապես որոշված ջարդավայրեր՝ հայերի քարավանները կոտորելու և կողոպտելու համար[1]:

Թեշքիլաթի քաղաքացիական թևը գտնվում էր ԿԿ անմիջական ղեկավարության ներքո և Բեհաէդդին Շաքիրի գլխավորությամբ իրագործում էր նախապես ծրագրված հայաջինջ քաղաքականությունը:

Հայերի տեղահանության և ոչնչացման կազմակերպման համար նախատեսված կառույցը բաղկացած էր չորս խմբից՝

- չեթեների ջոկատներից, որոնք բանտերից ազատված հանցագործներն էին: Թուրքիայի բանակի հրամանատարության անունից 1915թ. «Հատուկ կազմակերպությանն» ուղղված փաստաթղթի 2-րդ և 3-րդ կետերը վկայում են, որ «…հատուկ ծառայության շարքերը համալրելու նպատակով ազատ են արձակվել 2267 բանտարկյալներ ու դատապարտվածներ, հատուկ նպատակի գործադրման համար կազմակերպվող 531 հոգանոց ջոկատը անհրաժեշտ է համալրել և ուղարկել նշված վայրեր»[2].

- ժանդարմներից և զավառական ոստիկանությունից (85 հազար հոգի): Ռազմական դատարանները նրանց բնութագրեցին որպես «ժանդարմների,

---

[1] Գրիկեր, Եոզղատի հայասպանության վավերագրական պատմություն, Նյու-Յորք, 1980, էջ 263:

[2] Փափազյան Ա., նշված աշխ., էջ 62:

ովքեր ենթարկվել էին Հատուկ կազմակերպության ուժերին… և որոնք հայերի նկատմամբ հարձակումներ և զազրելի գործեր են իրականացրել».

- քրդական ցեղերից: Երիտթուրքերը ոչ միայն արձակեցին քրդերի ձեռքերը, այլ նրանց կազմակերպեցին, զինեցին ու գրոհի ուղարկեցին հայ անզեն բնակչության վրա: Արևմտյան Հայաստանի վիլայեթներում հարկեր հավաքելու և դասալիքներին հետապնդելու պատրվակով գյուղերի վրա հարձակումներ տեղի ունեցան, կատարվում էր թալան ու սպանություններ: Այս գործողություններում գլխավոր դերը վերապահված էր քրդական համիդիե գնդերին, որոնք երիտթուրքական կառավարության օրոք վերանվանվեցին որպես «թեթև հեծելազորային ջոկատներ»[1].

- Բալկաններից և Կովկասից եկած փախստականներից, որոնք բանտերից ազատ արձակված հանցագործների հետ մարտական պատրաստություն էին ստանում ռազմական նախարարության վերահսկողության ներքո[2]:

Կազմակերպչական առումով «Հատուկ կազմակերպությունն» ուներ հետևյալ կառուցվածքը. կենտրոնը գտնվում էր Ստամբուլում, ուներ չորս բաժանմունք, որոնք առանձին խնդիրների լուծման առումով ինքնուրույն էին, սակայն ենթարկվում էին կենտրոնին:

---

[1] Акчам Т., Турецкая национальная «Я» и Армянский вопрос, М., 1995г., с. 90.

[2] «Բնօրրան», 1995թ., թիվ 1, էջ 91, 92:

«Հատուկ կազմակերպության» գործակալների թվում կային բժիշկներ, ինժեներներ, լրագրողներ, մոլլաներ, դերվիշներ:

Կազմակերպության քանակական կազմը փոփոխվում էր՝ կախված առաջադրված և լուծվող խնդիրներից: Հայոց ցեղասպանության տարիներին, մասնավորապես 1916թ. դրա թվաքանակը 30.000 մարդ էր[1]:

1915-16թթ. Մեծ Եղեռնի ժամանակ «Թեշքիլաթը մահսուսա»-ի գործունեության գլխավոր նպատակը «Տեղահանության մասին» օրենքի կիրառումն էր՝ հայերի բնաջնջման եղանակով:

Երիտթուրքերի Կենտկոմը «Հատուկ կազմակերպության» տեղական ստորաբաժանումներին և Իթթիհատի ակումբներին հրահանգել էր. «Նկատի ունենալ, որ հայկական կոմիտեները ռումբեր և ատրճանակներ են պահում (զինամթերքի մի մասը գտնվել է Սիրիայում և Սեբաստիայում), ստեղծել են կամավորական գնդեր, մեծ մասամբ կազմված թուրքահայերից, հետապնդում են երկիրն ասպատակելու նպատակ և ծրագրում են թիկունքից հարվածել թուրքական բանակին: Այդ ամենի մասին նյութեր են հայտնաբերվել նրանց կազմակերպություններում և հրատարակչություններում: …նախապատրաստական միջոցառումներից հետո անմիջապես փակել նահանգներում գործող դաշնակ, հնչակ և նույնանման կոմիտեների կենտրոնները: Այդ կո-

[1] Авакян А., նշված աշխ., էջ 102:

միտեներում հայտնաբերված փաստաթղթերը բռնագրավել՝ թույլ չտալով, որ դրանք ոչնչացվեն: Կոմիտեների բոլոր գործող ղեկավարներին ու անդամներին, որոնք կառավարության համար վտանգավոր և վնասակար են, պետք է անմիջապես ձերբակալել»[1]:

«Հատուկ կազմակերպությունը» առանձնահատուկ իրավունքներով օժտված մարմին էր, որը ոչ միայն պետք է կատարեր ցեղասպանների հրամանները, այլև պատժեր այդ հրամանները կատարելուց խուսափող, թերացող կամ խղճահարություն ցուցաբերող պաշտոնյաներին: Կազմակերպությունը օգտվում էր լիակատար արտոնություններից և կարող էր հաշվեհարդարի ենթարկել նույնիսկ բարձր պաշտոնյաներին: Թալեաթը հեռագրով տեղական իշխանություններին հանձնարարեց հայերին պաշտպանող քրիստոնյաներին և նրանց հետ համագործակցող մահմեդականներին հանձնել ռազմական դատարան[2]:

Այդ հանգամանքով էր պայմանավորված, որ վալիները պարտադիր կերպով պետք է աջակցեին «Հատուկ կազմակերպության» առջև դրված խնդիրների լուծմանը, հակառակ դեպքում վերջիններս կամ նրանց ենթակաները ազատվում էին զբաղեցրած պաշտոններից կամ ոչնչացվում: Երիտթուրքերի դատավարության ժամանակ քաղաքացիական

---

[1] Տիգրանյան Տ., Թալեաթի ծածկագիր հեռագրերը անգլիական արխիվներում, «Ալիք», 28.10.1985:

[2] Авакян А., Геноцид 1915 г., с. 45.

հետաքննության հանձնաժողովի տնօրեն Համիդ բեյի կողմից տրված ցուցմունքի համաձայն՝ Անկարայի վալի Մազհար բեյը հեռացվել է պաշտոնից, իսկ Դիարբեքիրի վալին ոչնչացրել է իր երկու կայմակամներին այն բանի համար, որ նրանք դեմ են եղել հայերի տեղահանությանը, ինչպես նաև արաբների դեմ գործադրվող բռնություններին և սպանություններին[1]:

«Հատուկ կազմակերպությունը» առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում հավաստի տեղեկատվության ապահովմանը: Ստեղծված գործակալական ցանցի միջոցով կառույցի ղեկավարությունը կարողացել է տիրապետել իրավիճակին, գնահատել այն և գործել համակարգված: Այս առումով վերջինս գործակալական ցանցի ստեղծման ու համալրման հարցում ցուցաբերել է բավական բարձր հմտություններ և ունակություններ: Մասնավորապես, Տրապիզոնում տեղահանության և կոտորածի վերաբերյալ դատավարության նյութերը թույլ են տալիս պատկերացում կազմել Թեշքիլաթի գործակալական ցանցի կառուցվածքի, ինչպես նաև գաղտնի աշխատանքում ներգրավելու առանձնահատկությունների մասին: Այսպես՝ Տրապիզոնի վալի Ջեմալ Ազմի բեյը «… օգտագործել է Մեհմեդ Ալիին, նկատի ունենալով, որ նա սերտորեն առնչություն ունի լքյալ գույքի, ռազմական արտակարգ հարկային պաշտոնյաների, ռազմական շի-

[1] Փափազյան Ա., նշված աշխ., էջ 47:

նությունների, կապի հանձնաժողովների, զինվորական, հեռախոսային և անձնագրերի ստուգման տեսուչների, ինչպես նաև Կարմիր մահիկի հիվանդանոցի և Կանանց ընկերության հետ»[1]: Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնել, որ Ջեմալ Ազմին Թեշքիլաթի համակարգում գործել է ռեզիդենտի կարգավիճակով, իսկ Մեհմեդ Ալին՝ լայն օպերատիվ հնարավորություններով օժտված գործակալի: Նշված դատավարության նյութերի համաձայն՝ որպես մեղադրյալ հանդես է եկել Տրապիզոնի գաղտնի գործակալության տեսուչ Մուստաֆա էֆենդին, որն էլ, ղեկավարելով ռեզիդենտի և գործակալի աշխատանքները, ուղղակիորեն կազմակերպել է Տրապիզոնի հայերի տեղահանումն ու կոտորածը:

«Հատուկ կազմակերպությունը» առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում, որ հակառակորդի շարքերում ունենա հուսալի տեղեկատվության աղբյուր: Պատահական չէր, որ Բ. Շաքիրը, գտնվելով պաշտոնական հարաբերությունների մեջ ՀՅԴ ղեկավարության հետ, վերջինիս կողմից 1914թ. սեպտեմբերին Էրզրումում կազմակերպված 8-րդ համագումարում գործակալ ուներ և մանրամասն տեղեկություններ էր ստանում այնտեղ կատարվածի մասին, մանավանդ, որ համագումարի մասնակիցները գործում էին անզգույշ՝ նիստերն ավարտելուց հետո իբր թաքուն հավաքվում էին ռուսական

[1] Նույն տեղում, էջ 167, 168:

հյուպատոսությունում, որտեղ կայացած քննարկումների մասին նույնպես Բ. Շաքիրը մանրամասն տեղեկություններ էր ստանում[1]:

Այսպիսով՝ դեռ Առաջին համաշխարհային պատերազմի նախաշեմին երիտթուրքերի ցեղասպան ծրագրի, դրա իրագործման համակարգված միջոցների, ձևերի ու մեթոդների առկայության պայմաններում արևմտահայությունն անորոշության մեջ էր. չուներ գործողության, վարքագծի ծրագիր ու կողմնորոշում, ինչը և հեշտացրեց թուրք ջարդարարների ծրագրերի իրականացումը:

Հայկական հեղափոխական կուսակցությունների ռազմիկների մարտավարության մասին անուղղակիորեն ուշագրավ տեղեկություններ է հայտնում Վանի դահիճներից Էնվեր փաշայի բարեկամ, հետագայում բոլշևիկյան-քեմալական շփումների կարևոր մասնակից Հալիլ փաշան (Հալիլ Կուտ): Իր հուշերում վերջինս նկարագրում է, թե ինչպես 1919թ. երիտթուրք մի այլ պարագլուխի՝ Քյուչուք Թալեաթի հետ Ստամբուլից Անատոլիա փախչելիս Բիլեջիք քաղաքից որոշ հեռավորության վրա նրանք ընկնում են զինված հրոսակախմբի ձեռքը, որոնց ներկայանում են որպես թուրքական բանակի զինվորներ, որոնք գնում են Ադաբազար[2]: Սակայն փախստական զինվորներից կազմված հրոսակախումբի ղեկավար սերժանտը չի հավատում նրանց

---

[1] Teskilati Harpte Teskilati Mahsusa. «Vakit», 15-17, 11, 1933.

[2] Տե՛ս Halil Pasha, Ittihat ve Terakki`den Gumhuriyete Bitmiyen Savas, Istanbul, 1997, s. 290.

և պնդում է, որ նրանք ոչ թե զինվորներ են, այլ հայեր, ինչին Թալեաթը պատասխանում է. «Ինձ նայիր, հային մահմեդականից տարբերող տեղը գիտես, եթե ուզում ես տես և համոզվիր»: Սակայն սերժանտը հակադրվում է՝ ասելով. «Հայկական կոմիտեների անդամները նույնպես թուրքերի ծուղակը ընկնելուց փրկվելու համար թլպատվում են»[1]:

Այս ուշագրավ դրվագը ցույց է տալիս, որ հայ հեղափոխականներն իրենց պայքարի արդյունավետության համար չէին խորշում նաև նման կարգի մարտավարական հնարքների դիմելուց՝ փորձելով մոլորեցնել նրանց հետապնդող ժանդարմներին[2]:

Արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի թույլ կողմերից էր այն կառույցի բացակայությունը, որը պետք է զբաղվեր անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերմամբ, ստուգմամբ, մշակմամբ և իրացմամբ: Թուրքիայի հատուկ ծառայությունների կողմից իրականացված քայքայիչ գործունեությանը հակազդելու մեխանիզմների բացակա-

---

[1] Նույն տեղում:

[2] Նմանատիպ դրվագների կարելի է հանդիպել նաև հայ գրականության էջերում: Մասնավորապես, Ռաֆֆու կերտած հայազգի կերպարներից մեկը, հայտնվելով մահմեդականներով բնակեցված թաղամասում, հմտորեն օգտագործում է կերպարանափոխության և հավատափոխության հնարքը, համոզիչ կերպով ներկայանալով մահմեդական, կարողանում է ցրտից ու անձրևից պատսպարվել մահմեդականի տանը. «Նրա թե՛ արտասանության և թե՛ բառերի դարձվածքների մեջ չէր կարելի նկատել, որ նա հայ է. նա խոսում էր ավելի լավ, քան թե մի թուրք»: Ռաֆֆի, Խաչագողի հիշատակարանը, Եր., 1981, էջ 66:

յության պայմաններում հայ ազատագրական շարժման ղեկավարները չէին տիրապետում հավաստի տեղեկությունների և արագ փոփոխվող իրավիճակին:

Հատուկ կազմակերպության պարագայում կարևոր նշանակություն ուներ նաև այն փաստը, որ, բացի իր միջոցներով և գործակալական ցանցի շնորհիվ հայ ազգային կուսակցությունների մասին ձեռք բերված տեղեկությունների, նա օգտվում էր նաև ներքին գործերի նախարարության տեղեկություններից և հավաքած նյութերից:

Օսմանյան արխիվի Ներքին գործերի նախարարության քաղաքական բաժնի (DH SYS) ֆոնդի 65-րդ թղթապանակը[1], որը վերնագրված է «Դաշնակցություն և Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցությունների մասին» թույլ է տալիս պատկերացում կազմել գաղտնի ոստիկանության աշխատանքի և հայ ազգային կուսակցություններին հետևելու մեթոդների մասին:

Նախ՝ կուսակցությունների և պետական կառույցների միջև ամբողջ նամակագրությունը պարտադիր անցնում և վերահսկվում էր Ներքին գործերի նախարարության կողմից: Առանց Ներքին գործերի նախարարության կարծիքի և թույլտվության վիլայեթներում կուսակցությունների մասնաճյուղերի հետ կապված որևէ հարց, նույնիսկ աննշան կազմակերպչական բնույթի, չէր լուծվում: Այսպես 1909թ. Իզմիթի կուսակալությունից Ներքին

[1] BOA, DH. SYS, dosya 65, vesika 2, s. 5.

գործերի նախարարություն ուղարկված հարցման մեջ ասվում էր, որ «Ստամբուլում Դաշնակցության և Ս.Դ. Հնչակյան կուսակցության կենտրոնական կոմիտեները պաշտոնապես ճանաչվել են, սակայն գավառներում այդ կուսակցությունների մասնաճյուղերի գրանցման վերաբերյալ դեռևս որևէ հրահանգ չի տրվել» և անհասկանալի է, թե վիլայեթների իշխանությունները ինչպես պետք է գործեն այդ հարցում[1]: Այնուհետև հրահանգ էր խնդրվում[2]:

Այս փաստաթուղթն ուշագրավ է այն առումով, որ ցույց է տալիս, որ նույնիսկ օրենքի ընդունումից հետո երիտթուրքական կառավարությունը չէր շտապում օրինականացնել գավառներում գործող կուսակցական մասնաճյուղերը՝ նրանց գործունեությունը վտանգավոր համարելով:

Ներքին գործերի նախարարության թղթապանակում աչքի են ընկնում նաև տարբեր կուսակցական գործիչների նկատմամբ հավաքված մանրակրկիտ տեղեկությունները, նույնիսկ նրանց անձնական կյանքի վերաբերյալ հետախուզական բնույթի նյութերը, որոնք կարելի էր օգտագործել այդ գործիչներին վարկաբեկելու և հավաքագրելու համար: Այսպես, օրինակ, Մամուրեթ-ուլ-Ազիզ վիլայեթի վալի Մեհմեդ Ալին 1909թ. ապրիլի 13-ին գրված նամակում նշում է, որ «վիլայեթի Դաշնակցության կոմիտեի նախագահ դոկտոր Ասատուրը մեղադրվում

[1] BOA, DH. SYS, dosya 65, vesika 2, s. 6.

[2] Նույն տեղում:

է և ձերբակալվել է գերմանական որբանոցում գտնվող մի երիտասարդ հայ աղջկա բռնաբարության համար»[1]: Այնուհետև նա տեղեկացնում է, որ խնդրի կապակցությամբ հայերը բաժանվել են երկու մասի՝ մեկ մասը չի հավատում դոկտոր Ասատուրի մեղավոր լինելու մեջ, մյուսը՝ հակառակը: Նամակից երևում է, որ թուրքական իշխանությունները հատուկ հրահրում և օգտագործում էին այս խնդիրը հայերի մեջ պառակտման ուժեղացման և կուսակցության թուլացման նպատակով[2]:

Առանձին ուշադրություն էր դարձվում կուսակցությունների հայտարարություններին և տարածվող թռուցիկներին, որոնք հատուկ ուսումնասիրվում էին «օսմանյան հայրենիքին վնաս հասցնելու կամ հեղափոխական տրամադրություններ արթնացնելու» տեսակետից[3]: Որպես պաշտոնական հիմնավորում ծառայում էր այդ թռուցիկների և կոչերի՝ կուսակցությունների մասին օրենքի 4-րդ հոդվածին համապատասխանության ստուգումը[4]:

Այսպիսով, Հատուկ կազմակերպությունը ֆիդայական գործելաոճի հետ մեկտեղ, իր մեջ յուրացրել էր նաև թուրքական գաղտնի ոստիկանության մեթոդներն ու հայ ազգային կուսակցություններին հետևելու հարցում օգտագործում էր ոստիկանության հարուստ փաստագրական բազան:

---

[1] BOA, DH. SYS, dosya 65, vesika 2, էջ 18:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 24:
[4] Նույն տեղում, էջ 22:

3.2. Հայ հետախույզների գործունեությունը Առաջին աշխարհամարտի ռուս-թուրքական Կովկասյան ռազմաճակատում

Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական (Կովկասյան) ռազմաճակատում գործում էր Կովկասյան IV բանակային կորպուսի հետախուզական բաժանմունքը: Գեներալ Ն. Մ. Մորելը, նկարագրելով Երզնկայում տիրող իրավիճակը, նշում էր, որ ռազմական հետախուզության գլխավոր նատակներից էր պարզաբանել թուրքական կանոնավոր բանակի և քրդական զինված միավորումների ուժերն ու դրանց ղեկավարների մտահղացումները՝ ժամանակին հակազդման միջոցներ ձեռնարկելու համար[1]: Թուրքական կանոնավոր բանակի նկատմամբ տարվող հետախուզական աշխատանքներն իրականացվում էին շրջիկ գործակալների միջոցով, որոնք Երզնկայից պարբերաբար ուղարկվում էին Սեբաստիա և Կամախի ուղղությամբ[2]: Բացի շրջիկ գործակալներից, հետախուզական աշխատանքներն իրականացվում էին նաև գործակալ-ռեզիդենտների օգնությամբ, որոնց մշտական բնակության վայրը հետախուզվող շրջանն էր: Այսպես, 1916–1917թթ. Երզնկայում և Բաբերդում

---

[1] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 201, թ. 30:

[2] Նույն տեղում, թ. 31:

հետախուզական գործունեություն էր ծավալել Սեբաստացի Մուրադը (Մուրադ Խրիմյան): Նա շրջիկ գործակալներին հավաքագրում էր իրեն ծանոթ այն հայերից կամ հույներից, որոնք ազատ տիրապետում էին թուրքերենին կամ քրդերենին, լավ ծանոթ էին տեղանքին և հետախուզվող վայրի բնակչության շրջանում ունեին կապեր: Մուրադը նաև գործակալ-ռեզիդենտ էր հավաքագրում այն քրդերից, որոնք մշտապես բնակվում էին տվյալ շրջանում և բարեկամաբար էին տրամադրված հայերի նկատմամբ[1]: Գեներալ Ն. Մ. Մորելի բնութագրմամբ՝ «Շնորհիվ Մուրադի եռանդին, երկրամասի և տեղի բնակչության բնավորության հիմնավոր իմանալուն և գործակալների հաջող ընտրությանը, Երզնկայում հետախուզական աշխատանքները կատարվում էին բավականին հաջող: Ջոկատի շտաբը ժամանակին տեղեկացված էր թուրքերի և քրդերի կողմից նախապատրաստվող հարձակումների, նրանց ուժերի կենտրոնացման, տեղաշարժման և ուժերի մասին»[2]:

Երզնկայում հետախուզական աշխատանքները կազմակերպում էր սպա Չախալյանը, որը նախկինում ծառայել էր Կովկասյան բանակային կորպուսին կից շտաբի հակահետախուզական բաժանմունքում: Շրջանի մահմեդական բնակչության արտաքին դիտարկումն իրականացվում էր երկու մշտական գործակալ-ռեզիդենտի և մի քանի շրջիկ գոր-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 201, թ. 31:
[2] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 201, թ. 17:

ծակալների միջոցով: Այդ գործակալները հավաքագրվել էին Չախալյանի կողմից իրեն ծանոթ այն մահմեդականներից, որոնք բարեկամաբար էին տրամադրված հայերի նկատմամբ: Շնորհիվ Չախալյանի փորձի, եռանդի, բարեխղճության, տարածաշրջանի իմացության, մուսուլմանական բնակչության դիտարկումն իրականացվում էր հաջող. ջոկատները ժամանակին տեղեկացված էին շրջանի զինված մուսուլմանական բնակչության թվաքանակի, թուրքական կանոնավոր բանակի և Դերսիմի քրդերի հետ նրանց հարաբերությունների, ինչպես նաև նախապատրաստվող ապստամբության ժամանակի, վայրի և ծավալների մասին: Դա հնարավորություն էր տալիս ամենայն մանրամասնությամբ տեղեկանալ գրավված շրջանների թուրք բնակչության տրամադրությունների, նրանց սպառազինության, թուրքական բանակի հետ ունեցած շփումների, նախապատրաստվող ապստամբությունների ժամանակի և դրանցում ընդգրկված ուժերի թվաքանակի մասին[1]:

Մեկ այլ հայազգի սպա՝ Տեր-Վարդանյանը, գործակալական մեծ ցանց ուներ: Նա իր հետախուզական գործունեությունը քողարկում էր առևտրով, ինչի շնորհիվ կարողանում էր ազատորեն շրջել Սարիղամիշ–Կարսի շրջանում: Տեր-Վարդանյանը, օգտագործելով իր անձնական կապերը, անձամբ էր կորզում հետախուզական բնույթի տեղեկությունները

[1] Նույն տեղում, թ. 32-33:

ներ, իսկ անհրաժեշտության դեպքում նաև գործակալների հավաքագրումներ էր իրականացնում: Վերջիններս ուղարկվում էին ոչ միայն Սարիղամիշ–Կարսի, այլև ավելի հեռու շրջանները[1]:

Առաջին աշխարհամարտի տարիներին Կովկասյան բանակի կազմում գործում էին հայ կամավորական ջոկատներ, որոնց կազմում կային հետախույզների առանձին ստորաբաժանումներ:

Վերջիններիս հետախուզական աշխատանքից էր կախված խմբերի հրամանատարների հետագա որոշումները: Հայկական կամավորական հետախուզական ստորաբաժանումներն աչքի են ընկնում 1914 թ. դեկտեմբեր – 1915 թ. հունվար ամիսներին Սարիղամիշի օպերացիայի ժամանակ: Հատկապես աչքի են ընկնում Անդրանիկի I և Քեռու IV խմբերի հետախույզները: I խմբի հետախույզները 1914 թ. նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին կարողանում են կարևոր տեղեկություններ հայթայթել թուրք-քրդական ուժերի տեղակայման և սպառազինության մասին: Նրանց տեղեկությունների շնորհիվ հնարավոր է լինում հայտնաբերել շրջանցիկ ուղիներ և մի քանի բնակավայրեր գրավել նվազագույն կորուստներով: Սարիղամիշյան ճակատամարտի սկզբնական փուլում Քեռու հետախույզներն առաջիններից էին, որ զեկուցեցին թուրքական գերակշիռ ուժերի հայտնվելու մասին: Ստացված տեղեկությունը Քեռին շտապում է հայտնել Կովկասյան I բանակային

[1] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 204I, թ. 53:

կորպուսի հրամանատար, գեներալ Գ. Է. Բերխմանին: Նա, սակայն, անուշադրության է մատնում այդ կարևոր տեղեկությունը, գտնելով, որ ռելիեֆի և բնակլիմայական նման պայմաններում հակառակորդը չի կարող հարձակողական լայնածավալ գործողություն ծավալել[1]: Ինչպես հետագայում պարզվեց, Քեռու խմբի ուղղությամբ շարժվում էին թուրքական X բանակային կորպուսի առաջապահ զորամասերը: Այդ կորպուսի մասին ռուսական ռազմական հետախուզությունը որևէ տեղեկություն չուներ[2]:

1915 թ. Իգդիրում գործում էր հետախուզական «Հայկական շտաբը», որի ամդամներից էր Կովկասյան IV բանակային կորպուսի հետախուզական բաժանմունքի աշխատակից Տիգրան Դևոյանցը: Վերջինիս համար տեղեկատվության հիմնական աղբյուր էին ոչ միայն իր կողմից ստեղծած գործակալական ցանցը, այլև ռազմագերիները, դասալիքները, ինչպես նաև Իգդիրով անցնող գաղթականները, որոնք տալիս էին «շատ արժեքավոր տեղեկություններ թրքական ուժերու մասին»[3]: Հայթայ-

---

[1] Սահակյան Ռ. Օ., Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և ընթացքում ռուս-թուրքական ռազմաճակատում հետախուզական ծառայությունների գործունեության պատմությունից (1914-1917 թթ.), Պատմաբանասիրական հանդես, 2011, թիվ 3, էջ 112:

[2] Նույն տեղում:

[3] Դեոյանց Տ., Հետախույզի մը հուշերը. «Վեմ», 1938, թիվ 2, էջ 51–52: Վիրաբյան Վ. Հ., Տիգրան Դևոյանցի հետախուզական գործունեության շուրջ. ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2010, 1–2, էջ 320–335:

թած տեղեկությունները Տ. Դևոյանցը «Հայկական շտաբի» միջոցով պարբերաբար զեկուցում էր Կովկասյան IV բանակային կորպուսի հետախուզական բաժանմունքի պետ, կապիտան Վ. Ա. Օզոլին:

Նշված բաժանմունքի հետախուզական աշխատանքների կազմակերպման, կիրառվող ձևերի ու մեթոդների վերաբերյալ Տ. Դևոյանցը նշում է, որ գործակալներից ու այլ աղբյուրներից ստացված տեղեկությունները ստուգելու կամ ճշտելու համար բանակային հրամանատարությունը հետախուզական հեծելախմբեր էր ուղարկում ռազմաճակատի այս կամ այն տեղամասը՝ հրամայելով բերել «լեզու»՝ գերել հակառակորդի առաջապահ դիրքերից որևէ զինվորի կամ սպայի: Այդ կերպ կարողանում էին համադրել և ստուգել ստացված բոլոր տեղեկությունները:

Որևէ բնակավայր գրավելիս հետախուզական բաժանմունքի աշխատակիցներն առաջին հերթին ստուգում էին թուրք սպաների բնակության վայրերը՝ աշխատելով հավաքել նրանցից հետո մնացած փաստաթղթերը, հեռագրերի պատճենները և պատճենահանող թղթերը[1]:

Հատկանշական է, որ ռուսական Գլխավոր շտաբը հակառակորդի վերաբերյալ հիմնական հետախուզական բնույթի տեղեկությունները ստանում էր Թուրքիայում բնակվող հայերից[2]:

Բացի ռազմաճակատային հետախուզությունից,

---

[1] Դեոյանց Տ.. Հետախույզի մը հուշերը, «Վեմ», 1938, թիվ 3, էջ 61:
[2] МасловскийЕ. В., Мировая война на Кавказском фронте мировой войны в 1914–1917 г. Стратегический очерк. Париж, 1933, с. 86.

հայ հետախույզներին ուղարկում են Թուրքիայի խորքերը, ընդհուպ մինչև Կ. Պոլիս՝ տեղեկություններ հայթայթելու հակառակորդի զինուժի թվաքանակի, տեղաշարժման, պարենի ապահովության և այլնի մասին: Ողջ պատերազմի ընթացքում ռուսական հրամանատարությունը տեղեկություններ էր ստանում Թուրքիայում ներդրված իր գործակալներից: Տ. Դևոյանի գնահատմամբ, մինչև պատերազմը լրտեսների թիվը հասնում էր հազարների: Նրանք «շատ կարևոր դեպքերում՝ իրենք փախչելով կուգային կըհանձնվեին ռուսական բանակին՝ հետները բերելով շատ կարևոր տեղեկութիւններ»[1]:

Պատահական չէր, երբ գերմանական հետախուզության ղեկավար գնդապետ Վալտեր Նիկոլաին հայերին բնութագրեց հետևյալ կերպ. «Հայերը՝ որպես լրտեսներ շատ վճռական և սարսափելի էին: Նրանք այստեղ ևս թուրքերին շատ դժվարություններ էին հարուցում, որը զգալիորեն նպաստում էր հայերի նկատմամբ միջոցառումների ուժեղացմանը[2]:

Այսպիսով՝ պետականության բացակայության պայմաններում հայ հետախույզները, գործելով հիմնականում ռուսական դրոշի ներքո, արդյունավետ պայքար մղեցին անտեսանելի ճակատում, հակազդեցին թշնամու քայքայիչ շատ գործողություններին, ինչը, սակայն, բավարար չէր Մեծ եղեռնը կանխելու համար:

---

[1] Սահակյան Ռ. Օ., նշված աշխ. էջ 105:

[2] Николаи В., Тайные силы. Интернациональный шпионаж и борьба с ним во времямировой войны и в настоящее время / http://militera.lib.ru

3. 3. Թուրքական գաղտնի ծառայությունների գործունեությունը Կովկասում (1918-1921թթ.)

«Հատուկ կազմակերպությունը» այն կառույցներից էր, որոնք անգամ Օսմանյան կայսրության պարտությունից հետո, չնայած պաշտոնական հայտարարությանը, իրականում չդադարեցրին իրենց գործունեությունը, այլ դարձան թուրքական ազգայնական շարժման ձևավորման կարևոր գործոններից մեկը[1]:

1918թ. հոկտեմբերին, երբ Իթթիհադի կառավարությունը հեռացավ իշխանությունից, կուսակցությունը «Թեջեդդութ» անունն ընդունեց՝ ժառանգելով նախորդի կազմակերպչական կառուցվածքը, ֆինանսները, կադրերը: Լուծարքի ենթարկված իթթիհադական կուսակցությունը քողարկվել էր նաև Առաջադիմության ժողովրդական խորհուրդների կուսակցություն անվան ներքո[2]:

1919-1922թթ. ազգայնական շարժման տարիներին «Հատուկ կազմակերպության» հնարավորությունները, մասնավորապես նաև Կովկասում ստեղծված ընդարձակ գործակալական ցանցը,

---

[1] Ավագյան Ա., Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում 1920-1971թթ., Եր., 2011, էջ 25-27:

[2] Տե՛ս «Նոր ալիք» օրաթերթի խմբագրականի կողմից «Քաղաքականություն» վերնագրով հոդված,1922, թիվ 2:

փորձում էր բոլշևիկների հետ հարաբերություններում որպես խաղաքարտ օգտագործել Էնվեր փաշան, որը նաև տաճում էր այդ կազմակերպության հիման վրա համամահմեդական հեղափոխական կոմիտե հիմնելու հույսեր[1]:

Ուշագրավ է, որ Վրաստանում Հայկական դիվանագիտական առաքելությանը կից տեղեկատվական բյուրոյի պետի կողմից 1919թ. հունիսի 23-ին ստացված գործակալական հաղորդագրության համաձայն, «երիտթուրքական կոմիտեները ակտիվացրել են իրենց աշխատանքը էմիսարների միջոցով բոլշևիզմի քարոզչությունը կազմակերպելու ուղղությամբ… զինում են ժողովրդին, մեծ քանակությամբ զինամթերք են ուղարկում Անդրկովկասի և Թուրքական Հայաստանի ուղղությամբ»[2]: «Հատուկ կազմակերպության» համակարգում Կովկասի ուղղությամբ աշխատանքը կենտրոնացված էր «Արևելքի մասնաճյուղի Կովկասի բաժնում», որը ղեկավարում էր լեյտենանտ Ադանը[3]:

Կովկասի բաժնից բացի, «Հատուկ կազմակերպության» թարգմանչական բյուրոյում կար երկու ենթաբաժին, որտեղ կենտրոնանում էր Հարավային և Հյուսիսային Կովկասին վերաբերող հետախուզա-

---

[1] Տե՛ս АВПРФ, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 52987, л. 28.

[2] ՀԱԱ, ֆ. 200, գ. 427, մաս 2, թ. 67-68:

[3] Տե՛ս Ավագյան Ա., Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում 1920-1971թթ., Եր., 2011, էջ 27:

կան ու բաց տեղեկույթը: Այդ երկու ենթաբաժին-ները կոչվում էին, համապատասխանաբար, «Հա-րավային Կովկասի թղթապանակ» և «Հյուսիսային Կովկասի թղթապանակ»[1]:

Հատուկ ծառայություններին բնորոշ գործելա-ոճի համաձայն՝ թուրքական հետախուզության գործակալները որպես քողարկման միջոց լայնորեն էին օգտագործում այս կամ այն բարեգործական կազմակերպությունները, որոնց անունից էլ հանդես էին գալիս իրենց գործունեության ընթացքում: Դա հնարավորություն էր տալիս պատերազմից տուժած մահմեդական բնակչությանը «օգնություն» ցուցաբե-րելու անվան տակ լինել ռազմաճակատի տարբեր տեղամասերում, վերականգնել մարտական գործո-ղությունների ընթացքում խաթարված կապը, տալ հրահանգներ և հավաքել հետախուզական բնույթի տեղեկություններ: Բացի այդ՝ նմանատիպ առաս-պելապատմամբ քողարկում ապահովող եղանակով սպառազինություն էր ներմուծվում Թուրքիա: Մաս-նավորապես, Հայաստանի Առաջին Հանրապետութ-յան ռազմական նախարարության հետախուզական բաժանմունքի պետ կապիտան Դևոյանցի 1920թ. ապրիլի 21-ի ամփոփագրում նշվում է. «…Կոս-տանդնուպոլսից ստացված գործակալական հա-ղորդագրության համաձայն՝ սևծովյան ափից Կար-միր մահիկի դեղորայքի և այլ իրերի անվան տակ երկրի խորքերն են տեղափոխում զենք, զինամթերք

[1] Նույն տեղում, էջ 5:

և հաղերձանք»[1]:

1919-1922թթ. ազգայնական շարժման ռազմավարական ծրագրի նպատակներից էր աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխությունների պայմաններում Կովկասն օգտագործել որպես պատնեշ: Այս խնդրում կարևոր դեր էր վերապահված կովկասյան մահմեդական քաղաքական կառույցներին: Նշված ռազմավարության իրագործման համար գլխավոր հենքերից էր Կովկասում գործող «Հատուկ կազմակերպության» գործակալական ցանցը, ինչպես նաև վերջինիս կողմից ուղղորդվող վտարանդիության քաղաքական կազմակերպությունները և զինված ջոկատները:

Թուրք գործակալների և քաղաքական կազմակերպությունների օգտագործման հարցում Արևմտյան ռազմաճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրը ծրագրավորել էր նշված քաղաքական կազմակերպությունների միջոցով խոչընդոտել Կովկասում բոլշևիկների առաջխաղացումը:

Ինչպես նշում է «Հայրենիք» թերթը, «Այս պահին իթթիադի ամենաուժեղ գործակալները տարածված են Ադրբեջանում և Կենտրոնական Ասիայում, և հույս ունեն, թե մթության մեջ պետք է մնան աննկատ և զանազան ազգերի ինքնորոշման պատրվակի տակ պիտի ստեղծեն քաղաքական այնպիսի շարժումներ, որ պետք է առաջնորդեն

[1] ՀԱԱ, ֆ. 200, գ. 427, մաս 2, թ. 262-263:

թուրքական ցեղի վերջնական միության»[1]: Դրությունն ավելի էր բարդանում, երբ Անատոլիայում քեմալականներն օր օրի իրենց դիրքերն էին ամրապնդում. նրանք, լինելով Ադրբեջանի քաղաքականության իսկական ոգեշնչողները, այժմ անձամբ ասպարեզ էին գալիս և առաջին շարքերում, իրենց սպաներով, չավուշներով, թնդանոթներով ու ռազմամթերքով՝ ուժ էին տալիս Հայաստանի իսլամ շրջանների ըմբոստացմանը: Ինչպես նշում էր Ռ. Տեր-Մինասյանը, որը զբաղեցնում էր Հայաստանի առաջին Հանրապետության ռազմական նախարարի պաշտոնը, «ռուս բոլշևիկները թուրքերին տեղեկացնում էին հայկական շարժումների մասին, դրամ և զենք էին տալիս թե՛ մուսուլման ըմբոստներին և թե՛ թուրքերին»[2]:

Պատահական չէր, որ կերպարանափոխված նախկին իթթիհադականներն Ադրբեջանը համարում էին գործողությունների ակտիվ վայր:

1920թ. մայիսին Կովկասում թուրքական իշխանությունների ձեռնարկած միջոցառումների արդյունքում Նուրի փաշան Ադրբեջանի Գյանջա (Գանձակ) քաղաքում հրահրեց ընդվզումներ և բնակչության հարձակումը Կարմիր բանակի ստորաբաժանումների վրա[3]: Քանի որ Նուրի փաշայից կապը ձգվում էր դեպի Ք. Կարաբեքիրի շտաբ, վերջինս

---

[1] Ամատունի Հ., Լուրեր, «Հայրենիք», 1919 դեկտեմբեր:

[2] Տեր-Մինասյան Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Պեյրութ, 1972, էջ 324:

[3] Տե՛ս Ավագյան Ա., նշված աշխ., էջ 81:

1920թ. հունիսի 24-ին 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությանը գրած իր նամակում ժխտեց թուրքական իշխանությունների որևէ մասնակցությունը Գյանջայի (Գանձակի) դեպքերին՝ ամբողջ պատասխանատվությունը բարդելով Թբիլիսիում ապաստան գտած ադրբեջանական մուսավաթական կառավարության և «թուրք ազգի քաղաքականությունից անտեղյակ մի խումբ օսմանցի սպաների վրա»[1]:

Չնայած, որ Գյանջայի (Գանձակի) դեպքերը լուրջ հետևանքներ չունեցան, սակայն ակնհայտ էր թուրքական գաղտնի կազմակերպությունների սադրիչ գործողությունների փաստը՝ փորձ կատարելով դրանք բարդել «հայ խառնակիչների» վրա:

«Քեմալականները ոչ միայն չլուծեցին ազգային հարցը, այլև չկարողացան նույնիսկ ինչ-որ չափով թուլացնել դրա սրությունը: Ավելին, հենց շովինիստական ազգային քաղաքականության մեջ նրանք կանգնեցին կամ բռնի ասիմիլացման, կամ Թուրքիայում փրկված ազգային փոքրամասնությունների զազանային ոչնչացման ուղու վրա»[2], - նշում է խորհրդային պատմաբան Ե. Լուդշուվեյթը:

Արևմտահայության բեկորների հալածանքի, ոչնչացման քաղաքականությունը շարունակվեց ամբողջ Թուրքիայի տարածքում և՛ 1921-ին, և՛ 1922-

---

[1] Ավագյան Ա., նշված աշխ., էջ 82:

[2] Лудшувейт Е.Ф., После октябрьский революционный под’ем в Турции (ноябрь 1917-май 1919), Вестник Московского Университета, ном. 7, июль 1949.

ին: Երիտթուրքերի գործելակերպն ամբողջապես փոխանցվել էր ազգայնականներին:

«Հայ-թուրք կռիվը անխուսափելի էր»[1], - գրեց 20-րդ դարի հայ ազատամարտի նշանավոր գործիչ Շահան Նաթալին: «Մենք պետք էր կռվեինք մեր ակռաներով անգամ, եթե կուզեինք մարդ ապրիլ: …Բանակ չունէինք, ինչպես մեր թշնամին: Թուրքերու գործերը – թողունք այլևս մինչև Քեմալականութեան Քեմալի քաղաքականության արյունոտ ճամբան, անոր գործակալներու տենդագին գործունեությունը ափ մը հայությանն օղակող թրքական շղթային բոլոր օղակներուն մեջ»[2]:

Թուրքական գաղտնի ծառայությունների անհաջողության փաստ է կյանքի կոչված «Նեմեսիս» ծրագիրը: 1919թ. սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 30-ը Երևանում գումարված ՀՅԴ-ի 9-րդ ընդհանուր ժողովը որոշեց. պատժել 1915թ. Հայոց մեծ եղեռնի և դրանից հետո ոճրագործությունը շարունակած երիտթուրքերի և ադրբեջանական մուսավաթականների պարագլուխներին ու նրանց կամակատարներին[3]: Այդ նպատակի համար ստեղծվեց մի Պատասխանատու մարմին, որի ծրագրողն ու կազմակերպիչը Շահան Նաթալին էր, իսկ ղեկավար նշանակվեց ՀՅԴ նշանավոր գործիչ, ԱՄՆ-ում Հայաստանի դեսպան Արմեն Գարոն:

Ծայրաստիճան գաղտնիության պայմաննե-

---

[1] Շահան Նաթալի, Թուրքերը և մենք, Եր., 2011, էջ 10:

[2] Նույն տեղում, էջ 14, 20:

[3] Հովնանյան Ռ., «Նեմեսիսը» գործողության մեջ, Եր., 2013, էջ 7:

ռում ծրագրվում է թուրք դահիճներին պատժելու գործողությունները: Օպերացիան կրեց «Նեմեսիս» (հունական վրիժառության աստվածուհի Նեմեսիդայի անունով) ծածկագիրը: 1919-1922թթ. հայ վրիժառուների ձեռքով սպանվեցին թուրք գլխավոր ոճրագործները (Թալեաթ, Էնվեր, Ջեմալ, Շաքիր, Ազմի, Հալիմ), ինչպես նաև մուսավաթական հանցագործները (Ադրբեջանի ռազմական նախարար Ղասիմբեկով, 1920թ. Բաքվի և Շուշիի հայերի ջարդերի կազմակերպիչ Սաֆարովը և այլոք)[1]:

«Մենք վերջացուցինք մեր գործը: Կը սկսեր գերման ոստիկանության գործը»[2], - գրեց է Շահան Նաթալին: Մամուլը մեղադրում էր ոստիկանությանը, որ Թալեաթին սպանողները շարունակում են իրենց գործողությունները Բեռլինի մեջ, որ չեն կարողանում նրանց բացահայտել ու ձերբակալել: Թուրքերը խուճապի մեջ էին: Ազմի բեյը և ուրիշ ոճրագործներ շտապ լքեցին Բեռլինը: Հուսահատությունից դրդված՝ նրանք ժողով էին գումարել և, չվստահելով գերմանական ոստիկանությանը, մի խնդրագիր էին ուղարկել Ք. Աթաթյուրքին, որ թույլ տա իրենց վերադառնալ Թուրքիա, որովհետև աշխարհում ոչ մի տեղ այլևս հայ վրիժառուների ձեռքից փրկություն չունեն, բացի իրենց երկրից:

«Թուրքերը լծված էին ամեն տեսակ աշխատանքների և ցուցումներ էին տալիս միշտ

---

[1] Հովսեփյան Ա., Հայրենական մեծ պատերազմը նաև հայության գոյամարտն էր, Եր., 2012, էջ 109, 111:

[2] Շահան Նաթալի, Այսպես սպանեցինք, Պեյրութ, 1954, էջ 62:

խթանված պահելու համար ոստիկանական գործունեությունը: Նրանք, չբավարարվելով ոստիկանական հետապնդումներով, դիմել էին գաղտի ոստիկանական գործակալություններին և վարձել էին գաղտնի ոստիկաններ: …ծրագիր էին մշակել ոչ միայն ամեն գնով ձերբակալել ահաբեկիչներին, այլ, եթե անգամ դա անկարելի է, գոնե մի քանի հայերի զրպարտելով, իրենց վրեժը լուծեն»[1]:

Անգամ, եթե հայերին ձերբակալելու համար հիմքեր չկային, նրանք գերմանական ոստիկանության կողմից վերցվում էին հսկողության տակ: Նրանցից մեկն Ավետիքյանն էր, որը դեռ պահպանում էր Հայաստանի Հանրապետության հյուպատոսի տիտղոսը: Թուրքերը համառորեն պնդում էին, որ այդ բարի իզմիրցի միլիոնատերը ֆինանսավորում էր ահաբեկչական գործունեությունը, պահանջում էին անհապաղ ձերբակալել նրան և խուզարկել հյուպատոսությունը, որտեղ անպայման կգտնվեն հանցանշաններ: Բայց գերմանական ոստիկանությունը թուրքերին պատասխանում էր, որ դեսպանն ու հյուպատոսը, նաև դեսպանությունն ու հյուպատոսությունն ըստ միջազգային օրենքների անձեռնամխելի են: «Թուրքերը կը կատղէին, որ ոստիկանությունը չի ձերբակալեր ու բանտ նետեր ցույց տրվածները: Անոնք «ախ»-ը կը քաշէին Թուրքիայի, ուր հայ ըլլալը վճռված ոճիր էր»[2]:

---

[1] Շահան Նաթալի, նշված աշխ., էջ 68, 69:

[2] Նույն տեղում, էջ 70:

Հետաքննությունների թափը թուլացավ, երբ ոստիկանությունը ձերբակալեց նշանավոր հայ վրիժառու Արշավիր Շիրակյանին նման Բերբերյան ազգանունով մի հայ երիտասարդի, որը Մյունխենից Բեռլին էր գնացել իր բարեկամներին տեսակցելու: Թալեաթի այրին, տեսնելով նրան, բղավել էր, թե իր ամուսնու սպանողներից մեկը սա էր: «Ես չեմ ահաբեկիչը, - ասել էր Բերբերյանը ոստիկանապետին, - բայց եթե դուք դա ինձ եք վերագրում, ապա մեծ պատվի եք արժանացնում»[1]:

Թուրքական գաղտնի ծառայությունների հետախուզական գործունեությունը հայ վրիժառուների հայտնաբերման և վնասազերծման ուղղությամբ դրսևորվեց նաև Բուլղարիայում Արշավիր Շիրակյանի նկատմամբ կիրառված հատուկ գործողություններով: Մասնավորապես, Վառնայի «Բալկան» հյուրանոցի սրճարանում Ա. Շիրակյանին է մոտենում քաղաքացիական հագուստով մի մարդ և, ներկայանալով որպես գաղտնի ոստիկան, խնդրում հետևել իրեն, իբր պահակատուն գնալու և որոշ հարցեր պարզաբանելու համար: Մարդը կասկածելի է թվում, և երբ մի քանի հոգի ևս մոտենում ու շրջապատում են իրեն, պարզ է դառնում, որ այդ մարդը և շրջապատողները թուրքեր են և եկել են Արշավիրին առևանգելու: Վերջինս, արագ կողմնորոշվելով, հանում է ատրճանակը, հրամայում է շրջապատողներին ձեռքերը վեր բարձրացնել, ապա

[1] Նույն տեղում, էջ 71:

խնդրում է սրճարանի տիրոջը, որպեսզի շտապ կանչեն ոստիկաններին: Սրճարան ժամանած ոստիկանապետը, ստուգելով ձեռքերը վեր պարզած մարդկանց ինքնությունը, պարզում է, որ նրանք բոլորն էլ թուրքական գաղտնի ծառայությունների գործակալներ են, որոնք, բնականաբար, արտոնություն չունենալով օտար երկրում մարդ ստուգելու ու կալանավորելու, մի սուտ քրեական բնույթի պատմություն հորինելով և դրանում Արշավիրին մեղադրելով, պահանջում են, որպեսզի նրան հանձնեն Կ.Պոլիս տանելու համար: Արշավիրը ոստիկանապետին հայտնում է, որ ինքը հեղինակն է Հռոմում և Բեռլինում կատարված քաղաքական ահաբեկչությունների, ՀՅԴ անդամ է, որը հայ ժողովրդի ազատության համար պայքարում է թուրքական վարչախմբի դեմ այնպես, ինչպես բուլղարներն ու մակեդոնացիները: Այս բացատրությունը զոհացնում է ոստիկանապետին, և նա Արշավիրին վերցնում է իր պաշտպանության տակ: Վառնայի հայկական հյուպատոսարանից նոր անձնագիր ստանալով՝ Արշավիրը 1922թ. հոկտեմբերին մեկնում է ԱՄՆ մշտական բնակության[1]:

Այսպիսով՝ հայ ժողովրդի մղած պայքարի հակազդմանն ուղղված աշխատանքներում թուրքական գաղտնի ծառայություններն իրականացրեցին այնպիսի փորձված հատուկ միջոցառումներ, ինչպիսիք էին՝

[1] Հովնանյան Ռ., նշված աշխ., էջ 62, 63:

- սադրիչ գործողությունները.
- խժդժությունների հրահրումը.
- ահաբեկչական ակտերով զուգորդվող ջարդերը.
- անլուր փնտրողական գործունեությունը:

3.4. Թուրքական գաղտնի ծառայությունների գործունեությունը Հայաստանի Հանրապետության և հայության դեմ 1919-1923թթ.

Սկսած «Հատուկ կազմակերպությունից»՝ մինչև 1965թ. հուլիսի 6-ը առաջին անգամ հետախուզության մասին առանձին օրենքի ընդունումն ու Ազգային հետախուզական ծառայության ստեղծումը թուրքական հետախուզական կառույցները զինվորական ստորաբաժանման կարգավիճակ ունեին և գործում էին բանակի գլխավոր շտաբի կազմում: Այդ կարգավիճակը չփոխվեց նաև 1927թ. հետախուզական կառույցի ստեղծմամբ[1]:

Ազգային շարժման տարիներին Անկարայի կառավարությանը կից ստեղծվեցին մի շարք հետախուզական և անվտանգության կառույցներ, որոնց բնորոշ էր գոյության կարճատևությունը: «Հատուկ կազմակերպությունից» և դրա հիմքի վրա ստեղծված «Քարաքոլից» հետո 1920թ. սեպտեմբերի 23-ին ստեղծվեց «Համզա խումբը», որը գործեց մինչև 1921թ. օգոստոսի 31-ը, իսկ 1921-1923թթ. դրան փոխարինեց «Ազգային պաշտպանության խումբը»:

1920թ. փետրվարի 18-ին ստեղծվեց Ռազմական ոստիկանության կազմակերպությունը, իսկ

---

[1] Ավագյան Ա., Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում, Եր., 2011, էջ 134:

1921թ. ապրիլի 1-ին՝ Հետախուզության վարչությունը: Այս երկու կազմակերպությունների ստեղծմամբ դրվեցին արտաքին և ներքին հետախուզության ծառայությունների հիմքերը:

1922-1926թթ. ակտիվ հետախուզական գործունեություն էր ծավալել նաև Գլխավոր շտաբի հետախուզական վարչությունը, որն օգտագործում էր դեռ «Հատուկ կազմակերպության» ստեղծած գործակալական ցանցը[1]:

Թուրքիայում հետախուզությունը որպես առանձին պետական մարմին ձևավորվեց 1927թ.: Դրա հիմնադիրը գնդապետ Վալտեր Նիկոլային էր, որը նաև Գերմանիայի ռազմական հետախուզության՝ Աբվերի կազմակերպիչներից էր:

Հայաստանը ֆիզիկապես ոչնչացնելու կոչեր հնչեցին 1920թ. սեպտեմբերի 1-7-ին Բաքվում տեղի ունեցած՝ Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում: «Նոր Թուրքիան» 1920թ. սեպտեմբերի վերջերին պատերազմ սկսեց Հայաստանի Հանրապետության դեմ: Հարձակվելով Հայաստանի վրա՝ Արևելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրը անթաքույց հայտարարեց, որ իր նպատակն է վերջին մահացու հարվածը հասցնել հայ ժողովրդին, իսկ Մուսթաֆա Քեմալն էլ պնդեց, թե այդ պատերազմի նպատակն է «ոչնչացնել հայկական բանակն ու հայկական պետությունը…»[2]:

---

[1] Ավագյան Ա., նշված աշխ., էջ 136:

[2] Мустафа Кемаль, Путь новой Турции, т. 3, М., 1932, с. 102.

Հայկական զորքերը թուրքական բանակի ներխուժման առաջին իսկ օրը բռնեցին նահանջի ճանապարհը: Սակայն սխալ կլիներ կարծել, թե հայկական բանակն ընդհանրապես ի վիճակի չէր դիմադրելու թուրքերին: Հայոց բանակում մեծ թիվ էին կազմում Առաջին համաշխարհային պատերազմի մարտերում կոփված կադրային ռազմիկները, որոնցից շատերը պարգևատրված էին Գեորգյան խաչերով և այլ պարգևներով: Հայոց զորքում կային ռուսական զինվորական ծառայություն անցած մեկ տասնյակ գեներալներ, 1400-ից ավելի բարձրաստիճան սպաներ, շտաբայիններ, համբարակներ և զորքերի այլ տեսակների հրամանատարներ: Իր սպառազինությունների մեջ բանակն ուներ ռուսական և անգլիական հեռահար թնդանոթներ, հեծելազորային զորամասեր, զրահագնացքներ, գնդացրային ջոկեր, կապի և սակրավոր վաշտեր: Այսինքն, չի կարելի ասել, թե հայկական բանակը մարտունակ չէր: Իրողությունն այն էր, որ այդ բանակը չէր կռվում այնպես, ինչպես կարող էր կռվել[1]: Բացի այդ, հայկական հետախուզությունը Կ.Պոլսում նպատակաուղղված աշխատանքներ էր իրականացնում գործակալական ներթափանցման եղանակով անհրաժեշտ կանխարգելիչ տեղեկությունների ձեռքբերման ուղղությամբ: Մասնավորապես, գեներալ Գ. Ղորղանյանին ուղղված Կ.Պոլսում հայ-

[1] Տե՛ս Սիմոնյան Հ. Ռ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991, էջ 399:

կական հետախուզական գործունեության կազմակերպիչ Տ. Դևոյանցի 1919թ. հոկտեմբերի 29-ի զեկուցագրի համաձայն՝ հոկտեմբերի 28-ին Էրզրումում գտնվող Քյազիմ Կարաբեքիրի կողմից հրաման է ստորագրվել մի հայի գնդակահարության մասին, որը գողացել էր զորային ծածկագիրը, և այդ կապակցությամբ Կ.Պոլիս ուղարկված հեռագրում Կարաբեքիրը ռազմական նախարարից ամենակտրուկ ձևով պահանջում էր հոկտեմբերի 29-ին կորպուսների հրամանատարներին անհապաղ ուղարկել նոր՝ ավելի բարդ ծածկագիր[1]: Չնայած տվյալ բարդ օպերացիայի ձախողմանը՝ հայկական հետախուզությունը ծպտյալ գործակալական ցանցի միջոցով շարունակել է իր արդյունավետ գործունեությունը թշնամու «ներսում», օգտագործելով նրա «բարդ ծածկագրերը», գաղտնազերծել և Հայաստան է ուղարկել Թուրքիայի ռազմական նախարարության գաղտնագրված հեռագրերը (1919թ. հոկտեմբեր - 1920թ. օգոստոս): Այսպես՝ «Էրզրումի, Դիարբեքիրի և Վանի վիլայեթներում կազմավորվում են չեթնիկների ջոկատներ: Վախենալով քրդերի ազգային ինքնագիտակցության զարթոնքից՝ մենք նրաց բաժանում ենք հին տեսակի հրացաններ ու գնդացիրներ: Վատ սպառազինման և կարգապահության բացակայության պատճառով հայերի հետ բախումներում քրդերը տալիս են մեծ կորուստներ: Խուսա-

[1] Վիրաբյան Վ., Հայկական հետախուզությունը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920թթ.), Եր., 2003, էջ 128:

փում ենք հայերի դեմ ուղարկել թուրքերին, նրանց դեմ ուղարկում ենք քրդերին՝ այն քրդերին, որոնք հակված են հայերի հետ մտերմանալու, օրինակ, դերսիմցի քրդերին, որոնց շրջանում հեշտ է քարոզչական աշխատանք տանելը. հայերի գազանությունները նկարագրելիս, նրանք բոցավառվում են մոլեռանդությամբ, ինչը հնարավորություն է տալիս ավելացնել քրդերի թվաքանակը ռազմաճակատում: 30-ը սեպտեմբերի 1919 թ. Կարաբեքիր-Քյազիմ»[1]:

ՀՀ զորքերի գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետ կապիտան Մուրադյանի 1920թ. սեպտեմբերի 3-ի թիվ 21 ամփոփագրի համաձայն՝ «…նոյեմբերի վերջին օրերին Էրզրումում հրավիրվելու է բոլոր կորպուսների հրամանատարների համագումար՝ քրդերի, աջարացիների, Ադրբեջանի ռազմական և ռուս բոլշևիկների ներկայացուցիչների մասնակցությամբ, որի նպատակն է մշակել գործողությունների ծրագիր Հայաստանի կազմավորման դեմ… կիրառվում են բոլոր միջոցները ռազմական ստորաբաժանումների մարտունակությունը բարձրացնելու համար, ինչի մասին է վկայում Էրզրումից Կոստանդնուպոլիս Ռազմական նախարարին ուղարկած 15-րդ կորպուսի հրամանատարի հեռագիրը այն մասին, որ ««սպասվող իրադարձությունների» կապակցությամբ հայկական սահմանի վրա կատարվում են նախապատրաստական աշխատանքներ: «Միլլի» կազմակերպությունը մեծ

[1] Նույն տեղում:

հաջողություն ունի Թորթումի շրջանում, որտեղից կամավորականները շարժվում են Օլթիի, Բասենի և Ալաշկերտի դաշտավայրեր, այնուհետև ուղղությունը կվերցնեն դեպի Սարիղամիշ, Կաղիզման, Կողբ, Իգդիր և Նախիջևան»[1]:

Հետախուզական բաժանմունքի պետ կապիտան Դևոյանցի 1920թ. ապրիլի 23-ի ամփոփագրի համաձայն՝ «…ինչ-որ տեղից (հավանաբար Օդեսայից) Սամսուն է ներմուծվում մեծ քանակությամբ զենք և զինամթերք, ինչը տեղափոխվում է Սվազ, Մալաթիա, այնուհետև՝ հունական և հայկական ռազմաճակատ: Գործակալական տվյալներով, Մուստաֆա Քեմալի կողմից մինչև 30 տարեկան զորակոչիկներով կազմավորվում է բանակային կորպուս: Կորպուսի հրամանատար է նշանակվել Քյազիմ փաշան»[2]:

Ամփոփագրում նաև տեղեկություն է տրվում Ադրբեջանից Թուրքիա ներթափանցած բոլշևիկների խմբերի, Օլթիի շրջանում 400 հոգանոց կարմիր ռուսների հայտնվելու ու թուրքական զորքերի մեջ բոլշևիկ-քարոզիչների գործունեության մասին[3]: Հայ հետախույզները նաև հայտնում էին, որ Թուրքիայում և Անդրկովկասի մահմեդական շրջաններում հակահայկական քարոզչությունն ուժեղանում է, մեծ քանակությամբ թուրքական էմիսարներ այդ նպատակով ուղարկվել են Հայաստանի խորքերը,

---

[1] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 42, թ. 102:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 2, թ. 262-263:
[3] Տե՛ս նույն տեղում:

մահմեդական գյուղերը, սակայն, ամենուր հայտնաբերվել են տեղական հայկական հակահետախուզության կողմից: Թուրքական էմիսարների ազդեցությունը հատկապես ուժեղացել է Արդահան-Օլթիի և Բարդուսի շրջաններում, որտեղ նրանց կողմից կազմակերպվել են զինված քրդական բանդաներ[1]:

ՀՀ ռազմական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետի ժամանակավոր պաշտոնակատար կապիտան Մուրադյանի 1919թ. հոկտեմբերի 4-ի ամփոփագիրը վկայում է. «Գործակալական տվյալների համաձայն՝ երիտթուրքերի կուսակցությունն ամենուրեք իրականացնում է 24-ից մինչև 45 տարեկան ասկյարների գաղտնի հաշվառում, գրանցելով նրանց «Ասկյարի-Միլլիե» («Ազգային բանակ») կազմակերպությունում, որպեսզի առաջին իսկ պահանջի դեպքում նրանք համալրեն 50.000-անոց կանոնավոր բանակի շարքերը…: Թուրքական կառավարությունը, որպեսզի թաքցնի իր առնչությունը «Միլլիե Թեշքիլաթի» կազմակերպությանը, Թուրքիայի բոլոր շրջաններ է ուղարկում հանձնաժողովներ՝ բնակչությանը հորդորելու դադարեցնել չեթեների կազմակերպումը: Միևնույն ժամանակ, Տրապիզոնի բանտերից ազատ են արձակվում բոլոր չեթեները, սարերից է իջնում իրենց հրոսակապետ Յայան, և չեթեների գաղտնի կազմավորումը շարու-

[1] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 101-103:

նակվում է»[1]: Նույն տվյալների համաձայն՝ «Արդահանի շրջանում կենտրոնացված է 10-ից 12 հազարանոց չեթեների խումբ, որոնք շատ լավ զինված են և պատրաստ են հանդես գալ ցանկացած պահի»[2]: Կապիտան Մուրադյանի 1919թ. նոյեմբերի 9-ի ամփոփագրում նշվում է. «Չեթենական շարժումը գնալով հզորանում է: Միլլին զինում է բնակչությանը: Վրացի-մուսուլման Հասանը, որը պատերազմի ժամանակ ուսուցանում էր Գերմանիայի սպայական դպրոցում, հավաքագրում է լազերին, չերքեզներին և կապ է պահում Վրաստանի հետ: Կոստանդնուպոլիս ժամանած Միլլիի պատվիրակությունը բանակցություններ է վարում կառավարության հետ՝ պահանջելով. 1. կառավարության որոշ անդամներին փոխարինել երիտթուրքերով, 2. ձերբակալել և պատասխանատվության ենթարկել Ֆերիդ փաշայի կաբինետը, 3. ներում շնորհել հայերի կոտորածներում մեղադրվողներին»[3]:

Այսպիսով, թուրք-հայկական պատերազմի նախաշեմին՝ այս ուղղությամբ թուրքերի կողմից իրականացվող կոնկրետ գործողությունների վերաբերյալ հայ հետախույզներն արժեքավոր ռազմական և քաղաքական բնույթի տեղեկություններ էին ուղարկում Հայաստանի Հանրապետություն, սակայն ինչ-ինչ պատճառներով դրանք կամ ուշացումով էին տեղ հասնում, կամ էլ ղեկավարության կողմից հա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ.133, թ. 28:

[2] Նույն տեղում:

[3] ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 133, թ. 32:

մապատասխան գնահատականի չէին արժանանում: Տ. Դևոյանցը նշում է. «Այդ հեռագրերը ցույց էին տալիս, թե ինչ դասավորությամբ (NN գնդերի և դիվիզիաների), ինչ ուղղությամբ և երբ թրքական ուժերը պետք է հարձակվեն Հայաստանի վրա ու գրավեն Կարսը, Օլթին, Սարիղամիշը, Արդահանը, Իգդիրը և այլն: Մաթեմատիկական ճշտությամբ հետագայում գործադրվեց այդ հեռագրերի բովանդակությունը Հայաստանի նկատմամբ: Բայց ինչպես էր ընդունվում լուրը մեր պաշտոնական իշխանության կողմից: Լսեցի, որ մեր քաջ սպայակույտի պետը անվանել էր ինձ խելագար, իսկ նախարարներից մեկը ասել էր. այդ Դևոյանցի ցնդաբանություններն են»[1]: Դևոյանցի հայթայթած արժեքավոր տեղեկատվության վերաբերյալ առանձին պաշտոնյաների ցուցաբերած նման դրսևորումների իրական դրդապատճառները պարզ չեն, սակայն կարող ենք փաստել, որ հետախուզության բաժանմունքի կողմից կազմած հիշյալ ամփոփագրերը մեծ պահանջարկ ունեին ՀՀ արտաքին գործերի նախարարությունում: Մասնավորապես, ՀՀ ռազմական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական բաժնին հասցեագրված ՀՀ ԱԳՆ-ի 28.02.1920թ. հեռագրում նշվում է. «Արտաքին գործերի նախարարության տեղեկատվական բաժինը խնդրում է հետախուզական

[1] Դևոյանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», Բոստոն, 1945, թիվ 2, մարտ-ապրիլ, էջ 85, Վիրաբյան Վ. Հ., Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920թթ., Եր., 2006:

բաժնի կողմից հրատարակվող գաղտնի ամփոփագրերը տրամադրել ոչ թե 10 օրինակով, այլ 25՝ ՀՀ բոլոր առաքելություններ և հյուպատոսություններ ուղարկելու համար»[1]:

Հետախուզական բաժանմունքի 1920թ. հունիսի 3-ի թիվ 18 ամփոփագիրը կարևոր տեղեկատվություն է պարունակում Հայաստանի Հանրապետության դեմ թուրքական հատուկ ծառայությունների քայքայիչ գործունեության վերաբերյալ: Մասնավորապես, «Կոստանդնուպոլսից ստացված գործակալական տվյալների համաձայն՝ թուրքերը այնտեղ կազմակերպել են Հետախուզական Բյուրո, որի գործակալները պետք է աշխատեն Վրաստանի սահմանի երկայնքով և հետևեն Հայաստանում իրականացվող գործողություններին ու շարժին: Այս նպատակով հավաքագրվել են մեծ թվով վրացիներ և ռուսներ, որոնք տիրապետում են հայերենին և շուտով ժամանելու են Հայաստան: Հավաստի տվյալների համաձայն՝ Գերմանիայում տպագրվել է մեկ միլիոն կեղծ թուրքական լիրա՝ Կովկաս

[1] ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ. 441, թ. 56: Տե՛ս առավել մանրամասն՝ Վիրաբյան Վ. Հ., Հայկական հետախուզությունը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920թթ.), Եր., «Ասողիկ» հրատ., 2003, Վիրաբյան Վ. Հ., Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920թթ., Եր., «Լուսակն» հրատ., 2006, Վիրաբյան Վ. Հ., Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը (1918-1920թթ.), Եր., «Լուսակն» հրատ., 2009, Վիրաբյան Վ. Հ., Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ., Եր., ԵՊՀ հրատ., 2015:

տեղափոխելու համար: Այդ թղթյա փողերի վրա դրոշմված են իսկական թուրքական լիրաների համարներն ու սերիան և տարբերակել կեղծ դրամը իսկականից շատ դժվար է: Կեղծ փողերի տեղափոխումը նպատակ է հետապնդում օգնել Ադրբեջանին և քանի որ դրանք պետք է ծախսվեն Հայաստանում, ապա գլխավոր նպատակն է վերջնականապես գցել հայկական կտրոնների (չեքերի) կուրսը: Հետախուզական Բյուրոյի գործակալների թվից կան նաև հայեր, որոնք պետք է մասնակցեն նշված փողերի տարածմանը Հայաստանում, մասնավորապես, Երիվանում»[1]:

Հայկական բանակը ներսից քայքայելու համար քեմալականները մեծ աշխատանք էին ծավալել: Թուրքերը գործի դրեցին իրենց խորամանկության նոր զենքերից մեկը՝ քեմալական կեղծ կոմունիստական կուսակցությունը: Հայկական զորքի մեջ քեմալական գործակալները քարոզչություն էին իրականացնում, լուրեր տարածում, թե թուրք զինվորները «նույնպես բոլշևիկներ են»: Կարմիր դրոշակներ պարզելով՝ թուրքական կեղծ կոմունիստները հայկական զորքի զինվորներին կոչ էին անում «լինել ինտերնացիոնալիստներ», չդիմադրել թուրքերին, չենթարկվել սեփական հրամանատարներին: Հայ զինվորների մեջ արձագանք էր գտնում քեմալականների տարածած այն ստահոդ քարոզչությունը, թե «հեղափոխական թուրքերը» հաշիվ-

[1] ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ. 441, թ. 123-124:

ներ ունեն միայն դաշնակների հետ, և, եթե վերջիններս զրկվեն իշխանությունից, ապա «թուրք եղբայրները» բոլոր պայմանները կստեղծեն, որպեսզի ժողովուրդը ապրի նոր ու երջանիկ կյանքով:

Հայաստանի պարտությունն արագացնում էին նաև հայ բոլշևիկները: Նրանք թուրք-հայկական պատերազմի ամենածանր օրերին իսկ սեփական ազգի ներսում շարունակում էին դասակարգային անհաշտ պայքարի կոչեր անել, թուրք նվաճողների գործը դյուրացնելու համար հայոց զորքին և Հանրապետության աշխատավորներին հորդորում էին չդիմադրել թշնամուն, որպեսզի նա կարողանա որքան հնարավոր է շուտ տապալել ՀՅԴ տիրապետությունը:

«Որքան էլ զարմանալի է, - գրում է Հր. Սիմոնյանը, - թուրք-հայկական պատերազմի ամբողջ ընթացքում հայ բոլշևիկ գործիչներից և ոչ մեկը հանդես չեկավ թուրքերին դիմադրելու և հայրենիքը պաշտպանելու՝ սեփական ժողովրդին ուղղած որևէ կոչով»[1]:

Ստեղծվել էր այնպիսի կացություն, երբ ռազմաճակատի շատ հատվածներում զինվորները լքում էին դիրքերը, շպրտում էին հրացանները, «թուրք եղբայրների» առջև բացում ռազմական ամրոցների դարպասները, հանձնվում քեմալականներին:

Ա. Ավագյանը, հենվելով Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության արխիվի

[1] Սիմոնյան Հ. Ռ., նշված աշխ., էջ 401:

նյութերի վրա, նշում է, որ Անկարայում Խորհրդային Ռուսաստանի դեսպանության քարտուղար ՈՒպմալը հաղորդում էր, որ Քյազիմ Քարաբեքիրը հրահանգել է իր սպաներին «Հայաստանի գրավված տարածքներում աջակցել հայ բոլշևիկներին»[1]:

Քեմալական գաղտնի ծառայությունների ուշադրության կենտրոնում էր հայ-քրդական հնարավոր համագործակցությունը խափանելու խնդիրը:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո քրդական շարժման ծանրության կենտրոնը գտնվում էր ոչ թե Իրաքյան կամ Իրանական Քրդաստանում, այլ հենց Արևմտյան Հայաստանում, և բնավ պատահական չէ, որ հենց այդ երկրամասն էլ դարձավ արթնացող քրդական ազգայնականության օրրանը: Թե որքանով էր լուրջ ընկալվում Արևմտյան Հայաստանի տարածքում թուրքական զանգվածի կողմից քրդական պետության ստեղծման հեռանկարը, երևում է հետևյալ փաստից. 1919թ. սեպտեմբերին բրիտանական կառավարությունը Արևմտյան Հայաստան գործուղեց հայտնի հետախույզ, քրդական հարցի ճանաչված գիտակ մայոր Նոյելին, պարզելու համար այդ երկրամասում քաղաքական ուժերի դասավորությունը, վարելու գործակալական-քաղաքական աշխատանքներ և առհասարակ հավաքելու համակողմանի տեղեկություններ: Մայոր Նոյելին ուղեկցում էին

[1] Авакян А., Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина 19-го-первая половина 20-го вв.), Ереван, изд-во «Гитутюн», 2001, с. 313.

իրենց անգլիամետ հայացքներով հայտնի քուրդ ազգայնականներ Քամուրան և Ջելադեթ Բադրխան-ները, որոնք հայտնի էին որպես քրդական պետութ-յան ստեղծման ջատագովներ: Ոտքի տակ տալով համարյա ամբողջ Արևմտյան Հայաստանը, անգլի-ացի հետախույզը պարզեց մի կարևոր հանգամանք, որն առաջին պահին զարմանք առաջացրեց իր մոտ. տեղական թուրք բնակչությունը, որը մեծ երկյուղ-ներ ուներ այդ երկրամասում քրդական իշխանութ-յան հաստատման լուրերի կապակցությամբ, գե-րադասում էր ավելի շուտ այնտեղ տեսնել հայ-կական, քան քրդական իշխանություն[1]:

Քեմալական շարժումը սկսվելուց հետո քրդերի մոտ ակնառու կերպով զգացվում էր հակահայ-կական տրամադրությունների շեշտակի աճ, քանի որ նրանք ցանկանում էին պետություն ստեղծել կամ ծայրահեղ դեպքում ինքնավարություն ձեռք բե-րել հիմնականում այն տարածքների վրա, որոնք հանդիսանում էին հայ ժողովրդի պատմական բնօրրանը:

Արևմտյան Հայաստանում հայկական պետութ-յան ստեղծման հեռանկարը քրդերի մոտ ամրապնդել էր այն վախը, որ այստեղ հայկական իշխանության պայմաններում քրդերի շահերը կտուժեն և իրենք կվերածվեն երկրորդական մի ուժի:

Քրդերին ներշնչվում էր այն գաղափարը, ու թուրք-քրդական դաշինքի հիմք պետք է հանդի-

[1] АВП РФ, ф.НАИ, серия А, д. 154, л. 34-35.

սանա հայերի անկախության ձգտումների չեզոքացումը: Այդ դաշինքի գլխավոր նպատակ էր հռչակվում երկրի տարածքային ամբողջականության պահպանումը և «թուրքական ու քրդական մեծամասնության» շահերի ապահովումը[1]:

Այս առումով՝ կարևոր տեղեկատվություն է պարունակում ՀՀ ռազմական նախարարության գլխավոր շտաբի հետակուզության բաժնի 1920թ. հունիսի 3-ի թիվ 18 ամփոփագիրը. «Ալի Քալիբ բեյը ցանկացավ կազմակերպել Դերսիմի և Կայսարի քրդերին «Ազգայնական ուժերի» դեմ, քանի որ կառավարությանը ուղղված նրա ծածկագրված հեռագիրը ընկավ «Միլլի» կուսակցության ձեռքը, իրագործել այդ ծրագիրը նրան չհաջողվեց: Ներկայումս նա նշանակվել է Տրապիզոնի նահանգապետ, որտեղ ստեղծել է քուրդ-թյուրքական կազմակերպություն «Միլլի» ազգայնական ուժերի ոչնչացման նպատակով: Ալի Քյալիբ բեյը մտադիր է դիմել Հայաստանի Հանրապետությանը, որպեսզի վերջինս մասնակցություն ունենա Մուստաֆա Քեմալի կողմնակիցների դեմ տարվող պայքարում և մարտերում: Նա հետապնդում է երկու նպատակ. թուլացնել «Միլլի» ազգայնական ուժերը և ոչնչացնել հայկական ուժերը: Քրդերը կողմնակից են այս ծրագրին, քանի որ նման եղանակով նրանք կմոտենան իրենց նպատակի իրագործմանը. Հայաստանի հզորացմանը խոչընդոտելու համար թուրքերը

[1] Кемаль М., Путь новой Турции, 1919-1927, М., 1966, т. 1, с. 99-100.

ձգտում են նրանց տալ ինքնավարություն»[1]:

Հատկանշական է քեմալական գաղտնի ծառայությունների կողմից քրդերի հավաքագրման՝ ավանդաբար փոխանցված գործելաոճը: Թուրք հետախույզներն ու գործակալներն անհրաժեշտ տեղեկություն էին ձեռք բերում ոչ միայն անձնական շփումների շնորհիվ, այլ նաև տեղեկատվության աղբյուր հանդիսացող այլազգի անձանց կաշառման միջոցով, որոնք կամա թե ակամա կանգնում էին հայրենիքի դավաճանության ճանապարհին[2]:

Հաշվի առնելով թուրքական գաղտնի ծառայությունների՝ ավանդաբար շարունակվող և զարգացում ապրող գործելակերպը և դրանց գերակա դիրքը պետական համակարգում՝ հարկ ենք համարում մեջբերել սուլթանական գաղտնի ոստիկանության պետի խոստովանությունները անձանց հավաքագրման վերաբերյալ. «…սովորական ժամանակ և սովորական գործերում մարդը կարողանում է թաքցնել իր թերություններն ու արատները, բայց քաղաքական բնույթի գործերում, երբ դրանք վերաբերում են անարգ մետաղին, անգամ ամենախելացի դիվանագետների կամային հատկանիշները հօդս են ցնդում: Դրա գլխավոր պատճառը ոսկին էր: Այդ մետաղը գրեթե անում է ամեն ինչ»[3]: Նշված ծառայությունների գործակալները, իրենց ներկայացնելով

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 441, թ. 123:

[2] Гасратян М. А., Курдское движение в новое и новейшее время, М., 1987, с. 75-80.

[3] Хаджетлаше М., նշված աշխ., էջ 210:

որպես քրդերի «բարեկամներ», զանազան խոստումներով ու կաշառքով աշխատում էին քրդերի ազդեցիկ առաջնորդներին գրավել իրենց կողմը: Այսպես՝ նրանց հաջողվեց Դերսիմի ցեղապետերից Մեչո-աղային, Դիապ-աղային, Մուստաֆա Զեքի-բեյին, Ռեմիզ-բեյին, Աբդուլհաք Թեֆթիկ-բեյին, Հասան Հայրի-բեյին և այլոց գրավել իրենց կողմը: Նրանք նշանակվեցին Թուրքական Ազգային մեծ ժողովի պատգամավորներ, որից հետո այդ նախկին ընդդիմադիրները սկսեցին սերտորեն համագործակցել քեմալական կառավարության հետ, և նրանցից մի քանիսը նույնիսկ օգնեցին ազգայնականներին Դերսիմում ճնշելու հակաքեմալական ապստամբությունը[1]:

Հաշվի առնելով քեմալական Թուրքիայի հատուկ ծառայությունների, մասնավորապես, Ազգային անվտանգության ծառայության (Milli Amele Hizmeti - MAH) դերն ու նշանակությունը հայերի և քրդերի՝ միասնական հանդես գալու փորձերի կանխարգելման գործում՝ հարկ է արձանագրել.

- MAH-ի քարոզչության վարչության համապատասխան գաղափարախոսական գործունեությունը՝ ուղղված հայ-քրդական հարաբերությունների սրմանը.

- քեմալական գաղտնի ծառայությունների կողմից քրդերի՝ որպես գործակալների հավաքագրման ձևերը, մարտավարությունը և մեթոդները:

---

[1] Курдское движение в новое и новейшее время, М., 1987, с. 93.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

19-րդ դարի 60-ական թվականների վերջից և 70-ական թվականների սկզբից հակահայկականությունն ավելի ու ավելի որոշակիորեն վերածվում էր սուլթանական կառավարության կողմից իրականացվող պետական քաղաքականության:

Օսմանյան կայսրությունում արևմտահայությունը դարձել էր առավել խոցելի և անպաշտպան՝ կայսրության գաղտնի ծառայությունների ծավալած քայքայիչ գործունեության ոլորտում:

Հայկական շարժման առաջ ծառացած խնդիրներից էր ազդեցության գործակալների ու լրտեսների դեմ պայքարը, մասնավորապես՝

1) շարժմանը հակադրվող հայերի՝ ամիրաների և այլոց դեմ պայքարը, ովքեր փորձում էին ապացուցել այդ շարժումների ավելորդությունն ու վնասակարությունը, և կայսրության հետախուզության ձեռքում «ի պաշտոնե» օգտագործվում էին որպես «արդյունավետ» գործիք.

2) դիվանագիտական հարաբերությունների ոլորտում, որտեղ անհրաժեշտություն կար կազմակերպել մեծ տերությունների հետախուզությունների կողմից հայ գործիչներին «մատուցված» տեղեկությունների հավաստիության ստուգումը:

Այս կարևորագույն խնդիրների լուծումից էր կախված հայ ազատագրական շարժման առաջըն-

թացը: Սակայն, համապատասխան կառույցների բացակայության պայմաններում արևմտահայությունն ի զորու չեղավ լուծել դրանք:

Արևմտահայության պայքարի ձևավորման և զարգացման գործընթացում Թոփրագկալեի հեղափոխական կազմակերպության դերն ու նշանակությունն այն էր, որ վերջինս, ի տարբերություն այլ նմանատիպ կազմակերպությունների, առաջիններից էր, որ իր առանձնահատուկ գործելաոճի համաձայն, ընտրել էր մի քողարկման ձև, այն է՝ հայ ազատագրական շարժման գործիչների ակտիվ ներկայացուցիչներից պաշտոնների նշանակել տալ թուրքերի մոտ, որը հնարավորություն էր ընձեռում նրանց ոչ միայն խուսափել Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների տեսադաշտում հայտնվելու վտանգից, այլև թշնամու թիկունքում ծավալել հետախուզական գործունեություն: Պայքարի այս ձևը, թշնամու շարքերը ներթափանցելու մարտավարությամբ, արդեն կարող է վկայել լուրջ առաջադիմության մասին, որը համարժեք է հատուկ ծառայությունների գործելակերպին:

«Յըլդըզ» կառույցն աչքի էր ընկնում կայսրությունով մեկ տարածված գործակալների ցանցով, որոնք հաղորդակցվում էին անմիջականորեն սուլթանի պալատի հետ: Կառույցի համակարգում գործում էր գաղտնի ծառայությունների երեք միատեսակ ստորաբաժանում՝

- գաղտնի ոստիկանությունն իր հարյուրավոր անլուր գործակալներով.

- ոստիկանության արտաքին դիտարկման ստորաբաժանումն իր բացահայտ ու գաղտնի գործակալներով.

- գաղտնի գործակալներով համալրված սուլթանական գրասենյակը, որի հրամանները պարտադիր էին մյուս երկու ստորաբաժանումների համար:

Ինչպես կայսրության ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս հայ գործիչների պայքարն անլուր՝ երիտթուրքերի միջոցով գործակալական ներթափանցմամբ վերահսկվում էր օսմանյան հետախուզության կողմից: Այն կործանարար էր արևմտահայության համար, քանի որ այս հանգամանքից օգտվում էր ոչ միայն Աբդուլ Համիդի հետախուզությունը. հետագայում «Առաջադիմություն և միություն» կուսակցության ձեռքում այն հանդիսացավ որոշիչ գործիք Մեծ եղեռնը կազմակերպելու համար:

1894-1896թթ. կոտորածները նախապես պլանավորված էին իշխանությունների կողմից, և դրանց իրագործման համար Օսմանյան կայսրությունում կիրառվեցին հատուկ ծառայություններին բնորոշ նոր տեխնոլոգիաներ: Ավելին՝ Մեծ եղեռնի իրականացման ժամանակ նոր գործելաոճը ժառանգեց և գործադրեց «Հատուկ կազմակերպությունը»:

Նոր գործելաոճը ներառում էր՝

- կայսրության գաղտնի ծառայությունների սադրիչ գործողություններով՝ իրենց ձեռնտու միջադեպերի հրահրումը, որոնք, մի կողմից արդա-

բացնում էին բիրտ ուժի կիրառումը, մյուս կողմից՝ օգտագործվում էին քարոզչական նպատակներով: Այս իրավիճակում գաղտնի ծառայություններն ըստ էության գործում էին հետևյալ կարգախոսով. «Ճնշեք հայերին, թող ըմբոստանան, որ ջարդենք».

- ապատեղեկատվության մեթոդի կիրառման միջոցով հետաքրքրության օբյեկտ հանդիսացող անձանց (հայերի) ուշադրությունն իրենց ձեռնտու ուղղությամբ շեղելը՝ նրանց դրդելով գաղտնի ծառայությունների կողմից վերահսկվող համապատասխան գործողությունների.

- հայերի ահաբեկված հոգեվիճակի հետ կոտորածների զուգորդումը. առանձին վայրերում հրկիզումների, պայթյունների, ձերբակալությունների մասին լուրերը միտումնավոր արագ կերպով տարածվում էին ողջ արևմտահայության շրջանում.

- հայերի նկատմամբ կոնկրետ պաշտոնատար անձանց կողմից իրականացվող երկդիմի քաղաքականությունը՝ հայերին «միամտացնելու» մարտավարությունը.

- հայերի կոտորածները իշխանությունների կողմից զինված խուժանի ձեռքերով, այլ ոչ թե անմիջականորեն բանակի կամ ոստիկանության կողմից սանձազերծելը (Երզնկայի, ՈՒրֆայի, Սեբաստիայի, Խարբերդի, Արաբկիրի կառավարիչները հայերի անվտանգության հավաստիացումներ էին տալիս, երբ նույն պահին սկսվում էր խուժանի հարձակումը).

- հետագա բարդություններից խուսափելու համար ջարդարար գործողությունները ոչ թե տեղացիների, այլ ուրիշ վայրերից բերված մարդկանց միջոցով իրականացնելը, որպեսզի վերջիններս չճանաչվեն: Նույն տրամաբանությունն էր գործում կոտորածներում բանակի և ոստիկանության օգտագործման ժամանակ.

- օսմանյան բանտերից ձերբակալվածներին ազատ արձակելը՝ գաղտնի ծառայությունների հետ վերջիններիս համագործակցության պայմանով կամ կաշառակերությամբ, որի մեծ բաժինը հատկացվում էր պալատական «Յըլդրզ» կազմակերպությանը:

Սույն մենագրության արդյունքներով, մեր կածիքով, կարևոր եզրահանգումներից է այն, որ 1890-ական թվականների ջարդերի ժամանակ փորձարկվեց ջարդարարների մի կազմակերպություն, որը Մեծ եղեռնի տարիներին հանդես եկավ «Հատուկ կազմակերպություն» անունով, երբ քրեական հանցագործներից, մարդասպաններից ձևավորվում էին ջարդարար խմբեր, և դրանք վարժեցվում էին զանգվածային ջարդեր իրականացնելու համար:

«Թեշքիլաթ-ը մահուսան» չէր կարող իրագործել իր հրեշավոր ծրագրերի ոչ մի կետ, եթե ապահովված չլիներ հավաստի տեղեկատվական բազայով:

Տրապիզոնում տեղահանության և կոտորածի վերաբերյալ դատավարության նյութերը թույլ են տալիս ի հայտ բերել Թեշքիլաթի գործակալական

ապարատի կառուցվածքը, ինչպես նաև գաղտնի աշխատանքում ներգրավելու առանձնահատկությունները: Այսպես՝ ռեզիդենտը օգտագործել է լայն օպերատիվ հնարավորություններով օժտված գործակալին, իսկ Թեշքիլաթի կադրային աշխատակիցը, ղեկավարելով ռեզիդենտի և գործակալի աշխատանքները, ուղղակիորեն կազմակերպել է հայերի տեղահանությունն ու կոտորածը:

Հայաստանի Առաջին Հանրապետության դեմ թշնամական գործունեության ընթացքում թուրքական գաղտնի ծառայություններն օգտագործեցին այնպիսի փորձված հատուկ միջոցառումներ, ինչպիսիք են, մասնավորապես՝

- սադրիչ գործողությունները.
- խժդժությունների հրահրումը.
- ահաբեկչական ակտերով զուգորդվող ջարդերը.
- անլուր փնտրողական աշխատանքը:

Սույն հետազոտության արդյունքներից ելնելով՝ հայերի և քրդերի միասնական ճակատով հանդես գալու փորձերը թույլ չտալու գործում քեմալական Թուրքիայի ազգային անվտանգության ծառայության (Milli Amele Hizmeti - MAH) դերն ու նշանակությունը պայմանավորել են՝

1) MAH-ի քարոզչության վարչության համապատասխան գաղափարախոսական գործունեությունը՝ ուղղված հայ-քրդական հարաբերությունների սրմանը.

2) քեմալական գաղտնի ծառայությունների կողմից քրդերի՝ որպես գործակալների հավաքագր-

ման ձևերը, մարտավարությունը և մեթոդները:

Սույն հետազոտությամբ հիմնավորվել է, որ արևմտահայության ազատագրական պայքարի թույլ կողմերից էր այն կառույցի բացակայությունը, որը պետք է զբաղվեր անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերմամբ, ստուգմամբ, մշակմամբ և իրացմամբ:

Օսմանյան Թուրքիայի գաղտնի ծառայությունների կողմից իրականացված քայքայիչ գործունեությանը հակազդելու մեխանիզմների բացակայության պայմաններում հայ ազատագրական շարժման ղեկավարները չէին տիրապետում հավաստի տեղեկությունների և արագ փոփոխվող իրավիճակին:

Հետազոտված պատմական իրադարձությունների ու երևույթների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ, ի վերջո, բոլոր հայ ազատագրական կազմակերպությունների գործունեությունը չեզոքացվել է թուրքական ոստիկանության կամ հետախուզության կողմից հիմնականում գործակալական ներթափանցման եղանակով:

Կարևոր ենք համարում արձանագրել այն փաստը, որ «Հատուկ կազմակերպությունը» հանրապետական Թուրքիայի ներկայիս հետախուզական կառույցների հիմքն է: Այդ ծառայության ժառանգորդ հանդիսացող Թուրքիայի ներկայիս ազգային հետախուզական կազմակերպությունը (Milli Istihbarat Teşkilatı - MIT), առավել կատարելագործված միջոցներով, մեթոդներով, ինչպես նաև հսկա-

յական մարդկային ու ֆինանսական ռեսուրսներով շարունակում է հակահայկական գործունեությունը գրեթե նույն ձեռագրով և օպերատիվ-հետախուզական գործողությունների այն տրամաբանությամբ, որոնք բնորոշ էին Հայոց ցեղասպանության գործիք հանդիսացած «Հատուկ կազմակերպությանը»:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արխիվային նյութեր

ա/ Հայաստանի ազգային արխիվ

1.1 Ֆ. 200, ց. 1, գործեր. 42, 158, 427, 441, ֆ. 204, ց. 1, գործ 133, ֆ.1267, ց. 2, գ. 201, թ. 30:

1.2 Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվ (այսուհետև՝ ԳԱԹ), ֆ. Ազատյան Թ., բ. 7, գ. 11507, 11519:

1.3 ԳԱԹ., Բ.Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-3, թ. 55, Կարեկցյան Տ., Խաչատուր Գևորգ Կարեկցյանի կենսագրությունը:

բ/ թուրքական արխիվներ

1.4 TC Başbakanlık Osmanlı Arşivi – BOA, DH, SYS, dosya 65, vesika 2,

գ/ ռուսական արխիվներ

1.5 Архив Внешней Политики Российской Федерации (АВПРФ), ф. 151, Политархив, оп. 482, д. 115, 3431, 3445, 3449, 1630.

1.6 АВПРФ, ф. 151, ф.НАИ, д. 154, Азиатский департамент, ф. 2, д. 6, д. 166. (Записка о разысканиях сле-

дов шамилева гонцах к шейху Таха. Дополнение к сведениям, изложенным Ханьковым),

1.7 Российский государственный военно-исторический архив Главного управления Генерального штаба (РГВИАГУГШ), ф. 2000, оп I, ед. хр. N 1935, 2003, 2085, 2220, 2464-2466, 5171, ф. 5, д. 434, ф. 6, д. 891А.

դ/ Վրաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ

1.8 ф.11, оп. 2, д. 278.

2. Տպագիր սկզբնաղբյուրներ

ա/ հայերեն

2.1 Իզմիրլեանի եւ Խարախանեանի նամակները Հ.Յ. Դաշնակցութեան, «Հայրենիք» ամսագիր, 1931, թիվ 9, էջ 79-84:

2.2 Միքայել Տեր-Հովհաննիսյանի հուշերը, Ստեփանավան-Ծաղկաձոր, 1926-1927 թթ.:

2.3 Նազըմ փաշայի հուշերը. հայոց դահիճը կըպատմէ..., «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 1931, թիվ 1648-1738:

2.4 Նիիթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան, Ա. հատոր, Պէյրութ, 1984, էջ 152-156, 160, 163:

2.5 Դեոյանց Տ., Հետախույզի մը հուշերը. «Վեմ», 1938, թիվ 2, էջ 51–52:

2.6 Դևոյանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», թիվ 46, 1945:

2.7 Տիգրանյան Տ., Թալեաթի ծածկագիր հեռագրերը անգլիական արխիվներում, «Ալիք», թիվ 117, 1985:

2.8 Փափազյան Ա. Հ., Հայերի ցեղասպանությունն ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1989, 256 էջ:

բ/ռուսերեն

2.9 Зисерман А.Л., Князь Барятинский. Из письма Барятинского, СПб, 1881, «Русский архив», 188с.

2.10 История шпионажа и службы по сбору информаций. Рукописный перевод с венгерского, т. 1, СПб, 1936, 409 с.

2.11 Соцков Лев, Неизвестный сепаратизм. На службе СД и Абвера / http: lib.tr200.net.v.php.id.4848sp.15.

2.12 Турецкий шпион при дворах христианских государей, СПб, 1778, перев. с франц.

2.13 Хаджетлаше М. Б., «Убийца на троне» (Записки начальника тайной полиции в Турции), Петроград, 1918, 239 с.

գ/թուրքերեն

2.14 Ermeni Komiteleri (1891-1895), Ankara, Osmanlıarşividairebaşkanlığıyayınları, 2001, 120s.

2.15 Tahsin Paşa'nın Yıldız Hatıraları. Sultan Abdülhamid, İstanbul, Boğaziçi Yayınları, 1999. 503 s.

դ/ անգլերեն

2.16 British documents on Ottoman Armenians, vol. 1, (1856-1880), vol II (1880-1890), Ankara, 1982.

3. Մենագրություններ

ա/ հայերեն

3.1 Ավագյան Ա., Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում. Եր., հեղինակային հրատարակություն, 2011, 343 էջ:

3.2 Բայբուրդյան Վ., Քրդերը, հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Եր., հեղինակային հրատարակություն, 2008, 421 էջ:

3.3 Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում, Եր., ՀՀ ԳԱԱ, «Գիտություն», 2004, 822 էջ:

3.4 Կիրակոսյան Ջ. Կ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19 դ. 80-ական թթ.), Եր., «Հայաստան», 1980, 455 էջ:

3.5 Գալուստյան Գր., Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նիւ-Եորք, «Կոչնակ» տպ., 1934, 944 էջ:

3.6 Գևորգ-Մեսրոպ, Պատմութիւն Հայ եկեղեցու, Կ.Պոլիս, «Փարոս» տպ., 1914, 567 էջ:

3.7 Գյուզալյան Գ., Խրիմյան Հայրիկ, Պեյրութ, «Սեւան» տպ., 1954, 117 էջ:

3.8 Գուստ Վ., Հայերի ցեղասպանությունը աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը,

Եր., «Հայաստան», 2002, 294 էջ:

3.9 Գրիկեր, Եոզղատի հայասպանության վավերագրական պատմություն, Նիւ-Եորք, «Ոսկետառ», 1980, 468 էջ:

3.10 Դիվան Հայոց պատմության: Հարստահարություններ Տաճկահայաստանում, Թիֆլիս, Ն. Աղանյանցի տպարան, 1912, 720 էջ :

3.11 Եազըճեան Գուրգէն, Աբդուլ Համիդ Բ, Կարմիր սուլթանը, Պեյրութ, «Սեւան» տպ., 1980, 872 էջ:

3.12 Զարևանդ, Ինչ կըծրագրեին թուրքերը, Միացյալ անկախ Թուրքիա, Բոստոն, ա.տ., 1926, 228 էջ:

3.13 Էմիլ Դիլոն, Իրավիճակը Թուրքահայաստանում, Եր., ա.հ., 1987, 54 էջ:

3.14 Ինճիկյան Հ. Գ., Օսմանյան կայսրության անկումը, Եր., «Հայաստան», 1984, 335 էջ:

3.15 Իզմիրլեան Կ. Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալին և ներկայիս, Պեյրույթ, «Սեւան» տպ., 1964, 326 էջ:

3.16 Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն. Ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը, Եր., ՀՅԴ հրատ., 2006, 440 էջ:

3.17 Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք երկրորդ, Եր., «Հայաստան», 1983, 464 էջ:

3.18 Համբարյան Ա. Ս., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրական ուղիների մասին, Եր., «Հայաստան», 1990, 480 էջ:

3.19 Համբարյան Ա. Ս., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շար-

ժումները Արևմտյան Հայաստանում, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1979, 310 էջ:

3.20 Հովնանյան Ռ., «Նեմեսիսը» գործողության մեջ, Եր., հեղինակային հրատարակություն, 2013, 130 էջ:

3.21 Հովսեփյան Ա., Հայրենական Մեծ պատերազմը նաև հայության գոյամարտն էր, Եր., GSM STUDIO, 2012, 264 էջ:

3.22 Ղազարյան Հ., Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Եր., «Տիգրան Մեծ», 2001, 696 էջ:

3.23 Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Եր., ԵՊՀ, 1992, 536 էջ:

3.24 Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Եր., ՀՀ ԳԱԱ, 1955, 525 էջ:

3.25 Շահան Նաթալի, Այսպես սպանեցինք, Պեյրութ, «Օնիպար» տպ., 1954, 134 էջ:

3.26 Շահան Նաթալի, Թուրքերը և մենք, Եր., «Հայրենիք», 2011, 56 էջ:

3.27 Պետոյան Վ., Սասունն անցյալում և Սասունի ազատագրական շարժումները, Եր., «Լուսակն», 2005, 240 էջ:

3.28 Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, Երևան, 2008:

3.29 Ռոստոմ, Մահմեդական ամբոխի դերը, Ժողովածուների հավաքածու, Եր., ՀՅԴ հրատ., 1989, 720 էջ:

3.30 Սապահ-Գիլլեան, Պատասխանատուները, Փրավիտէնս, «Երիտասարդ Հայաստան», 1916, 352 էջ:

3.31 Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերությունները (Ժ Ե դարեն մինչև

մեր օրերը), Պեյրութ, «Համազգային», 1969, 331 էջ:

3.32 Սարուխան, «Հայկական խնդիրները և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910)», Ա հատոր, Թիֆլիս, «Էպոխա», 1912, 284 էջ:

3.33 Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920թթ.), Եր., «Լուսակն», 2009, 248 էջ:

3.34 Սերոբեան Մ., Ամերիկահայ տարեցույց, Պոստոն, «Կիլօկիա», 1915, 185 էջ:

3.35 Սիմոնյան Հր. Ռ., Անդրանիկի ժամանակը, Երկուգրքով, գ. Ա, Եր., «Կաիսա», 1996, 830 էջ:

3.36 Սիմոնյան Հր. Ռ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., «Հայաստան», 1991, 630 էջ:

3.37 Սիմոնյան Հր. Ռ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 2-րդ, Եր., «Հայգիտակ», 2003, 764 էջ:

3.38 Սիրվարդ, Մեծն Մուրատ, Փրավիտէնս, ա. հ., 1955, 135 էջ:

3.39 Սպիրով Դ. Ա., Հայերի սարսափելի կոտորածները (1894-1896), Եր., ՀՀ ԳԱԱ, 1997, 64 էջ:

3.40 Վիրաբյան Վ., Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները 1918-1920 թթ., Եր., ՀՊՃՀ, 1999, 128 էջ:

3.41 Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ., Եր., «Լուսակն», 2006, 288 էջ:

3.42 Վիրաբյան Վ., Հայկական հետախուզությունը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.),

Եր., «Ասողիկ», 2003, 228 էջ:

3.43 Վիրաբյան Վ. Հ., Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918 -1920 թթ., Եր., ԵՊՀ հրատ., 2015, 746 էջ:

3.44 Ռաֆֆի, «Ամբաստանություն Վանա Պողոս վարդապետի վրա», հոդված, Երկերի ժողովածու, հ. 9, Եր., 1964, 592 էջ:

բ/ռուսերեն

3.45 Авакян А., «Геноцид армян: механизмы принятия и исполнения решений» Ереван, МИГА, 2013, 134 с.

3.46 Авакян А., Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина 19-го-первая половина 20-го вв.), Ереван, «Гитутюн», 2001, 421 с.

3.47 Аверьянов П. И, Курды в войнах России с Персией и Турцией в течение 19 столетие. Современное политическое положение турецких, персидских и русских курдов. Исторический очерк, Тифлис, типография Штаба Кавказского военного округа, 1900, 496 с.

3.48 Агабеков Г. С. Ч.К. за работой, Берлин, «Стрела», 1931, 329 с.

3.49 Агабеков Г. С., Г. П. У. за работой, Берлин, «Стрела», 1930, 264 с.

3.50 Акчам Т., Турецкая национальная «Я» и Армянский вопрос, М., 1995, 89 с.

3.51 Николаи В., Тайные силы. Интернациональный шпионаж и борьба с ним во время мировой войны и в настоящее время, Киев, «Княгиня Ольга», 2005, 144 с.

3.52 Венедиктов Б. Н., Использование панисламизма и пантюркизма разведками империалистических государств, М., «Звезда»,1958, 39 с.

3.53 Веселовский Ю., Трагедия Турецкой Армении, М., «Звезда», 1911, 47 с.

3.54 Гасратян М. А. Курдское движение в новое и новейшее время, М., «Наука», 1987, 98 с.

3.55 Гасратян М. А., Курды Турции в новейшее время, Краткие сообщения Института народов Азии, т. 30, АН СССР, 1964, 103 с.

3.56 Джинчарадзе В. З., История контрразведки в России, М., «Пограничник», 1946, 54 с.

3.57 Колюбакин А. М., Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, Тифлис, типография Штаба Кавказского военного округа, 1888, 349 с.

3.58 Кочар М., Армяно-турецкие общественно-политические отношения и Армянский вопрос, Ереван, ЕрГУ, 1988, 306 с.

3.59 Линч Г., Армения: Путевые очерки и этюды, Тифлис, торг. дом «И.Е. Питоев и К»,1910, 2 том, 475 с.

3.60 Лудшувейт Е. Ф., Турция в годы первой мировой войны, МГУ, 1966, 386 с.

3.61 Макколь М., Ответственность Англии перед Арменией. В книге: Положение армян в Турции до вмешательства держав в 1895г., М., 1896, 289 с.

3.62 Масловский Е. В., Мировая война на Кавказском фронте мировой войны в 1914–1917 г. Стратегический очерк. Париж, «Возрождение», 1933, 503 с.

3.63 Миллер А. Ф. Оттоманская империя (Султан-

ская Турция), ВПК при ЦК ВКП,М., АН СССР, «Печатный двор», 1946, 508 с.

3.64 Мустафа Кемаль, Путь новой Турции, т. 3, М., Литиздат., 1932, 416 с.

3.65 Новичев А. Д., История Турции, Ленинградский университет, т. 1, 1963, 314 с.

3.66 Петросян Ю., Младотурецкое движение, М., «Наука», 1971, 328 с.

3.67 Пипия Г. В., Германский империализм в Закавказье в 1910-1918 гг., М., «Наука», 1978, 185 с.

3.68 Тунян В. Г., Младотурки и Армянский вопрос, Ереван, Чартарагет, 2005, 250 с..

3.69 Шпилькова В.И., Младотурецкая революция, 1908-1909 гг. М. «Наука», 1977, 294 с.

գ/ թուրքերեն.

3.70 Bora İyiat, Hunlardan Günümüze Türk Derin Devleti, Ankara, KRİPTO Yayınevi, 2008, 244 s.

3.71 Dr. Mustafa Balcioglu, Teskilat-I Mahsusa` dan Cumhuriyete, Ankara, Nobel Yayin Dagitim, 2001, 322 s.

3.72 Emin Demirel, Teşkilat-ı Mahsusa'dan Günümüze Gizli Servisler, İstanbul, IQ Kültürsanat Yayıncılık, 2002, 472 s.

3.73 Emin Karaca, Ağrı eteklerinde isyan. Bir Kürt Ayaklanmasının Anatomisi, Karakutu Yayınları, İstanbul, 2003, 230 s.

3.74 Ergun Hiçyılmaz, Teşkilat-ı Mahsusa ve Casusluk Örgütleri, Kamer Yayınları, İstanbul, 1996, 102 s.

3.75 Halil Pasha, Ittihat ve Terakki`den Gumhuriyete

Bitmiyen Savas, Istanbul, Kum Saati Yayınları, 1997, 384 s.

3.76 İhsan Nuri Paşa, Ağrı Dağı İsyanı, İstanbul, Med Yayınları, 1992, 154 s.

3.77 Rohat Alakom, Hoybun Örgütü ve Ağrı ayaklanması, İstanbul, Avesta, 1998, 184 s.

3.78 Tarık Zafer Tunaya, Türkiye' de Siyasal Partiler, cilt 3, İttihat ve Terakki, Bir Çağın, Bir Kuşağın, Bir Partinin Tarihi, İstanbul, İletişim Yayınları, 2000, 676 s.

3.79 Tuncay Özkan, Milli İstihbarat Teşkilatı (MİT)' in Gizli Tarihi, İstanbul, ALFA, 2003, 638 s.

4. Հոդվածներ

ա/ հայերեն

4.1 Սահակյան Ռ. Օ., Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և ընթացքում ռուս-թուրքական ռազմաճակատում հետախուզական ծառայությունների գործունեության պատմությունից (1914-1917 թթ.), Պատմաբանասիրական հանդես, 2011, թիվ 3, էջ 94-119:

4.2 Սահակյան Ռ. Օ., Բաթումի նահանգի հայության կողոպուտն ու սպանությունները Ա. Համաշխարհայինի սկզբում 1914-ի աշնան (փաստաթղթեր), Հայկազեան Հայագիտական Հանդես, Պեյրութ, 2013, էջ 2-45:

4.3 Սահակյան Ռ. Օ., Հայկական բանակի հետախուզական բաժանմունքի պետ Տիգրան Դևոյանցի զեկուցագիրը թուրքական բանակի մարտակազմի վերաբերյալ, ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2010, թիվ 1-2, էջ 458-460, 470-483:

4.4 Սահակյան Ռ. Օ., Ռուսական բանակի հայկա-

կան և քրդական ջոկատները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ԲՀԱ, 2010, թիվ 2, էջ 118-135:

4.5 Վիրաբյան Վ. Հ. Տիգրան Դևոյանցի հետախուզական գործունեության շուրջ. ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2010, թիվ 1–2, էջ 320–335:

4.6 Վիրաբյան Վ., Հայկական հետախուզության փաստաթղթերը Թուրքիայում ռազմաքաղաքական իրադարձությունների մասին (1919 թ. օգոստոս - նոյեմբեր-ռուս), Պատմաբանասիրական հանդես, 2011, N 1, էջ 309 - 322:

4.7 Վիրաբյան Վ., Տիգրան Դեվոյանցի զեկուցագրերը Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող ռազմաքաղաքական իրադարձությունների մասին, Լրաբեր Հասարակական գիտությունների, 2012, N 2-3, էջ 389 – 406:

բ/ռուսերեն

4.8 Бабаходжаев А., Провал панисламистской авантюры английского ставленника Энвера в Средней Азии в 1921-1922 г.г., «Звезда Востока», Ташкент, 1951, N 12, с. 48-67.

4.9 Лудшувейт Е. Ф., Послеоктябрьский революционный подъем в Турции (ноябрь 1917-май 1919), Вестник Московского Университета, 1949, N7, с 97-118.

4.10 Минорский В. Ф., Курды. Заметки и впечатления, Петроград, «Известия МИД», N3, 1915, с. 78-86.

4.11 Рогозина Е. А., Из дневника русской в Турции перед войной в 1877-1878гг., Русская старина, 1915, т. 162, кн. 4, с. 90-95.

4.12 Смирнов Н. А., Турецкая агентура под флагом

ислама. Сб. «Вопросы истории, религии и атеизма», М., 1950, N 4, с. 114-149.

4.13 Фелицин Е. Д., Князь Сефер бей Зан, политический деятель и поборник независимости черкесского народа, Кубанский сборник, СПб, 1887, с. 198-249.

4.14 Шпилькова В. И., Антимонархический заговор 1859 г. в Турции. Проблемы востоковедения, 1959, N 1, с. 320-353.

4.15 Ю. К., В Кюрдистане неспокойно / Бюллетень прессы Среднего Востока, Ташкент, 1928, N 4-5, с. 223-239, 187-257.

դ/ թուրքերեն

4.14 Teskilati Harpte Teskilati Mahsusa. «Vakit», 15-17, 11, 1933.

5. Պարբերական մամուլ

4.16 «Անահիտ թերթ-հանդես» 1900, թիվ 132:

4.17 «Արձագանք», 1895, թիվ 17:

4.18 «Դրօշակ», 1892, թիվ 3, 1893, թիվ 5, 1897, թիվ 16, 1898, թիվ 5, 6, 1899, թիվ 4, 1898-1901, թիվ 9, 1914, թիվ 9-12:

4.19 «Զանգակ», 1908, թիվ 23:

4.20 «Հայաստան», 1891, 15 փետրվարի:

4.21 «Հայրենիք», 1931, թիվ 9:

4.22 «Հնչակ», 1890, թիվ 4, 1891, թիվ 2, 1895, թիվ 4:

4.23 «Մասիս», 1859, 10, 19 հոկտեմբերի:

4.24 «Մեղու Հայաստանի», 10.10.1859, 17.11.1859:

4.25 «Մշակ», 1895, թիվ 4:

4.26 «Մուրճ», 1907, թիվ1:

4.27 «Յառաջ», 1931, թիվ 1648-1738, 1862:

4.28 «Նորդար», 1885, թիվ 44, 59, 1896, թիվ 189, 1897, թիվ 7, 11:

4.29 «Նորկեանք», 1898, թիվ 13, 1900, թիվ 9,10, 27, 113, 1901, թիվ 9,16:

4.30 «Փարիզ», թիվ 8: